



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17393

17394

37

7-67

ԱՊՐԻԼԻ

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

~~ՀԱՅԱՍՏԱՆ~~

ԹՈՐԻՄԱՆԵՑ ԻՏԱԼԻԱՆ ԼԵՋՈՒՐ

ԽԱԶԱՏՈՒՐ Բ. ԻԻԹԻՎԵԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՎՈՒԹՅՈՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ե. Յ. ՄԻՆԱՍԵԱՆ

1892

2010

~~818~~

3657

~~6082~~



2001

Եւստիւս Գ. Գ. Կաթողիկոս
Ս. Գրք. Եւստիւս

ՍԿՂԲՈՒՆԷ

ԴԵՍՏԻՆԵՐԵԿՈՒԹԵԱՆ

8728

ՔՄԻՆԱԳՐՄԱՆ

ՄԱՅՈՒՆԻՍԻՆԱԳՐՄԱՆ

37+171

ԱԿՉՔՈՒՆՔ

7-64

ms

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ՀԱՏՈՐ Բ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԻՏԱԼԱԿԱՆ ԼԵԶՈՒԷՆ

ԽԱԶԱՏՈՒՐ Բ. ԻԻԹԻԻՋԵԱՆ

Ի ԶԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԵՏԹԷՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ



ՏՊԵԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՄԻ Գ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ԿՈՍՏԱՆԵՒԿԵՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ե. Յ. ՄԻՆԱՍԵԱՆ

1862

1003
14824

1885

THE UNIVERSITY OF CHICAGO

1885

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

1885

1885

Ս Կ Չ Բ Ո Ի Ն Ք

Ք Ա Ս Տ Ի Ա Բ Ա Կ Ո Բ Թ Ե Ա Ն



Գ Ի Բ Բ Դ

Գ Լ Ո Ի Խ Ի

ԱՐԵՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՕՆՈՂԱՑ դէմ եղած պարտքէն ետև կուգան ընդ-
 չանուր արենակցութեան կամ աղգականութեան պար-
 տաւորութիւնները : Ինութիւնը ամենասերտ կապերով
 զմեզ կապած ըլլալով մեր արենակցացը հետ , ամենա-
 ծանր պարտաւորութիւններ ալ դրեր է մեր վրայ : Աւստի
 պարտիմք ամէն ժամանակ և ամէն կցորդութեանց մէջ
 սիրալիր կերպիւ վարուիլ անոնց հետ և ընել բոլոր
 այն սրտազին ծառայութիւններն որ սյնքան քաղցր են
 թէ ընողին և թէ ընդունուողին սրտին : Աղքատութիւնը ,
 թշուառութիւնը չուծեր այս կապը : Մի՛ ամաչեր ու-
 բեմն՝ երբ կարօտութեան մէջ գտնուին , իրենց օգնե-
 լու , նմանող ըլլալով հարուստ և առաքինի Նոսիս :

Առևտրական յարաբերութիւնները ամենէն աւելի ա-
 սոնց հետ ունենան ալ խիստ բանաւոր կ'երեւի , և մեր

անձնական օգտին լաւ կը ծառայէ , զի մեր ազգականներն
կամ արեւակիցքը օտարէն աւելի լաւ կը ճանաչեմք :
Եւ ինչպէս որ բնականապէս մեր արեւակցաց զարգա-
ցումը մեզ փափաքելի է , նոյնպէս ալ մեր բարօրութիւ-
նը օտարէն աւելի անոնց փափաքելի կրնայ ենթադրիլ :
Օտարը եթէ մենէ բարիք մ' ընդունի , ընդհանրապէս
մեր ազգականէն աւելի դիւրաւ կը մոռնայ . և եթէ մեր
ձեռնտուութեամբը յառաջադիմէ , հազիւ ուրեք կը պա-
տահի որ ինքն ալ ժամանակին յեղափոխութեանցը մէջ
մերոնց ձեռնտուութիւն մ' ընել յօժարի : Արժ խօսքով
արեւակցութիւնը բնական կապ մ' է , որ պատահական
յարարերութիւններով ևս առաւել կը սերտանայ , երբ
պատահական կապակցութիւններն ուրիշ միջոցաւ մը պըն-
դանալու ընդունակութիւն չունին :

Արդարեւ մարդկային բնութիւնը չճանչեր այն մար-
դը՝ որ իրենները անգոսնելով , օտարն գոհ ընել , զինքն
անոր հաճելի ընել կ'աշխատի . և կեղծաւոր է այն՝ որ
իրեններուն վրայ սէր , խնամք չունենալով , օտարին բա-
րերարել կը ջանայ :

Պարտիմք նաև յարգել ու պատուել մեր Ա Ն հասիառ
Թագաւորը , որ իր հպատակաց հայրն է : Երևե Ս. Գրքի
ձոյ , պատուաւա ղ Թագաւորն , կ'ըսէր նախնի Քրիստոնէից Ա .
Առաքելալն Պետրոս :

Պէտք է նոյնպէս ակնածել և հնազանդիլ Քաղաքա-
կան և Եկեղեցական իշխանութեանց՝ որ պահպանիչք են
կարգադրութեանց և ընդունարանք կարողութեանց , նա-
խախնամութենէ ընտրուած ժողովուրդները կառավարե-
լու և երկրիս վրայ յերջանկութիւն ու երկնից մէջ 'ի յա-
ւիտենական երանութիւն տանելու համար :

Արժանի են վերջապէս մեր ակնածութեանը անոնք՝ որ

իրենց հասակաւն աւելի ուղիղ դատողութիւն՝ կատարեալ
 փորձառութիւն ու խոհեմութիւն ունին: Մի՛ նմանիր ու-
 ղեմն այն անամօթ երիտասարդին, որ ի դեռ բան մը
 չտեսած, կը կարծէ թէ ամէն բան տեսեր է, և դեռ բան
 մը չուսած, կը կարծէ թէ ամէն բան գիտէ ու կը հասկնայ:
 Գոռողութեամբ փրացեալ՝ կարեւորութիւն մը տալ
 կ'ուզէ անձին. վճռաբար կը խօսի, մինչև անգամ իրմէ
 մեծերուն և ծերոց առջին. ու խելացնոր մարդիկ կը հա-
 մարի զանոնք:

Նձնական արժանիքէ զատ ակնածելի են նաև ծերու-
 թեան ձիւնանման ալիքը. և ով որ իւր երիտասար-
 դութեան ժամանակը զծերը կը պատուէ, ինքն ալ պիտի
 պատուի, եթէ այն հասակն հասնելու բաղդն ունենայ:
 — Եւր Մթենացի մը թատրոնի մէջ նստելու տեղ կը
 փնտռէր: Մէկ քանի անմիտ պատանիներ զինքն շուա-
 րած տեսնելով, հեռուէն նշան ըրին իրեն, որ իրենց մօտն
 երթայ: Արբ ծերը իրենց մերձեցաւ, իրեն տեղ չցու-
 ցընելէ զատ, զինքը կատակել ալ սկսան: Այեղծ մարդը
 բոլոր թատրոնը շրջեցաւ, հանգչելու տեղ մը չկրցա-
 գտնել: Ապարտացւոց դեսպանները՝ որ հոն ներկայ էին,
 այս անկարգութիւնը տեսնելով, ամէնքը ՚ի միասին ոտք
 ելին և զծերը պատուաւոր կերպով մը իրենց մէջ նստու-
 ցին: Այս վեհանձն վարմունքը բոլոր բազմութեան ու-
 շադրութիւնը գրաւեց և ամէնքն ալ ծափահարեցին: Ա-
 թենացի՛ ըսաւ ան ատեն ծերը տխրամած գիմօք, կը ճան-
 չէն շքարին, բայց Ապարտացի՛ զայն կը հործէն: —

ՅԵՐԵՄԻԱՍԻ

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

1

ԱՅՔ կոչուածք մեծ գերդաստան մ'է և հայրենիք ա-
նոր բնակութեան տեղին : Արդ ինչպէս որ իւրաքանչիւր
գերդաստան կամ ազգատոհմ իւր որոշիչ հանգամանքն
կամ մասնաւոր նշանակներն ունի, նոյնպէս ալ ամէն ազգ
իւր մասնաւոր յատկութիւններն կամ ձիւթերը կ'ու-
նենայ, որով կը զանազանի ուրիշ ազգերէն :

Ազգի մը մասնաւոր յատկութիւններն կամ որոշիչ
հանգամանքը երկու դիտաւոր պատճառներէ ծնունդ
կ'առնուն : որոց մէկն է Աշխարհագրական դիրք, որ և կը
կոչուի Բնական պատճառ, և միւսը՝ Վաստիարակութիւն
կամ Բարոյական պատճառ :

Աշխարհագրական դրից կամ կլիմայի ազդեցութիւ-
նը կազմուածոց վրայ այնքան զգալի է, որ ամենէն տը-
գէտ մարդն անգամ վայրկեան մը չ'երկմտիր, երբ Աով-
կասեանը, Վապիշիկն ու Ամերիկացին իւր աչացը ներ-
կայացնէ, կամ թէ ջերմ երկրի մը ժողովուրդը ցուրտ
երկրի մը ժողովրդեանն հետ, լեռնային ժողովուրդ մը՝
դաշտային ժողովրդեան մը հետ բաղդատէ, խառնուա-
ծոց տարբերութիւնը դիտէ :

Վառնուածքէ ծագած իմացական ու բարոյական տար-
բերութիւններն ալ առաւել ևս զգալի կ'ըլլան, երբ ազգաց
լեզուներն կամ գրականութիւնքը իրարու հետ բաղդա-
տեմք : Ար լեզու և լեզունակներն ու Վտալականին չափ

անուշութիւն ունի, և ո՞ր երկիր Ալադայ և Խտալիոյ շափ զմայլեցուցիչ կլիմայի մը ներքե կը գտնուի : Աւ զարմանալին սա է որ Ալադայ և Խտալիոյ գաւառներն անգամ բաւական տարբերութիւն կը տեսնուի լեզուի և բարուց կողմանէ իւրաքանչիւրին դրիցը համեմատ : Աւ քանի որ այս երկիրներէն գէալ 'ի ցրտային գօտիներն յառաջանաւք, լեզուաց քաղցրաձայնութիւնը հետ զհետէ կը նուազի : Արեւակայութիւնը իւր վառվռունութիւնը կը կորուսանէ . գեղեցկին և զուարճալւոյն բերմունքն ալ ատակաւ տակաւ պակսելով, ցուրտ տրամաբանութիւնը, վսեմին ու հիանալւոյն ճաշակը կը զօրանայ : Խտալիոյ գործն է Արտեմիդեայ գեղեցիկ պարտէզներուն նկարագրութիւնը . դժոխոց և սանդարամետականաց պատերաստի նկարագրութեանն ալ Անգղիոյ պէս երկիր մը ծնունդ կրնայ տալ :

Ալիմայի կամ աշխարհագրական դրից ազդեցութիւնը բոլոր միւս էակաց վրայ ալ բացայայտ կը տեսնուի : Ամէն երկրի բերք թէ բուսական և թէ կենդանական քիչ շատ ուրիշ երկրի մը բերքէն (նոյն տեսակէն ըլլալով) կը զանազանի . և կայ երկիր ալ որ այս ինչ տեսակ բերքն միայն արտադրելու յարմարութիւն ունի :

Բայց ի՞նչպէս կ'ըլլայ որ Հիւսիսական, Արման ազգաց մէջ ալ չնաշխարհիկ գործեր երեւակայութեան լի աշխուժիւ կը յաճախեն . ինչպէս է Շէքսպիրի, Արտ Պայրրնի և այլոց գործերը : Անգղիոյ ամպամած, խոնաւ կլիմայն դիտողը զանգաղամիտ ու ցուրտ խառնուածքի տէր ազգ մը պիտի կարծէ զԱնգղիացիս . բայց ի՞նչ մեծագործութիւնք, գրականական ի՞նչ անսպառ գանձեր, ի՞նչ հոյակապ յիշատակարաններ իւր գէմն կ'ելնեն իր այս ենթագրութիւնը եղծանող :

Մ. յսպէս է ահա դաստիարակութեան արդիւնքը : Աշակութիւնը կը փոխէ երկրի մը երեսը , արհեստը մինչև անգամ եղանակներն կրնայ բռնազբօսել :

2

Ազգը բարոյական արտ մ' ըլլալով , Ֆիզիզական արտի մը նման միշտ յարմարութիւն ունի լաւանալու : Արքան ալ երջանիկ տրամադրութեան մէջ գտնուի բնականէն , տակաւին լաւանալու այս ընդունակութիւնը ամենեւին չի պակսիր , կամ թէ ըսեմ յառաջադիմութեան սկզբունքը միշտ գործունեայ է , և այս սկզբունքն է ահա ազգային իրաւանց և պարտուց ծնունդ տուողը :

Արդ ազգի մը լեզուն , կրօնական հաւատալեաց մասնաւոր բերումը , սովորութիւնները եւ այլն իւր ընդամայս ձիրքերն յայտնող կէտերն ըլլալով , կը հետևի թէ այս ձիրքերն ու միտմունքը զարգացնելով , ծաւալելով կ'ըլլայ իր յառաջադիմութիւնը :

Իսկ երկրի մը լաւանալու , բարեբեր ըլլալու յարմարութիւնը որքան որ հզօր պատճառ մը կուտայ մշակութեան գործոյն , տակաւին տարակոյս չկայ որ այս ալ բոլորովին օգտակար ընելու համար անտնօրինելի հարկ մ'է քաջ ծանօթութիւն ստանալ երկրին կլիմային , մասնաւոր դրիցը , հողին տեսակին վրայով . ըսել է թէ ազգի մը զարգացումը ուղղելու համար ալ լաւ ճանչնալու է անոր խառնուածքն ու մասնաւոր ձիրքերը :

Երկրի մը մշակութեան գործոյն մէջ մեծ ազդեցութիւն կ'ընեն երբեմն կցորդութիւնք թէ 'ի նպաստ և թէ 'ի վնաս : Ահաք եղած ժամանակ անձրևելն , քաղցրաշունչ հովերն շատ անգամ բերոց առատութիւնն ու ազ-

Նուութիւնը կ'ապահովցրենն : Խորշակն , տեղատարափը , գեաճեղեղները , մարախներու տեղալն ալ ընդ հակառակն բազմամեայ աշխատութիւնները կը փճացրենն :

Այնպէս ալ գիտութիւնը , միաբանութիւնը , կը ծաղկեցնէ , կը բարգաւաճէ զազգն . իսկ կրօնական և քաղաքական վէճերն հերձիք , գաղթականութիւնք , ներքին ու արտաքին պատերազմունք , տգիտութիւնը ասոր հակառակ կ'սպառեն անոր կենդանութեան ոգին :

Իսկ է թէ ազգի մը մասնաւոր կացութիւնն ալ մտցունելու չէ իւր յառաջագիմութեան գործոյն մէջ , ինչպէս և արտ մը մշակելու ատեն ամենակարևոր է արկածքն նախատեսել :

3

Ազգ կոչուած բարոյական արտին զարգացմանը , բարելաւութեանը տքնիլ , խոսպանացեալ վայրերը մշակել , անպիտան խոտերէն մաքրել , անջրդի տեղուանքն ուռգանել , անբերրի մասերը պարարտացնել , ճախճախուտները լնուլ , հարթարել , մրգեղէնները աղնիւ տեսակէ պատուաստել , պտղեղինաց համար ընտիր հունտեր գործածել , այս է ահա Ազգասիրութիւն կոչածնիս :

Այսպիսի նպատակի մը համար կամ ամէն ճիգն թափել , բոլոր անձնական օգուտներն իբրև Փարբիկիոս (1) զոհելն

(1) Այս հոյակապ անձը բոլոր հնութեան մէջ իր նմանը չունի պատուաւորութեան , արդարասիրութեան եւ անշահախնդրութեան մասին : Հռովմայեցիք Աեվինիոսի Հիւպատոսին հրամանատարութեանը ներքեւ յաղթուելով , Փարբիկիոսն Պիւռոսի ուղարկեցին կարանաւորաց փրկանքին համար խօսելու 383 ամօք նախ քան զՔրիստոս :

Պիւռոս շատ ջանք ըրաւ կաշառօք զինքը որսալ , բայց Փար-

ժինչև անգամ կեանքն իբրև Ա կոնսիտաս (Ղ) վտանգելն ալ
ազգասիրութեան դիւցազնութիւնն կամ դիւցազնական
ազգասիրութիւն կրնայ կոչուիլ :

Փարբիկիոս , թէև աղքատ էր , արհամարհանօք մերժեց

բիկիոս , թէև աղքատ էր , արհամարհանօք մերժեց անոր առաջարկութիւնները :

Երկրորդ անգամ Հիւպատոս եղած ատեն Պիւռոսի բժիշկը
գաղտ Հռոմայեցւոց բանակը գալով , խոստացաւ իւր տէրն
թունաւորել եթէ ուզած դուժարն իրեն տայ Փարբիկիոս : Հիւ-
պատոսը բռնեց զբժիշկը եւ շղթայակապ Պիւռոսի դրկեց :
Փարբիկիոս թէպէտ երեք անգամ Հիւպատոս ընտրուեցաւ , տա-
կաւին խիստ պարզութեամբ կ'ապրէր : Եւ այն ատիճան աղքա-
տութեան մէջ մեռաւ որ ծերակոյտը առիպուեցաւ իւր աղջիկ-
ները խնամել :

(1) Թագաւոր Սպարտայ , հրամանատար Քսերքսէսի դէմ թեր-
մոպիլէի անցքն պահպանելու համար խրկուած յունական զօրաց
480 նախ քան զՔրիստոս :

Այս կիրճը իր անձկութեամբ ու թեոաղիայէն դէպ 'ի հա-
րաւային Յունաստան երթալու սովորական ճանապարհն ըլլա-
լով , մեծ կարեւորութիւն ունէր թէ Յունաց եւ թէ Պարսից
առջին :

Աեոնիտաս 5,200 զօրքով ամբողջ երկու օր պաշտպանեց
այս տեղն Քսերքսէսի բովանդակ զօրութեանը դէմ . եւ թերեւս
Պարսից ճիզն բոլորովին ասպարդիւն պիտի կրնար ընել , եթէ
մասնիչք ոմանք թշնամւոյն ուրիշ ոլորուն ուղի մը չցուցունէ-
ին , որով ստիպուեցաւ քաջ հրամանատարը զօրաց դիրքը փո-
խել : Այս դժուարութեան մէջ Աեոնիտաս որոշեց զանձն զո-
հել երեք հարիւր Սպարտացւոց , մէկ քանի դժգոհ թերացւոց
եւ եօթն հարիւրի չափ Բոպացւոց հետ յօրինակ անձնանուի-
րութեան եւ հնազանդութեան : Բոլոր այս դիւցազնական դուն-
դը նահատակեցաւ բաց 'ի թերացւոցմէ , որ վատութեամբ անձ-
նատուր եղան : Քսերքսէս անգթութեամբ Աեոնիտասի դին յօշո-
տեց խաչ հանելով : Իսկ Յոյները 'ի յիշատակ անզուգական ա-
ռաքինութեան իրենց դիւցազնական որդւոցը , առիւծի անդրի
մը կանգնեցին Աեոնիտասի ընկած տեղին եւ փառաւոր սիւներ
պատերազմի վայրը զանազան վերնագրովք , որոնցմէ են հետեւեալ-
ները , "Ասոր մարտեան զոր + հազար + 'ի Պիլոպոնիտեայ ընդդէմ երեսան
բիւրոս" : "Պարսիտ" , "Նշտեհ" , "Լախիբիմեայոց" , "Ին անկոտ մե + հնա-
զանդոտ օրիոս" :

նոր առաջարկութիւնները :

Տայց աննկուն կամքն, անխոնջ աշխատութիւնը, յարատևութիւնն չէ միայն յաջողութեան պատճառը : Առողագործն եթէ եղանակները չգիտէ, տնկոց և բուսոց իւրաքանչիւր տեսակացն, մասնաւոր յատկութիւնները չճանչէ, պարագային ոյշ չդնէ, ի՞նչ արդիւնք կրնայ ունենալ իւր աշխատութիւնը :

Մինչդեռ լուսաւորեալ, գործնական խելքէ մը չկառավարիր մարդս ազգային գործ ոց մէջ, ինչ ալ ընէ, երջանիկ արդիւնք մը չունենար. մինչև անգամ եթէ իւր պատիւը, վարկը, հարստութիւնն ու անձը զոհելու ըլլայ, յաջողութիւնը չկրնար ակնկալել :

Պատմագրութեանց մէջ յաճախ կը տեսնեմք այնպիսի օրինակներ որ կամ բնականէն կամ դաստիարակութեան ազդեցութեամբը իրենց հայրենեաց կամ ազգին երջանկութեանը բաղձանքովը վառուած իրենց երջանկութիւնը զոհ ըրեր են. բայց ըրած կորուստնին միայն արդիւնք ու՛եցեր են իրենց ճգանք :

Չուրացուիր այսու ամենայնիւ որ մարդկային հեռատեսութենէն դուրս արկածք ալ ազդեր են երբեմն, սակայն անյաջողութեան պատճառը գլխաւորապէս տեղւոյ, ժամանակի և ուրիշ կցորդութեանց ուշադրութիւն չընելնին կ'երևի : Ալ դժբաղդութիւնը ան է որ այսպիսի անխոհեմ փորձերը շատ անգամ անտեղի վհատութեան ալ առիթ կուտան, մանաւանդ մարդկային բնութեան ընդհանուր օրինացը անտեղեակ անձանց :

Չգոն կենցաղագէտ ազգասիրաց կամ հայրենասիրաց ջանքը բոլոր կցորդութեանց կատարեալ ոյշ դնելովն, նոյնպէս պատմագրութիւնք քաջ կ'ապացուցանեն, հազիւ ուրեք ապարդիւն եղեր է : Այսպիսիք ոչ միայն ի-

րենց ազգին բարեխաւութիւնը, յառաջ՝ դէպ 'ի զարգացումն ընթացքը նկատեր, այլ և քայլափոխներն ալ չափեր են: Քաջ ճանաչելով իրենց մշակելիք երկրին բնութիւնը դիրքն և այլն, և իրենց գործողութեան զօրութիւնը, մատեմատիգական ճշտութեամբ նախատեսեր են ընդհանուր արդիւնքը:

Մ. յս կարևոր խորհրդածութիւնները ընելէն ետև, մեր ազգին նկատմամբ ալ մէկ քանի խօսք խօսիմք:

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ Բ

Մեր սիրելի Հայաստանը ճանապարհորդողը, անոր բարձրաբերձ լեռները, լայնածաւալ ծովերը, մեծամեծ գետերը, քաղցրահամ ջրոց աղբիւրները, ընդարձակ բերրի դաշտերը և ըստ մեծի մասին քաջասնունգ օդն դիտողը չկրնար արհամարհել իւր բնակիչքը: Եւ իրաւի եթէ Հայկայ վսեմ լեզուն Մ. դամական ժառանգութիւն եղած չըլլար, այսպիսի երկիր մը միայն ծնունդ կրնար տալ: Հայաստանեայց մարդասիրութիւնը, վեհանձնութիւնն, հաւատարմութիւնը իրենց ամէն վիճակին մէջ կը փայլի: Արօնասիրութիւնն իրենց հաստատամտութեանը փառաւոր ապացոյց մը կը հանդիսանայ, սրբամտութիւնն 'ի գիտութիւնս և ճարպիկութիւնը առևտրական գործոց մէջ բոլոր աշխարհք կը խոստովանի:

Հայք ծնան ազատ, սնան ազատ, գոհ իրենց պարզութեամբը, կ'ապրէին երջանիկ իրենց նահապետական իշխանութեանը ներքև: Մ. դատութիւննին ըլլալով աստուածաւանդ ժառանգութիւն, այլոցն ալ նուիրական կը համարէին: Բոլոր իրենց պատմագրութեանցը մէջ հազիւ ուրեք կը տեսնուի աշխարհակալութեան միտում մը: Բայց

այս առանց դժուարութեան ստացեալ ազատութիւնը չափազանց վստահութեան առիթ տալով, թուլցուց ազգային ջիղերը ամբողջին ապահովութեանը նկատմամբ: Ուստի և զանազան յեղափոխութիւնք առթեցան, սակայն չայք երբէք իբր ստրուկ՝ գլուխ չխոնարհեցին օտար իշխանի մը. մինչև վերջապէս հաստատուեցաւ Վախարարական դրութիւնը, որ թէև լուսաւորեալ, գիտուն ժողովրդեան մը քաջայարմար կրնար համարուիլ, բայց չայաստանու նկատմամբ բոլորովին անյարմար էր. և այս վերջապէս պատճառ եղաւ իւր անկախութեան կորստեանը: Արթալով անձնասիրութիւնը, անմիաբանութիւնը, տգիտութեան որդիքն տիրապետելով, թշուառութիւնն ալ հեղեղի նման ամէն կողմանէ յորդեցաւ: Պատերազմունք, սովք և սրածութիւնք մէկ կողմանէ, դաղթականութիւնք ալ միւս կողմանէ ամբողջ գաւառներ պարպեցին, եղաւ այն հոյակապ աղգը վարատեալ ժողովուրդ մը, կրօնական հերձուածք ալ վերջին հարուածն տուին իւր թշուառութիւնը հաստատելու:

Այսու ամենայնիւ այս ցրման վիճակն անգամ չկրցաւ իւր ընդաբոյս ընտիր ձիրքերը եղծանել, մանաւանդ թէ օգուտ ալ գործեց իր ոխերիմ, դարանակալ թշնամին ճանչելու: Աւ հիմա կցորդութիւնք բոլորովին խրախոյս և քաջալերութիւն կը կարդան աղգիս ապագային համար: Իւր պատուական լեզուն կը մնայ զերծ մահուան վտանգէն, նախնեաց աւանդութիւններն ու գործքը մատենագրութիւնք կը կազմեն, դիւցազանց քաջագործութիւններն ոսկի քնարներու վրայ կը ներդաշնակին:

Ի՞նչ են ուրեմն աղգասիրի մը պարտաւորութիւնները այս վիճակիս մէջ:

Ազգերնիս այսօր շարժման մէջ կը դանուի, և անշուշտ կամ յառաջախաղաց և կամ յետախաղաց ընթացք մը պիտի բռնէ. ժամանակը, պարագայները թոյլ չեն տար իրեն անշարժ մնալ. կամ ձեռք նետած գործերն յառաջադիմութեան օրըստ օրէ պիտի ընդարձակէ, կամ վերջ դնելով անոնց, կրկին վայրենութեան պիտի դառնայ. կամ գիտութեանց, լուսաւորութեան տարածուելուն մեծագոյն փութով պիտի ճգնի, վարժարանաց յաճախութեանն ու բարեկարգութեանը ևս առաւել պիտի յոգնի, կամ թէ լուսաւորութիւնն արտաքսել, վարժարաններն խաւիանել պիտի աշխատի. կամ արեւուն մէջ իւր ապագայն տեսնելով, իւր ձիրքերուն համար գործոյ նոր կոպար մը պիտի փնտռէ, կամ թէ աչուրները խփելով, իբր թէ անզգայ պիտի մնայ անոր զուարթացուցիչ ազդեցութեանը:

Իսայց քանի որ արեգակը իւր ճառագայթները նիւթական աշխարհին վրայ կ'արձակէ, ո՞վ կրնայ անոր երջանիկ ազդեցութիւնը, գեղեցկութիւնն չզգալ, եթէ ոչ կոյրերը, խոր գբոց և մութ անձաւներուն մէջ գտնուողները:

Այլ մինչդեռ գիտութեան ճառագայթները մեր բարոյական աշխարհին վրայ իրենց լոյսը կը ցոլացընեն. հընարաւոր է արդեօք անոր առողջարար ներգործութիւնը չզգալ, եթէ ոչ բարոյական կուրութեամբ մը կուրնալով:

Այլ ո՞վ կրնայ այնքան անգութ, քարեղէն սիրտ մ'ունենալ, որ երբ ինքն լուսոյ քաղցր ազդեցութեանը ներքե կը ճեմէ, անտարբեր աչօք նկատէ խոր գբոց և մութ անձաւներուն թանձր մառախուղին մէջ շրջողները, մանաւանդ երբ անոնք իւր եղբարքն ըլլան.

Թեւեկոխել ուրեմն ազգային յառաջադիմութեան, խրախոյս և յորդոր կարգալ գիտութեանց տարածմանը, ընտիր դաստիարակներ հասցնել, վարժարաններն բարե-

կարգել, ազգօգուտ մատենից տպագրութեանն սատարել, ասոնք են ահա մտացի ազգասիրի մը պարտաւորութիւններն :

Այլադացիք Ազգիպտոսէ ընդունելով գիտութիւններն, ծաղկեցուցին իրենց մէջ ու յառաջացան :

Իիրտ Հռոմայեցիք Մթէնքէն մուսայները իրենց մէջ հրաւիրելով, քաղաքակրթեցան :

Անգղիացիք, Վաղղիացիք և այլք, արծարծելով նախնեաց գիտութիւններն՝ որ միջին դարուց թանձր մառախուղին մէջ գրեթէ թաղուեր էին, քիչ ժամանակէ նոր կերպարանք մը զգեցան :

Մեծն Պետրոս Առևսիոյ(1) և անմահն Քրետերիկոս Նը-

(1) Այս երեւելի անձը ծնաւ 'ի Մոսկուա 1672, ու տասնեութ տարեկան հասակին Ռուսիոյ դահն ամբարձաւ : Տղայութիւնը լաւ դաստիարակուած չըլլալով, պատանեկութեանը մէջ ալ քեռնը խորամանկութեամբը մոլի ընկերներէ շրջապատուած, ապականեցաւ բարքը: Բայց շուտ մը իբր թէ սթափելով, որոշեց իւր վայրենի հպատակներն քաղաքակրթել եւ կառավարութեան դրութիւնը բարեկարգել: Բնութեամբ աշխոյժ եւ կազմուածքով ուժեղ անձ մ' ըլլալով, դժուարութիւն մը չկրցաւ զինքը վհատել: Չինուորութիւնը յառաջինն գրաւեց իւր ուշադրութիւնը: Ուստի եւ իբր սոսկական զինուոր ծառայելով զօրաց մէջ, մինչեւ հրամանատարութեան աստիճանն բարձրացաւ, Ասանկով տիրապետող թերութեանցն քաջ ծանօթանալով, կարեւոր բարեկարգութիւններ մտցնել կարողացաւ: Նաւատորմիդ մ' ունենալու փափաքը յետոյ ծնունդ առնելով իւր միտքը, Արքանժելի մէջ Հոլանտացի եւ Անգղիական նաւերը իբր պարզ նաւաստի ծառայութիւն կ'ընէր: Եւ Հոլանտիոյ Սաարտամ կոչուած նաւաշինութեան տեղին՝ հիւսնութիւն, երկաթագործութիւն եւ առագաստաշինութիւն ուսաւ: Բոլոր գործարանները պատեցաւ, դիտեց գործերն մանրամասն հանգամանօքը: Հիւանդանոցներն անգամ այց երթալով ատամնարութաւթիւն, արիւն առնել եւ մէկ քանի վիրարութական ուրիշ գործողութիւններ ալ ուսաւ: Երկու ամառ Հոլանտիա մնալէն վերջը, Անգղիա անցաւ նաւաշինութեան վրայով աւելի քաջ ծանօթութիւններ ստանալու պատ-

ըուսիոյ գիտութեանց տարածմամբն գրեթէ մէկ վայրկեանի մէջ Հիւսիսոյ վայրենիները 'ի մարդիկ քաղաքակրթեալ կերպարանաւիոխեցին :

Պէտք չէ այսու ամենայնիւ մոռնալ որ միշտ ընդգիմութիւնք , հակառակութիւնք , նախատինք և վիշտք ազգա-

ճառաւ , եւ համար նաւ մը շինել տալով ինքն ալ անձամբ վարձուորի մը պէս կ'աշխատէր :

Անդդիայէն Աիենա ճանապարհորդեց եւ անտի Իտալիա պիտի անցնէր , երբ ապստամբութեան մը լուրն իրեն հասնելով , զինքն ստիպեց Ռուսաստան վերադառնալ : Գրեթէ մէկ վայրկեանի մէջ ապստամբութիւնը նուաճիլով եւ գլխաւորները տարօրինակ խրատութեամբ պատժելով , (որուն համար իրաւամբ կը մեղադրուի , խաղաղութիւնը վերահաստատեց : Այնուհետեւ ուշադրութիւնը դարձոյց հպատակաց դաստիարակութեանը , վարժարաններ հաստատեց , ճարտարութեան ու վաճառականութեան խրախոյս տրուաւ : 1703 ին Բեդրպուրկ հիմնարկեց : Այսպիսի բարեկարգութեան միջոցն արտաքին թշնամիներ ալ պակաս չէին . բայց Պետրոսի անյողդողդ արիութիւնը , աննկուն կամքը , յարատեւութիւնը , իր երկիրները պաշտպանելէ զատ , Հիւսիսոյ Աղէքսանդրի , Վարոյոս ԺԲին Շուետաց բանակն ալ ջնջելու կարող եղաւ : Այս պատերազմներուն միջոցաւ բոլոր Ֆինլանտ եւ Էսթոնիայի ու Լիվոնիոյ գաւառներն իւր իշխանութանը ներքեւ մտցոյց . եւ արժանալով Մեծն Պետրոս , Վայսր Ռուսաց եւ Հայր իւր երկրին՝ կոչուելու , ուշադրութիւնը կրկին խաղաղութեան արհեստներուն դարձոյց : Մեռաւ 1725 : Մեծին Պետրոսի ջանքերը 'ի քաղաքակրթել Ռուսիոյ ընդարձակ բայց խոպանացեալ կայսրութիւնը , վայրենի ցեղերէ բաղկացեալ եւ գազանական սովորութեանց տէր ժողովուրդներն , որոց բոլորովին անժանօթ իր դրականութիւնն ու գիտութիւնք եւ քաղաքականութեան արհեստներն , հսկայական կրնան կոչուիլ . տակաւին կ'երեւի թէ բարեկարգչի մը բովանդակ ձիրքերն չունէր : Քաղաքակրթութիւնը յառաջ տանելու ուժգին փափաքովն , շատ անգամ ճշմարիտ անգթութեամբ վարուեցաւ իւր ժողովրդեանը հետ . եւ կենցաղագիտութեան ու ողջմտութեան կողմանէ մեծ պակսութիւն ցոյց տուաւ անխտիր՝ հազարաւոր օտար սովորութիւններ իր երկիրն ընդունելով , առանց նկատելու ժամանակը , տեղին , եւ ուրիշ կցորդութիւնները . եւ զՌուսերը սկզբնական ազգ մը կազմելու տեղ , նմանող ժողովուրդ մը ձեւացոյց :

սիրաց ջանիցը կցորդքն են, դժուարութիւնք դժուարութեանց ետև կը յորդեն:

Բայց մի թէ ազգի մը, մարդկութեան մէկ ամբողջ մեծ գերդաստանին (մանաւանդ այն գերդաստանին՝ որոյ ինքն մէկ անդամն կը կազմէ և որոյ երջանկութեանն և ապերջանկութեանը ինքն մասնակից է), անմահութեան փառքը, չէ՞ արժանի այդպիսի զոհի մը:

Եւ վայ այնպիսեաց որ վհատութիւն կը պատճառեն: Բոլոր պատմագիրք ազգային իրաւամբ կը վատահամբաւեն զՎասակ Սիւնի և զՄերուժան իբր մատնիչք աշորենեաց: Վժբադդութեամբ ի՞նչ Վասակներ, ի՞նչ թունաւոր օձեր, ի՞նչ խայթիչ կարիճներ ազգիս ծոցը չեն գտնուիր հիմա, որ անդադար լուսաւորութեան տարածմանը դէմ կը մեքենագործեն: Ե ինձու պատմութիւններով, ծուռ մեկնութիւններով ճշմարիտ ազգասիրաց ձեռնարկութիւններն կը պախարակեն, պարզամիտները կը գայթակղեցնեն. կարճ խօսքով ամէն ճգամբ խոչ ու խուժ կ'ըլլան յառաջագիւմութեան գործոյն. որպէս զի իրենց յոռութիւններն ու տգիտութիւնը երևան չելնէ:

Մնչուչտ այսպիսիք ալ յականէ յանուանէ իբր Վասակք ներկայ դարուս պիտի անցնին ազգային մատենագրութեանց մէջ և նիւթ պիտի ըլլան յաւիտենական անիծից յաջորդ դարերը:

Գ Լ Ո Ւ Խ Թ Ը

ԵՐԱՆՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Այնպիսի անհասկացիկ և անբարեխառն ժողովուրդներ մ' է, ոչ միայն առ ծնողս, որ Աստուծոյ ևս մեր առաջին ու ամենամեծ բարերարքն են, այլ և բոլոր անոնց դէմ, որ կերպիւ իւր մեզ բարիք գործեր են:

Այնպիսի անհասկացիկ ճամար թէպէտ և մասնաւոր օրէնք մը չէ սահմանուած, տակաւին հիները այն եղևոնագործութեանց կարգն կը դասէին ասիկա, որոնց վրէժխնդիրը Աստուած է միայն. քաջ համոզուած ըլլալով որ ապերախտները այս կեանքիս մէջ անգամ չարաչար պիտի տանջուին խղճահարութեամբ ու անպատիւ պիտի ըլլան:

Այնպիսի անհասկացիկ որքան որ անպատիւ, ատելի մոլութիւն մ' է, այնքան ալ ընդ հանուր եղած է: Անկերութեան մէջ ո՞րքան օձեր կը գտնուին, որ կարօտած օգնութիւննին ընդունելէն ետեւ, զիրենք ջերմացնող ծոցն խայծել կը նային: Մոսկալի հրէշներ, արժանի երկնից վրէժխնդրութեանն ու երկրիս անիծիցը: — Միքայէլ Վալաֆաթ Այսրը Օռէ կայսրուհւոյն օգնութեամբը գահն ելնելէն ետեւ, հազիւ թէ չորս ամիս անցեր էր, երբ զբարերարութեան պաշտէն արսորեց: Այս ապերախտութիւնը այն աստիճան զայրացոյց զժողովուրդը, որ իսկոյն գահէն վարձդեցին, և աչուրները փորելով, վանք մը փակեցին զինքը: —

Թշուառութիւնը, կ'ըսէ Ս. Վիրքը, պիտի չբաժնասի անոր արեւն՝ որ զբարին չարեօժ էր խոխարինէ: — Ար պատմեն թէ նոյնպէս անուր Մանուա կոչուած քաղքին մէկ թա-

գաւառըրը գետն ընկնելով, բարեբաղդաբար ատրուկ մը
 զինքն ալստերէ, մաշէն բռնած գուրս հանելով ջրէն :
 Այսք թագաւորը թմրուածնէն կը սթափի, կը հարցնէ
 թէ ո՞ր է եղեր զինքը գետէն հանողը, և երբ կ'իմանայ
 թէ ստրուկ մ' է, կոչել կուտայ և առատաձեռնու թեամբ
 զինքն վարձատրելու տեղ, ինչպէս ամէն մարդ կ'ակնկա-
 լէ, սա հարցումն կ'ընէ. ինչպէ՞ս համարչակեցար թագաւորիդ
 քիտուն վրայ յետո՞րնելու : Այլ անմիջապէս կը հրամայէ որ
 զինքն սպաննեն : —

— Աւրիշ անգամ մը նոյն թագաւորը աստիկ գինով-
 ցած, իւր կանանց մէկուն հետ նաւակ մը կը նստի և կրկին
 գետը կ'ընկնի : Աինը գիւրաւ կրնայ եղեր զինքն ազա-
 տել, բաց կը թողու որ կորսուի : Այլ երբ իրեն գէմ խո-
 տող մը կ'ըլլայ, սա պատասխանն կ'ընէ, ինչո՞ւ սորո-
 չանմը դէտ չէ՞ հոգեք : —

Այլերախտութիւնը որ մը խիստ հանճարեղ կերպով մը
 պատճուելցաւ դատաւորէ մը — Ածծի մարդուն մէկը
 հարիւր թալէնով քսակ մը կորուսանելով, աղքատիկ
 մարդ մը գտաւ զայն և մէջէն մէկ թալէնն առաւ, որ
 գլխարկ մը գնէ : Աորուսոյն իմանալով թէ այս է գտեր
 քսակը, եկաւ իրեն աղաչեց որ տիրոջ գարձնէ գայն :
 Աանսոյն ալ իսկոյն այնպէս ըրաւ, խոստովանելով միան-
 գամայն թէ մէջէն մէկ թալէնն առեր է :

Ածծի մարդը այնքան վշտացաւ այս բանիս վրայ, որ
 բարկութեամբ սկսաւ գոչել. «Աստի՛ թէ թագաւորս քոզցե-
 իս. թէ՛ զի սր հարկս հար շուրջ չէ՛ ընդունիր քոսիլը : Ան-
 տոյ տարաւ զինքն դատաւորին առջին, որ երկու կողմին
 ալ ոչ զն'իլէ ետեւ, առաւ քսակն ու ըրաւ կծծի ն. «
 Աստի՛ կորուսած քոսիլդ թէ՛ հարկս թագաւորս, այնպէս չէ՞.
 Այո, այնպէս է, պատասխանեց կծծին. «Արե՛մ, աւելցուց
 դատաւորը, այս քոսիլը քոս սորոցոսածդ չէ, չէ ոտ, թէ՛

իննսունն և ինն թալէս հայ ժայն : Այսպէս ըսելով միւս մարդուն տուաւ քսակը : —

Երախտագիտութիւնը շատ անգամ արտաքին ցոյց մը, անցաւոր զգացում մ' է : Ա՛հէն բարիք մ' ընդունած ատեն, երախտագիտութեան ուժգին զգացում մը ծնունդ կ'առնու մեր սրտին մէջ, բայց ատեն անցնելով, ընդունած բարեաց յիշատակին հետ կ'անհետանայ : — Այսպէս իմաստասիրաց մէկուն անգամ մը հարցին թէ ո՞ր բանը մարդոյս մէջ ամենէն առաջ կը հնանայ, պատասխանեց, ընդունած բարիքն :

Անտոս Ա. այսպէս չէր խորհեր : Ասիկայ առաջին անգամ շուրջ գնացած ատեն այնքան ազքատիկ միճակի մէջ կը գտնուէր՝ որ ողորմութիւն խնդրել ստիպուեցաւ : Այլ մէկ քանի դրամ ձեռք ձգելէն ետեւ սկսաւ վարանիլ թէ արդեօք անօթութիւնն անցընելու համար գործածէ, (զի անօթի էր) թէ ջուխտ մը կօշիկ գնէ : Խանութպանին մէկը ասոր խորին մտածութեան մէջ ըլլալն նշմարելով, պատճառը հարցուց : Այս ալ անկեղծաբար խոստովանեցաւ ճշմարտութիւնը, բայց անանկ ազնիւ եղանակաւ մը որ խանութպանը 'ի գուժ շարժելով, իր տունը տարաւ, և կերակրելով զինքն, վարանմունքէն ազատեց :

Անտոս Ա. երբ պապութեան գահն ամբարձաւ, չըմոռցաւ այս խանութպանին բարերարութիւնը, այլ իշխանավայել առատաձեռնութեամբ վարձատրեց զանիկայ :

Անբան կենդանիներն ալ շատ անգամ անկեղծ երախտագիտութեան օրինակներ մեզ կը մատուցանեն . ահաւասիկ հետեւեալը : — Առտֆոռուա տը լա Վուր սեպուհը որ խիստ համբաւաւոր է իր քաջասրտութեանը համար, անգամ մը մէկ քանի անձանց հետ զուարճութեան համար ձեմելու ատեն, առիւծի ահռելի մոնչիւն մը լսեց, որ կ'երևէր թէ ցաւ մը ունէր : Քաջասիրտ պատերազմականը

վեհանձնութեամբ մացառն կը մտնէ ընդդէմ կամաց իւր
 ընկերացն, որ անտի հեռանալ կ'ուզէին. կը վազէ դէպ'ի
 ձայնին եկած տեղը ու կը տեսնէ որ սոսկալի մեծութեամբ
 օձ մը առիւծին սրնգացն ու փորին փաթթուելով անանկ
 ողորմելի վիճակի մը մէջ ձգեր էր զկենդանին, որ ամենե-
 ւին զինքն պաշտպանելու միջոց չէր մնացեր: Առիւծն իր
 վտանգէն ազատելն կ'ըլլայ Ատֆուուայի մի միայն մտած-
 մունքը այս վայրկեանիս մէջ: Աւտի սուրն կը քաշէ և
 անանկ վարպետութեամբ կը զարնէ, որ իսկոյն օձը կը
 մեռնի, առանց ամենափոքր մնաս մ'ըլլալու առիւծին:
 Խեղճ կենդանին երբ զինքն ազատած կը տեսնէ, սրտա-
 շարժ եղանակներով կ'սկսի իւր երախտագիտութիւնը
 յայտնել, սիրալիր կերպով դուրգուրալով, գգուելով իր
 ազատիչը, և անոր ոտուրները լիզելով: Այս ժամանակէն
 'ի վեր անանկ սէր կը կապէ Ատֆուուայի վրայ, որ ալ
 չկրնար իրմէ զատուիլ: Հաւատարիմ շան մը նման ուր
 որ երթայ ազատիչը, հետը կ'ընկերանայ. և անոր թշնա-
 միներէն զատ մէկուն ալ մնաս չհասցըներ: Բայց ամե-
 նէն զարմանալին սա է որ երբ Ատֆուուա նաւով Վաղ-
 դիա դառնալ կ'ստիպուի, նաւապետն ու նաւաստիքը զկեն-
 դանին նաւն ընդունել չուզելով, ասիկա այնքան կը վշտա-
 նայ, որ զինքը ծովը կը նետէ և նաւուն ետեէն կը լողայ
 մինչև որ ուժաթափ կ'ընկղմի: —

Այ՛ի ամաչեր ուրեմն երախտագէտ ըլլալու և երախտա-
 գէտ երևելու. այլ մանաւանդ նայէ որ հրապարակաւ
 յայտնես զգացումդ, երբ այնպէս ընել սկտք ըլլայ:
 Սուր երախտագիտութիւնը շատ անգամ ապերախտու-
 թեան մէկ արդիւնքն է:

Անն այնպիսիք ալ, որ երբ մէկէն բարերարութիւն
 մ'ընդունին, իսկոյն կը նային որ փոխարէնն հատուցա-

նեն . որպէս զի ալ այնուհետև անոր վրայ չհասնեն :
 Եւ ալ սկսակ մը ապերախտութիւն է . և դրամական
 պարտուց նման կ'երևի թէ ընկալեալ բարերարութեանց
 յիշատակը միշտ անհանգիստ կ'ընէ զիրենք . ուստի և կը
 ջանան որ շուտով վճարեն :

Եւ ինչպէս որ ապերախտ սիրտերը ընդունած բարե-
 րարութիւններն ժողովուրդ փաստեր կը հնարեն , նոյնպէս
 ալ շահախնդիր հոգիները երախտագիտութեան արտաքին
 ցոյցներն ընելու միշտ առիժներ կը փնտռեն . վասն զի
 գիտեն թէ երախտագիտութիւնը յարդիւրի առաքինու-
 թիւն մ' է , և թէ ապերախտը ամէն ատեն կ'ատուի ու
 կ'արհամարհի : Եւստի համբաւ մ' ունենալու համար միշտ
 կը նայ ն որ երախտագէտ երևին որով և նոր ու մեծա-
 գոյն բարերարութեանց արժանանան : Եւստի է ահա շա-
 հախնդիր մարդուն նպատակը :

— Եւստի իկոս ՎՍ . Կաղզիոյ թագաւորը 10,000 ոս-
 կի մեկէն ընդունելով , իր շուրջ , գտնուող պալատական-
 ներուն դառնալով , ըսաւ . « Չեմ ուզեր որ այս գո մարը
 սնտուկս մտնէ , ով որ ինձ երևելի ծառայութիւն մ' ը-
 րած է , թող խօսի » : Եւ մէքն ալ սկսան խօսիլ ու գոյնի ի-
 րենց գործերը : Եւստի աղաչիրը՝ որ միսներէն յետնեալ
 չէր գտնուեր նախանձաւորութեամբ իւր հետոնը շա-
 հուն , համեստութեամբ սա խօսքն ըրաւ . « Անչէ ցարդ
 վեհափառ Տէառնէս ընդունած առաքելուն բարերարութիւն-
 ներս այնքան շատ են , որ անոնց արժանի ըլլալու փոխան բո-
 լորովն սիրտս գրասած ըլլալով , նոր բարերարութեանց համար
 ցանկութիւն ճշ չկրնար պարճաւել » : Եւստի խօսքին այնքան
 հաճեցաւ թագաւորը , որ տասն հազար ոսկին ամբողջ
 ատենադպրին շնորհեց : —

Երախտագէտ կարծուած մարդոց մեծագոյն մասը այն
 պարտականներուն կը նմանին , որ փոխ առած դրամին

չէ թէ իբր պարտք կը վճարեն , այլ ուրիշ անգամ դիւրաւ
 նոր փոխառութիւններ ընել կարող լուր , որ դիտուածք :
 Այլ քանի որ մարդս բարերարելու վիճակի մէջ կը գտնուի ,
 ապերախտութիւն ընող շուրջ իրեն գէժ : Անգժ երախ-
 տագիտութիւնը , ինչպէս նաև սուտ բարեկամութիւնը ,
 այն ատեն կը յայտնուի , երբ ալ բարերարելու անկարող
 ես :

Բնկերութեան մէջ տեսնուած բարերարութիւնները
 ընդ հանրապէս անանկ շահախնդիր վախճաններու համար
 եղած են , որ հողիւ թէ երախտագիտութեան կ'արժանա-
 նան : Այսու ամենայնիւ վեհանձն սիրտ մը չքննելի այդ
 շարժանիքները՝ այլ կը նայի որ ընդունած բարերարու-
 թիւնը միայն գրաւէ իւր ուշադրութիւնը . և մինչև ան-
 գամ եթէ բարերարողը իւր շնորհներն՝ ծառայութիւննե-
 րը իւր չար ու անարժան նպատակներովն անարգելի կ'ը-
 նէ , տակաւին չամօշեր իւր պարտաւորութիւնը խոստո-
 վանելու ամենուն առջին :

Զանք ընելով միանգամայն որ փոխարինելու պատե-
 հութիւն չկորուսանէ . զի կ'զգայ թէ այնպիսեաց երախ-
 տագարտ մեալը անհաճոյ բան է :

Իսկ թէ որ բարերարիդ գլխաւոր նպատակը զքեզ
 հանգիստ ընել , քու բարօրութեանդ նպատակ է , պարզ
 երախտագիտութեամբ մը գոհ մի ըլլար . այլ ջանք ըրէ ,
 որքան որ հնար է , այն պարտաւորագաւէտ երկիրնե-
 րուն նմանելու , որ իրենց ընդունածէն աւելի պատու կը
 բերեն : Այլ երբ դժբաղդութեամբ բարերարող անձկու-
 թեան մէջ ընկնի , ժամ նակ մի անցընել , ցոյց տուր ի-
 րեն անմիջակէս քու սիրոյդ , երախտագիտութեանդ հա-
 լաստիքը :

Անգղիոյ Լենրիկոս Ա. Թագաւորին առաջին պաշ-

տօնեայ, Կարտինալ Ալբի, (1) երբ պաշտօնէն ընկաւ, բո-
լոր ազնուականներն ու ժողովուրդը սկսան զինքն ատել
ու արհամարհել բաց ՚ի Քից Աւիլեամս անուն անձէն, որ
ոչ միայն Կարտինալին երևելի տաղանդներն ու ձիրքերը
կը գովէր, այլ և համարձակեցաւ զինքն իւր դեղի տունն
հրաւիրելու, և երբ Կարտինալը հոն գնաց, խիստ սիրալիր
ընդունելութիւն մը ըրաւ: Թագաւորը այս բանս իմա-
նալով, կոչեց զԱւիլեամս և նախատական կերպով մը հար-
ցուց իրեն թէ ի՞նչ յանդգնութեամբ զդատապարտեալ
Կարտինալը իւր տունը ընդունել է: Տէր ի՞մ պատասխա-
նեց Աւիլեամս, ես ոչ անհոնապանդս եմ Ձեր Աւելագոյնաւոր-
նը, ոչ չոր փողոսացի, ոչ ալ անհասարակ իմ հայրսոսի մը: Ի՞մ
որտանս ընդ տանս ժամբոս ոչ անարգութեամբ պաշտօնեայն, ոչ ալ
ամբաստանեալ մարմնիչը, այլ ի՞մ հին բարեկամս, ունեւէլի որեւ,
պաշտպանեալ է, որ ինչ հաց որտեւր, ևս որտեւ պարտաւոր եմ ի՞մ
դէրսակեցութեան: Ի՞նչպէս կրնայի իշտաւորութեան մը թողաւ

1 Կեծանուն Կարտինալ քաջ քաղաքագէտ, զաւակ մնալա-
ճառի, ծնաւ ՚ի Յիբսուիչ 1471 ին եւ դաստիարակեցաւ Օքս-
ֆորտի համալսարանը, իր տաղանդներովն շատ գրաւելով բարձր-
աստիճան անձանց ու շաղրութիւնը, Անգղիոյ Հենրիկոս Է ին
քահանայ ընտրուեցաւ: Յետոյ Հենրիկոս Ը ՚ի ալ հաճոյանա-
լով, զանազան բարձր պաշտօններու հրաւիրուելէն ետքը, վեր-
ջասէս կարգեցին Կարտինալ եւ առաջին պաշտօնեայ Անգղիոյ:
Աւրիչ թագաւորներն ալ այնքան մեծ համարում ունէին իր
վրայ որ ծառայութիւնները դրամով գնելու չէին ամաչեր: Եւ
անշուշտ Պապութեան ատուան կը բարձրանար, եթէ իւր տերը
իրեն դէմ չթշնամանար զթագուհին արձրկելու համ չգտնուե-
լուն համար:

Այս դէպքէն ետեւ՝ ալ յաջողութիւնը հեռացաւ Կարտինա-
լէն: Կէկ քանի անգամ հետ զհետէ դատապարտուելէ ու ներումն
ստանալէն վերջը վախճանեցաւ ՚ի Վէյսէսդր 1530. անմահ յիշա-
տակ թողլով իր անուանը Անգղիոյ մէջ ըրած զանազան ուսու-
մնական հիմնադրութիւնները:

այնպիսի աստուածային բարեբար ճշ: Ահ, Տեր ի՞՞, ե՞նի այնպե՞ս
 ընէի, աշխարհիս ամենէն ապերախոյ, ամենէն անհասարկ ճարտն
 չէի՞ ըլլար: Ապագաւորը հիացմամբ լցուած անանկ գոհ
 եղաւ Աւիլեամնին վեհանձնութենէն, որ անմիջապէս զինքն
 ասպետութեան կարգն բարձրացոյց, և իրեն խորհրդա-
 կան ըրաւ:

Ահկերոն կարճ բայց խիստ սլատուական կերպով ճա-
 ուած է երախտագիտութեան վրայ: Արկու բան պէտք է
 մտածել, կ'ըսէ անիկայ բարերարութեան նկատմամբ.
 մէկը՝ ընդունած բանը կամ անոր օգտակարութիւնը. միւ-
 րը՝ բարերարողին սէրը կամ շնորհալի եղանակը: Ա՞նչ
 նոյն արդար հատուցում ընելը դիւրին է. իսկ երկրոր-
 դին կատարելալ փոխարինութիւն՝ եիբէք չկրնար ըլլալ.
 զի յաջողութեան մէջ անջնջելի կը տպաւորի: Այն-
 բարատ է ուրեմն այն որ կարող ըլլալով, ընդունած բա-
 րիքն չփոխարիներ: Այոնպէս ասերախտ է այն որ հազիւ
 թէ հատուցումն կ'ընէ, կը մոռնայ իր բարերարը. և զին-
 քրն բոլորովին ազատ կը համարի ուրիշ սարտաւորու-
 թիւններէ: Աւստի քաջ կը խօսի Անդաստազիոս: Ա՞տե-
 լութիւնը

Ա՛ վարձք սովորական
 Ա՛ եճամեճ բարեաց:
 Ա՛ ատէ ապերախոյ
 Ի՛նդունած բարեաց
 Ա՛նջինջ յիշատակը:

Ա երջապէս ամէն ընդունուած բարերարութիւն մէյ-
 մէկ շղթայ են, որուն պէտք է մինչև ՚ի մահ կասուած
 մնայ ընդունողը. և զանիկայ կտարել խղել ուզողը կը
 հակառակի արդարութեան ու փոխադարձ սիրոյ օրինաց:

Աարձ խօսքով, ուր յարաբերութիւն կայ, հոն պար-
 տաւորութիւն կայ: Աւ ի՞նչ յարաբերութիւն բարերա-

քննոյն ու բարերաւիւն մէջն եղածէն աւելի արդարաւի
կրնայ ըլլալ : Անչ պարտաւորութիւն ընկալալ շնոր-
հաց յաւերժական յիշատակն պահելէ և միտ երախ-
տա պարտ երևելէ աւելի նաւիրական կրնայ ըլլալ :

Ք Լ Ո Ւ Խ Թ

ՄԱՐԴԱՍԻՐԱՍԹԻՒՆ

Մարդասիրութիւնը կ'աւսուցանէ մեզ որ բոլոր մար-
դիկ իրր թէ մեր եղբայրն համարիմք և մեր կ'սրտու-
թեան մէջ եղած ամեն օգնութիւնն իրենց ընկմք : Այն-
քան ընական է մարդոյս այս առաքինութիւնը , որ բա-
ւսկան է որ մէկը ախար կամ վշտացեալ անսնեմք
խոյն սրտերնիս ՚ի գուժ կը շուժի : Անձան թմ կուռն
արտասուքք , դեռ պատճառն չհասկցած , կը ճնէ մեր
օիրտը , և միայն մարդասիրութեան անկերական յօդա-
կապովն մեզ հետ միացած մէկ են արեւրաւի աղաղակը
իրեն օգնութեան վաղելու կը դրդէ զմեզ առանց մինչև
անգամ ժամանակ տալու խոյան :

Մարդասէր սիրտը աւելի ուրիշին վրայ կը խղճայ
քան թէ իւր վրայ հոգ կը տանի : Տեքինկէնի պա-
տերաղմէն ետև , Ասղ լի սցի փրաւորած սպայ մը ,
Անդղայ թագաւորին որդոյն Քրմպրէնտի դքսն
վրանը տարուեր էր : Այն միջոցին փրաքոյժներուն ա-
մէկըն ալ ուրիշ անդ զքսղած ըլլալով , այս գինուորին
օգնութեան հանող մը չյտեսեցաւ : Աայց Քրմպրէ-
նտի դոքսը , որ ինքն ալ վէրք մ' ընդուներ էր , իս-

կոյն հրամայեց որ զինքն թողուն և զՎաղղիացին խնամեն, ըսելով. Վասն Վաղղիացին խնամեցէ, որ ինէ անելէ վերաորեալ է, և զէ հարժեր ին ինչ զառ խնամողներունի :

Վ. Եւ գեղեցիկ գործը նոյն աւուր յաղթութենէն պակաս պատիւ չըրաւ երիտասարդ իշխանին :

Թշուառութեան մէջ մէկը տեսնելու ատեն զգացած ցաւերնիս, համակրութիւննիս ոչ թէ տկարութիւն, այլ սիրոյ բնական զգացում մ' է, որ պատիւ կ'ընէ մարդկութեան, նեցուկ կ'ըլլայ բարեկազմ սրտից և ակներև կ'ապացուցանէ աշխարհիս կառավարուիլը գերագոյն էակէ մը, որ ամէն բան իւր վախճաններուն ծառայել կուտայ : Վրարիչը զմարդիկ ընկերութեան համար սահմանած ըլլալով, որուն մէջ անշուշտ ոմանք երջանիկ պիտի ըլլան և ոմանք թշուառ, իբր շայր Վախախնամող, անանկ զգացում մը գրեր է մեր սիրտը, որ ուրիշին թշուառութիւնը տեսած ատեն, անմիջապէս կը վշտանամք և կ'ուզեմք որ անոր օգնեմք. որով մեր վիշտն ալ կը դադրի :

Վ. հաւաստիկ գեղեցիկ օրինակ մը :

Պոնդնոայի պատերազմէն ետև, որուն մէջ Վաղղիացիք յաղթող հանդիսացան, Վնգղիոյ կառավարութիւնը որոշեց նոր օգնութիւններ խրկել դաշնակից տէրութեանց : Ուստի Վնգղիոյ մէջ գտնուած զինուորական գունդերուն հրաման եղաւ որ այս ինչ տեղուանքն ժողովին, որ զօրապետները պատերազմի բանակը խրկելիքնին ընտրեն : Վ. Եւ նպատակիս համար Ս. Յակոբայ Պարտէզ կոչուած տեղը հաւաքուած գունդը հետաքրքրութեամբ դիտելու գնացողներուն մէջ մանկամարդ կին մը կար տասնևվեց տարեկանի մօտ, որ իւր

գեղջկական հազուատուփն ու տխուր և անհանգստութիւն ցուցնող դիմօքը մեծ ազդեցութիւն կ'ընէր ամենուն սրտին : Ասիկայ զինուորաց մէկուն կինն էր : Այլը հարուստ դղեակի տիրոջ մը որդին ըլլալով, շատ աշխատեր էր, որ ծառայութենէ ազատ մնայ . իսկ բարեկազմ հասակն ու առօյգութիւնը անկարելի ըրեր էր այս բանիս ստացումը : Ազիւ թէ ամուսնոյն անունը կարդացուեցաւ, երիտասարդ կինը ալ չկրցաւ զինքն զրսպել . սկսաւ լալ, կոծել ու մարեցաւ, ընկաւ : Անդիսականաց օգնութեամբը խելքը քիչ մը գլուխը գալէն ետեւ, գնաց գնդապետին ոտքն ընկաւ, որ գթայ իւր վրայ և այրն իրմէ չզատէ : Վայց գնդապետը անողոքելի մնաց : «Ուրեմն», ըսաւ ան ատեն դժբաղդ կինը, «ես ալ իր հետը կ'երթամ ու մասնակից կ'ըլլամ իւր վտանգներուն» : Այսպէս ըսելով, ամուսնոյն վիզը պըլուեցաւ և արտասուօքն երեսները կը թրջէր : Այս միջոցին յանկարծ երիտասարդ մը ներկայացաւ գնդապետին, ըսելով . Այս խեղճերը, կը տեսնեմ որ իբար շատ կը տերեւն և իբարձե գոհ են . և կինը կ'երևի թէ յընէ : Իսկ ես ոչ կին տանիմ, ոչ հայր, ոչ ալ զաւակ, ընդունել՝ զիս տնոր տեղը . ես ալ տնոր զառն արայց եմ, և կրնամ որունիլ պատերազմի վշտացը : — Օտարացուիւնս մտնելու փափակ տանիմ, հարցոյց իրեն գնդապետը : Անկեան ոչ պատասխանեց երիտասարդը, ասէնամէջ վարչարարութեան անգամ զիս զինուորութեան վն կրնար հակասիտել : Սակայն այս որոշման նպատակը արիշ Բան վէ, եթէ ոչ Ծառայութեան մ' ընել այս խեղճ զինուորին :

Գնդապետը ան ատեն զարմանալով երիտասարդին բարեսրտութեանը վրայ, ուզածն կատարեց . թէ և ամուսնացեալ զինուորը դժուարաւ զիջաւ իր այս կերպով ազատուելուն :

Մեծն Ալֆոնս (1) Արաղոնի թագաւորը խիստ զարմա-
նալի օրինակ մը տուած է թշուառաց ցաւակցութեան :
(2) ր մը զինուորներով ու նաւաստնօք բեռնաւորեալ
նաւ մը ընկղմելու մօտ տեսնելով իսկոյն հրաման ը-
րաւ , որ օգնութեան երթան . բայց երբ իմացաւ թէ իւր
հրամանին գործադրութեանը արգելք կ'ըլլայ մօտակայ
վտանգը , իսկոյն նաւակ մը ցատկեց , որ խեղճերուն օգնու-
թեան հասնի , և երբ զինքն համոզել կը ջանային թէ ան-
ձը վտանգի մէջ չձգէ , սա խօսքն ըսաւ . *Je suis le plus
heureux homme de France* :

Գա'նք ըրէ ուրեմն այս բնական դրդումը , սրտագին
զգացումը ժամանակին զօրացընելու և հասակիդ համե-
մատ կրթութիւններով կատարելագործելու , որովհետև
ըստ ասից նախնի իմաստասիրաց մէկուն , ամէն բան
կրթութեամբ ունակութիւն կ'ըլլայ :

Այս պատուական զգացումը , որ զօրաւոր ազդեցու-
թիւն մը կ'ընէ թշուառութեան մէջ գտնուողներուն ,
մատաղ տղոց սրտից մէջ տածելու կամ զօրացնելու հա-
մար , օգտակար է երբեմն անոնց հետ հիւանդանոցներն ,
աղքատանոցները այցելել և հոն գտնուած խեղճե-
րուն մխիթարական գործեր ընել : — Անգամ մը Շուէ-
տի նահանգաց ժողովոյն մէջ ծերակոյտին մէկ անդամը
սա խօսքն ըրաւ , թագաւորական ժառանգին դաստիա-
րակ ընտրուած արքայազն անձին . *Արտաշէն իշխանը պէտք*

Թագաւոր Արաղոնի՝ Նէապօլսոյ եւ Սիկիլիոյ , ծնաւ 1384 ին , ու
մեռաւ 1458 ին , քառասուն երկու տարի փառաւորապէս թա-
գաւորելէ ետեւ : Ըրած պատերազմները իր արիութեանը անժխ-
տելի հաւաստիքը կրնան սեպուիլ . եւ իւր բոլոր կենացը մէջ
պայծառ կը փայլի իր մարդասիրութիւնը , վեհանձնութիւնն ու
ուսումնասիրութիւնը :

է որանիս աղփաստին գծած իրենիւր, ցոյցընէս իրեն անպար-
բութեան իշտատացելոց վիճակը և վճիտ կերպով հասկցընէս իրեն
որ ժողովութեանը զէ իւր Կաթողիկոսականութեան համար եղած են,
այլ իւր ինձօք ու առաքիւնութեամբը երջանիկ լլլալու համար:

Տանականութեամբ զարդարուած էակաց մէջ ամե-
նէն անպիտանն ու անարդը անգգայն է: Անգգայութիւնը
վայրագ, վայրենի կ'ընէ մարդս: Ասանկ մէկը վայրագ
գաղանի նման կը կոտորէ, կը խոզէ այն շղթաներն, որով
ընկերութիւնը յօդակապեալ է և մարդատեցութեամբ
ինքն իրեն կ'առանձնանայ: Տարեսրտութեան տեղ, ո-
րով մինչև ուրիշն գոհ չտեսներք, գոհ չենք կրնար
ըլլալ, անիրաւ անձնասիրութիւն մը կը կանգնէ. բոլոր
մարդոց կեդրոնն կը կարծէ զինքը. ընկերութեան մեա-
սակար և մտացածին մասնաւոր իրաւունքներ կը պահան-
ջէ և կը սեպհականէ անձին. կարծ խօսքով կը նայի որ իւր
օգուտը միշտ յառաջ տանի, առանց մտածելու թէ ի՞նչ
կ'ըլլայ ուրիշին: Տայց զարմանալին սա է որ շարունակ
այսպիսեաց նպատակները եղծանող արգելքներ, խոչըն-
դոտներ պակաս չեն ըլլար. ուստի ևս առաւել կը դժգո-
հին:

Մեծամեծաց մէջ այս ճշմարտութիւնը հաստատող օ-
րինակներ խիստ կը յաճախեն: Արբ իրենց մրրկալից բարձ-
րութեանը մէջ փոթորիկ մը ելնէ, արտասուքն գետօրէն կը
սկսին վազել այն նոյն աչուրներէն, որ քիչ մը առաջ եր-
կաթէ շինուած կ'երևէին. երբ բնութեամբ իրենց հաւա-
սար ստեղծուած, բայց դժբաղդութեամբ իրենցմէ ստորին
վիճակի մէջ գտնուող անձանց վրայ կը նայէին:

Աթէ մարդիկ բնականաբար իրարու հաւասար և ի-
րարու համար եղած են, պէտք չէ որ բարութեամբ
ու սիրով վարուին իրարու հետ, փոխադարձաբար ի-

րարու օգնելով : Ամենէն զօրաւորները , ամենէն հարուստները , ամենէն աւելի համարում ունեցողները պէտք է որ 'ի նպաստ կարօտելոց դործածեն իրենց զօրութիւնը , հարստութիւնն ու համարումը :

Արբ այնպիսի պարագայի մը մէջ դտնուիմք որ շատերուն կրնայ օգնութիւննիս հասնիլ , նախ պէտք է որ մեր բարերարութենէն մեծ բաժին մը հանեմք մեր արենակցացը , ազգականներուն , բարեկամներուն , հայրենակցացը . վասն զի մարդասիրութեան օրէնքը չեղծաներ այս կարգը , այլ ևս առաւել կը հաստատէ զայն :

Իսկ երբ այս յիշեալները մեր օգնութեանը չեն կարօտիր , ան ատեն որ և է մէկուն կրնամք և պարտիմք բարերարել առանց որոշելու ով ըլլալն , որ կողմէն և որ ազգէն ըլլալը : Ապրօտութեան մէջ բոլոր մարդիկ իրարու եղբայր են . քանզի մարդասիրութիւնը կը կործանէ բաժանման որմը , կ'եղծանէ մեր ամէն մտացացին պատճառանքն և բարեկամին ու թշնամւոյն մէջ տարբերութիւն չդնէր :

Ալ որ զգայուն սիրտ մ' ունի , կը տրամի ուրիշին թշուառութեանը վրայ , կ'ուրախանայ զայն թեթեցրնելով , և կը դժկամակի զանհիկայ ծանրացրնելու կամ թէ հաստատելու : Այիստ երևելի է 'Աերոն Ա կայսեր այն [սօսքը] որ ըրաւ , երբ թուղթ մը ներկայացուցին իրեն որ դա-

Այսպէս Հռովմայեցի , ճնաւ 37 թուականին եւ յաջորդեց Աղոդիոսի յորմէ որդեգրեալ էր : Այսպիսով թեան սկիզբները իր վարքը մեծամեծ ակնկալութիւններ զարթոյց Հռովմայեցւոց միտքը , բայց շուտով 'ի դերեւ ելին անոնք իր անտանելի բռնաւորական ընթացիւքը : 'Ի վերայ այսր ամենայնի կ'երեւի թէ իր վերայով եղած ամբաստանութեանց ոմանք , ինչպէս է Հռովմ քաղաքին այրիլը , անհիմն ստութիւններ են : Անձնասպան կորեաւ 68 ին Գաղբայի յաջող ապստամբութեանը պատճառաւ :

աստպարտեալի մը մահուան վճիռը ստորագրէ . Արամի
Թէ Գրեւ Էֆեփճայի :

Արտուրա Ա . կայսեր մէկ պատասխանն ալ ասկէ
ստորին չէ : Արքա ստոր իմաց տուին թէ այս ինչ պատժա-
պարտ անձը , այս ինչ քաղաքն է ծածկուեր , ըսաւ .
Լաւ եր , եթէ երեւ իմաց փայի + ի՞նչ որ ըլլաւ , փան
Թէ ինչ իր որ պահուելու :

Յուլիոս Արսար օր մը ճամբուն վրայ փոթորկի մը
բռնուելով , ստիպուեցաւ աղքատի մը տնակը մտնել : Այս
երբ իմացաւ թէ միայն մէկ սենեակ մը կայ , և հոն ալ
հիւանդ մը պառկեր է , չուզեց հոն մնալ . այլ բոլոր գի-
շերը մտակայ անձաւի մը մէջ անցոյց . քաղցրութեամբ
հիւրընկալին սա խօսքն ընելով . Անի առնէն պարտա-
տար արեղը թշտաթաց կը վայէ , առնէն հանգիստ արեղն ալ
հիւանդաց յարուսէ ըլլաւ :

Տիւրէն Մարաջախտը Հայր զինուորաց կոչուելու ար-
ժանացաւ իւր մարդասիրական գործովքը : Անգամ մը
Պաղղիական զօրքը ցաւալի յետախաղաց ընթացք մը
կ'ընէր , որուն մէջ Մարաջախտը տիւ և գիշեր շարունակ
շարժման մէջ էր՝ իր գունդերը Այսերականաց արձակ-
մանը դէմ պատսպարելու համար :

Այս միջոցին տեսաւ որ զինուորին մէկը ուժաժափ
ընկեր էր ծառի մը ոտքը , և մտակայ մահուան կ'սպա-
սէր : Հրամանատարը իսկոյն ձիէն վար իջաւ , զզինուորը
վերցոյց իր ձիուն վրայ դրաւ ու ինքն ոտքով մտէն կը
քալէր . մինչև որ կառք մը հանդիպելով , խեղճը հոն
դնել տուաւ :

Մարան երեկոյ մը երևելին Մալո , (խորհրդական Փա-
րիզու խորհրդարանին և առաջին հեղինակ ()րագրոյն
(Իրագիտաց) իր ծառային հետ երբ զբօսանքէ կտ կը

դառնար, փողոցի մը ծայրը մարդ մը դէմն ելաւ, որ
 ձեռքը ատրճանակ մը բռնած, իբրև խելացնոր քսակը
 կը խնդրէր, Վեռլ Էրեր եւ Էնդրո-Նի-նի, ըսաւ Սալօ. եւ
 մայն էրէ՛ ոսկի ունի՞մ զբաս, որ թեղ կոտորած ածնայն յա-
 ճարո-Նեա՞ք: Մնծանօթը զանոնք առաւ, և առանց բան
 մը ըսելու, մեկնեցաւ: Մն ատեն Սալօ հրաման ըրաւ
 ծառային որ ճարպիկութեամբ առանց տեսնուելու ե-
 տեւէն երթայ նայի թէ ուր կը մտնէ այդ մարդը
 և գայ իրեն իմացնէ: Ծառայն տիրոջը հրամանին հա-
 մեմատ գողին ետեւէն երթալով, տեսաւ որ խանութ մը
 մտաւ հաց գնեց. յետոյ տասն կամ տասներկու դուռ հե-
 ուուն տուն մը մտաւ, չորրորդ դասիկոնը ելաւ: Սենեա-
 կը մտնելով, հացը վար նետեց կնոջն ու զաւկրներուն ը-
 սելով. «Սերէք, ահաւասիկ հաց մը որ ինձ շատ սուղի
 նստաւ, անցուցէք անօթութիւննիդ. և գիտցէք որ այս
 օրերս ես պիտի դատապարտուիմ ու դուք պիտի ըլլաք պատ-
 ճառը», : Աինը՝ որ դառնութեամբ կուլար, ամուսնոյն
 բարկութիւնը շիջուցանելէ ետեւ, հացն առաւ և իր չորս
 զաւկրներուն բաշխեց. որ սովամահ կը կորնչէին: Ծա-
 ռայն այս ամէնը տեսնելէն ու իմանալէն վերջը, տիրոջը
 դարձաւ, տունն ու փողոցը լաւ մը դիտելով: Արկրորդ
 օրը առաւօտուն Սալօ դարձեալ ծառայն հետն առած,
 խելճին գտնուած փողոցը գնաց ու հոն հարցուց թէ այս
 ինչ տանը չորրորդ դասիկոնն ո՞վ կը բնակի: Իրեն ըսին
 թէ կօշկակար մը կը բնակի որ պարկեշտ մարդ մըն է,
 բայց ընտանիքն շատուր և ինքն աղքատ: Մյս ծանօ-
 թութիւններս առնելէն ետեւ, տունը մտաւ, ու չորրորդ
 դասիկոնն ելնելով, դրանը զարկաւ: Մնչ աղետալի տե-
 սարան մը բացուեցաւ աչացը, երբ սենեակէն ներս մը-
 տաւ: Հոն տեսաւ կին մը խիստ կարկատուն հագուստով

մը, չորս տղաք յարդի շեղջի մը մէջ թաղուած, որ իրենց
 միանգամայն իբր անկողին ու հագուստ կը ծառայէր. և
 մարդ մը՝ որուն գունաթափ երեսն ու աղքատիկ զգեստը
 կը ցուցնէր թէ թշուառութեան ներքեւ կը հեծէ: Այս
 խեղճ ընտանիքին գլուխը շուտով ճանչելով թէ այս էր
 այն անձը, որուն քսակը խնդրեր էր առջի երեկոյ, իս-
 կոյն Վալոյի ոտքն ընկաւ, և արտասուելից աչօք կ'աղա-
 չէր որ ներէ իրեն և բոլորովին 'ի կորուստ չմատնէ զինքը.
 խոստովանելով թէ գործ չգտնելուն համար ամէն բան,
 անկողին, զգեստ, ճերմկեղէն և ծախեր է ընտանիքն կե-
 րակրելու համար. և նախընթաց երեկոյին ալ ծախելու
 բան մը չմնալովն, յուսահատած և անօթութենէ ընտա-
 նիքն չմեռցնելու համար այս յանդգնութիւնը ընելու
 ատիպուեր է: Մի՛ վախճար, ըսաւ ան ատեն Վալօ. Ես + եղ-
 ճուստ հասցնելու համար չե՛մ եկեր հոս. գիտե՛մ որ դու հօշիւ-
 հար ես, ահա-ասիկ ա՛ր աս երեսուն տակն և դրամագլուխ-
 քրէ, որով հարե՛նաս աշխարհի և ընտանիքդ կերայելի, և թե՛ որ
 իճանում որ ժրտ-թեւօք գործիդ կը հեղուկս, սորոք գիտցեր որ
 զ+եղ չե՛մ հոսմար:

Գ Լ Ո Ւ Խ Փ

ԱՌԱՏԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ

ԱՌԱՏԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ այն ազնիւ առաքինութիւնն է, որ երբեմն մարդս իրմէ վեր կը բարձրացընէ, ուրիշին օգուտը իր օգտէն նախապատիւ համարել տալով : — Տանէզ Վաղղիոյ Վանկտօք գաւառին մէկ քաղքին Ապիսկոպոսը, իր թեմի եկեղեցականաց կողմէն Փարիզ պատգամաւորութեան գնալու ժամանակ, երբ ճամբու ծախուց համար հազար Փրանք մատուցին իրեն, չընդունեց այս գումարը՝ որ մեծ բան մը կը սեպուէր այն ատեն, ըսելով . Ի՞՞՞ եկամտոս բաւական է ինչ, և հօտիս օգտին համար ճամբորդութիւնս՝ ընելովս հազիւ ինչ ասինատիտը ծախուցութիւնս՝ ըրած կ'ըլլամ . զի արդէն ծանր էն անոր վէշտերը :

Սեւտոս Ա. ի առատաձեռնութեանն ալ նմանը չէ տեսնուած : Այս անձը ժողովրդեան թշուառ վիճակը բարելաւելու իւր բարձր աստիճանին շքեղութիւնը՝ բոլորովին աղքատաց օգտին զոհ ըրաւ : Անանկ տնտեսութեամբ կ'ապրէր, որ մինչև անգամ մաշած, կարկատուն շապիկ հագնելու չէր դժկամակէր : Քոյրը երբ օր մը քաղցրութեամբ իրեն ըսաւ թէ չվայլեր իրեն որ անանկ կարկատուն հագուտ հագնի, ժպտելով սա պատասխանը ըրաւ . Քոյր ի՞՞, թեր բարձրասարձան վիճակը պէտք է ճոջնէ թեղ ուստի ելնելնիս . ցնցոտիին երբեմն թեր ընտանեաց բաժինն չէի՞ն :

Առատաձեռնութիւնը շատ տալով չըլլար, այլ ժամա-

նակին տալով : Տառապանաց կամ անձկութեան մէջ
գտնուողին վիճակը բարելաւելու համար առատաձեռնե-
լը անշուշտ ամենէն գովելին է . թէ և ըստ ինքեան խիստ
մեծ շնորհք մը չըլլայ : — Ալբայեցի հովուի մը խրճիթը
օր մը յանկարծ բռնկելով , հազիւ կրցաւ բոցերուն մէ-
ջէն ազատել իւր որդին : Բոլոր ստացուածքը՝ որ խնայու-
թեամբ աւելցուցեր էր , զո՛հ եղաւ նոյն անգութ բոցե-
րուն : Հովիւը արտասուալից աչօք անմիջապէս Բոլաւի-
չինի անուն Պարոնին գնաց , (զի ասոր երկրին վրայ կը
բնակէր) և աղաչեց որ այն տարին երկրին սովորական
վարձքը՝ չպահանջէ , և ուրիշ պարտքերը չխնդրէ իրմէ :
Առատաձեռն Պարոնը սիրալիւ կերպով ընդունեց զհո-
վիւր և իրեն աղերսանացը ըսելէն ետեւ , ոչ միայն բոլոր
ուզածը կատարեց , այլ և հետն լալով , երկու հազար Փը-
րանք ալ պարգև տուաւ իրեն , որ երթայ իր ընտանեաց
թշուառութիւնը թեթեւցրնէ :

Առատաձեռնութիւն կոչածնիս շատ անգամ տեսակ մը
ունայնամտութիւն է . կ'ուզեմք որ ամէն տեղ առատաձե-
ռն կոչեն զմեզ , և այս կիրքը երբեմն այնքան կը զօրա-
նայ , որ մինչև անգամ ընչասիրութեան կը յաղթէ : Բայց
ճշմարտիւ առատաձեռն մարդը վեհանձն է , երևոյթի չը-
նայիր : — Անգամ մը Արարտինալ տ'Աստ իւր տունն հրա-
ւիրելով զԱրարտինալ տէ Մէտիչի խնճոյք մը ըրաւ և կե-
րակրէն ետեւ խաղի նստան : Տ'Աստ Արարտինալը տեսնե-
լով որ հիւրը կը կորուսանէ , սկսաւ անուշադրութեամբ
նետել թղթերը : Երբ ին վերջը երբ ասոր մարդոցմէն մէկը
իմաց տուաւ թէ Արարտինալ տէ Մէտիչին է կորուսանողը ,
Վիտե՛՛ , պատասխանեց տ'Աստ , Բայց ես զի՛նքն որոնեալ չհրա-
ւիրեցի որ իւր սրտիւ շահի՛ :

Միրէ՛ տալն , զի այս է բարի սրտի մը և ճշմարտիւ ազ-

նուական հոգւոյ մը նշանակը : Ահա նոյն հոգին , կ'ըսէր Պարսից թագաւոր մը , թէ յետո՛ր քոտրէի ընծաներ կ'ընդունի , և իսկուհի թե՛ մտած պարգևներ կ'ընէ :

Առջակաւորն Տիւրէն խիստ նշանաւոր էր այս մասին : Այս առաքինութիւնը՝ որ ծերոց մօտն այնքան հազուագիւտ է , անանկ բնական էր իրեն , որ իր կենաց վերջին տարիները առաջվնէ աւելի դիւրութեամբ դրամական ձեռնտուութիւններ կ'ընէր կարօտելոց : Օր մը իր բարեկամաց մէկուն հետ տեսնուած ատեն , հարստութեան վրայ խօսք բացուելով , ըսաւ . Չե՛մ կրցեր հասնուիլ թէ մարդ մը իր ոսկին ու արծաթը անտուհի միջ պահելով ի՞նչ զոհարճութիւն կրնայ զգալ : Այս եթէ պարտոյն վերջը թէ՛ գոմար մը անտուգած գործի՛ն է հասնուիլ , անհամբիւս կ'ըլլամ , իբրև թէ անտուգորէն կերակրելու ետեւ , նորէն կերակուր բերելն անօրին :

Աւրիշին պարգև տալու փափաքը , որքան որ գովելի բան է , տակաւին խոհեմութեամբ չափաւորուելու է , թէ որ սոսկական վիճակի տէր մէկը թագաւորական սիրտ մ'ունի , հոգ տանելու է որ չափազանց առատաձեռնութեամբ իր բոլոր ստացուածքը չմսխէ : Միտելի բան է առատաձեռնութիւնը . բայց զեղխութիւնը ոչ երբէք ներելի : Ավ որ իւր բոլոր ունեցածը կուտայ , շատ անգամ ապերախտներուն թիւը շատցնելու տհաճութենէն զատ ուրիշ բան մը չունենար :

Բնդ հակառակն կ'ծծի մարդը մէկ ծայրէն կը փախչի , միւսը կ'երթայ : Մէկուն բան մը չտար , վախնալով թէ աղքատնայ կամ ապերախտ հատուցումն ընդունի . և այս ալ զարմանալու բան չէ . վասն զի ո՞վ կրնայ ուրիշին նպաստել , երբ ինքն իւր անձը չխնամեր : Թէ որ պարագայներէն ստիպուելով մէկուն բան մը տալու ըլլայ , ի՞նչ մտատանջութեանց մէջ չընկնիր : Քանիցս իր սր-

տին մէջ զինքն չյանդիմաներ . և երբեմն իր կծծիութիւնը պատրուակելու կարող չըլլալովն , բրած առատաձեռնութեան արդիւնքն ալ չկորուսաներ :

Սէյնիէ քահանայն , որ Վաղղիոյ Ճեմարանին ատենադպիրն էր , օր մը երբ ընկերութեան ծախուցն համարանդամներէն ընդհանուր տուրք մը կը հաւաքէր , անուշադրութեամբ դիտած չըլլալով Սօղ նախագահին տալը , որ շատ կծծի մարդ մը կը սեպուէր , կրկին անգամ խնդրեց իրմէ : Սօղ կ'ապահովեցրնէր զատենադպիրը թէ տուած է իւր բաժինը : Այլ հաստատած խօսքիդ , ըսաւ Սէյնիէ , Քայց զրեւանց փառք : Այն էս , աւելցոյց Ֆոնդնել , որ մօտը նստեր էր , փեւան իր փառք , Քայց զէ՛մ հաստատար :

Օգուշացի՛ր ամենայն զօրութեամբ որ երբէք ասանկ վատ համբաւ մը չունենաս . զի մէկ անգամուն կծծիութիւնը քսան անգամ առատաձեռնութիւն ընելով չմոռցուիր : Առատաձեռն եղի՛ր երբ ժամանակն է . և այն ալ առանց մէկուն մնաս հասցնելու : Օյի առատաձեռնութիւնը առաքինութիւն չկրնար սեպուիլ , երբ արդարութեան հետ ընկերացած չէ : — Մեծ դուլեստի արժանի է Փրետերիկոս (1) Քրուսիոյ թագաւորին պատասխանը՝

1 Փրետերիկոս Բ . Քրուսիոյ Մեծ յորջորջեալ , ծնաւ Յունի . 24 . 1712 : Մատաղ տիոց մէջ մեծամեծ միշտերով տաղնապեցաւ : Քրականութեան եւ գեղարուեստից բնական բերում մ' ունէր , սակայն իր անմիտ , բռնաւոր հայրը մահացու մեղք կը համարէր այսպիսի իրաց հետեւիլը , կոյր հնազանդութիւնը առաքինութեանց առաջինն , եւ զինուորականութիւնը ամենէն ազնուական զբաղմունքն կարծելով : Փրետերիկոս փորձ մ' ըրաւ իր հօրը բռնաւորութենէն զինքն ազատել , բայց խորհուրդը յայտնուելով իր մտերիմ բարեկամը քաթ 'ի մահ դատապարտուեցաւ , եւ քիչ մնաց որ ինքն ալ նոյն դատակնիքն ընդունէր : 1740 ին գահն ամբառնալով , առաջին դործն եղաւ Մարիամ Թերեզէն Սիլեզիայի մէկ մասն պահանջել : Խօսքն միայն չբաւելով , պատերազմ հրատարակեց յիշեալ թագուհոյն դէմ , որով վեր-

որ ըրաւ երևելի դերասան կնոջ մը : Այս թագաւորը
գահն չամբարձած , ճոխ պարգևներ ըրեր էր իրեն , բայց
թագաւոր ըլլալէն ետև , սկսաւ խնայութիւն ընել : Աւս-
տի երբ դերասան կինը այս բանիս վրայ կը տրտնջէր ,
պատասխանեց թէ Արքեմի ի՞նչ ունեցածէս կուտայի , իսկ եթէ
հայտարարեցաւ սրայոտածէն կուտամ :

Առատաձեռնութիւնը , ինչպէս և բոլոր միւս առաքի-
նութիւնք , իրեն յատուկ օրէնքներն ունի : Աւ Աիկերոն
խիստ պատուական կերպով խօսած է այն նիւթոյն վրայ
իր Պատշաճից գրոյն մէջ :

“Քարերարութեան և առատաձեռնութեան չափ” , կ’ը-
սէ անիկա , “բնական բան մը չկայ մարդոյս . տակա-
ւին մեծապէս զգուշանալու է , որ ոչ մնասակար ըլլայ ո-
րոնց որ բարերարել կ’ուզեմք , զի այն ատեն չարութիւն
եղած կ’ըլլայ . ոչ ալ ուրիշներուն , որովհետև անիրա-

Չապէս 1745 ին իր նպատակին հասաւ :

Այնուհետև տասը տարի ամբողջ խաղաղութեամբ թագաւո-
րելով , ժամանակ ունեցաւ գործն բարեկարգել եւ հարստու-
թեան աղբիւրներն իր տէրութեանը մէջ ճոխացնել : 1755 ին
Եօթնամեայ պատերազմն սկսելով , Անգղիացւոց սակաւաձեռն օգ-
նութեամբը Աւստրիոյ , Ռուսիոյ , Շուէտի եւ Սաքսոնիոյ միա-
ցեալ զօրութեանը դէմ դրաւ եւ փառաւոր յաղթութիւններ
ստացաւ : Հուպէրթսպուրկի դաշնադրութենէն ետև , որ եղաւ
1763 ին , միայն մէկ անգամ , 1777 ին , պատերազմի ելնելով ,
ճաղկեցոյց իր տէրութիւնը , խրախոյս տալով վաճառականու-
թեան , երկրագործութեան , ձեռարուեստից եւայլն : 1772 ին
Պօլոնիոյ մէկ մասին անիրաւութեամբ տիրելով , ընդարձակեց
իր թագաւորութիւնը : Մեռաւ Օգոս . 17 . 1786 :

Գրագիտութիւնը Փրեաներիկոսին միսիթարութիւնն ու սփո-
փանքն ըլլալով , շատ գործեր շարագրեց , յորոց են իր ժամանա-
կի , Եօթնամեայ պատերազմին եւ Պրանտէպուրկի ցեղին պատ-
մութիւնները քսան եւ հինգ հատոր : Փառաւոր յիշատակ իւր
տարօրինակ հանձարոյն : Իսկ զինուորական մասին իւր անունը
Քօնդէներու , Գուրէններու , Մարլպրօներու , Նարոլէոններու
կարգն կը դասուի :

ութիւն և ոչ թէ ճշմարիտ առատաձեռնութիւն եղած
կ'ըլլայ, :

Առատաձեռնութիւնը պէտք է միշտ մեր միջոցներուն
համեմատ ըլլայ : Թէ որ մեր վիճակի ներածէն աւելի ա-
ռատաձեռն ըլլալ ուզեմք, կամ մեր ապրուստին համար
պէտք եղածն մսխելով, զմեզ պիտի անիրաւեմք, կամ
թէ մեր ընտանիքը, անոր բաժինը օտարաց վրայ վատնե-
լով :

Ա երջապէս պէտք է որ առատաձեռնութիւննիս ու-
րիշին արժանեացը համար գործածեմք . միշտ բարեբարոյ
անձինքն նախապատիւ համարիմք, և չարագործները ան-
արժան սեպեմք մեր բարերարութեանը : Աւ ընկերութեան
բարեկարգութիւնը հաստատ պահելու համար, վայելուչ
է որ ուշադրութիւննիս դարձնեմք նախ մեր արենակցա-
ցը, բարեկամներուն, համազգեացը և մանաւանդ բարե-
րարողներուն դէմ . վասն զի երախտագիտութեան չափ ան-
հրաժեշտ պարտաւորութիւն չկայ :

Տուր յօժարութեամբ և ընդունէ դժկամակութեամբ .
կամ թէ որ կարելի է, ամենեին մի ընդունիր, զի լաւ
ևս է զուրիշն երախտապարտ ընել, քան թէ երախ-
տապարտ ըլլալ ուրիշին : Արո՛հ ետե կը դտնուին այն-
պիսիք, որ եթէ մէկուն փոքրիկ ծառայութիւն մ' ընեն,
մեծ փոխարինութիւններ կ'ակնկալեն : Աւստի թէ որ ե-
րախտագիտութիւնդ անոնց երեւակայածին չհաւասարի,
կ'սկսին վշտանալ, իբր ապերախտ զքեզ կը բամբասեն
ամենուն առջին, և երբեմն ալ դառն յանդիմանութիւն-
ներ կ'ընեն, իբրև թէ ըրածնին կամ տուածնին մեծ բան
մ' եղած ըլլար : Աւ ևս չէ՞ որ մարդ համբերութեամբ
տանի անձկութեան քան թէ երախտապարտ ըլլայ այս
տեսակ անձանց : Աւ երբ պարզ քաղաքավարութեան
համար մէկը քեզ բան մը շնորհէ, ամենեին մի ընդունիր :

Նէապօլսեցի Պարոն մը որ մը գեղեցիկ ժամացոյց
մը կը ցուցնէր Քաղղիացւոյ մը, որ շատ հաւնեցաւ . ք-
րած գովեստին մըայ Նէապօլսեցին քաղաքավարութեան
համար ըսաւ . Եթէ կը հաճէ, յեղ խող ըլլայ : Քաղղիացին
առանց խօսք մ' ընելու ժամացոյցն առաւ : Ըն ատեն
միւսը, որ ասանկ բան մը չէր ակնկալեր, Ի՞նչ կ'ընէ Պար-
ոն, ըսաւ, +ողտ+ավարտ-ի-նը Բոլորովին արտասեր է աշխար-
հիս :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա

ԵՂԱՆԱԿ ԲԱՐԵՐԱՐԵԼՈՅ

Շ ՈՒՏՈՎ տալը կրկին անգամ տալ է . իսկ շնորհալի կեր-
պով պարզէ մ' ընելը հարիւր անգամ ընելու կը հաւասարի :
— Երևելին Մաւբերդիոս(1), Բրուսիոյ թագաւորին հետ
պատերազմի երթալով, գերի բռնուեցաւ ու Ա իենա տար-

1. Պետրոս Լուի Մօռօ Մաւբերդիոս, երևելի Քաղ-
ղիացի երկրաչափ եւ աստղաբաշխ, ծնաւ 'ի Սէն մալօ 1698
ին : Ուսմունքն կատարեց Փարիզու Լա Մարշ վարժարանը եւ
չորս տարի զինուորութեամբ հայրենեացն ծառայելէն վերջը,
բոլորովին գիտութեանց եւ գրականութեան զինքն նուիրեց :
Մաւբերդիոսն եղաւ առաջին՝ որ Քաղղիոյ մէջ Նեւտոնի ճշմա-
րիտ յարգը ճանչեց, զարդեսիոսէն նախասպառիւ համարելով զայն :
1745 ին Մեծն Փրետերիկոս զինքն Բրուսիա հրաւիրելով, Պեր-
լին հաստատուեցաւ, եւ շուտով մայրաքաղաքին արքունի ճեմա-
րանին նախագահ ընտրուեցաւ : Իսկ իր կենաց վերջին տարիները
անվրդով չկարաց անցընել, Առլթեռի հետ կռուելուն համար,
որ անդադար երգիծարանութեան շանթեր կ'արձակէր իր վրայ :

ուեցաւ : Ղաոսքանայի Ղաուքսը՝ որ յետոյ Ղայսր եղաւ
 Քրանչիսկոս Ա. անուենով, ուղեց տեսնել այս հռչակաւոր
 անձը, քաղաքավարութեամբ վարուեցաւ հետն, և հար-
 ցոյց իրեն թախանձանօք թէ արդեօք խնդիրք մը կամ
 տրտունջ մ' ունի : Մաւբերդիոս ալ ըսաւ թէ շատ կը ցա-
 ւի որ աստղաբաշխական դիտողութեանց համար գործա-
 ծած Արահամի մէկ պատուական ժամացոյցը կողոպտեցին
 իրմէ զինուորները : Ղաուքսը՝ որ նոյն հեղինակին ժամա-
 ցոյցներէն հատ մը ունէր անդամանդներով զարդարուած,
 ըսաւ Ղաղղիացի ուսումնականին . Այդ բանը թայն զուար-
 ծութեան համար ըրեր են զինուորները . ինչ բերին քա-
 ցոյցը, անհասանելի կրէին քեզ կը դարձնէ : Ասկէ աւելի ճար-
 պիկ ու քաղաքավար կերպով պարգև տալ կրնայ ըլլալ :

Անշնորհ կերպով տալը մեծ յիմարութիւն է . զի ինչ
 դժուարութիւն կ'իմանաս մեկուն պարգև մ' ըրած ատենդ
 քաղցր ժպիտ մը ցուցնելու : Մի յանդիմաներ բարերար-
 եալ անձը . և երբ կ'ուզես մեկուն շնորհք մ' ընել, նայէ
 որ դէմքդ ու խօսքդ ձեռուրներէդ աւելի շնորհալի ըլլան :
 Պարգևատուին խոժոռ դէմքը կը վիրաւորէ զպարգևառուն
 և բարերարութեան արժանիքն կը կորսուի : Ամանք կը տըր-
 տընջէին թէ Մաղարէն (1) անքաղաքավար կերպով կու տար :
 Տրոյն ըլլաւ իրաւունքս և զուանիս, ըսաւ Պիւսի Առմսը, այլևս արտա-
 թաղուի :

(1) Յուլիոս Մաղարէն Վարտինալ, երեւելի աշխարհագէտ, ծնաւ
 1602 ին ի Բիշինա Նէպոլսոյ : Տասնեւեօթն տարեկան հասակին
 Սպանիա գնաց եւ երէք տալի իրաւաբանութիւն ուսաւ Ալ-
 քալայի ու Սալամանքայի համալսարանները : Իտալիա դառ-
 նալէն վերջը Պապին իշխաններուն կողմանէ զանազան քա-
 ղաքական իրաց համար դեսպանութիւններ ընելով, Ռիշլիէօ
 Վարտինալին այնքան հաճելի եղաւ, որ ասոր աղդեցութեամբը
 Փարիզու դեսպան ընտրուեցաւ Պապին կողմանէ . և Ռիշլիէօի
 մահուանէն ետեւ Քաղղիոյ ատաղին պաշտօնեայ կարդեցաւ : Եւ-

պարտաւոր եմք իրեն որ պարհեմ' ըրած ասեն աշտը իւրացընէ
զիւղ երախտագիտութեան բեւեմ :

Սուտովիկոս յ'Վ' միշտ մեծ քաղաքավարութեամբ
կը խօսէր մէկուն շնորհք մ' ըրած ատեն : Արք 'Սեմի Ս-
պիսկոպոսութիւնը Ֆլէշիէի (1) շնորհեց , սապէս խօսեցաւ .
Ան զարմանար թէ այստե ուղ Վարչարեցի արժանիք , զի ին
խորհէի թէ եպիսկոպոս ըլլալը արողը լեւէ զիս պիտի շնէ :

Աթէ հարստութիւնդ կարող կ'ընէ զքեզ ուրիշին պար-
գև մ' ընել , նայէ որ քաղաքավարութեամբ ընես այդ
գործը : Աւ երբ մէկը քենէ անանկ շնորհք մը խնդրէ ,
որ անմիջապէս կրնաս կատարել , ժամանակ մի անցընէր ,
մասն զի ուրիշին թախանձանացը զիջանիլը վեհանձնու-
թիւն չէ , այլ հանգստութիւնն անլրդով պահել :

Թէպէտ խնամակալութեան ժամանակի քաղաքական պատերազմ-
ներուն պատճառաւը երկու անգամ փախչիլ ստիպուեցաւ , եւ
իր գլուխը բերողին մեծ գումար մը խոստացուեր էր , տակաւին
յաղթանակաւ Փարիզ վերադառնալու կարող եղաւ , եւ կառա-
վարութեան երասանակը ձեռքէ շթողուց մինչեւ իր մահը 1661 :

Իբր քաղաքագէտ՝ իր ձիրքերը պայծառ կը փայլին . իսկ իբր
մարդ՝ թախուր կը գտնուի առաքինութենէ , իր ամենէն գովելի
գործը՝ Մաղարէ կամ Չորից ազգաց վարժարանին հիմնարկու-
թիւնն կը համարուի :

(1) Էսբրի Ֆլէշիէ , հոյակապ եպիսկոպոս եւ քարոզիչ Քաղղիոյ ,
ծնաւ 'ի Բերն մերձ յԱվինեօն 1632 :

Քաղղիոյ մայրաքաղաքին մէջ համբաւիլը լատին բանաստեղծու-
թեամբ մը սկսեց : Իր բեմբախօսութիւններն , դամբանական ճառե-
րը այնքան մեծ անուն ստացան իրեն , որ Մոնթօզիէ դուքսը
զինքն ընթերցող կարգեց արքայազնին : 1685 ին Լալօնի Եպիս-
կոպոսութիւնը իրեն շնորհուեցաւ , եւ 1687 ին Նիմ փոխադ-
րուելով , իր վարուքն բոլոր հօտին սերը գրաւեց . մեռաւ 1710 ին :
Ֆլէշիէ շատերէն Իսկրատէս Քաղղիոյ կոչուեցաւ . եւ իրաւի Յոյն
ատենախօսին գեղեցկութիւններն ու թերութիւնքն աւնի իւր
ճարտարախօսութիւնը : Քլխաւոր գործերն են Մեծին Թէոդոսիոսի ,
Լիմնէս կարտինալին վարքը , դամբանական ճառքն ու քարոզները :

Արկար ժամանակ սպասել տալէ ալ նախապատիւ է ան-
միջապէս խնդիրքն մերժելը : — Աղնուականին մէկը փոր-
ժուգալի է Յովհաննէս Վ. ի արքունիքն եկեր էր շնորհք մը
մաշմելու համար : Խնդիրքը անմիջապէս մերժուեցաւ . ո-
րուն համար երբ իր շնորհակալութիւնը կը յայտնէր , թա-
գաւորը կարծելով թէ լաւ չէ հասկցեր իւր պատասխանը ,
կրկնեց խօսքն աւելի բացայայտ կերպով . — ասիցայ , Ա ի-
հափառ Տէր , պատասխանեց աղնուականը . Է Ռեքայէս շնոր-
հակալ է՞ Ձեր Ա իհափառութիւնը , որ անմիջապէս մերժեցի + կարա-
րել խնդիրքս , որովհետեւ կ'ըլլամ փոքր տեղը երկար ատեն արտա-
նիքն մնալէ : Թագաւորը զարմանալով այս անակնկալ պա-
տասխանին վրայ , աղնուականն խնդրուածքը կատարեց :

Այլ անշուշտ բանաւոր կերպով խնդիրք մը մերժելը ,
զանիկա կատարելու չափ հովելի բան է : Թէ որ մէկուն
ուզածը չես կրնար կատարել , գոնէ ցոյց տուր իրեն թէ
որքան ցաւ կը ստանալ քեզ այս անկարութիւնդ :
Շնորհալի շարժումներ կամ խօսուածքը խնդրողին ցաւը
կամ տհաճութիւնը կը պակսեցընէ :

Արեւի ընտանիքէ անձ մը անգամ մը Վազղիոյ
Հենրիկոս Վ. էն շնորհք մը կը խնդրէր իր եղբորորդ-
ւոյն համար , որ մարդասպանութիւն գործեր էր : Թա-
գաւորը քաղաքավարութեամբ սա պատասխանն ըրաւ :
Ա՛նձ ցաւ է ինչ որ խնդրէր չէ՛ կրնար կատարել . + եղ ին-
չայլ որ իբր հօրեղբայր զարուհս . ինչ ինչ պէտք է իբր Բաճա-
ւոր զարուհի : Աս անաւ + եղ ինչեւէ՛ որ ասանկ բան մը խնդ-
րեցիր ինչ . որո՞ւ ալ ներէ ինչ ի՞նչ մերժելու :

Նարեսիրտ մարդը լարիչէն ընդունած բարիքը երբէք
չմոռնար , սակայն իւր ըրածը մաքէն կը հանէ . ամենեկին
չխորհիր անոր վրայ . մէկուն ապերախտութիւնը երեսը չը-
զարնէր , բարեկամներուն չյայտնէր . զի գիտէ թէ ասով

իր բարերարութեան արժանիքը կը կորսուի, և փառքը կ'աղօտանայ: Բարերարութեանց յիշատակը անպատիւ է բարերարողին, իսկ պատուաւոր՝ բարերարելոյն համար: Աւելի քաղցր է երախտագէտ անձի մը բարերարելոյց մեծագոյն առաքինութիւն, վեհանձնութիւն է առանց ակնկալութեան բարերարել: Բարեսիրտ մարդուն վարձքն իր սիրտն է. երախտամոռացութենէ չվհատիր: Խիղճը կը վկայէ իրեն թէ առաքինի գործ մը գործելով միայն իր պարտաւորութիւնը կատարած կ'ըլլայ: Ասկէ 'ի զատ մարդկային փոշարինութիւն չակնկալելովն, մարդս Արկնից խոստացեալ վարձքն մերժած չ'ըլլար:

Թշուառի մը օգնելու ատեննիս մեր մի միայն շարժառիթը՝ մեր նմանեաց վիճակը բարելաւելու փափոքն ըլլալու է: Ինչաւ երբէք պէտք չէ որ շահախնդրութենէ և ուրիշին շնորհակալութեան ակնկալութեամբը ազդուի՛ք. ապա թէ ոչ շատ անգամ մեր ակնկալութիւնները 'ի դերե կ'ելնեն: Այլ ջանամք բարերարել, երբ կարող եմք. և երախտագիտութիւնը թողումք բարերարելոց: Հաշուի չդնելք մեր ըրածը. զի աշխարհս լի է ապերախտներով, բայց ինչպէս ըսած է լա Պրիյէր, (1) Լա-Լա է ապերախտութեան հանդիպելէ՛ քան ի շահախնդրելոց լծելէ:

1 Յովհաննէս տը լա Պրիյէր մեծահամբաւ բարոյագէտ Քաղղիացի ծնաւ 1644 ին 'ի Տուրտան՝ Քաղղիոյ կղզին: Վարդեցաւ դասատու պատմութեան Պուրկիյնի դքսին, որ յետոյ իրեն թոշակ կապելով, բոլորովին իր մօտն պահեց: 1693 ին Քաղղիոյ ճեմարանին անդամ ընտրուեցաւ, եւ 1697 ին մեռաւ կաթուածամահ: Իր սքանչելի Նկարագիրք անուն գործն երեւեցաւ 1687 ին, որուն համար Տըլիի իրաւամբ կ'ըսէ «լա Պրիյէրը նկարագրելու համար մարդ իւր ոգին ունենալու է, որով ինքն այնքան իմաստ մէկ խօսքի մէջ եւ այնքան դաղափարներ մէկ բառի մէջ կ'ամփոփէ այնպիսի նորահնար եւ ազդու կերպիւ մը՝ որ կարծես թէ այնպիսի զրոյցք բնաւ չէ եղած»:

Պէտք է ուրեմն ապերախտութեան երկիւղիւր կասիլ
բարերարութենէ : Տես Մատուած Ինչպէս իր ամենամեծ
բարիքն շատ անգամ ապերախտից վրայ կը հեղու : Իր բա-
րիքն առատօրէն ընդունողներն չեն որ վանոնք ամենէն ա-
ւելի չարաչար կը գործածեն և ամենէն քիչ կը ծառայեն իրեն :

Եւ որքան որ ապերախտութիւնը հրէշ մըն է մարդոյս
արտին մէջ , տակաւին չուրացուիր որ եթէ բարերարաց
գաղտնի դիտաւորութիւնները դիտեմք , շատ անգամ պի-
տի տեսնեմք որ ապերախտութեան համար եղած յանդի-
մանութիւններն , կշտամբանքն սոյնքան անհիմն են , որ-
քան որ երախտագիտութիւն պահանջելու իրաւունքները :
Որքան յաճախ ապերախտութեան համար տրտնջողներն
իրենք առիթ տուած են ապերախտութեան : Ահա հանձն
բարերարութիւնն ալ երախտագիտութեան չափ հազուա-
գիւտ բան է :

Մտով չեմ ուզեր ըսիլ թէ ներելի է ապերախտութիւ-
նը . քաւ լիցի . այլ մէկը ինչ պատճառաւ որ մեզ բարե-
րարել ուզէ , միշտ պէտք է որ իրեն շնորհապարտ ճան-
չեմք անձերնիս : Իսկ թէ որ կ'ուզես որ ուրիշը քեզ
շնորհապարտ ըլլայ , բարերարէ ճշմարիտ նախանձու , սի-
րով և յօժարութեամբ : ()գնէ ուրիշին զուարթ դիմօք ,
պատուաւոր կերպով ու փութով , ան ատեն այն ալ քեզի
դէմ խորին երախտագիտութիւն պիտի ցուցնէ :

Ճշմարիտ բարերարութիւնը հրապարակաւ քարոզութիւն
չսիրեր , այլ կը շարժի նման մեծ գետերուն , որ արտերը
բեղմնաւորելէն ու հարստացնելէն ետե լռիկ մը ետ կը
քաշուին : Սատի , որքան որ հնար է , նայէ որ մէկուն
ըրած ձեռնտուութիւնդ չսիշես . և մի' նմանիր այն գոռո-
զամիտ բարերարներուն , որ ուր երթան , ըրած չնչին և
ունայնամտութենէ շարժեալ առատաձեռնութիւննին հրո-

չակերտ համար իբր թէ փող կը հնչեցնեն, որ ամէն մարդ
 իմանայ ըրածնին: Արքան անպատիւ կ'ընէ հայալու
 թիւնը ասոնց բարերարութիւնները: Կող ուսնին ա-
 սանկները յետագայ պատմութեանէն թէ ճշմարտիւ վեհ-
 անձն հողիները ինչպէս կը բարերարեն:

Առիմալտի, երևելի Վատլացի նկարիչն ու անդրի-
 ագործը, որ խիստ ազնիւ և վեհանձն պատգամաց տէր անձ
 մ' էր, մի և նոյն տանը մէջ բնակող Աիկլիացի ազնուա-
 կանի մը յետին չքաւորութիւնն իմանալով, շատ անգամ
 ծածկաբար անոր «եռեւիշ» ստակ կը նետէր: Իսկ ճ ազ-
 նուականը զարմանալով այս բանիս վրայ, շատ անգամ
 սենեակին մէկ անկիւնը կը պահուրտի, որ տեսնէ թէ ով
 է իւր բարերարը: ()ր մը վերջապէս այս փափաքին կը
 հասնի. կը հասկնայ թէ Առիմալտին է. և իր խորին ե-
 րախտագիտութիւնը յայտնելու համար կը վազէ անոր ոտքն
 կ'ընկնի: Վկարիչ իսկոյն զինքն վեր կը վերցունէ. և
 ջերմ սիրով զինքն համբուրելով, կ'ըսէ. «Ի՛նչ օգնելու
 չուարճո՞ւի՛նք իրկին անգամ թէ պիտի բւար, եթէ որո՞ւ պար-
 որո՞ւր բւարը շիմանայիր»:

Մտով ալ պէտք չէ հասկնալ թէ բարերարութեան
 պտուղը ամէն անգամ գաղտ պահելու է. այլ ընդ հա-
 կառական թողլու է որ յայտնուի յորինակ և 'ի շինութիւն
 այլոց: Մտու ամենայնիւ միշտ խուսելու է միայն ցոյց մ'
 ընելու համար բարերարելէ, առանց որոշելու թէ ինչ
 պարագայներու մէջ կը գտնուիս: — Տիւ Մուլէն անուն
 հռչակաւոր բժիշկը օր մը երևելի ընտանիքէ բայց ազ-
 քատիկ օրիորդի մը հիւանդութիւնը ապաքինելու հա-
 մար կը կոչուի: Իւանդին շուրջը գտնուողները բժշկին կը
 խոստովանին անկեղծութեամբ իրենց անկարողութիւնն
 վաւճքն վճարելու. որպէս զի ուրիշ անգամ մ' ալ չգայ:

Բժիշկը այսու ամենայնիւ նորէն կու գայ և տասն ոսկի հոն գրաւ կը թողու որ հիւանդն խնամողը ամէն գալուն իբր վարձք վճարէ իրեն . որպէս զի ներկայ գտնուողները շիմանան ազքատութիւնը :

Գեղեցիկ , աղնիւ բան է բարեգործութեան համար գովեստ չփնտուել ու շնորհակալութիւն չընդունիլ , թէ և անանկ փափուկ զուարճութիւն կը պատճառէ ասիկայ , որ կարծես թէ ըրած բարեգործութեանդ ամենէն անմեղ տրիտուրն է :

Բարերար անձանց մեծագոյն մասը երախտագիտութեան այս թեթեւ փոխարինութիւնը , իրենց իրաւունքն կը համարին . և անոր համար այս իրենց անձնասիրութիւնը գոհ չի զած ատեն , կը սկսին տրտնջիլ : Անայնամտութիւնը , առաքինութեան այն դարանակալ թշնամին , շատ անգամ գաղտ կը սպրդի բարեգործութեանց մէջ , զանոնք տղւղացներու , ապականելու համար :

Բարերարութիւնը ըստ իմիք կը նմանի այն պատուական անուշահոտութեանց որ բաց օդին ելնելուն , իսկոյն կը սկսին ցնդիլ : Արբ բարիք մը կը գործես , նայէ որ մարդ շիմանայ կամ թէ գոնէ մարդ շկասկածի թէ երևելու համար է ըրածդ : Ինչո՞ւ համար քու և երկնից մէջ անցած բաներուն երրորդ մ' ալ վկայ պիտի գտնուի :

Իռուէնայի Լէոբուտ իշխանը շատ կ'ախորժէր գաղտնի բարեգործութիւններ ընելու : Անուականին մէկը , որ երբէք բան մը խնդրած չէր իրմէ , թէ և շատ անգամ անձկութեան մէջ կը գտնուէր , որ մը իշխանին հետ խաղ խաղալով և շատ ստակ շահելով , զարմանօք ըսաւ . Տեր ի՞մ , շատ դժբաղդոս-խեամբ կը խաղաս : Անարտիշտ ոչ պատասխանեց իշխանը , բաղդն ելքէ՛ + ասի՛ տեղի լատարարած զէր ինչ . Բայց ես մայն գիտե՛մ ասիկայ :

Ք Լ Ո Ւ Խ Փ Բ

Փ Ո Ւ Մ Տ Ո Ւ Ռ Թ Ի Ի Ն

Փ Ո Ւ Մ Տ Ո Ւ Ռ Թ Ի Ի Ն Ը՛ որ Վրիստոնէական պարտաւորութիւն մ' է, պէտք է ըլլայ կամաւ և յօժարութեամբ ։ Եւ շատ դիւրութեամբ և առանց տարբերութեան ամէն անձանց փոխ տալը շատ անգամ զղջսլ, ամիստալ կը պատճառէ ։

Թէ որ մէկը թախանձանօք բան մը փոխ առնել ուզէ քենէ, անմիջապէս առաջին անգամուն տուր խընդրածը, և հաստատ դիտցիր որ բաւական ատեն զինքը պիտի շտեմնես ։

Ոմանց ապերախտութեանը պատճառաւ պէտք չէ բոլորովին կասիլ որ և է անձանց փոխ տալէ զի անանկ պարագայներ կան, որոնց մէջ այս դործը ճշմարիտ ողորմութիւն կրնայ համարուիլ ։

Փոխատուութիւնը խոհեմութեամբ և մարդասիրօրէն ընելու երկու կանոն կայ ։ Առաջինն է աւելորդէր և տյն ալ փոքրիկ գումարներ փոխ տալ, որպէս զի դու ալ ուրիշէն փոխ առնել շտիպուիս ։ Եւ թէ որ կորուսանելու ըլլաս, կործանման առիթ չտան ։

Արկորդ կանոնն է ամէն հարկաւոր նախազգուշութիւններն ընել, դաշնագիր առնել կամ երաշխաւորութիւն խնդրել ։ Այսին զի որքան որ համոզուած ըլլաս ուրիշին բարեսրտութեանը, կարելի է որ ասիկայ ժամանակով փոխուի, կամ լծէ կանխահաս մահը իրաց վիճակը ալայլէ, և դու ստիպուիս ժառանգորդներուն հետ երկար

վեճերու մէջ մտնել, իրաւունքդ հաստատելու կամ թէ
ապացուցանելու համար:

Իսկ թշուառութեան մէջ գտնուող մեր եղբարցը փոխ
տալը, մինչև անգամ եթէ ետ դարձնելու կարող ըլլալ-
նին ալ կասկածելի երևի, մեր դրամը կորուսանել չէ,
այլ շահու տալ է. վստահ Վստուած տոկոսեօքը պիտի
հատուցանէ կ'ըսէ Սողոմոն:

Վհաւասիկ Վրիստոնէական սիրոյ գեղեցիկ օրինակ
մը: — Վնգամ մը կարտինալ Վմարօազի դրացիներէն
մէկը նեղութեան մէջ ընկնելով, ուղեց իր երկիրը ծա-
խել յիշեալ կարտինալին, որուն տանը շատ պիտուա-
կան էր Վստ անձը խեղճին առաջարկութիւնն ընդու-
նելու տեղ, սկսաւ զինքն համոզել որ ձեռքէն չհանէ
այս հայրենի ժառանգութիւնը. բայց երբ իմացաւ թէ
իր դստերն օժիտ ընելու համար այս որոշումը ըրեր էր,
անմիջապէս պէտք եղած դրամը պայմանաժամով իրեն
փոխ տուաւ առանց շահու՝ ըսելով, Վ-ելի նախապարտ-
ւեպէ՛մ + ու բարեկամ-նի-նդ ստանալ + ան թէ երկերդ:

Վրաշխաւորութեան մէջ ալ փոխատուութեան չափի խո-
հեմութիւն բանեցունել պէտք է: Վլ թէպէտ իմաստու-
նը կ'ըսէ թէ Վնաքիմին երաշխաւոր կ'ըլլայ իր ընկե-
րոջ, անզգայ մարդը յետին թշուառութեան մէջ կը
թողու իր բարեկամը, տակաւին միտք կը ձգէ նաև նախա-
զգուշութեանց մէջ պակսութիւն ընող շատերուն ան-
կանգնելի կործանումը:

Վլ յիրաւի խիստ մեծ ապերախտութիւն է երաշխա-
ւորն կամ փոխատուն մտքէ հանել: Հրէշ է այն մարդը՝
որ տաւապանայ մէջ կը ձգէ իրեն համար ասանկ կարե-
որ ծառայութիւն մ' ընողը: Վստանկ բնութեան տէր
մարդ մը ամէն ատեն բարեսիրտ, համակրող բարեկամ-

ներ չկրնար գտնել . զի խաբէութիւնը մէկ անգամ կը
յաջողի : Ընդ հակառակն՝ իր խօսքն հաստատ բռնող և
իր բարերարներուն հետ հաւատարմութեամբ վարուող
մարդը միշտ իրեն օգնող մը կը գտնէ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

Ե Ղ Ա Ն Ա Կ Պ Ա Ր Գ Ե Ի Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ե Ա Ն

ԸՆԴՀԱՆՍԱԶԵՌՆՈՒԹԵՆԷ վախճող մարդը ընդհանրապէս
անիրաւութեան վտանգն կ'ընկնի : — Վաշատիրտ զին-
ուորին մէկը արիւնահեղ պատերազմի մը մէջ երկու բա-
զուկները կորուսանելով, իր զօրապետին ներկայացաւ :
Աւերք տեսաւ որ ասիկայ մէկ քանի դրամ պարգև տա-
լով, զինքն ճամբել կը նայի, համարձակութեամբ սա-
խօսքն ըրաւ : Ընդ զայն, Պարոն զօրապետ, կը կարծէ + Բէ
Ըստի մը յեւնոց կարուստի :

Պարգևատրութիւնը արդարութեան օրինացն, և որ-
քան որ հնար է, մարդոյս արժանեացն ու ծառայու-
թեանցը համեմատ ըլլալու է :

Շենրիկոս Ը. Վաղղիոյ գահն ամբառնալէն ետև,
լիօրէն վարձատրել իրեն օգնողները . և երբ մտքէն
ելնելով մէկը անիրաւէր, չէր ամաչեր իր պակասու-
թիւնը խոստովանելու, և իր պարտաւորութիւնը անյա-
պաղ կատարելու, եթէ ճանչէր զանհիկայ : — Զօրապե-
տին մէկը որ պատերազմի մէջ մէկ աչքն, ձեռքն ու ոտ-
քը կորուսեր էր, օր մը աղերսագիր մը մատոյց թագաւո-
րին, որուն մէջ իր ընդունած վէրքերն հաշուելով, ար-

ժանաւոր վարձք մը կը խնդրէր : Հենրիկոս աղերսագիրը կարդալէն ետեւ , ըսաւ . Տե՛սնե՛՛ք թէ ի՞նչ կ'ընե՛՛ք : Քայց , Ա՛նհատիառ Տէր , պատասխանեց զօրապետը , եթէ ձեր Ա՛նհատուծիւնը զիս ծառայութեան կոչած ատեն այսպէս խօսէր , երբէք մէկ աչքս , ձեռքս ու ոտքս չէի կորուսաներ : Թագաւորը 'ի սկզբան շատ վիրաւորիւնեցաւ այս յանդուգն պատասխանէն . բայց վայրկեան մը մտածելէն ետեւ , խեղճ զօրապետին իրաւունքը ճանչելով , արժանի փոխարինութիւն մ' ըրաւ ծառայութեանցը :

Մեծամեծք պարտին նաև վարձատրել ճշմարիտ արժանիքը . զի ասով զօրութիւնն ու հարստութիւնը ամենաազնիւ կերպով գործածուած կ'ըլլայ . և այս է ամենէն ապահով միջոցն փառաւոր անուն մը թողու աշխարհիս վրայ : Ա՛յլ չգիտեր թէ Ա՛ւգոստոս (1) , Մեկե-

(1) Վայիտոս , ՅուլիոսՎեսար Ակտաւիանոս , Վայսր Հռովմայեցի , Յուլիոս Վեսարու ազգականն ու որդեգիրը , ծնաւ 'ի Հռովմ 63 ամաւ նախ քան զՔրիստոս : Չորս տարեկան հասակին կորոյս իր հայրը . եւ այն ատենէն 'ի վեր Վեսարու խնամոցն յանձնուեցաւ : Խնամակալին ուզանման ժամանակը Ակտաւիանոս (զի այս էր իւր առջի անունը ,) յԾպիւռոս դռնուելով , անմիջապէս Հռովմ դարձաւ իր ժառանգութիւնը ապահովցնելու համար : Ոսոխքն սկսան զինքն ծաղրել , տղայ կոչելով . զի դեռ տասներութամեայ էր . բայց իր տաղանդներովն շուտ մը ազդեցութեան տէր եղաւ : Նախ առաջին Անտոնինոսի հակառակ կուսակցութեանն յարեցաւ . բայց յետոյ հաշտուելով , Աեպիդոսի հետ միացած եռապետութիւնն կազմեց , որով Արեւմուտքի իշխանութիւնը բոլորովին իր ձեռքն անցաւ : Աերջը երկու եռապետները հետ զհետէ կործանելով , ամբողջ տէրութիւնը գրաւեց , Եգիպտոսն ալ Հռովմէական աշխարհ մ' ընելով : Հռովմ վերադառնալուն Յանոսի տաճարն քակեց , եւ ծերակոյտէն հրամայող եւ հոյակապ պատուանուններն իրնդունեց եւ բացարձակ իշխանութիւն կը վարէր :

Այս բարձրութեանս հասնելէն ետեւ բոլորովին բնութիւնը փոխեց . առջի անգթութիւնը՝ որով մինչեւ անգամ Վիկերոնի

նաս(1) . 1 էոն (2) յ . տէ Մէտիչի , և Սուտուիկոս յ . Ս .
առատաձեռնութեամբ արժանիքն ու առաքինութիւնը
վարձատրելով , անմահ ըրին իրենց անունը :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Պ

ՄԻ՛ ՆԱԽԱՆՁԻՐ

ԼՊԱՔԻՆԻ մեծատունը արժանի է իւր բազմին . և
չարաբարոյ կամ ամբարիշտ մարդուն փառացն ու հարրս-

պէս չքնադ անձի մը կենացը չէր խնայած , անհետանալով , չա-
փաւորութեան եւ գթութեան օրինակ հանդիսացաւ : Քրակա-
նութիւնը շատ ծաղկեցաւ իւր պաշտպանութեանը ներքեւ , օղ-
տակար օրէնքներ հաստատեց եւ այնչափ զարդարեց մայրաքաղա-
քը , որ կ'ըսէին թէ "Առաջ աղիւսաշէն էր , ինքն մարմարիո-
նով վերականգնեց" : Կ'ըսեն թէ երկու անգամ ուղեց առանձ-
նանալ , սակայն Մեկենաս թող չտուաւ . մեռաւ 'ի Նոյա 76 ամաց :

(1) Կիլնիոս Մեկենաս Ազոստեայ պաշտօնեայն եւ մտերիմն :
Ետրուրիոյ հին թագաւորական ցեղէն սերած էր : Իր թագա-
ւորին համար պատերազմեցաւ 'ի Փիլիպէ , յԱկաիոն եւ ուրիշ
տեղուանք , նուաճեց կրտսերոյն Ապիդոսի դաւաղցութիւնը ,
Մեծապէս կը սիրէր զՍփրատիոս եւ զԱիրգիլ . ու այնքան առա-
տաձեռն կը խնամէր տաղանդաւոր անձիւնքն , որ իր անունը վեհ-
անձն պաշտպանի մը համանուն սեպուեցաւ . մեռաւ 90 ամօք
նախ քան զՔրիստոս :

(2) Յովհաննէս տէ Մէտիչի Պապ . մեծանուն Լորենցոյի որդին
ծնաւ Փիորենցա 1475 ին , եւ տասներեք տարեկան հասակին
Կարտինալ անուանեցաւ : 1505 ին Բերուճիայի իշխան կարգե-
ցաւ . եւ 1511 ին հրամանատար Պապին զօրացր : Յաջորդ տա-
րին Ռափինայի պատերազմին մէջ գերի բռնուեցաւ : 1513 ին
Պապութեան դահն ամբարձաւ , ու մեռաւ 1521 ին : Աւելն ան-
զուգական պաշտպան էր գիտութեանց եւ արուեստից , սակայն
իրաւանց դէմ ալ գործեր գործեց : Իր անգղոյշ ներողութիւն
վաճառելովն էր , որ Արեւմտեան հերձուածն առթեցաւ :

տութեանը վրայ ալ նախանձելու չէ, կ'ըսէ Սուրբ Վիր-
քը. զի իբր երազ շուտով պիտի անցնին: Ալ թէ որ այս
առ երեւոյթս երջանկութիւնը ցկեանս տւէ, մահն աւելի
դառն ու աւելի սոսկալի պիտի ըլլայ: Ասկէ զատ շատ թան-
կագին գնուած է ասանկ մարդուն ստացուածքը. հան-
գատութիւնն ու բարի անունը զոհ, և բարութիւնն ու ա-
ռաքինութիւնը ոտնկոխ եղած են անոր:

Մի նախանձիր, ուրեմն, չարաբարոյ անձանց բաղդին,
և մի հիանար հարուստ ու գոռոզամիտ մարդուն վաղան-
ցիկ բարեյաջողութիւնը տեսնելով: Իրաւ է որ առատու-
թեան մէջ կ'ապրի, և երեւոյթով մարդկային թշուառու-
թեանց մասնակից չէ, բայց իր մեծութեան և զօրութեան
գաղափարովը փքացած՝ այս աշխարհիս բարեքն միտյն կը
մտածէ: Թշուառութեան ներքեւ ճնշուող խեղճերուն
վրայ ամենեւին չգթար, և մինչև անգամ իր սեղանէն թա-
փած փշրանքն անոնց տալ չուզեր: Այրկեան մը սպա-
սէ, և ահա ամէն բան փոխուած պիտի տեսնես: Քառքն,
այն պայծառ ջահը, պիտի աներևութանայ, և զուարճու-
թեանց՝ սոսկալի տանջանքներ պիտի յաջորդեն: Անդ հա-
կառակն՝ աղքատն արդար, որ իր ապերջանիկ բաղդին
համար զինքն անարգուած կը կարծէ, 'ի ծոցն փառաց
պիտի դասուի, և Աստուածային ակտոռէն ծագած բերկ-
րութենէն առատօրէն պիտի ըմպէ:

Արիշին հարստութիւնը, փառքն ու պատիւը հասա-
րակօրէն առիթ են նախանձու. և մինչև անգամ ամենէն
երևելի վիճակի տէր անձինքն ազատ չեն այս անարգ կիր-
քէն որ այնքան անհնարից չարեաց մայրն է:

Նախանձոտ սրտի մը մէջ բարութիւնը չկրնար բնակիլ:
Նախանձութիւնն էր որ առիթ տուաւ Այէնի՝ ձեռուը-
նեքը իր անմեղ եղբօրը արեամբը շաղախելու: Այս էր

որ զմոլեգինն Սաւուղ 'ի մարդասպանութիւնն գրգռեց
 Խորայէլի դիւցազնին դէմ, որ փառօք իւր հայրենեաց
 ծառայելէ, և անով ժողովրդեան գովեստին արժանա-
 նալէ զատ ուրիշ բան մը չէր ըրած: Այս էր վերջապէս
 որ ամենէն մեծ և ամենէն սոսկալի ոճիրն, Աստուածա-
 սպանութիւնն, գործել տուաւ շրէից աղգին: Արժանեաց
 և անմեղութեան թշնամին ընդունակ է ամէն տեսակ
 չարութեան:

Քաղաքավարութեամբ և բարերարութեամբ երբեմն
 նախանձութիւնը կը սանձի, բայց ոչ երբէք բոլորովին
 կը նուաճի. այլ կ'ապրի քանի որ իրեն ծնունդ տուող
 արժանիքն չէ փճացած: Անբնի թէ ուրիշին բարձրու-
 թիւնը կը խոնարհեցնէ զնախանձոտը. և անոր վրայ եղած
 գովեստը՝ իրմէ յափշտակուած, ու անոր տրուած պատի-
 ւը՝ իրեն անիրաւութիւն եղած կ'ըլլայ: Աւստի և միշտ կը
 նայի որ ծուռ մեկնութիւններով ուրիշին շուքը նուազե-
 ցրնէ: Արբ երևելին Քոլոմպոս, որուն պարտաւոր եմք
 Ամերիկոյ գիւտը, նոր կիսագնացոյ մը սոյութիւնը բոլոր
 Աւրոպիոյ համոզիչ փաստերով կը հաստատէր, մտացա-
 ծին, այլանդակ ճշմարտութիւն մ' է կ'ըսէին. և երբ
 նիւթական ապացուցիւ անժխտելի եղաւ իր հաստատած
 ճշմարտութիւնը, սկսան վիճել թէ իրմէ առաջ ծանօթ
 էր այդ երկիրը: Ամանք ալ որ ասանկ գիւտոյ մը փառքը
 իրմէ կողոպտելու դիտաւորութիւն չունէին, կը ջանային
 անոր արժանիքը նուազեցնել, խիստ դիւրին բան մը ձե-
 ւացնելով զայն: Քոլոմպոս օր մը բազմամբոխ կոչունքի մը
 մէջ գտնուելով, երբ բազմականաց մէկը իր երեսին այս
 խօսքն ընելու անբաղաքավարութիւնն ունեցաւ. այս նա-
 խանձոտները շիտթելու համար սա խնդիրը առաջարկեց.
 Ա՛յլ կրնայ պնակի մը մէջ յո՛ւմ մը եր մէկ ծայրին վրայ ուղղակի

հանգնել: Այ մէկը կրցաւ: Իսկ ինքը ձուին մէկ ծայրէն
քիչ մը կոտրելով, առանց դժուարութեան կանգնեց
զանիկայ պնակին մէջ: Ընդ որ տիւրիս բան է. ըսին բո-
լոր բաղմականները: Ընդ որ տիւրիս, պատասխանեց ան ա-
տեն Քոլոմպոս. Բայց է՞նչ օգուտ, յենէ մէկն ալ չկրցաւ
հարցնել:

Նախանձութիւնը հասարակօրէն նախանձութեան ա-
ռիթ տալու բան մը չունեցող անձանց նեցուկն է: Ըսանկ-
ները բոլորովին զուրկ ըլլալով արժանիքէ, չեն կրնար տա-
նիլ ուրիշին արժանեացը, և կոյր ու միանգամայն անիրաւ
ըլլալով իրենց դատողութեանցը մէջ, անոր արժանիքը
ձանչելու է յաջողութիւնը իրեն ուղիմութեանը սեպհա-
կանելու տեղ, բոլոր պատիւը ծիծաղելի պատճառանաց
արդիւնք կը համարին:

Զանք ընեմք միշտ զբարեգործները բարեգործու-
թեամբ գերազանցել. այս է ահա ամենագեղեցիկ և խիստ
նախանձելի վրէժխնդրութիւնն, որ կրնա՞ր ընել դիպ-
ուածով մեր նախանձուն առիթ տուող անձանց դէմ:
Բարի նախանձաւորութիւնը միշտ ներելի և գովելի բան
է. զի ասիկայ անանկ զգացում մ' է որ կը քաջալերէ, կը
կազդուրէ և մեծամեծ օրինակներով կը վառէ մեր հոգին,
չատ անգամ զմեզ մենէ վեր բարձրացնելով. իսկ չար
նախանձը վատ կիրք մ' է, որ ուրիշին բարձրութեանը
չհասնելով կը նայի որ ամէն կերպով զանիկայ ցածացնէ.
ուստի կ'սկսի անարգել ընելու չկրցած բանը. զի աւելի
դիւրին է անարգել, անպատիւ համարիլ, քան թէ գե-
րազանցել կամ թէ հաւասարիլ ուրիշին: Ե վերայ այսր
ամենայնի չեմ գիտեր թէ ի՞նչ եպերելի բան կայ նա-
խանձութեան մէջ, որ ամէն մարդ զանիկայ ծածկել կ'աշ-
խատի: Նախանձոտն երբէք չհամարձակիր իր նախան-

ձուլթիւնը խոստովանիլ . մանաւանդ թէ ամէն մարդ
կ'ամաչէ , կը պատկառի ունենալու , և ևս առաւել երեւան
հանելու . զի եթէ անգամ մը մէկուն նախանձոտ ըլլա-
լը յայտնուի , իր ստորնուլթիւնը կը հաստատուի . և իր
ոչնչութեան ճանչուելուն երկիւղը կ'ապացուցուի : Այս
ալ տեսակ մը խոստովանութիւն է ուրիշին երջանկութեանն
ու առաքինութեանը , և լռիկ մեծարանք՝ անոր վայելած
ձրիցը : Նախանձութիւնը սրտանց կը պատուէ արժանե-
տաց տէրը , թէ և երևոյթով չճանչեր անոր յարգը : Այլ
թէ որ ուրիշն 'ի նախանձ գրգռող մարդուն վիճակը ցա-
ւալի է , (զի գուցէ ինքն անոր զոհ ըլլայ) , ցաւալի են
նոյնպէս անոնք որոնց կը ներէ . զի մոլութենէ և աննշա-
նաւորութենէ զատ ուրիշ բանի չխնայեր : Նեմիստոկլէս
կ'ըսէր թէ « Ե՛մ նախանձիք անանկ մէկուն բաղդին , որ ասե-
նեին -- բիշն 'ի նախանձ շարժելու բան մը չունի : »

Այլ որքան որ նախանձութեան չափ զինքն ծածկել ու-
ղող ուրիշ կիրք մը չկայ , այնքան ալ ասոր չափ ծածկուե-
լու անընդունակ կիրք մը գիտցուած չէ . վասն զի մոլու-
թիւնը շուտով անոր փայլունութիւնը երեւան կը հանէ :
Վասն անանկներ ալ որ ուրիշին դէմ խօսելէ ետ կենալ
չկրնալով , կը կարծեն թէ իրենց նախանձը չյայտնուիր նա-
խանձու չենք խօսիր ըսելովնին . բայց անկարելի է որ այս
եղանակովս ալ յաջողութիւն գտնեն :

Նախանձը ոչ միայն ամենէն ատելի , այլ ամենէն
անագորոյն կրից մէկն է , ծանր պատիժ մ' է նախանձոտին :

« Նախանձը , որդեակ , զանձն կը հիւճէ » կ'ըսէ Սա-
նաղար(1) :

(1) Յակոբ Սանայցարո , Իտալացի բանաստեղծ ականաւոր ,
ծնաւ Նափոլի 1458 ին : Իր սիրուհւոյն սիրտը գրաւելու համար
գրած բանաստեղծութիւններովը Նափոլիի Փրեատերիկոս իշխա-

Ուրիշին ձիրքերը , բարի անունն ու բարեյա-
 ջողութիւնը նախանձոտ մարդն հալեցնող , մաշեցնող
 որդեր են : Արքան որ ուրիշին փառքն կամ երջանկու-
 թիւնը աւելնայ , այնքան աւելի կը զօրանայ նախանձը :
 Ենանկ որ իր բոլոր կեանքը դառնացնող թոյն մը կ'ըլ-
 լայ : Եւս է ահա պատճառը որ նախանձոտ մարդիկ
 տխուր դէմք մ' ունին :

Ենչուչտ խիստ զարմանալի բան է որ մարդս ուրիշին
 արժանեացը համար զինքն կը չարչարէ , կը տանջէ , կամ
 իրեն սգտակար ըլլալիք բանը մնասակար կ'ընէ : Եւ այց այս
 է նախանձոտին ընթացքը : Ար տրտմի՛ երբ ուրիշները
 կ'ուրախանան կ'ուրախանայ՝ երբ ուրիշները կը տրտմին :
 Այլ մինչև անգամ իրենցմէ գոհ եղող անձանց վայելած
 անմեղ հանգստութ լնը կը վեղովէ , անոնց այս գաղա-
 փարը փոխել աալու ջանալով :

— — —
 նին պաշտպանութեանն արժանացաւ : Ասիկայ գահն ելնելն
 ետեւ սկսաւ աւելի փառաւոր կերպով զինքն խնամել , որուն
 համար միշտ շնորհապարտ մնաց Սանազար մինչև անգամ իր
 վերջին դժբաղդութեանցը միջ մեռաւ 1530 , զանազան պատ-
 ուական գործեր թողլով :

Գ Լ Ո Ւ Խ Փ Ե

ԽՈՐՀՐԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Եթէ մէկը վրադ բաւական համարում ունենալով, գաղտնիք մը քեզ հաւտացեր է, պահէ՛ զանհկայ ամենայն զգուշութեամբ: Արբ ատենով պաշտականաց ոմանք իշխանաւորի մը հարցին, «Ի՞նչ լուր, այսօր ի՞նչ ըսաւ թափաւորը, վասն զի քենէ դատ մէկուն չվտահիր»: Արե՛մս ի՞նչու համար, պատասխանեց իշխանաւորը, ինչ էլ հարցնէ՛ (1):

Ամէն գաղտնիքէ ևել հսկողութեամբ և զգուշութեամբ պէտք է պահել Առաւփարութեան և ընտանեաց վերաբերեալ եղածներն. (2) որովհետեւ ասոնց երևան դալը հասարակօրէն խիստ ծանր հետևութիւններ կ'ունենայ. և միշտ անխտհեմութիւն է այս գաղտնիքն պահող անձանց հարցումներ ընել: Աւլոս Աելոս (3) խիստ զուարճալի անցք

(1) Նոյնպէս խիստ նշանաւոր է Օրէնճի իշխանին պատասխանը: Զօրապետ մը անգամ մը հարցնելով ասոր իւր պատերազմական դիտաւորութիւնը, ըսաւ. «Եթէ քեզ ըսեմ՝ մէկուն չե՞ս ըսեր»: «Աչ» պատասխանեց հաղարապետը: «Աւա՛ ըսաւ իշխանը, Աստուած ինձալ տուեր է այս կարողութիւնը»:

(2) Աարտինալ Ռէշիլիօ յաճախակի կ'ըսէր թէ խորհրդապահութիւնը մեծամեծ գործոց և և առաւփարութեան հոգին է: Եւ Աարոյոս Է Քաղզիոյ՝ այնքան լաւ համոզուած էր ասոր հարկաւորութեանը, որ երբ անգամ մ' իրեն հարցին թէ ի՞նչ պիտի ընէ երկրորդ օրը, պատասխանեց. «Եթէ դիտնամ թէ շապիկս իմացեր է գաղտնիքս, շուտով կ'այրեմ»:

(3) Իմաստասէր Եպիկուրեան, ծաղկեցաւ յերկրորդ դարուն: Խիստ նշանաւոր է Քրիստոնէական կրօնին դէմ ըրած գրութիւններովը: Իր Ճշմարիտ Խօսք անուն գրուածքը, որուն պատասխանեց Որոզինէս, թէ եւ մեծաւ մասամբ կորսուած է, տակաւին մնացած կտորներն իր ինչ աստիճան տաղանդաւոր ըլլալն կը ցուցնեն:

մը կը պատմէ, որ պատանեաց օգտակար կրնայ ըլլալ :
 Հռովմայ մէջ, կ'ըսէ անիկայ, սովորութիւն կար
 որ ծերակոյտի անդամները երբեմն իրենց որդիքը 17 տա-
 րեկան չեղած հետ կրնային առնել : Օր մը խիստ կա-
 րեւոր նիւթոյ մը վրայ խորհուրդ ըլլալով, ուզեցին որ
 երկրորդ օրը վճռեն խնդիրը. ուստի և որոշեցին որ մինչև
 ի վճռելն դադար պահեն զանիկայ : Այն օրը երիտա-
 սարդ Պապերիոս ծերակոյտն դանուեցաւ իր հօրը հետ :
 Տուն դառնալուն, մայրը իրեն հարցուց թէ այն օրը ի՞նչ
 նիւթոյ վրայ խօսք եղեր էր : Տղայն ալ պատասխանեց թէ
 պատուիրեցին իրեն որ չխօսի այդ նիւթոյն վրայով : Աօ-
 րը հետաքրքրութիւնը ևս առաւել արթննալով, սկսաւ
 անանկ սաստիկ թախանձել զորդին, որ խեղճին ճարը
 հատնելով, սա պատրողական պատասխանն ըրաւ : Այսպէս
 պիտի վճռեն թէ ո՞րը աւելի օգտակար կրնայ ըլլալ հասարակա-
 պետութեան : Բողոքով ճարարոց՝ որ երկու կէ՞ն առնան, թէ հա-
 նանց՝ որ երկու այր առնեն : Այս լուրը անանկ զարմանալի
 ազդեցութիւն մ' ըրաւ մօրը վրայ, որ անմիջապէս տը-
 նէն դուրս ելնելով՝ դնաց իր բարեկամ տիկնանց պատ-
 մեց եղելութիւնը : Երկրորդ օրը կանայք շրջապատելով
 զծերակոյտը, արտասուալից աչօք կ'աղաչէին որ իրենց ա-
 կանչ չդրած, խնդիրը չվճռեն : Դողովը զարմանալով այս
 բանին վրայ, հարցուց թէ ի՞նչ պիտի ըլլայ կանանց
 այս յիմարական ընթացքը և թէ ի՞նչ կ'ուզեն : Ան ա-
 տեն երիտասարդ Պապերիոս խորհրդարանին մէջ կանգ-
 նելով, պատմեց անոնց մօրն թախանձանքը և իր ըրած
 պատասխանը : Ծերակոյտը ծախահարեւով ասոր հաստատա-
 մտութեանը վրայ վճիռ ըրաւ որ այնուհետև որ և է մե-
 կուն որդին խորհրդարանը չընդունվի երիտասարդ Պա-
 պերիոսէն զտա :

Խորհրդապահութեան մէջ խիստ անյաջող են տիկնայք (1) ու տղայք . ուստի և շատ անգամ մեծ անխոհեմութիւն է անոնց կարևոր բան մը հաւատալ : Այլ թեպէտ կանանց մէջ խոհեմ անձինք ալ կը գտնուին , տակաւին հասարակօրէն իրենց խօսքին տէր չըլլալովնին , գաղտնիքն դիւրաւ կը փախցնեն իրենց բերնէն . երբեմն մինչև անգամ առանց իմանալու , և ընդդէմ իրենց կամաց : Այլ ի՞նչ մարդիկ կան որ կանանցմէ չեն տարբերիր , և կանանցմէ աւելի զգուշաւոր չըլլալէ զատ , անոնցմէ ալ ստորին են :

Խոհեմ ու հաստատամիտ եղի՛ր և ուրիշին գաղտնիքը ամենեւին մի յայտներ . հաւատարիմ եղի՛ր անոնց՝ որ ըզքեզ հաւատարիմ կը կարծեն , միտք բեր՛ր թէ գաղտնիք ըսածդ ամենէն նուիրական բաներուն կարգէն է , և թէ ընկերութեան սկզբնական օրինաց մէկն ալ՝ չյայտնուելու բանին վրայ լռութիւն պահելն է . վասն զի իրաւունք

(1) Կանայք ուրիշին գաղտնիքը շուտ կը յայտնեն , իսկ իրենցը լաւ կը պահեն , մանաւանդ տարիքնին :

Համարակալն Կատովն կ'ըսէր թէ երեք բան կայ զոր գործելով մարդ շուտ կը զղջայ : Ա . անցնել օր մը առանց բան մը ուսնելու . Բ . ցամաքով ճամբայ ընել կրցած ատեն՝ ծովով երթալ . Գ . գաղտնիք մը յայտնել իւր կնոջն :

Այսուամենայնիւ չուրացուիր որ կանանց մէջ ալ խորհրդապահ անձինք կը գտնուին : Ոմանք Աթենացիք դաւակցութիւն մը կազմեր էին հայրենիքնին բռնաւորութեան լուծէն ազատելու համար : Ասոնց մէջն էր Աէոնա անուն կին մը . բռնաւորը բանն իմանալով՝ ի տանջանս մատնեց զինքը որ դաւակցաց անուններն իմանայ : Աէոնա հաստատամիտ մնաց անհնարին ցաւոց մէջ . եւ վերջապէս լեզուն փրցուց նետեց , որ չըլլայ թէ գաղտնիք մը բերնէն փախչի : Ժամանակէ մը ետեւ բռնաւորը հալածուելով , Աթենացիք ի պատիւ սորա անդրի մը կանգնեցին՝ առանց լեզուի , էգ առիւծի մը՝ սա արձանադրութեամբ . «Առաքին ութիւն յաղթանակեց սեռի» :

չունիմք ըստ հաճոյս գործածել, ինչ որ միայն պահեստի համար մեզ յանձնուած է :

Պահէ՛ անդրժեղի հաւատարմութեամբ բարեկամութեան գաղտնիքը : Ան որ բարեկամին գողտնիւր էր յայտնէ, կ'ըսէ իմաստունը, էր կորուսանէ անոր զարանո-խիւնը, և այնուհետեւ իրեն սրտակից բարեկամ Կփոնէր : Մէկուն գաղտնիքը անգամ մը երևան հանելէդ ետև, ալ անհնարին է զանկայ կրկին ձեռք բերելդ. փուճ տեղը ետևէն պիտի պընդիս, արդէն շատ հեռուն գացած է անկայ : Մէկն ուրիշ կերպով անիրաւելուդ՝ թերևս օր մը հաշտուիք. բայց բարեկամիդ գաղտնիքն յայտնելէդ ետև, ալ յոյս չկայ այդ բանին :

Անհաւատարիմ մարդը ոչ կը սիրուի, ոչ ալ կը յարգուի. և իրեն բերանը բանալ տուող անձինքն են ամենէն առաջ զինքն անարգողները : Այորհրդապահութեան մէջ ամենափոքր պակսութիւնները՝ մէյմէկ աններելի մեղքեր են, և խիստ զգալի կերպով կը պատժուին մեղանչողքն, եթէ բոլորովին չեն կորուսած պատուոյ զգացումը. զի ալ ուրիշ անգամ նոյն պակսութեանց մէջ ընկնելու պատեհութիւն չեն ունենար : Արբ բարեկամիդ գաղտնիքն անգամ մը շրթունքէդ դուրս կ'ելնէ. գիտցի՛ր որ ալ սրտիդ մէջ տեղի չունի բարեկամութիւնը, պատիւն ու արդարութիւնը :

Արեմն միշտ զգուշաւոր եղի՛ր թէ շարժմամբ և թէ խօսքով, զի շատ կերպով գաղտնիքը կը յայտնուի : Հատեր կան որ կը խոստանան լուսութիւն պահել գաղտնեաց մը վրայ, բայց առանց իմանալու երևան կը հանեն : Արաւ է որ ասոնք ուղղակի մէկուն չեն ըսեր, բայց դէմքերնին կամ խօսելու եղանակնին զայն կը յայտնէ : Հատ անգամ ալ գաղտնիք մը մէկէն հաւատացուած

ըլլալը իմացնելով , մարդ առիթ կուտայ գաղտնեաց երևան ելնելուն վասն զի անատեն ամեն մարդ կը սկսի զմեզ լրտեսել :

Սմանք ալ կը կարծեն թէ միայն մէկ հոգւոյ մը կամ թէ բարեկամի մը ըսելով , գաղտնիքն յայտնած չեն ըլլար . բայց յիշելու են ասանկները թէ արդեօք այս ինչ անձին կամ թէ այն ինչ բարեկամին ըսելու թոյլտուութիւն ըրած է այդ գաղտնիքն իրենց հաւատացողը : Մանաւանդ որ աս տեսակ հաւատարմութիւնը՝ չափ , սահման չունենար . զի ասանկով հետզհետէ երկրորդէն՝ երրորդը , երրորդէն ալ՝ չորրորդը կ'անցնի , և վերջապէս բոլորովին յայտնի բան մը կ'ըլլայ :

Նանկ վտանգաւոր վայրկեաններ կան , ինչպէս են սիրոյ և բարկութեան միջոցները , որ եթէ բանականութեան բոլոր ուժովն չզինուիմք , անհնար է որ խորհրդակորոյս չըլլամք : Ահա ամենէն աւելի վտանգաւոր կիրք մ' է այս մասին : Բարկութեան ժամանակ գաղտնիքն դիւրաւ երևան կ'ելնէ , բայց սիրոյ մէջ առանց մեր դիտնալուն մեր բերնէն կը փախչի . ուստի մեծ հսկողութեան կը կարօտիմք ասանկ վայրկեաններու մէջ : Առջակաւորն Տիւրէն երևելի օրինակ մ' էր խորհրդապահութեան :

Սուլուա անուն Սուտովիկոս ԺՎԻ ի պատերազմի պաշտօնեայն շատ անգամ կը տրտնջէր թէ մարաջատար իրեն չյայտներ բռնելիք ընթացքը , երբ Տիւրէն մինչև անգամ թագաւորէն գաղտ կը պահէր զայն . անանկ որ օր մը այս վերջինը Վերմանիա գացող զօրապետի մը ըսաւ . Մաղապէս ըսէ՛ Տիւրէնի , որ յայտնէ ինչ էր դիպաւորութիւնները . որովհետեւ ինչ համար ալ քիչ իրեն չափ կարեւորութիւն ունին պատերազմի այդ քործադարմաններն :

Խորհրդապահութիւնը որքան որ բացարձակապէս ան-
 դրժելի պարտաւորութիւն մ' է, տակաւին անանկ պա-
 րագաներ կան, որոնց մէջ գաղտնիքն յայտնել կը հար-
 կաւորի: Այժմէ մնասակար է անմեղութեան, կամ թէ չար
 վախճանի մը կը ծառայէ, առանց դժուարութեան, բայց
 մեծ զգուշութեամբ երևան հանելու է զանիկայ. և եթէ
 հնարաւոր, ըսելու է անանկ մէկուն՝ որ կրնայ արգելք մը
 հնարել անոր գործագրութեանը դէմ: — Հենրիկոս
 Գ. Վաղղիոյ թագաւորը ձերբակալ ըրեր էր Վաւարայի
 թագաւորը՝ որ յետոյ եղաւ Հենրիկոս Գ: Ասիկայ ա-
 նակնկալ կերպով մը բանտէն փախչելով, Ֆերվաք անուն
 իշխանաւորն կասկածելի եղաւ: Այլ թագաւորը սաստիկ
 զայրանալով, իր բարկութեանը մէջ երդուաւ որ զՖեր-
 վաք իր մատնութեանը համար գլխատել տայ, միանգա-
 դամայն սպառնալով անգթաբար վարուիլ որ և է անձին
 դէմ՝ որ այս որոշումն մատնչին յայտնել յանդգնի: Հաս-
 պալատականներ լսեցին այս խօսքը, բայց լաւ ձանչե-
 լով Հենրիկոս Գ ի բարքը, այս դիտաւորութիւնը Ֆեր-
 վաքի իմաց տալու չհամարձակեցան:

Արիւլուն՝ որ ասոնց մէջն էր, երբ լսեց անանկ ե-
 րևելի մարգու մը, քաջ զօրապետի մը մահուան դա-
 տակնիքը, չկրցաւ համբերել: Վնաց զՖերվաք գտաւ
 և մի ըստ միով իրեն պատմեց բոլոր եղելութիւնը, յոր-
 դորելով զինքն որ անյասպաղ փախչի: Հենրիկոս երկ-
 րորդ օրը իմանալով թէ Ֆերվաք աներևութացեր է,
 վերջին աստիճան զայրացաւ, և իր երդումը լսողներուն
 վրայ մտածելով, վերջապէս կոչել տուաւ զԱրիւլուն, զոր
 շատ կը սիրէր: Ֆերվաք, ըսաւ իրեն մոլեգին բարկու-
 թեամբ, փախչել է ի՞նչ վեժիմորութեան, քիտե՞ս ասիկայ,
 Արիւլուն: Այո՛ւ Ա ի հաճախ Տեր, պատասխանեց Արիւլուն ան-

երկիւղ : Աստ՝ ըսաւ թագաւորը , զի արեւմտեան իրարեց զինքն
 որ այս քաղաքին ընէ : Պատասխան տուաւ Արիյլոն թէ
 Անուղ ճը յեր Ա Եհուդաւան արքայոսն ինքնը որոն զընելու
 համար , աներկօքս անյնարար կ'ըլլամ թէ 'ու' , եւս ե՛ս պարտաւորաբար ,
 որ եթէ այն բօխակց լուրը Վերջաւրի զորայի , անշուշտ անյա՛մար-
 դասայան պիտի համարէի : Թագաւորը աս աստիճան քաջա-
 սրտութեան վրայ զարմանալով ժամանակ մը լուռ կեցաւ
 աչուրներն Արիյլոնի վրայ հաստատած . յետոյ լուրժեան
 վերջ դնելով , ըսաւ . Որովհետեւ աշխարհիս թէ՛ թէ՛ հարկի
 Արիյլոն ճը կայ , անոր համար թէ գնահատանս ալ ընտանիար օրինակ ճը
 շինար ըլլաւ : (1)

(1) Մեր խորհրդոց դադար մնալն ալ մեր կենսական օգուտն է :
 'Մի' յայտներ դիտաւորութիւններդ , կ'ըսէր Պիւթաքորաս , որպէս
 զի երբ ձախորդութեան հանդիպիս՝ մարդ չծիծաղի վրայ' : Մար-
 դոց մեծագոյն մասը գործ մը իւր ելիւքն կը դատեն : Նախանձն ու
 շարասրտութիւնը կը ծագընեն՝ երբ յաջողութեամբ չպատկուի գործ մը :
 Ով որ իր գործոցը վրայ ամենուն կը խօսի , ձախորդութիւնը
 չբաժնուի իրմէ . զի դժուարութիւնը կը ծագին ամէն կողմ՝ եւ
 մինչեւ անգամ բարեկամ կարծած մարդիկն իրեն դէմ կը շարժին :
 Ամէն տեսակ ձեռնարկութեանց մէջ յաջողութիւն ապահովցնելու
 ամենալաւ միջոցը , զամենք դադար պահելն է : Եւ այս է ահա
 կենցաղագիտութիւն կոչուածն :

Գ Լ Ո Ւ Խ Թ Ձ

ՈՒՂՂԱԳԱՏՈՒԹԻՒՆ

ՇՆՈՒՏՈՎ զատողները գրեթէ միշտ դուրկ են ուղղա-
գատութենէ: Աւղղագատ անձը խոհեմութեան ու իմաս-
թեան օրինացն համեմատ կը չափէ իւր քայլերը: Անճ-
ռոտ գործոց, դժուարին կցորդութեանց մէջ ուշի ուշով
կը քննէ ամէն բան. կը կշռէ, կ'ընտրէ ճշտութեամբ, և ձեռք
'ի գործ չըլլար, մինչև որ հաստատ պատճառ մը չունենայ
այնպէս ընելու: Աւելի նախապատիւ կը համարի իր լու-
սոյն վերջացած տեղը կանկ առնել, քան թէ 'ի խաւա-
րի դանդաղիլ կամ յետո դառնալ: Անայնամիտ և հա-
րեանցի ծանօթութեանց տէր անձինքն, որ յանդգնու-
թենէ զատ ուրիշ արժանիք մը չունին, իսկոյն վճիռ կու-
տան անանկ դժուար, և կ'անճոտ կէտերու վրայ՝ որ ե-
թէ լաւ քննելու ըլլան, խորին ուսմանց պիտի կարօտին:

Ար և է նիւթոյ վրայ դատողութիւն ընելու համար
նախ պէտք է մանրամասնաբար քննել, կշռել անոր հի-
մունքը, պատճառները. և որքան կարևոր բան մը ըլլայ,
որքան մեծ հետեւութիւններ ունենայ ասիկայ, այնքան
հասուն ըլլալու է քննութիւնը:

Ղատաւորք երկրի, որ ձեռուրնուդ մէջն ունիք մարդոց
բաղդն ու կեանքը, դուք զխաւորապէս պարտիք զգոյշ
կենալ, որ առանց հասուն քննութեան չդատէք մէկը:
Ձեր պարտաւորութիւնն է վճիռ չտալ, թեթեամտու-
թեամբ, և առանց ամենազօրաւոր ապացոյցի չդատապար-
տել որ և է անձ մը. զի հաշիւ պիտի տաք Աստուծոյ՝
Համաշխարհական Ղատաւորին: Իայց սուա՛ղ, ձեր մէ-
ջէն քանի՞ քանի անձինք, չափազանց զբաղմանց պատ-

Ճառաւ կամ թէ շարունակ ուշադրութենէ ձանձրացած ,
 շատ անգամ գրեթէ ըստ դիպաց դատն կը վճռեն . ա-
 մենեհն հոգ շտանելով իրենց անմտադրութեամբը պատ-
 ճառած անկարգութիւններն դարմանելու : Արանի՛ թէ
 հետեւեալ պատմութիւնը երջանիկ աղբեցութիւն մ' ընէ
 ձեզ համալիճակ ընթերցողին վրայ :

Պարոն Քալկուէր , խորհրդական Արիժանիոյ խորհր-
 դարանին դատի մը մէջ դատաւոր ընտրուելով , կատար-
 եալ ուշադրութիւն չընելուն համար , բարեհամբաւ ըն-
 տանիքի մը կործանմանը պատճառ եղաւ : Ա՛ ճիւռ տալէն
 մէկ քանի ամիս ետքը , սխալը ձանչե ո՛լ , անմիջապէս կո-
 չել տուաւ այն ապերջանիկ ընտանիքն և կորսուած ըն-
 չիյն հաւասար գումար մը շնորհեց :

Ա՛ի՛ դատեր մէկը մինչև որ անձամբ դատն չլուս ,
 և մի՛ դատեր , մինչև որ կատարելապէս հասու չըլ-
 լաս ճշմարտութեան . և թէ որ չես կրնար ներողամիտ ըլ-
 լալ մէկուն գործին , գէթ ներողամիտ եղիր անոր շար-
 ժառթին . զի լաւ ևս է ընկերոջդ օգտին քան թէ մնա-
 սին համար խարու՛լ : Ա՛նչ միսիժարութիւն արդևօք
 պիտի չղգաս մահուան վայրկեանդ , երբ խիղճդ անվրդով
 խաղաղութիւն մը վայելէ , և դու կարող ըլլաս քու ան-
 ձիդ համար այն վկայութիւնն ընել , որ անգամ մը ա-
 ռաքիտի մարդուն մէկը իրեն համար ըրաւ . երբ այն կէ-
 տին մէջ իւր տարօրինակ բերկրութիւնն ու զարմանալի
 հանդարտամտութիւնը տեսնելով , պատճառն հարչին •
 Չե՛մ յիշեր , ըսաւ անիկայ , որ երբեք մեկուան համար զնաստի՛ն
 իօ՛ոք մը կամ թէ յանդու՛ն դատողութեան մ' ըրած եմ . (1) և

(1) Մտացի մարդը գէշ չխորհիր ուրիշին վրայ . տեսածն ու
 լսածը բարեսրտութեամբ կը մեկնէ . ոչ թէ կը սիրէ զչարն , այլ այն-
 քան դիւրաւ հաւատք չընծայեր : Աւրիշին պակասութեանցն ու

Քրիստոս Մեծարանին մէջ որոշակի խոստացերէ մէջ, որ ելնէ
զուրիշն շտապեմք մե՛ն քաղաքի գրաստան-իմք ։

Նուկ թէպէտ ուղիղ դատողութիւնը միշտ գովելի բան
է, տա աւին սխալման մէջ ընկնելնիս այնքան վնասակար
պիտի չըլար՝ եթէ դատած բաներնիս անտարբեր նիւ-
թերը ըլլային ։ Տայց ասոնք ընդհանրապէս մեր ընկերո-
ջը կամ պատիւը, կրօնքը, բարքն, կամ թէ քաղաքա-
կան կենաց ուրիշ ամենակարեւոր բաներն ըլլալով, եր-
բէք ըստ բաւականին զգուշութիւն ըրած չեմք կրնար
ըլլալ ։

Ասալ դատողութեանց գլխաւոր պատճառներէն մէկը
անտարակոյս մեր անձնասիրութիւնն է ։ Օ՛ի գրեթէ միշտ
ամէն բան չէ թէ ըստ ինքեան, այլ մեզ նկատմամբ դա-
տել կրնայիմք ։ Սու անձնասիրութիւնը կարծել կուտայ
մեզ թէ ուրիշներէն աւելի կատարեալ է մեր դատողու-
թիւնը ։ Աստի և ինչ որ մեր գաղափարներուն, մեր
լոյսին չհամաձայնիր, անմիջապէս կը դատապարտեմք ։
Տիեզերիս մէջ գրեթէ անորոշելի շամանդազ մ'ան-
գամ չ'ըսլով, կ'ուզեմք որ այն ահեղ մեքենայն բոլո-

յիմարութեանցը վրայ չուրախանար . անոր անարժանութիւնը՝
ծիծաղելի ընթացքը տեսնելով՝ զինքն արժանաւոր ոմն չհամա-
րիր, չհպարտանար, չունայնամտիր . այլ եւս առաւել կը ջանայ
զինքն կատարելագործելու ։ Ինքն ներողամտութեան կարօտելն զգա-
լով՝ միշտ կը ջանայ ներողամտ ըլլալ ուրիշին ։ Նշանաւոր է Գաղ-
ղիացի զօրապետի մը (Վիպրիան Մարաջախտ) պատասխանը այս մա-
սին ։ Ասիկայ յուր առնելով թէ զինքն անիրաւող զօրապետ մը
պաշարեր են թշնամիք, անմիջապէս ճամբայ ելաւ զանիկայ ազա-
տելու ։ Եւ երբ իւր շուրջը գտնուողները զինքն համոզել կը ջա-
նային որ չերթայ, պատասխանեց, «Արդարութիւն չէ մասնաւոր
վէճերուն համար հասարակաց բարւոյն վնաս հասցընել, եւ թշնա-
միս կործանելու համար բանակ մը կորուսանել . մանաւանդ որ զինքն
ազատելու երթալովս պիտի հասկընայ իմ վրայ ունեցած կար-
ծեաց անտեղութիւնը ։

րովին մենք մեր ըղձիցը համեմատ շարժելք : — Ա իսպա-
 սանութիւն գրողին մէկը օր մը լրագրոյ մը մէջ իրեն գա-
 ղափարներուն հակառակ յօդուած մը կարդալով, ծան-
 րութեամբ ըսաւ . թէ որ կատաղարութիւնը այս ընթացքը
 շարունակէ, ես ալ այստեղից հոգ պիտի շարժեմ
 քոն :

Մեր դատողութեանց մեծագոյն մասը մեր իղձերէն ծը-
 նունդ կ'առնուն : Քանի որ մէկը կը սիրուի, այնիւ յատ-
 կութեանց տէր կը համարուի զինքը : Իսկ երբ ատել
 ա'սիւմք, թէ որ մեր գաղափարներուն՝ մեր ըղձիցը մաս-
 նաւոր օգտին հակառակելու ըլլայ՝ ալ մեր աչսցը չին ե-
 րևիր անոր վրայ առաջ տեսած ձիրքերնիս : Անշուշտ
 ասոնք չեն փոխուիր, հասցա մեր սիրան է փոխուածը :
 Աիրքերնիս գոյնգոյն բիւրեղներու նման, իրերը հետ-
 ղհետէ իրենց բնականէն տարբեր գոյներով մեզ կը ներ-
 կայացընեն : Անոր համար որքան անխտաճ ըլլալու եմք,
 թէ որ կ'ուզուի դատել արդարութեամբ :

Քանի՞ քանի՞ թշնամիներ ունիմք մեր սրտիցը մէջ,
 որ շարունակ մեր բանականութիւնը պատրել կը դաւա-
 կցին : Եւ եթէ զգուշաւոր չըլլամք՝ ի՞նչ յանգուգն վճիռ-
 ներ չեն թելադրեր : Այս թշնամեաց կարգէն է հպար-
 տութիւնը, անձնասիրութեան որդին : Ասիկայ համողել
 կը նայի մեզ թէ միշտ իրաւունք ունիմք, և թէ հետեա-
 բար անիրաւ են բոլոր անոնք՝ որ մեզ նման չեն խոր-
 հիր : Աւստի՝ և կոյր յամառ կը համարուի զանոնք, դեռ
 ճշմարտիւ այնպէս ըլլալնին չփորձած, առանց մտածելու
 թէ անոնք ալ մեզ նման կրնան խորհիլ մեր վրայ : Այս-
 սըն զի թէ որ անոնք մեզ համակարծիք չեն, մենք ալ ա-
 նոնց համակարծիք չելք :

Այն իսկ հպարտութիւնն է, որ կը դրդէ զմեզ յիմա-

բութեամբ փառք համարիլ ուրիշներէն տարբեր կար-
ծեաց տէր ըլլալն: Ալ ո՞րքան անձինք կան, որ ուրիշ-
ներուն ջնմաներու համար ամենէն այլանդակ կարծիք-
ներն իբր աներկբայ ճշմարտութիւն կ'ընդունին. և չէ-
թէ ժամանակաւոր, թեթեւ նիւթոյ մէջ միայն, այլ և
կրօնական կարևոր վարդապետութեանց մէջ: Ամօթ կը
համարին ռամկին հաւատացածին հաւատալու. ուստի և ու-
մանք թշուառութեամբ երևելի ըրած են զիրենք՝ ան-
հաւատութիւն խոստովանելով. այլք իրենց պատիւ համար-
ելով համակարծիք ըլլալ այսպիսեաց, աւելի նախապատիւ
կը սեպնն անոնց հետևելով խաբուիլ և յախոնակա-
նապէս կորնչիլ, քան թէ արահետ և սովորական ճանա-
պարհն երթալ:

Մտացի մարդը ինչպէս որ իրաւամբ կը խորհի թէ ա-
մէն անցք, ամէն եղևութիւն անտարբեր ու անզգայ կեր-
պով ընդունիլը անխոհեմութիւն է, նոյնպէս ալ վաւերա-
ցեալ ճշմարտութիւնները իբր ստութիւն մերժելը յիմա-
րութիւն կը համարի:

«Պինտ գլուխները, կ'ըսէր լա Պրիյէր, որոշած ըլ-
լալով կրօնից պատիւ ընող բոլոր հրաշալի անցքերը մերժել,
կը ծաղրեն որ և է կրօնական հաւատալիք մը. բայց ինչո՞ւ
համար. մի թէ ուրիշներէն աւելի լոյս կամ թէ գիտու-
թիւն ունին ասոնք: Այսպիսի կարևոր նիւթոյ մը վրայ
բաւական քննութիւն ըրած են արդեօք: Մի թէ ընդ-
հանրապէս ամբարշտութեան խրախոյս տուողներ չեն ա-
սանկները, որ բոլորովին իրենց զուարճութիւններովն ըղ-
բաղած՝ չեն նեղեր անձերնին ուշադրութեամբ քննելու
ինչ որ մեծ փութով գիտել պարտին: Բայց այնպէս ը-
նելով՝ չէ՞ որ ռամկին ընթացքն բռնած կ'ըլլան, չէ՞ որ
կարճ ու հարթ շաւղի մը մէջ կը քալեն, որ է տեսած ըլլալ-
նուն համար տարօրինակ բանի մը հաւատալ:

Մասնի այլանդակ սկզբունք մը հաստատ պահելու համար, այն աստիճան յամառեալ ըլլալու է մարդ, որ ամենէն այլանդակ անտեղութենէ չշարժի: Այսին ղի թէ որ Վրիստոսի և իր աշակերտաց համար Վետարանչաց պատմած սքանչելիքն անժխտելի էին գրուած ժամանակնին, ի՞նչ յիմարութիւն ըլլալու է անոնց ըրածը: Արուսաղէմի մէջ տեղն և հրապարակու կատարուած ըլլալով այս հրաշից մեծագոյն մասը, շուտով յայտնի պիտի չըլլա՞ր անոնց ստութիւնը եթէ իրօք սուտ ըլլային: Այլ ի՞նչպէս պիտի կրնային այս հրաշից պատմագիրները բոլոր աշխարհիս հաւտացնել զանոնք, եթէ միայն անհիմն, մտացածին եղելութիւններ ըլլային:

Ճշմարիտը խօսելով, մարդիկ ընդհանրապէս ամէն բան իրենց դաղափարներուն համեմատ կը դատեն: Եւ տեսնել ալ բոլորովին ծոյլ ու անհոգ ըլլալով, միշտ ուրիշին կարծեացը կը հետեին. չեն քննել լսածնին կամ թէ կարգացածնին: Աուրօրէն կը հաւատան երեւելի անուն ստացող այն մատենագիրներուն՝ որոնց արտառոց կարծիքները, մոլորութիւնները անժիւ գրչաց նիւթ եղած են: Ար կարծեն թէ տաղանդաւոր մարդիկ ամենեւին չեն սխալիր. երբ փորձառութիւնը կը հաստատէ թէ ամէնէն աւելի անանկները կը վրիպին. մանաւանդ երբ դատողութենէ աւելի զօրաւոր երեւակայութիւն ունենան: Այսին ղի վառվռուն երեւակայութիւնը ճշմարտէն աւելի կենդանի գոյներով կը ներկայացնէ մեզ իրերը. երբ ընդհակառակն՝ ուղիղ դատողութիւնը ամէն բան վճռելէ առաջ կը բազմատէ ու մանրամասնաբար կը քննէ: Այլեւայո՞ւրի՞նք՝ կ'ըսէ հեղինակ մը, սրբաշու է՞նթանայ. իսկ դատողութիւնը + այլ ու + այլ է՞ յառաջանայ: Մտոր համար է որ տաղանդաւոր անձանց շատերը արտառոց բաներ կը խօսին. երբ ուղիղ դատումն ունեցողները հազիւ թէ կը վրիպին:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է

ԱԿՆԱԾՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԻ

ՐՆԹԵՐՑՈՂ, չեմ կարծեր թէ դու ալ այն թեթեա-
միտ ու ապականեալ բարուց տէր երիտասարդներէն ես,
որ առանց դժկամակութեան կրօն ց վերաբերեալ գրուածք
մը չեն կրնար կարդալ: Այլ կը հաւատամ յսժարու-
թեամբ որ արդէն ամբարշտութեան թելադրութեանց
դէմ զինուած, կրօնքն իրաւամբ աշխարհիս ամենէն կա-
րևոր բանն կը համարիս. անկեղծ սիրով յաճախ կ'ըն-
թեռնուես Վրիստոնէական կրօնքին աստուածայնութիւնը
հաստատող զօրաւոր փաստերը: Յառաջ տար, ուրեմն,
յարատելութեամբ սկսած գործդ, ու շուտով ճշմարտու-
թիւնը պիտի ճանչես: Այլ թող խրախոյս ըլլայ քեզ Ար-
թուրէն և Աիլէրդ Րէսդ անուն երկու բազմահմուտ
Րնգղիացոց յաջողութիւնը:

Րսոնք երկար ատեն աստուածեան (1) ըլլալէն ետե,
միամտութեամբ և եռանդեամբ Վրիստոնէական կրօնից
ուսմանն պարապեցան 'ի միասին: Այլ ստացած լոյսերնին
նախապաշարմանց մառախուղը փարատելով, ճանչեցին
և ընդունեցին զճշմարտութիւնը:

Րայց աիսոս որ խիստ հազուագիւտ բան է այս անկեղ-
ծութիւնը: Վանի՞ քանի անձինք ուսմամբ մոլորութիւննին
ճանչել ջանալու տեղ, անհաւատութեան մէջ ևս առաւել
հաստատուելու կ'աշխատին: Արքան մարդիկ կան, որ ի-

(1) Աստուածեանք կը հաւատան գերագոյն էակի մը. բայց
յայտնութիւն չեն ընդունիր:

Ենց անկարգութեանց մէջ հանգիստ ու անխռով ապրե-
 լելու, և իրենց կրօնը անպատիժ ծառայելու համար,
 ուզեն որ սուտ հանեն կրօնքը, և ամէն կողմանէ նոր
 ասկածներ, տարակուսելի կէտեր կը փնտռեն, որ թէ
 զուրիշներն և թէ զիրենք լաւ ևս համոզեն իրենց կար-
 ծեացը: Տարօրինակ զուարճութեամբ կը լափեն անհա-
 ստ մատենագիրները, իսկ կրօնքը պաշտպանող պատ-
 լական մատենաներն ձեռք առնել անգամ չեն ուզեր:
 Անտարակոյս եթէ ասոնք առանց նախապաշարման աշ-
 խատէին, շուտով պիտի իմանային Վրիստոնէութեան դէմ
 եղած առարկութեանց ստութիւնը, անտեղութիւնն ու
 խարդախութիւնը. զի արդէն հարիւրաւոր գրիչներ ան-
 հերքելի պատասխաններ ըրած են անոնց դէմ: Պիտի
 հասկընային ան ատեն թէ Վրիստոնէութեան աստուած-
 այնութեան ապացոյցքն ոչ միայն անընկճելի են, այլ
 նաև անանկ յայտնի ու դիւրիմաց, որ անհնար է չղգալ
 անոր ճշմարտութիւնը:

Այսպէս է ահա Վրիստոսի յարութեան փառաւոր
 հրաշքն. զի ինչպէս որ Ամենակարողութեան գործն է
 մահուան ճանկերէն զմահկանացուն ազատել ու անոր
 կրկին կեանք շնորհել, նոյնպէս միայն մէկ մարդ եղեալ
 Աստուած մը զինքն ՚ի մահուանէ կրնայ յարուցանել:
 Սուտ վարդապետութիւններ քարոզող մը երբէք չէ կրցեր
 համարձակիլ գուշակելու թէ մահուանէ ետև գերեզմա-
 նէն պիտի ելնէ: Վրիստոս է միայն այն Աստուածաւաք
 Մարգարէն, որ ասանկ գուշակութիւն մ' ըրեր, և անով
 գլխաւորապէս իւր առաքելութիւնը վաւերացուցեր է:
 Այս մարգարէութիւնը անանկ յայտնի ու հրապօրակաւ
 եղած էր, որ իր մահուանը երկրորդ օրը իշխաններն,
 Վահանայապետքն ու Վարիսեցիները ՚ի միասին, Պիղատոս

սի գացին ու իրեն ըսին . «Տէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր՝ մինչ կենդանին էր . թէ յետ երից աւուրց յառնեմ : Արդ՝ հրամայեալ զգուշանալ գերեզմանին մինչև յերիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն զիշերի՝ գողանայցեն զնա . և ասիցեն ժողովոգեանն, թէ յարեաւ 'ի մեռելոց . և ընկիցի յետին մոլորութիւնն չարքան զառաջինն» :

Թէ որ Վրիստոսի յարութիւնը ստայօգ պատմութիւն մ' է, թէ որ անոր ապացոյցները երկդիմի ու անստոյգ բաներ են, ջսիջախեմք իրեն քանդակած արձաններնիս, կործանելք իրեն համար կանգնած սեղաններնիս, ու մուրեցուցչաց կարգն դասելք զինքը : Իսկ թէ որ իրօք և ճշարտապէս 'ի կեանս վերադարձաւ իր կանխաձայնութեանը համեմատ, թէ որ ասոր ապացոյցը վերջին աստիճան ստուգութեան կը հասնի, խոնարհիմք երկիրպագանելք իրեն անուանը և իբր ծայրագոյն Տէր երկնից և երկրի ճանչելք զինքը :

Արդ այս հրաշքը՝ որուն նմանը մինչև այն ատեն չէր լսուած, կատարելապէս կ'ապացուցուի բաղմամբ ահանատես ու արժանահաւատ վկայներով, իր թշնամեաց խոստովանութեամբն ու Վստուծոյ վկայութեամբը : Այլ ընթերցողին միտքը բոլորովին գոհ ընելու համար քիչ մը երկարօրէն խօսիմք այս վկայութեանց վրայ :

Վոջի կարգէն եղողներն են իր Վաքեալներն ու աշակերտները, ահանատես ու արժանահաւատ վկայներ : Վստնց համար չեմք կրնար ըսել թէ խաբուած են . զի մինչև անգամ իւզաբեր ցանանց վկայութիւններն յիմարութիւն և պարզապէս երազ համարեցան : Իրենց վարդապետը զանազան անգամ իրենց երևելէն, հետերնին կերակրելէն և իրեն մարմինն ու վէրքը իրենց շօշա-

փել տալէն ետև միայն Վրիստոսի յարութիւնը աներկ-
բայ եղելութիւն սեպեցին :

Այ թէ իր աշակերտաց միայն մէկն կամ մէկ քանին
զինքը տեսան , այլ մետասան Վաքեալներէն զատ , հինգ
հարիւրէն աւելի հաւատացեալներ մէկ տեղ ժողովուած ,
ամենքն 'ի միասին այս երջանկութիւնն ունեցան . ինչպէս
կ'ըսէ Պօղոս Վաքեալ Աորնթացոց թղթոյն մէջ . 'ի
վկայութիւն կոչելով անոնցմէ դեռ ապրողներէն ոմանք :
Եւ ոչ միայն անգամ մը զինքը տեսան , այլ շատ ան-
գամ . և չէ թէ մէկ քանի ակնթարթի մէջ կամ թէ ե-
րազի նման , այլ խօսակցելով ու կերակրելով հետը :

Եւ ամենէն ևել այս վկայութեանց ոյժ տուող բանը
սա է՝ որ խաբերայ մը առանց օգուտ մ' ակնկալելու ստա-
յօղ վարդապետութիւններ երբէք չէ հնարած : Ի՞նչ օ-
գուտ կրնային քաղել Վրիստոսի աշակերտները զինքն
յարուցեալ քարոզելով , եթէ իրօք այնպէս չէր եղած .
կամ թէ ի՞նչ օգուտ չէին ունենար եթէ ծածկէին իր յա-
րութիւնը :

Իրենց առաքինութեանը փոխարէն ժամանակաւոր եր-
ջանկութիւն մը չակնկալելէ զատ գիտէին թէ ինչ վտանգ-
ներու պիտի հանդիպէին , և թէ ազգերը ինչպէս իրենց
դէմն պիտի ելնէին : Վախատիներ , գանահարութիւնը ,
կապանքն ու բանտը իրենց վկայութեանց յարատևութեան
վարձքն եղան : Վարկոծութիւնը , սրոյ հարուածները ,
սոսկալի մահը՝ չկրցաւ իրենց միտքը շրջել : Արբ անգութ
տանջանաց պատրաստութիւններն կը տեսնէին , երբ դահ-
ճաց կացինին ներքև վերջին շունչերնին պիտի աւանդէ-
ին , ևս առաւել քաջալերուած , տիեզեր քարոզած ճրջ-
մարտութեանը վկայութիւն կուտային : «Վ՛հ , հաւատամք ,
կ'ըսէ Փասքալ , հաւատամք այն վկայներուն , որ իրենց

Ա արդապետին յարութեանը կատարելապէս համոզուած ըլլալնուն համար զոչ ըրին կեանքերնին . և անշուշտ ասանկ էական կէտի մը մէջ ոչ կրնային իրենք խաբուիլ ոչ ալ ուրիշը խաբել” :

Քրիստոսի թշնամեաց վկայութիւնն ալ ասկէ անզօր չերևիր . զի այս ալ կը հաստատէ իր յարութիւնը : Ասոնց խոստովանութեանը նայելով , Քրիստոսի մարմինը մահուանն երրորդ օրը գերեզմանին մէջ չգտնուեցաւ . և մարդկ ըէն խօսելով անհնար էր որ աշակերտներն զայն գողնային . զի պահապան զինուորները խնամօք և ըզգուշութեամբ ընտրուած ըլլալով շրեաներէն , չկրնար կարծուիլ թէ ամէնքն ալ 'ի քուն եղած ըլլային :

Ի այց ենթադրեմք թէ ամէնքն ալ քնացած էին , տակաւին ի՞նչ ըսելու է գերեզմանին վրայ դրուած վէմին համար : Արդեօք ասիկայ շարժելու ատեն ամենեին ձայն մը չելա՞ւ որ զարթուցանէր պահապանները : Անթագրենք նաև թէ վէմին շարժումն ալ մեծ ձայն մը չհանեց , մարմինը գողնալու աշխատողներն ալ ամենեին ձայն մը չհանեցի՞ն արդեօք : Իրաւցընէ զարմանալի են անհաւատից վկայութիւնները , փորձերը . զի կամակորութեամբ չեն ուզեր հաւատք ընծայել քաջ ապացուցուած ճշմարտութեանց , երբ ճշմարտանմանութեան շուքն հազիւ թէ ունեցող եղելութեան մ' առանց դժուարութեան կը հաւատան :

Ար խելացի մարդը կրնայ ըսել թէ Առաքեալները՝ որ իրենց Ա արդապետին մահուանէն առաջ երկչոտութեամբ զինքն թողին ու ցրուեցան , սիրտ պիտի ընէին զինուորաց պահապանութեանը յանձնուած մարմինը գողնալ : Ճշմարտանմանութենէ զուրկ ու տղայական հնարքներու դիմելը , ինչպէս էր Քրիստոսի թշնամեաց բռնած

ընթացքը, պահապաններուն խորին քնոյ մէջ եղած ա-
տեն աշակերտները Ա յարդապետնուն մարմինը գողցան ը-
սելը, լռիկ խոստովանութիւն և ամենազօրաւոր ապացոյց մը
չէ՞ իր յարութեանը :

Յարութիւն առնելէն ետև իր թշնամիները համոզե-
լու համար անոնց չերենալն ալ փաստ մը չկրնար ըլ-
լալ իրեն դէմ. զի անոնք աստուածասպանութիւն գոր-
ծելովնին անարժան էին այս շնորհքին : Ասանկ հրաշա-
գործութիւն մ' ալ անթիւ ուրիշներուն նման իրենց վրայ
ազդեցութիւն պիտի չընէր : Ազգարոսի յարութիւնը ար-
դէն տեսած էին. ասիկայ դարձի բերա՞ւ իրենց քարա-
ցեալ սիրտերը :

Ա երջապէս Աստուծոյ վկայութիւնը Քրիստոսի յա-
րութեան ճշմարտութեան վերջին հաւաստիքն է. զի ան-
կարելի է որ Աստուած, անհուն իմաստութիւնն ու ճշմար-
տութիւնը խրախոյս և քաջալերութիւն տուած ըլլայ
ստութեան և մոլորութեան : Արդ՝ այսպէս ենթադրած
չե՞մք ըլլար, եթէ Քրիստոս իրօք չէ յարուցեալ. որով-
հետև Առաքեալներն մեծամեծ ու աներկբայելի սքան-
չելագործութեամբք իբր անժխտելի ճշմարտութիւն հաս-
տատեցին ասիկայ : Աւրեմն Աստուած գործակից եղած պի-
տի ըլլայ խարդախութեան և խաբէութեան :

Աւրեմն Քրիստոսի յարութիւնը անժխտելի ճշմար-
տութիւն է, և հետևաբար Քրիստոս Աստուած, և իր
հաստատած կրօնքը աստուածային է. ինքն գուշակեց իր
յարութիւնը իբր վաւերական ապացոյց իր աստուածու-
թեանն և իր ուսուցած կրօնքին աստուածայնութեանը :

Այս կրօնքին հաստատուելուն զարմանալի եղանակն
ալ զօրաւոր ապացոյց մ' է իր ներդինակին Աստուածու-
թեանը : Քրիստոսի գալուստը անանկ մեծ, անանկ ան-

ըուր նպատակ մը կը յայտնէ, որ բնաւ մահկանացուի մը
 միտքը չկրնար երեւակայել: Բոլոր աշխարհ կռապաշտու-
 թեան խաւարովն պատած է. շրէից անարգուած ազգը
 միայն զճշմարիտ Աստուածն կը ճանչէ: Մարդոց մեծա-
 գոյն մասն ամօթալի կրից և այլանդակ աւելորդապաշտու-
 թեանց գերի եղած են: Քրիստոս ան ատեն կ'երևի մար-
 դոց մէջ և կը յայտնէ անոնց թէ Աստուծմէ խրկուած է
 կուռքերն ջախջախելու, անոնց նուիրուած տաճարներն
 կործանելու, փիլիսոփայից սուտ իմաստութիւնը երևան
 հանելու, բոլոր մարդիկ լուսաւորելու, ազգաց հաւատքն
 ու բարոյականը շրջելու, նախապաշարումները եղծանելու,
 աւելորդապաշտութիւնները բնաջինջ ընելու՝ և աշխար-
 հիս բոլոր ազգերը մի և նոյն օրինաց ներքև միացնելու
 համար: Ասանկ նպատակ մը իրեն դնելու ատեն, գիտէ
 թէ որքան դժուար բան է ազգաց հաւատքն փոխել. զի
 մարդիկ բնականաբար իրենց հայրերէն ընդունածը յար-
 գելու հակամիտ են: Վիտէ թէ այն ազգերը՝ որոնց քարո-
 զել կ'ուզէ Աւետարանը, յամառեալ ըլլալով իրենց մո-
 լորութիւններովն ու ընկղմեալ իրենց գարշելի անկարգու-
 թեանցը մէջ, նախապատիւ կը համարին անանկ կրօնքի
 մը յարելու՝ որ իրենց կրիցը չհակառակելէ զատ, կը
 փայփայէ զանոնք: Վիտէ թէ պիտի կուռի իր ազգին հետ,
 որ սերտ կապուած է հին օրինաց և փրացեալ ընդունայն
 անկալութեամբ մը, թէ փառաւոր ու աշխարհակալ Մե-
 սիա մը պիտի գայ խորայելի վաղեմի թագաւորութիւնը
 պիտի վերահաստատէ: Ար ճանչէ բոլոր այս խոչընդոտ-
 ները, բայց ամենեւին չվհատիր:

Ար ծնի շրէաստանի մէկ անկիւնը աղքատ ու տղէտ
 ծնողներէ. երեսուն տարի ծածկուած կ'անցընէ. կ'ելնէ
 վերջապէս իր առանձնութենէն և ձեռք կը նետէ իր մեծ

գործին : Ար կոչէ իրեն տասներկու հոգի , ամենքն ալ կոչտ , անկիրթ , աղքատ , և ձկնորսութենէ զատ ուրիշ արհեստ չգիտցող մարդիկ : Ասոնք կ'ընէ իրեն գործիք աշխարհիս մէջ ահագին յեղափոխութիւն մը գործելու : Ասոնք իրեն հետևող ընելու համար ի՞նչ կ'ընէ արդեօք : Ա՛րսէ որ իրեն ետևէն երթան . և անոնք ալ այնպէս կ'ընեն , թէև իրեն աղքատ ու սոսկական մէկն ըլլալը գիտեն : Ա՛չ միայն մարդկային խոստումներով Հրապուրէր զանոնք , այլ յայտնապէս կը հասկըցունէ թէ հաւածանքէ ու վշտէ զատ ուրիշ բան մը ակնկալելու չեն : Ձեզ պիտի հաւածեն :

Ա՛վ կրնայ ըսել թէ հրապուրիչ է այս խոստումը : Աստու ամենայնիւ տասներկու հոգի իրեն կը յարին և մինչև իր մահը ետևէն կ'երթան :

Ա՛հա վրայ գալովն , ասանկ մէկ քանի տարիէ հետէ սկսած և տկար յառաջադիմութիւն ըրած գործ մը բնականաբար կը կարծուէր որ անհետանայ աշխարհիս երեսէն : Ար մեռնի անոր հեղինակը , և ի՞նչ մահուամբ : Ար մեռնի՞ իբր մահապարտ անարգ մահուամբ մը , երկու աւազակներու մէջ տեղն և գերեզման կը դրուի : Աշակերտները խռոված ու ցրուած , վհատութեան մէջ կ'ընկնին . անանկ որ կ'երևի թէ իր աստուածային նպատակը կը թաղուի իրեն հետ : Բայց ոչ . յուսահատութեան կէտին մէջ է որ կ'սկսի գործը :

Այն իսկ մարդը , որուն անունը կ'երևէր թէ բնաջինջ եղաւ երկրի երեսէն , կը փութայ կատարել Աստուծոյ մեծ գործը : Բրիստոս ըսած էր իր աշակերտացը թէ մահուանէն ետև պիտի խրկէ զանոնք իր Աւետարանը քարոզելու , ամէն տեղ իր կրօնքն հաստատելու , և բոլոր ազգերն ճշմարիտ Աստուծոյ ծանօթութեանը կոչելու : Բայց

միանգամայն խոստացեր էր զօրացնել զիրենք երկնային
 զօրութեամբ մը, տալ իրենց անանկ իմաստութիւն մը, ու
 թուն մէկը չկրնայ դէմ դնել. մեծամեծ հրաշքներ գործել
 իրենց ձեռօքը, ճշմարիտ հաւատացելոց բազմաթիւ ընկե-
 րութիւն մը կազմել իրենց աշխատութեամբը. և պահպա-
 նել այս ընկերութիւնը մինչև դարուց վերջը. անանկ որ
 դժոխքն անգամ կարող չըլլայ զանհկայ կործանել:

Եւ լոյսը փայլեցաւ ամենէն անկիրթ ու խաւարին մէջ
 նստող ազգաց աչացը. և անոնք որ ատենով ան-
 շունչ՝ անզգայ կռոց երկրպագութիւն կ'ընէին, հիմա կը
 պաշտեն ճշմարիտ Աստուածը: Բարբերնին իրենց վար-
 դապետութեանն ու օրինացը նման մաքրուեցաւ: Այս ա-
 մէնը Առաքելոց գործերն են. և իմաստասիրութիւնը երբէք
 այսպիսի արդիւնք չէ ունեցեր. զի իր ճրագովը ամբողջ
 երկիր մը երբէք չէ լուսաւորած. բարի նախանձաւորու-
 թիւնն ալ շինծու չաստուած մը անգամ չէ կործանած,
 ոչ ալ ճարտարախօսութիւնը ժողովուրդ մը փոխած ունի:

Ասոնք (Առաքելները) կը համոզեն զբնայները թէ
 Աստուած խափանեց իրենց կրօնքը, և թէ նոր պաշտա-
 մունք մը հաստատուեցաւ զոհերուն տեղ: Արձանչցնեն
 անոնց թէ մարգարէից ձեռօք խոստացեալ Մեսիան այն
 Քրիստոսն էր, որ իբր ամբարիշտ՝ եղեռնագործ, իրենք
 խաչեցին: Բնդունել կու տան կռապաշտից՝ իրենց կրօն-
 քին բոլորովին հակառակ կրօնք մը. անանկ կրօնք մը՝ որ
 կ'արգիլէ բոլոր սիրած բաներնին, սովորութիւններնին,
 տօներնին, ու տեսարաններնին. անանկ խիստ կրօնք մը
 որ զինքն ընդունողէն խիստ մաքուր բարոյական մը կը
 պահանջէ: Մինչև ան ատեն չսուած խորհուրդներ, խել-
 քէ վեր վարդապետութիւններ կը քարոզեն, ու կը հաւ-
 տացուին: Բնականին չար հակամիտութեանցը հակառակ

քարոյականութիւն մը կ'ուսուցանեն , և ամէն տեղ կ'ընդունուի : Ազնուականները , գիտուններն և իմաստասէրքանգամ այս աղքատիկ ձկնորսներուն վարդապետութեանցը սիրով կը յարին : Անհաւատալի հրաշագործութիւն , եթէ Վրիստոնէութեան առաջին քարոզիչները իրենց քարոզութիւնը աւելի զարմանասքանչ հրաշիւք հաստատած չըլլային :

Մարգարէութեանց համեմատ բոլոր աղգերը իրենց խորունկ քնէն սթափեցան , արտաքսեցին կուռքերնին , կործանեցին տաճարնին • Թողին աւելորդապաշտութիւններն և սուրբ ժողովուրդ մը կազմուեցան , որ օր ըստ օրէ աճեցաւ ու զօրացաւ , թէ և թշնամիները ամէն հնարք կը գործածէին զանիկայ բնաջինջ ընելու : Ինչն իսկ շուրջ Վրիստոնէութեան անուան կործանումը երգուելէն և մարտիրոսաց արեամբը ծարաւն անցնելէն ետեւ , խոնարհեցաւ վերջապէս այն խաչեալ մարդ—Աստուծոյն լուծին , որուն աշակերտները այնքան կատաղութեամբ կը հալածէր :

Հալածանքն այնքան ընդհանուր ու սաստիկ էր , որ մարտիրոսաց արիւնը հրապարակներէն հեղեղանման կը հոսէր , և գետերը կը գունաւորէին : Արեք հարիւր տարւոյ չափ տեւեց ասիկայ , և մինչև այն ատեն Վրիստոնէութիւնը երկրիս ամէն կողմն տարածուեցաւ : Ար կրօնքը ասանկ դժուարութեանց մէջ , և առաքինութենէ ու իր մարտիրոսաց արիւնէն զատ ուրիշ զէնք մը , ուրիշ միջոց մը չունենալով , ասանկ աճեր , ասանկ զօրացեր է : Արծես թէ մարտիրոսաց արիւնը ամէն տեղ բեղմնաւորութիւն կը սփռէր արօրին նման , որ ձեղքած տեղը արգաւէտ կ'ընէ : Ինչաւորները որքան որ անոր կործանմանը համար կ'աշխատէին , կուապաշտներն ալ այնքան աւելի փութով հալածման սրոյն զոհ եղողներուն տեղը կը լե-

ցրնէին : Աւրիշ ատեն ո՞վ տեսեր է , որ դահիճները իրենց զոհերուն արեամբը շաղախեալ , յանկարծ իրենց բնութիւնն ու վիճակը փոխեն , և արիւննին՝ դամ մի յառաջ իրենց հեղած արեանը հետ խառնեն : Առապաշտութիւնը , աստուածեանութիւնը և ուրիշ աղանդները իրենց հետեւողացը մէջ այս աստիճան քաջասրտութեան մէկ քանի օրինակ հաղիւ թէ ունին : Իսկ Քրիստոնէական կրօնքը միջիոնաւոր անձինք կրնայ ցուցնել ամէն հասակէ և ամէն վիճակէ :

Այս կրօնքին ճշմարտութեանը մէկ ուրիշ ապացոյցն ալ արեւից ազգին աղետալի վիճակը , ցրումն , ու այնքան դարերէ հետէ անկորուստ ու զարմանալի տեւողութիւնն է :

Պիղատոսի առջին իրենց վրայ ըրած սոսկալի անէծքնուն կատարումը խիստ շուտով սկսաւ : Արուսաղէմի պարիսպներուն և իր հոյակապ տաճարին 'ի հիմանց կործանումը , քար քարի վրայ շինալը տեսան աչքովսին ճիշդ , ինչպէս որ գուշակուած էր :

Նոր Ատակարանի գրեանքը ութն ժամանակակից հեղինակաց գործքն են , որոնցմէ ոմանք տեսածնին , ոմանք ալ ականատես վկայներէ լսածնին գրեցին . ուրիշ ո՞ր պատմութիւն այսքան վաւերական վկայներ ունի :

Անթիւ ժողովուրդներ ընդունեցին այս գրութիւնները և զանազան լեզուներու թարգմանուեցան : Այլ Աելսոս , որ գրեթէ Քրիստոնէութեան սկսած օրէն զանազան հրեարիւք մեր սրբազան մատենից դէմ կը խրոխտար , ոչ ուրացեալն Յուլիանոս (1) , որ ամէն ճիգն թափեց անոնց

(1) Փլալիոս Աղորդիոս Յուլիանոս , մականուամբ Աւրացեալ , մեծին Կաստանդիանոսի ազգականն , ծնաւ 331 ին եւ դաստիարակեցաւ Քրիստոնէութեան մէջ , բայց յետոյ հեթանոս եղաւ : 355 ին Կայսր ընտրուելով Քաղղիա ղրկուեցաւ , զանազան յաղ-

անպատուութիւն բերելու, ոչ ալ ուրիշ որ և է հետեանոս
 մը անոնց հեղինակները սուտ հանելու կարող եղան: Այս
 գրեանքն Առաքելոց գործքը չեն ըսելու համար հարկ կ'ըլ-
 լայ ենթադրել թէ կամ բոլոր Քրիստոնեաց եղած ժողո-
 վուրդները միաբանած են զանոնք հնարելու, և յետոյ ե-
 րեակայտու մարդոց ձեռօք աշխարհիս վրայ տարածելու, և
 կամ թէ իրենք ալ հաւասարապէս խաբուած են: Բայց
 ի՞նչպէս կրնայ ըլլալ որ միջինաւոր մարդիկ այնքան դա-
 րեր խաբուած մնային անանկ եղելութեան մը վրայ, ո-
 րուն սխալ ըլլալը հեշտեալ կը ճանչցուէր: Այլ ի՞նչ, կըր-
 նայ երեակայուիլ որ ստուծեան թշնամի կրօնք մ'ընդու-
 նող, և անոր համար անձերնին տոսկալի հալածանաց ու
 անագորոյն մահուան մատնող մարդիկ, առանց շահա-
 խնդրութեան, առանց պատճառի ելնեն միաբանութեամբ
 բոլոր դարերը խաբելու համար հնարք մը մտածեն և ի-
 րենց մտացածին վարդապետութիւնները իբր աստուած-
 ային գործք հրատարակեն: Արնայ երեակայուիլ որ մաս-
 նաւոր Ակեղեցեաց մէջ այնքան հերձուածներն ու բաժա-
 նումները անթիւ համախորհուրդ խաբեբայից օգտի, բեր-
 մանց և բնաւորութեան տարբերութիւնը ամենեին առիթ
 չտայ որ վերջապէս ելնէ մէկը ստուծիւնն երեան հանէ,
 և աշխարհս խաբէութենէ ազատէ:

Ոչ ալ ասկէ աւելի ճշմարտանման կ'երևի թէ Առա-
 քելոց գրուածքն փոխուած ու այլայլած են: Բոլոր եկե-
 ղեցիները զանոնք իբր Հոգւոյն Արքայ գործքն են ըն-
 դունած, և միշտ համոզուած են թէ առանց ամբարշտու-

թութիւններ ըրաւ Քերմանայւոց վրայ: 361 ին Պաղղիոյ բանա-
 կը ապստամբելով Առստանդիանոսի դէմ, Յուլիանոսն դահը նստու-
 ցին: Եւ սպաննուեցաւ 363 ին Պարսից դէմ ըրած արշաւանքին
 միջոցը:

Թեան ու սրբապղծութեան անոնց մէջէն բան մը չեն կրնար պակսեցնել կամ աւելցնել: Ասկէ 'իզատ թէ որ Աւետարանի պատմութիւնը ազճատել ալ ուզէին, ինչ խոչընդոտներ դէմերնին պիտի չեղնէին: Այս գրոյն օրինակներն աշխարհիս ամէն կողմն տարածուեր էին, ամէն հաւատացելոց ձեռքն կը գտնուէին, շարունակ կը կարդացուէին ընտանեաց, մասնաւոր տանց և ժողովոց մէջ: Արդ այսքան ընդարձակ տարածուած և այսքան նուիրական սեպուած գրութիւն մը կրնա՞ր ըլլալ որ ամենափոքր փոփոխութիւն մը ընդունէր առանց հանդիպելու հազարաւոր ընդդիմութեանց աշխարհիս ծայրերէն: Այս ամէն պարագայները մտածելով, աներկբայ չհետևիր թէ 'Աոր Ատակարանի գրութիւնները առանց կարևոր փոփոխութեան մինչև մեր օրերը հասած են:

Աւրիշ զօրաւոր փաստեր ալ կան ասոնցմէ զատ: — Ինչպէս որ անհնար էր որ Առաքեալները խաբուած ըլլային իրենց պատմած եղելութեանցը վրայօք, անոնց ականատես վկայ, և շատ անգամ իգլխաւոր գործիներն ըլլալուն համար, նոյնպէս ալ հաւասարապէս ստոյգ է թէ զմեզ խաբել չէին ուղեր: Այլ իրենց անկեղծութեան ուրիշ ապացոյցներուն վրայ խօսիլը՝ զանց ընելով, կրած մահերնին բաւական է ճշմարտութեան անջնջելի դրոշմն տպաւորելու իրենց վկայութեանցը վրայ: Մանաւանդ որ ասոնց մարտիրոսութիւնը գաղափարի համար չէր, այլ եղելութեան համար:

Թողումք ուրեմն որ ամբարիշտներն ու անհաւատները կրօնից դէմ ուղածնուն չափ դժուարութիւններ յարուցանեն. չխաբուիմք, չշփոթիմք իրենց պատրուակեալ առարկութիւններէն, զի ճշմարտութիւն մը հասարակ փաստերով հասարակութիւն երև, ինչ դժուարութիւն որ դէմն էլնէ, պէտք է թողուլ:

Այս պատուական սկզբունքը, որ բոլոր առարկութեանց դէմ իբր նախապահեատ կրնայ գործածուիլ, անանկ ըստոյգ ու ապահով է որ մինչև անգամ մեր հակառակորդներէն մէկն ալ ընդունած է:

«Ամէն դրութեանց մէջ առարկութիւններ կը դանուին, կ'ըսէ անիկայ, (Սուսօ), զի չկայ անանկ բացայայտ ճշմարտութիւն մը, որ միճաբանութեան նիւթ չըլլայ. և մինչև անգամ եթէ Աստուած մարդկային բարբառովն խօսէր, վէճ պիտի ծագէր»:

Արեւմն այս խոստովանութեանս ուշ դնելով ալ, պարտաւոր չեմք ըլլար մեր թշնամեաց առարկութեանցը պատասխանել: Օ՛ր արդէն խիստ համոզիչ փաստերով ապացուցուած է թէ Աստուած ինքն է Քրիստոնէական կրօնքին հեղինակը. մանաւանդ որ անոնց սնտի կրթութեանցը վրայ խօսելովնիս իրենց պատիւ ըրած կ'ըլլամք, երբ միայն անարգանաց արժանի են:

Քրիստոնէական կրօնքին պահպանութիւնը աստուածային պահպանութեան անանկ յայտնի նշաններն ունի, որ մարդ կոյր ըլլալու է որ զանոնք չտեսնէ: Թէ որ այս շէնքը միայն մարդկային կարծեաց վրայ հիմնուած ըլլար, փոթորիկներէն շատոնց պիտի կործանէր: Ի՞նչ յարձակումներու, ի՞նչ պատերազմներու դէմ է դրեր. երկարատե հալածումներէն զատ ի՞նչ անագորոյն ներքին կռիւներու դիմացեր է: Ա՛լ չգիտեր Արիստականութեան (1)

(1) Որոյ աղանդապետ եղաւ Արիստ անուն Անտիոքացի Երէց մը 'ի սկիզբն չորրորդ դարուն: Ասիկայ կ'ընդունէր Քրիստոսի Աստուածութիւնը, սակայն կ'ուրանար շօր հետ համահաւասար ու յաւիտենական ըլլալը: Այս կարծիքը դատապարտեցաւ Նիկիոյ ժողովէն եւ Արիստ արքսորեցաւ: Բայց շուտ մը ետ կոչուելով, երբ իր յաղթութիւնը պիտի վայելէր, յանկարծամահ մեռաւ 336 ին:

գործած չարիքն : Ա՛սիկայ խստութեան հետ հրապոյրն
միացնելով , երբ կ'երևէր թէ ալ ստոյգ էր իր յաղթու-
թիւնը , սկսաւ կամաց կամաց տկարանալ և իբր ամպ մը
արեգակին ջերմութենէն ցրուիլ , աներևութանալ : Ա՛րիո-
սականութենէ ետև եկած աղանդներն ալ նոյն վախճանն
ունեցան . և վերջին դարուց մէջ եղած ամբարշտութեան
աղանդն ալ անշուշտ պիտի կործանի : Ա՛նհաւատու-
թեան արտառոց դրութիւնները իրենց պատճառած ցնո-
րիցը հետ պիտի աներևութանան , նման այն գոլորշեաց՝
որ ճահիճէ մը կամ թէ գերեզմանէ մը ելնելով , վայր-
կեան մը դիշերուան մոլթ խաւարին մէջ կը փայլին , բայց
իսկոյն ելած տեղերնին դառնալով , մթութեան մէջ կը
թաղուին : Մարդոց գործերը ըստ ինքեանց պիտի կորնչին .
իսկ երկնից գործերը յաւիտեան պիտի տևեն . և կրած
ընդդիմութիւններէն ետև միշտ աւելի փառաւոր պիտի
երևին :

Յ Ա Ր Ե Լ Ո Ւ Ա Յ Գ

ԿՐՕՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ իրաւանց առաջինն ըլլալով աստուածապաշտութիւնը, որով մեր երբեքակ կապակցութիւնքն վճիտ կերպով կ'որոշուին, անշուշտ իւրաքանչիւր բանաւոր անձի անհրաժեշտ պարտքն ու միանգամայն ամենակարևոր օգուտն է այս միառաւոր իրաւունքը ըստ իւր կարծեաց ամենալաւ կերպով վարել:

Եւ որովհետև բազմադարեան փորձառութիւնք և խորին իմաստասիրական հետադասութիւններն անվիճելի կը հաստատեն բարուց և սովորութեանց վրայ Քրիստոնէութեան երջանիկ ազդեցութիւնը, բովանդակ դիտութեանց և բնական կրօնքին հետ ունեցած կատարեալ համաձայնութիւնը, կամ ուրիշ խօսքով՝ քաջայայտ կ'ապացուցանեն իւր աստուածայնութիւնը, այն միայն մեզ ներկայացնելով աստուածապաշտութեան ճշմարիտ՝ յաւիտենական ըսկզբունքն ու օրէնքը, կը հետևի թէ Քրիստոնէութեան ուսուցած վարդապետութեանը հետևող ըլլալով միայն այս իրաւունքը լիովին ճանչցած և ըստ արժանւոյն վարած կրնամք ըլլալ:

Եւ այց մարդոյս նուիրական մէկ ուրիշ իրաւունքն ալ իւր ազատութիւնն ըլլալով խորհելու ինչ որ կը կամի, կամ ճշտիւ ևս խօսելով, հաւտալու, կարծելու ըստ իւր համոզմանը, բնականաբար Քրիստոնէից մէջ աստուածապաշտութեան կամ կրօնասիրութեան մասին գաղափարաց անհամաձայնութիւն մ' ալ երևան պիտի ելնէ դաստիարակու-

Թեան, խառնուածոց և ուրիշ ազդեցութեանց պատճառաւ : (1)

Վաղափարաց այս անհամաձայնութիւնը կամ զանազանութիւնը որքան ալ բնական արդիւնք մ' է բնական պատճառի մը, տակաւին դատողութեան ազատութիւնը բոլորովին անսահման կամ թէ առանց չափու և օրինի չըլինելուն աղագաւ, իւրաքանչիւր ճշմարիտ Վրիստոնեայ պարտաւոր է անկեղծօրէն իւր անձին համար այս հունը, սահմանը ճշգրտել, որով ոչ սակաւ նպաստած կ'ըլլայ միաբանութեան կամ կարծեաց համաձայնութեան 'ի կրօնական իրս :

Վստայիսի հետադատութիւնները ընող ընթերցասիրաց օգտակար ըլլալու յուսովն ահա այս գլխուս մէջ հակիրճ և համառօտ պիտի խօսիմք կրօնական միութեան օգտիցը, սահմանին և միջոցներուն վրայ :

Եկեղեցական պատմութիւնք անվիճելի կ'ապացուցանեն, որ երբ Վրիստոնէական կրօնքը բոլոր աշխարհք նոր կը քարոզուէր, մարդիկ խուժք խուժք իրենց վաղեմի բազմաստուածեան դրութիւնները մերժելով, իրենց բնական թաղքին կամ երկրին անունովը մասնաւոր եկեղեցիներ կը կազմէին, ինչպէս՝ Վնտիոքայ եկեղեցին, Վաւոդիկեցւոց եկեղեցին ևն :

Երբ ամբողջ ազգեր կամ աշխարհներ նոյն վարդապետութիւնն ընդունեցին, կազմած եկեղեցիքն իրենց ազ-

(1) Հեթանոսաց մէջ կրօնական վէճք, հերձուած գրեթէ անձանօթ էին, զի կրօնքնին գլխաւորապէս ծէսերէ եւ արարողութիւններէ քան թէ հաստատուն հաւատալիքէ կը բաղկանար. մասնաւոր թէ իրենց գլխաւոր վարդապետներն ու սուրբիչքը իրենց բանաստեղծքն էին : Իսկ ճշմարիտ աստուածը նախանձոտ Աստուած մը ըլլալով, անշուշտ իւր կրօնքն ալ անընդունակ է խառնուրդի կամ այլայլութեան :

գային կամ աշխարհագրական անուններով իրարմէ կ'որոշուէին իբր ճիւղ ընդհանուր Եկեղեցւոյն Քրիստոսի . ինչպէս Մսորւոց կամ Մսորեստանեայց եկեղեցին , Յունաց կամ Յունաստանի եկեղեցին , Հայաստանեայց կամ Հայաստանու եկեղեցին :

Իսկ երբ երկրագնացոյս ամբողջ մասերը Քրիստոսի խօսքին հնազանդեցան , նոյն ժամանակի աշխարհագրական մեծ բաժանմանը համեմատ Մրեւելեան և Մրեւմտեան եկեղեցիք յորջորջումը ծնունդ առաւ :

Քրիստոնեայ կոչուած բոլոր ազգերը Քրիստոնէութեան այս նախնական ժամանակները կատարելապէս իրարու կը համաձայնէին հիմնական կէտերու նկատմամբ . թէպէտ և ծիսական մասանց մէջ յայտնի կը տեսնուի թէ ոչ սակաւ տարբերութիւնք կային ըստ բերմանց կամ խառնուածոց իւրաքանչիւրին : Սի ինչպէս որ ըսած է Եկեղեցւոյ Հայր մը , «Քրիստոսի պատմութեանը թէպէտ առանց կարի էր , բայց գոյն զգոյն» : Սակայն այս զանազանութիւնները չէին տկարացներ իրենց փոխադարձ սէրը . մանաւանդ թէ հաղորդակցութիւնն անընդհատ կը պահուէր , իրաւունքն ու արդարութիւնը եկեղեցական դատերու մէջ անաչառ կը գործադրուէին , հետեաքար և բարոյական մաքրութիւնը ամէն ուրեք կը թաղաւորէ :

Բայց երբ թագակապ զլուխներն ալ Քրիստոսի խաչին խոնարհեցան , այն ատենի քաղաքականութեան մոլար դրութեանը համեմատ իրենց հեղինակութիւնն եկեղեցական վէճերու մէջ անտնօրինելի համարուելով , միջամուխ ըլլալնին ալ անհրաժեշտ կը թուէր (1) : Աւ ա-

(1) Եկեղեցական կամ կրօնական իրաց մէջ քաղաքական կոռւապարութեանց միջամուխ լինելն , ազգաց պատմութիւնք քաջ կ'ապացուցանեն , միշտ աւելի մնաս քան թէ օգուտ գործած է :

սանկով շուտ մը աչառութիւնն երևան ելնելով, կանոն-
ներուն զօրութիւնը տկարացոյց, որով և առաջին հարուածն
տուաւ այն սիրայօղ միութիւնն քակտելու: Անխրաւու-
թիւնն ու փառասիրութիւնը այս միջոցաւ եկեղեցւոյն
ծոցը սպրդելով (1), առ տակաւ տակաւ պաղեցոյց ճիւղե-
րուն սէրը: Առզմնակցութեան, հակառակութեան ոգին ալ
հետ զհետէ զօրանալով ևս առաւել զանոնք իրարմէ օ-
տարացոյց: Արօնական վէճք և կռիւները քաղաքական
իշխանութեանց միջամուխ լինելովն, քաղաքական թշնա-
մութեանց երևոյթ մը զգեցնելով, մէկ քանի ուրիշ քաղա-
քական արկածից հետ միացած, վերջին հարուածն տուին
այս օտարանալու վիճակն հաստատելու:

Այլ այժմ՝ այն հաստաբուն ծառը, որ իւր առոյգ ճիւղ-
երովն առատօրէն կը պտղաբերէր, գրեթէ անբերրի ե-
ղած է արմատէն վեր իրար հեղձուցանող ոստեր ցցուե-
լով: Այն յաւիտենական ծառը՝ որուն բունը այսքան
դարուց հողովմամբը բնականաբար զօրանալով, ուռձա-
նալով, անթիւ նոր նոր ճիւղեր պիտի արձակէր պտղա-
բերութեամբ մին քան զմիւսն գերազանցող, հաղիւ թէ
մէկ քանի առողջ ճիւղ ունի պտղաբեր: Հատերը ան-
պտուղ եղած են, ումանք ալ բողորովին չորցած կրնան
կոչուիլ: Այլ ցաւալին այն է որ ճիւղեր տկարացնող ոս-
տեր ալ կ'արձակուին մօտակայ ժամանակներս միաբանու-
թեան վերահաստատութիւնը բողորովին անյուսալի ընող:

Ի՞նչ մնասակար տպաւորութիւն չընեն արդեօք այս
գաղափարը այլակրօնի մը, հեթանոսի մը վրայ, ի՞նչ ծաղ-

(1) Ո՞վ չգիտեր թէ Եպիսկոպոսական նախադասութեան հա-
մար ի՞նչ սոսկալի վէճեր չձագեցան Արեւելից եւ Արեւմտից Ե-
կեղեցեացը մէջ, մերթ հռովմայ եւ մերթ Կոստանդնուպօլսոյ Ե-
պիսկոպոսին տալով այս պատիւը:

րական խորհուրդներ չծագելու անոր միտքը, երբ գիտէ որ Քրիստոսի աշակերտեալ այսքան ազգեր անդադար իրարու դէմ կը մաքառին, բեմերէն սպառնալիք կ'որոտան և բանադրանաց սոսկալի շանթեր կ'արձակեն: Արօնական միսիթարութիւններն իրարու կը մերժեն, զիրար կը հալածեն:

Եւ մի թէ այս եղելութիւնները որ Աստուծոյ անհաճոյ ըլլալէ զատ, եկեղեցւոյն ծոցէն չե՞ն վտարանդեր այն գոհունակութիւնն, այն խաղաղութիւնը, յորմէ անթիւ բարիք կը ծնանին, որ կը զօրացնէ մեր հաւատքը, կ'արծարծէ սէրն, և վիճաբանութիւններն բարեպաշտական աշխատութեանց կը փոխէ:

2

Արքան մարդիկ՝ այնքան կարծիք ըսուած է ազգի մը համար կրօնի նկատմամբ: Մենք կը պնդեմք թէ այս ճշմարիտ է ամէն ազգի համար ալ, եթէ 'ի տգիտութեան ընկղմած չըլլայ: Օ՛հ ինչպէս գոյները խաւարին մէջ, նոյնպէս ալ սուտն ու ճշմարիտը տգիտութեան մէջ, անորոշելի կրնան ըլլալ:

Մարդոց իմացական ու բարոյական ձիրքերուն ծաւալմանը համեմատ քիչ շատ կը տարբերին ըմբռնումները: Վիտունն ու տգէտը, կրթեալն ու անկիրթը, խորին հետազօտութիւններ ընողն ու հարեանցի քննողը, ամենուն յայտնի է, մի և նոյն աստիճան լուսաւոր գաղափարներ չեն ունենար մի և նոյն կէտին վրայ: Սակայն սա ալ անտարակուսելի է որ այս տարբերութիւնը կարծուածին չափ մեծ չէ, և աւելի 'ի խօսս քան թէ 'ի միտս գոյութիւն ունի: Սովորական կենաց մէջ անգամ յաճախ կը պատահի որ երկու անհատ մի և նոյն բանը հասկընալով, մի և նոյն

բանը չեն կրնար հասկցնել, իրարու չեն ուզեր համա-
ձայնիլ: Ի՞նչ մեծ պարտք կը ծանրանայ ուրեմն դատու-
ղութեան տէր անձանց վրայ կրօնական նիւթոց մէջ, ան-
միջապէս այլակարծիք չհամարել զտգէտս, երբ ասոնք ի-
րենցմէ տարբերին խօսքով:

Եթէ սովորական կենաց մէջ կ'աշխատիմք ուշի ուշով և
ճարպիկութեամբ մեր ընկերին խորհրդոց խորքն թափան-
ցել, ո՞րքան առաւել նոյնն ընելու եմք կրօնական մա-
սանց մէջ, երբ ստոյգ գիտեմք որ Աստուած՝ կրօնիս հե-
ղինակը աւելի մարդոյս սիրտը քան թէ լեզուին կը նայի:

Պէտք չէ՞ ուրեմն խոյս տալ չափազանց ջերմութենէ,
որ կոյր նախանձայուղութենէ հազիւ թէ կը տարբերի,
և որով մարդ ընդհանրապէս ոչ թէ ճշմարտութիւնը, խա-
ղաղութիւնը խնդրած, այլ միշտ իւր խօսքը, կուսակցու-
թիւնն արդարացնել, պաշտպանել ջանացած կ'ըլլայ:

Ասով չեմ ուզեր չափազանց գաղջութիւնն գովել՝ զի
այս ալ չափազանց ջերմութեան հակառակ ծայրն է. ուս-
տի և պարսաւելի: Այսպիսի ընթացքէ մը անշուշտ կը
հասկցուի թէ կամ ամէն կարծիք ճշմարիտ են և հետեա-
բար սուտ, կամ թէ մարդկային հնարիւք կողմնակցու-
թիւններն հաշտեցնելու, կամ թէ այսպէս ըսեմ, Աստու-
ծոյ և մարդոց մէջ միջնորդութիւն ու դատաւորութիւն ը-
նելու յանդգնիլ եղած կ'ըլլայ: Եւ այս մասին ընել կըր-
ցածնիս ամենէն շատը խեցին երկաթին կայցնել է՝ և ոչ թէ
միազանգուած յօրինել:

Խնդրելի կէտը անշուշտ բարեխառնութիւնն է, որով
ուրիշ բան չկրնար հասկցուիլ, բայց եթէ հիմնական կէ-
տերու մէջ համաձայնութիւն տեսնելովնիս դո՛հ ըլլալ, և
անհամաձայնութիւնքն ճշմարտէն աւելի չմեծցնել:

Ուրեմն ո՞րքան զգուշանալու եմք այն տեսակ վիճա-

բանութիւններէն , որոց նիւթը փոքր , անտարբեր բաներ ըլլալով , երկար բարակ խօսքերով կարեորութիւն տուած , և հետեաքար հակառակութեան նոր նոր նիւթեր յարուցած կ'ըլլաւք :

Եւ ո՞րքան պախարակելի բան է կարևոր մասանց վրայ վիճաբանութիւն բացուած ատեն չափազանց նրբամտութիւն ցուցնելն , որով բոլորովին կ'աղօտանայ վիճաբանութեան նիւթը , և որ բազմաթիւ հերձեաց առիթ տուած է Վրիստոսի եկեղեցւոյն մէջ :

Մանրաքննին խուզարկութեամբ , անաչառ , աննախապաշարեալ մտօք ճշմարտութիւնը ստութենէ որոշելով , տիեզերական եկեղեցւոյն ճիւղերուն մէջէն խտրութիւնները բառնալու և զանօնք կրկին իրարու հետ միացնելու համար՝ թէպէտ և ազգաց մէջ դեռ բաւական գիտութիւն և անձնանուիրութիւն չգտնուիր , որ այսպիսի գործոյ մը վրայ մտածելն , չըսեմ ձեռնամուխ ըլլալն , մարդկօրէն խօսելով , հնարաւոր թուեցնէ , տակաւին մասնաւոր ազգի մը , մեր ազգին եկեղեցւոյն ծոցը ծնունդ առած հերձեացն համար ալ նոյնը կրնամք պնդել անկեղծութեամբ :

3

Վ լաղուց հետէ բարոյագէտք մարդուս երջանկութեան նը համար հետազօտութիւններ ըրած ատեն , միայն պարտուց վրայ խօսելն բաւական համարելով , գրեթէ բոլորովին զանց ըրերեն իրաւանց վրայ ճառել , իբր թէ իրաւունք 'ի պարտուց ծագած ըլլային՝ և ոչ թէ պարտք յիրաւանց :

Վ յսպիսի թերութիւն մը , անհնար էր որ մէկ շատ ամենակարևոր ճշմարտութիւններ յաւիտենական խաւա-

րով պատած, ծնունդ չտար բազմաթիւ յոռութիւններու
կամ մոլորութեանց:

Այս յոռութեանց գլխաւորներէն կրնամք համարիլ
կրօնական ազատութեան սկզբանը ազգաց մէջ առանց ծա-
ւալելու մնալը: Եւ այս պակսութիւնն էր որ այնքան տը-
մարդի, Վրիստոնէութեան անպատուութիւն բերող ե-
ղեօնական գործոց առիթ տուաւ: Ի՞նչ սոսկալի արիւն-
հեղութիւնք, ի՞նչ եպերելի հալածանք ծնունդ չառին ե-
կեղեցւոյ ծոցը այս սկզբանս վրայ եղած ազիտութեանն
պատճառաւ: Վաղղիոյ Կոտորածը (1) և Անգղիոյ (2) վա-

(1) Կամ աւելի լաւ ճանչցուած անուամբ՝ Սուրբ Բարդուղիմէ-
ոսի կոտորածը: Ասիկայ սկսաւ ՚ի Փարիզ 1572 Օգոս. 24, Սուրբ
Բարդուղիմէոս Առաքելոյն տօնին օրը: Առաւօտեան ժամը եր-
կուքին թելադրութեամբ Կատարինէ թագուհւոյն Կարոլոս Թ ի
հրամանաւր Սուրբ Գերմանոսի եկեղեցւոյն զանգակը զարնուեցաւ.
եւ ամէն կողմ կը լսուէր սա գոչումը. «Չարկէք, զարկէք, մեռու-
ցէք բողոքականները». երեք օր տեւեց այս սոսկալի անգթութիւ-
նը, տասն հազար բողոքական կեանքերնին կորուսին: Ա՛րսէն թէ
Կարոլոս անձամբ իր պալատին պատուհանէն հրացան մը պարպեց
բողոքականաց վրայ, որ գետին միւս կողմը կը փախչէին: Կոտորա-
ծը Փարիզէն դուրս ալ ազդեց. շատ քաղաքներ կողոպտեցան ու
քանդեցան եւ շատ բարեբարոյ մարդիկ սպաննուեցան: Եւ գուցէ
բոլորովին բնաջինջ կը լլար կրօնական ազատութիւնը, եթէ բողո-
քականաց մէջ իրենց իրաւունքը պաշտպանելու կարող մարդիկ
չգտնուէին, եւ եթէ Լա Ռոշել քաղաքը Կարոլոս Թ ի եղբօրն
Անժուի դքսին եւ արքունական զօրաց յարձակմանը դէմ չը դի-
մանար, եւ անոնցմէ քառսուն հազար հոգւոյ կորստեամբը զի-
րենք չ'վհատեր:

(2) Յակոբ Ա. Անգղիոյ թագաւորը Պապականաց դէմ խստու-
թիւն բանեցնելուն համար 1605 ին Բէթսպի անուն անձ մը այն-
պիսի դաւակցութիւն մը մտածեց, որ մէկ հարուածով բոլոր թա-
գաւորական ցեղը, թագաւորը, պալատականքն ու երկու խորհրդ-
դարաններն ու ժողովականները պիտի ջնջէր: Քանի մը բարեկա-
մաց հետ միաբանած Բէթսպի Աէստ Մինիսթրի պալատին մօտ
տուն մը վարձեց եւ երեսուն եւ վեց տակաւ վառօդ զետեղեց այն
սրահին ներքեւ, ուր ժողովք պիտի կազմուէր: Այնպէս որ վա-

ուղի դաւակցութիւնը սոսկալի ոճիրներ չե՞ն մարդկային
ազգին տարեգրութեանցը մէջ : Սարսափելի անիրաւու-
թիւն չե՞ կոտորել անգթաբար բիւրաւոր անձինք կարծ-
եաց կամ հաւատոյ համար , որ կամքէն կախումն չունի ,
ըլլալով պարզապէս արդիւնք արամաբանութեան :

Եթէ Սուկրէտ անհնարին զարմանօք լցուած Մգա-
մեմնոնի դստերն Մստուածոց զոհ մատուցանելուն համար
կը գոչէր , Սարէ եղե՞ կրօնի յայսպէս յիշել զճարդ 'ի հոստոսոս-
թիւն : Ի՞նչ պիտի ըսէր արդեօք եթէ Քրիստոնէից իրա-
րու դէմ հանած հալածանքն տեսնէր : Մի թէ հարիւր
անգամ աւելի եպիսկոսրեան պիտի չըլլա՞ր :

— — —
ուղին կրակ տրուելուն , բոլոր ժողովը պիտի ջարդուէր : Երբ
ամէն բան պատրաստ էր , դաւակցաց մէկը անանուն նամակ մը
խրկելով իւր բարեկամաց մէկուն՝ որ նոյն օրը խորհրդարանը չեր-
թայ , առիթ տուաւ կասկածանաց : Ուստի բոլոր ստորերկրեայ
տեղուանքն զննուեցան , եւ խորհրդարանին ներքեւը եղած գետ-
նափորին առջեւ մարդ մը գտնուեցաւ , որ շուտով վառօդը պի-
տի բռնկցնէր : Բռնեցին զինքը , ու ամէն բանի տեղեկանալով ,
զարհուրելի դաւակցութիւնը ասպարդիւն ըրին :

Փ Լ Ո Ւ Խ Թ Փ

ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԻՉԸ ընկերութիւնը գեղեցիկ ներդաշնակութեամբ մը ներդաշնակեր է : Ա՛նքն ու փոքրը , հրամայողն ու հրամայեալը որքան որ հարկաւոր դատեր է անոր կառավարութեանը , տակաւին բարեխառնած է այս վիճակի այս անհաւասարութիւնը , հրամայելու առաւելութիւնը հրամայելոց օգնելու գրգիռ մը ընելով : Աւստի մեծամեծք պարտին յիշել որ իրենց բարձրութիւնը հասարակաց պիտոյիցը պարտական են , կամ թէ ըսեմ իրենք ժողովրդեան , և ոչ թէ ժողովուրդները իրենց համար եղած են :

Նախասնամութիւնը տկարաց պաշտպանութիւնն ու խընամբը կը յանձնէ իրենց իբր իւր բարութեան մատակարարացը , ուստի կը կորուսանեն իրաւունքնին , երբ միայն իրենց անձին օգուտը խնդրեն :

Աստուած մեծամեծները ուրիշներուն վրայ կը բարձրացընէ , ինչպէս արեգակը երկրիս վրայ , որպէս զի բարերարեն բոլոր աշխարհի : Աւրեմն մեծամեծք պէտք է մխիթարեն տառապեալները , շահեն տկարները , կամ թէ ուրիշ խօսքով գոհ ընեն բոլոր մարդիկ :

Այժմ փառաց և ճոխութեան մէջ մեծցեր ևս , բարութիւնդ տեղի ապաւինի ըլլալու է կարօտելոց . և ձեր ընտուութեանդ դիմողներէն խրտչելու տեղ , նախատեսելու ևս անոնց պիտոյքը : Ահանջ դի՛ր ուրեմն աղքատին հառաչանացը , և մի՛ նմանիր այն վայրագ հարուստներուն , որ աղաչանքն մերժելէ և երբեմն ալ ծանր յանդիմանութիւններ ընելէ զատրան չեն ըներ , իբրև թէ թըշ-

ոււառաց և կարօտելոց անպատեհ և անարգական խօսքեր
 ընելը մեծութեան և հարստութեան արտօնութիւնն և
 զած ըլլար: Անձկութեան, թշուառութեան մէջ ապրե-
 լըն արդէն բաւական ծանր բեռ մը չէ՞ իրեն ուրեմն ին-
 չո՞ւ համար ևս առաւել կը ծանրացնէք զայն եպերելի
 խստութեամբ ու անտանելի գոռոզութեամբ:

Մի՛ կարծէք թէ տառապելոց արտասուքն զձեզ խո-
 նարհեցնեն, այլ ընդհակառակն ևս առաւել կը բարձրա-
 ցընեն ոչ միայն յաչս մարդկան՝ այլ և Աստուծոյ:

Քու միջոցաւ թշուառութենէ զերծեալ մարդն՝ որ-
 բըն՝ որուն իրաւունքը պաշտպանելիք, պարտապանը՝ որուն
 միտի տուիք, ծառայն՝ որուն հետ բարեւրտութեամբ վար-
 ուեցար, խնամելով զինքն ՚ի հիւանդութեան, վարձա-
 տրելով իր ծառայութիւնն ու վիճակի մը տէր ընելով զին-
 քը. վշտացեալները՝ որոց աչաց արտասուքն սրբեցիր. աղ-
 քատները՝ որոց հաց տուիր, մէյմէկ նախանձաւոր գո-
 վասաններ պիտի ըլլան քեզ և առաքինութիւնդ ամէն
 տեղ պիտի հռչակեն: Պիտի կոչուիս հայր աղքատաց,
 որբոց և այրեաց. ի՞նչ գեղեցիկ տիտղոս: Նոյրին ալ
 տէրն ու բարեկամը պիտի համարուիս. ամէնն ալ քեզ
 պատահած ձախորդութեանն՝ հիւանդութեանը համար պի-
 տի վշտանան, ամէնքն ալ քու վայելած բարօրութեանդ՝
 զուարճութեանդ վրայ պիտի ուրախանան:

Աթէ վշտացեալներն մխիթարելու, սփոփելու խորհուր-
 դը քաղցր զուարճութիւն մը չպատճառեր սրտիդ, դէժ մի՛
 սաստկացներ վշտերնին: Հարստահարութիւնը՝ կեղեքանքն
 ՚ի վրէժխնդրութիւն կը գրգռէ զԱստուած: Արեւելի անձի
 մը յեղակարծ անկումը, անանկ ալ նուաստութիւնը գե-
 րագոյն էակի մը գոյութիւնը մեզ կը յիշեցնեն, որ կորացը-
 նելով զօրութիւնն չարաչար գործածողներուն գլուխները,
 ահով եւ երկիւղիւ կը լնու չարագործները:

Ինչպէս որ աստիճանի և հարստութեան կցորդ վարձն ու համարումը չեն յիշեցներ քիչ մարդոց արդարութեան երկիւղը, չըսեմ Վստուծոյ արդարութեան ահը, զոր փարթամութիւնը շուտ կը մոռցնէ: Ինութեան ձայնն ալ, որ կը գոչէ անգագար թէ աղքատները քու եղբարքդ, նմանիքդ են, չա՞ղղեր սրտիդ: Մի թէ զանոնք քենէ զատող անջրպետը կարծե՞լ կուտայ թէ ուրիշ տեսակ և ուրիշ բնութեան տէր արարածներ են: Իսկ որքան մեծ ըլլայ այդ վիճը, որքան անարդ ըլլայ երևոյթնին, տակաւին մարդկութիւնը զանոնք քու նմանիքդ կը յորջորջէ:

Իրաւ է որ անոնք տիտղոսներ, վերտառութիւններ չեն կրեր, ամենեին քեզ չեն նմանիր այդ մասին, տակաւին որչափ հիմնական յատկութիւններ ունին նմանութեան, զորս չես կրնար չճանչել ու չխոստովանիլ: Դու ալ, անոնք ալ միւսնոյն արուեստագործին ձեռագործն էք, մի և նոյն կաւէն շինուած, ենթակայ միւսնոյն պիտոյից: Արնաս ուրանալ այս ճշմարտութիւնը: Այլ թէ բարօրութեան վիճակիդ մէջն անգամ դառն ու վշտալից վայրկեաններ չեն պակսիր, որ յարտասուս կը փղձկեցնեն զքեզ, թափած արտասուքդ քու ձեռնտուութեանդ դիմող թշուառացելոց արտասուքէն կը տարբերին արդեօք: Այլ թէ սաստիկ ցաւն կամ երկարատե հիւանդութիւնը հառաչանքներ արձակել կուտայ քեզ, ինչո՞ւ համար չես ճանչեր անտանելի ցաւոց ներքեւ հեծելոց հառաչանքը: Ինչո՞ւ համար չես համակրեր անոնց թշուառութեանցը, որոնցմէ դու ինքնդ ազատ չես. ի՞նչպէս կրնաս առանց ցաւակցելու դիտել արտասուաց այն հեղեղներն որ կը հոսեն քու նմանեացդ աչուրներէն:

Ալ ինչպէս որ մարդս իրմէ ստորիններուն հանդստեանն ու երջանկութեանը համար միայն կը մեծնայ, այնպէս ալ

աղքատը խնամելու, աղքատին հետ հարստութիւնը վայելելու և ոչ թէ ըստ քմաց վատնելու համար այդ վիճակին կը տիրանայ:

Ուրբան կը հակառակի այս նպատակին ձեր ընթացքը՝ անգութ մեծատուններ: Ասկին ու արծաթը կը շողշողայ ձեր տանը մէջ և հագուստին վրայ, և դեռ կը դժկամակիք խեղճ մը ցրտուն դէմ պաշտպանելու կամ մերկութիւնը ծածկելու: Մնկողիննիդ մեղկութեան անկողիններ կը կազմեն, և կը թողուք որ ձեր եղբայրը յարդի, կամ պաղ գետնի վրայ ննջէ: Սեղաննիդ լի է ամենընտիր կերակրօք, և դուք կը մերժէք պատառ մը հաց քաղցելոյն բերանը կարկառելու: Մեծամեծ ծախիւք պտղոց և մրգաց երախայրիքը ճաշակել կը փութայք, հողն ու եղանակները ձեր ունայնութեանն ու փափկութեանը ծառայել կը բռնադատէք, և չէք ամաչեր մէկ պատառով քսան կարօտեալ ընտանեաց ապրուստն լափել: Օգեստուց, զարդուց համար ահագին գումարներ կը մսխէք, բայց աղքատին իբր թէ ձեր ձեռքէն խլած մէկ քանի դրամին համար կը վշտանար: Մենանարգ կենդանիներ փափկութեամբ կը սնուցանէք և անխնամ կը թողուք ձեր նմանիքը անօթութենէ կորսուելու:

Մնթերցող, եթէ Մստուած շատ հարստութիւն պարգևեր է քեզ, ցոյց տուր երախտագիտութիւնդ, աղքատաց հետ զայն բաժնելով. իսկ եթէ մեծամեծ գանձուց տէր չես, տակաւին մի՛ մոռնար զանոնք, բարերարութիւնը միայն ահագին դրամագլուխներով չըլլար. մէկ յանձնարարութիւնը, մէկ մխիթարիչ խօսքը, մէկ վայրկենական ծառայութիւնը, պատառ մը հացը շատերը գոհ կրնայ ընել: Այլ գիտցիր որ ձեռնտուութեանդ ամենէն աւելի արժանացող աղքատները՝ առաքինիքն, ծերք,

ախտաժեւեալք, ամչկոտ անձինքն են : — Աղքատիկ կին մը՝ որ խիստ գեղեցիկ դուստր մը ունէր, հետն առած Աարտինալ Պարնէզի ներկայացաւ ու իրեն յայտնեց իւր տանուտեառնը ունեցած հինգ ոսկի պարտքը, որուն աղագաւ տնէն դուրս կը վնասուէր : Իր համեստաւիայլ վարքըն ու խօսուածքը 'ի մարդասիրութիւն շարժելով զԱարտինալը, տոմսակ մը գրեց և տուաւ իրեն որ գանձապետին տանի : Գանձապետը տոմսակն ընդունելով, անմիջապէս յիսուն ոսկի համրեց իրեն : Իսոյս որեւէ, ըսաւ կինը, ես եր Ասեմափայլութենէ այսօրեալ քան շինարարեցի. անշուշտ սխալած է : Օ՛հները գոհ ընելու համար հարկ եղաւ որ գանձապետը Աարտինալին երթայ հարցնէ : Աարտինալը տոմսակն առնելով, պատասխանեց. Յերասէ սխալած եմ, կնոջը վարքը զայր կը հասարարէ : Այլ փոխանակ յիսուն ոսկուոյ հինգ հարիւր ոսկուոյ տոմսակ մը գրեց, և ստիպեց զառաքինի մայրը որ ընդունի այս գումարը և օժիտ ընէ իւր դստերը :

Ողորմածութեան ամենէն գովելին հոգւոյն և ոչ թէ մարմնոյն վերաբերեալն է. կամ թէ այն՝ որ աշխատութեան սէրը չպակսեցներ, մոլութիւնը և կամ ծուլութիւնը տածող ողորմութիւնը շարժանանար այդպիսի անուան : — Պարսից թագաւոր մը անգամ մը գթալով աղքատի մը վրայ մեծ գումար մը շնորհեց : Դամանակէ մը ետեւ հարստացած աղքատին վարուց անկանոնութիւնը ամէն կողմանէ գանգատ կը յարուցանէր, և երկար չտևեց կարկատուն ձորձով մը կրկին պալատին դուռը դարձաւ : Թագաւորը պալատականաց մէկուն ցուցնելով զայն, ըսաւ. Ահա քարերարութեանս արդիւնքը. ըրած պարֆեսս ապականութեանս աղքիւր մը եղաւ իրեն : Աշխարհք է՝ պատասխանեց պալատականը, քայց դուստ ինչ որ աշխարհութեան օրակաւ է ի՛, աղփարարութեան օրակաւ :

Պէտք է այսու ամենայնիւ բոլորովին փակել ողորմութեան դռները անոնց դէմ որ իրենց վարուքը չեն արժանի ողորմութեան, բայց կարօտութեան մէջ կը գըտնուին : Այդեմի իմաստասիրաց մէկը, երբ իր բարեկամէն կը յանդիմանուէր մոլի աղքատի մը ողորմութիւն տալուն համար, ըսաւ . Ես բնութեան փոխ ողորմութիւնս և ոչ ինչ անչի :

Ք Լ Ո Ւ Խ Ժ Թ

ՊԱՏԻԻ

ՊԱՏԻԻ ըսածնիս, ինչպէս կը կարծեն ոմանք, ոչ թէ քաղաքական առաքինութիւն մը կամ նախապաշարումն է, այլ ճշմարիտ բարոյական առաքինութիւն մը, նոյն իսկ բնութենէ ներշնչեալ, միւս առաքինութեանց վրայ իբր թէ հսկելու և զանոնք իրենց մաքրութեանը մէջ պահելու համար : Պատիւը իբրև պատուական հիւթ անուշահոտ ծաղկրներէ հանուած իւր մէջ կը պարունակէ մաս մը իւրաքանչիւր առաքինութեան . և այնքան փափուկ է որ ամենափոքր բիծն անգամ զինքն կը ստուերացնէ : Այլ ինչ որ է կեանքն մարմնոյն՝ նոյնն է ասիկա հոգւոյն : Այլսոյժ կենդանութիւն կուտայ մեր գործոցը, կը կանոնաւորէ զգացմունքնիս, կ'ազնուացընէ բուն իսկ առաքինութիւններն, կը մերկացնէ մոլութիւնն իւր հրապոյրներէն, կը շքեղացնէ յաջողութիւնն իւր փառաւորութեամբը . կը մխիթարէ և իբր նեցուկ կանգուն կը պահէ թշուառացեալները ձախող արկածից մէջ :

Պատիւը ազգի մը, տէրութեան մը երկրորդ նախա-
խնամութիւնն է : Արուց սրբութիւն կը հրամայէ եկեղե-
ցականին, քաջասրտութիւն՝ զօրականին, արդարութիւն՝
դատաւորին, նախանձաւորութիւն՝ տաղանդաւորին, աշխա-
տասիրութիւն՝ արուեստագէտին, և համեստութիւն՝ կա-
նանց սեռին : Ար պահանջէ հաւատարմութիւն առւտրա-
կան գործողութեանց մէջ, և անհնարին խայտառակու-
թեամբ կը նշաւակէ ամենափոքր անհաւատարմութիւնն :
Պարտ կը հրաւիրէ զպատերազմիկն, և փառօք կը վար-
ձատրէ հեղեալ արիւնը : Զունի կարօտութիւն ոսկւոյ,
չունի պէտք արծաթոյ . դափնիի ոստ մ'ալ իրեն կը բաւէ
դիւցազնին ճակատը պսակելու :

Պատիւն ու համարումը, ամենագեղեցիկ զարդք ար-
ժանեաց և առաքինութեան՝ հարստութեան և առողջու-
թեան նման ճշմարիտ բարիք են, ուստի և յոյժ փափա-
քելի, ու ասոնք միայն կ'անմահանան : Ասոնց կ'արժանա-
նայ մարդս անպարսաւելի վարուք և անդրժելի հաւա-
տարմութեամբ կապուելով իւր պարտաւորութեանցը : Պատ-
ուաւոր անձ մը երբէք իր խօսքն ետ չառներ, մէկուն
գաղտնիքը չյայտներ, չխաբեր զոք և արդարութեան ու
իրաւանց դէմ չգործեր : Ալ եթէ պակսութիւն մ'ալ
գործէ, չամաչեր զանիկայ խոստովանելու և զինքն ուղ-
ղելու : — Արբ Արտաշէս Պարսից թագաւորը մեծամեծ
ընծայներ խրկեց Աբամինոնտաս թերացւոյն, այս երևե-
լի անձը ըսաւ դեսպաններուն . Աթէ Ռոգասորը թեթացոց
հեօ Բարեհամաւալի՞ ուղէ, հարկ չկայ ի՞ Բարեհամա-
թիւնս գնելու, և եթէ ուրիշ դիտարութիւն մ' ունի, իւր Բուր
հարստութե-
նը չէ Բաւական զիս ի՞ պարստութեան շրջելու :

Պատուաւոր մարդը յարած կըմնայ իւր պարտաւորու-
թեանը ամենամեծ վտանգներն ու մինչև անգամ իր
մահն անգոսնելով :

Վնդապետ մը հրաման ընդունելով որ այս ինչ վտանգաւոր տեղն երթայ պաշտպանէ, բարեկամներն զինքն կը խրատէին որ պատճառանօք մը չկատարէ այս հրամանը. Եւ իրենց հետեւ աղաթել՝ պատասխանեց անիկայ, բայց « Է պիտի աղաթէ պատիւս » :

Պատիւը կը տարածէ իւր տիրապետութիւնը ամէն աստիճանի և կարգի մարդոց վրայ: Ար հրամայէ մինչև անգամ իշխանաւորներուն, որ իրենց փառք կը համարեն իւր առաջին հպատակներն ըլլալ: — Աերվէնտի պատերազմին մէջ որ ատեն դաշնակիցք յաղթուեցան, ծանր աշխատութեանց կը կարօտուէր թշնամեաց պատնէշներուն մէջ տեղէն ճամբայ բանալու. և խրամատ մը բացուելէն ետև ալ դեռ վտանգ չէր պակսեր: Այսու ամենայնիւ Շարդրի դուքսը դէպի խրամատն վազեց: Ա իւրսէնպէրկ մարաջախտը, հրամանատար բանակին, ուղելով զինքն արգիլել, հրաման ըրաւ երիտասարդ դքսին դաստիարակին, որ երթայ ետ դարձնէ: Ի այց դաստիարակը պատասխանեց. « Ի՞նչ պատճառաւ զինքն ետ դարձնեմ. բարձրաստիճան անձիքն իրենց օրինակովը ցոյց տալու են այլոց թէ ինչպէս պէտք է պատերազմիլ քաջասրտութեամբ. և ահա դուքսը պատեհութիւն մը գտաւ փառք ստանալու: Իրեն արգելք ըլլալու տեղ, կ'երթամ խրախոյս կուտամ յառաջ մղելու. և քանի որ իւր դաստիարակն եմ, միշտ զինքն հոն պիտի առաջնորդեմ, ուր փառք կրնայ ստացուիլ » :

Այսպէս է ահա ճշմարիտ պատիւը. բայց մարդոց մեծագոյն մասը չեն ճանչեր զայն: Ի՞նչ խաբեքաներ կան պատուաւոր սեպուած մարդոց մէջ: Այս ինչ մէկը՝ որ ճարպիկ անունովն կը պարծի, չխղճահարեր իւր անպիտան ապրանքը պարզամտին ընտիր ապրանքին հետ փոխելու հինգ դրամի արժէքով վաճառք մը տասը դրամոյ տալու,

և տասը դրամոյ արժէքովն հինգ դրամոյ առնելու : Այն
 ինչ մէկը իր փափաքածն ստանալու համար ամէն տե-
 սակ ունայն խոստումներով զուրիշն համոզել կը ջանայ :
 Ուրիշ մը իր բարեկամին կամ աղգականին կինը կամ
 աղջիկը զլսէ կը հանէ ամենեին բանի տեղ չդնելով եղ-
 բայր կամ բարեկամ անունը : Յովակեաց պատանին իւր
 գործոց ողորմելի վիճակէն բռնադատեալ՝ կ'ամուսնանայ
 չսիրած օրիորդին կամ հարուստ պառաւի մը, և զանիկայ
 յաւիտենական թշուառութեան կը մատնէ :

Ի այց ճշմարտասէր պատուաւոր անձինքն ալ այնքան հաղ-
 ուադիւտ չեն : — Սքարոն անուն երևելի բանաստեղծը
 անձկութեան մէջ ընկնելով, ստիպուեցաւ, առանց գիտ-
 նալու թէ ինչ կ'արժէ, իր մէկ երկիրը վաճառելու շիւպ-
 րը անուն անձի մը, որ անոր փոխարէն իրեն վեց հազար
 ոսկի տուաւ : Ատենէ մը ետքը շիւպրը կ'երթայ երկիրը
 կը տեսնէ և Սքարոնին դառնալով կ'ըսէ. «Իսկապէս յիշեցի
 երկերդ օրայն վեց հազար ոսկի կ'արժէ, բայց մե՜ + քնացին + ու-
 թըն հազարի արժեցոացին + : Այլ կ'ստիպէ զինքն երկու հազար
 ոսկի ևս ընդունելու :

Արք Տիւրէն Վերմանիա կը գտնուէր, չեզոք քա-
 ղաքաց մէկը կարծելով թէ բանակն անտի պիտի անցնի,
 հարիւր հազար ոսկի խրկեց իրեն աղաչելով որ ուրիշ ճամ-
 բէ մը երթայ : Չե՞մ կրնար ընդունել այդ քա՛մարը, ըսաւ Տիւ-
 րէն, շէ դիտարարութեան չամե՛կ արիւ անցնելու :

Գ Լ Ո Ւ Թ Ի

ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՀԱՆՁՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆԸ, ինչպէս կը կարծուի հասարակօրէն, ոչ թէ տկարամտութեան նշանակ մ' է, այլ ազնուականութեան և ճշմարիտ մեծահոգիութեան: Այնքան չորս հոգին վրէժխնդրութիւն չըներ երբեք, այլ կը սանձէ սյդ փափաքը, որ այնքան բնական կ'երևի ու այնքան դժուարաւ կը նուաճի: Մեծահոգիները վատաբարոյ ու տկարամիտ, և իւր ներքին շարժումներն զսպել չկրցողն է վրէժխնդիր անձը: Անթանոսաց կարծիքն ալ այս էր: Արեժխնդրութեան փոփոխութիւնը, կ'ըսէ վաղեմի մատենագիր մը (1), փոփոխութեան և սկարածութեան արդիւն է: Մեծահոգի անձը 'ի վեր է քան իւր կրած անիրաւութիւնները: Արեժխնդրութեան արեժխնդրութեան մը գործէ, կ'ըսէր երևելին տէր Քարոզ (2), կը ջանամ զինքն այնքան բարձրացնել, որ ալ անկէս ինչ չկրնար հասնել:

(1) Աւրոս Կիլիոս լատին գերական, հեղինակ Գեղերէ Եւրոպիայի ըստեմ գործոյն, որոյ նիւթն է մանկանց դաստիարակութիւնն: Մեռաւ Մ. Ա. Անտոնիանոսի թագաւորութեան սկիզբը:

(2) Ռէն Կարդեսիոս տէր Քարոզ, հոյակապ իմաստասէր, ծնաւ լազէյ 1598 ին, հին գերդաստանէ մը: Գաստիարակեցաւ առ սոս Երսուսեանց 'ի լա Ֆրլէշ: Իր յառաջադիմութիւնը խիստ արագընթաց էր մանաւանդ չափաբանութեան մէջ: 1616 էն մինչեւ 1621 Երանձի իշխանին, Պաւարիոյ դքսին, Պիւքուա կոմսին ծառայելէն, եւ շատ ճամբորդութիւններ ընելէն վերջը, իր ստացուածքը բաժնեց եւ Հոլանտիա հաստատուեցաւ 1629 ին իւր ուսմունքն անվրդով յառաջ տանելու համար: Քսան տարի անընդհատ շարունակեց իր աշխատասիրութիւններն բնազնութեան,

Նշխարեթ(1) Մնգղիոյ թագուհին, որ իրաւամբ ամենէն երեւելի միապետաց կարգն կը դասուի, մեծհոգիութեան հոյակապ հաւաստիքներ տուած է մեզ. ահաւասիկ մէկուն պատմութիւնը:

Մարի Ամալորն անուն Սկովտիացի տիկին մը, որուն այրը մեծամեծ շնորհքներ ընդունած էր Մարի Սգուարդ Սկովտիոյ թագուհիէն, և անոր գլխատման ցաւով ինքն ալ դերեզման իջեր էր, իւր ամուսինն ու թագուհին այնքան կը սիրէր, որ որոշեց անոնց մահուան վրէժն առնուլ Նշխարեթէն: Աւստի մարդու կերպարանք մտաւ՝ Մնտոն Աբարք զինքն անուանեց և երկու ատրճանակ պահեց հագուստին ներքեւ, որպէս զն մէկով զթագուհին՝ և միւսով զինքն ըս-

րնալուծութեան, անդամաղննութեան, աստեղաբաշխութեան եւ երկրաչափութեան մէջ, միանգամայն իր անունը անմահացնող գործեր ՚ի լոյս հանելով: Աերջապէս իր բնաղննական մէկ քանի կարծիքը իրեն դէմ հալածանք մը հանելով, ստիպուեցաւ Շուէտի թագուհւոյն հրաւերն ընդունելով, երթալ անոր արքունիքը բնակիլ: Մեռաւ Սթոքոլմ՝ 1650 ին Փետր. 11:

Տէ քարդի կենդանութեան ատենը իր բնաղննական գրուածքն ամենէն յարգի էին. իսկ այժմ՝ երկրաչափական ու Ալճեպրական գիւտերն՝ գորս ինքնին բան չէր սեպեր, իրաւամբ իր փառքն կը համարուին:

(1) Գուստր Հենրիկոս Է. ին Մնգղիոյ, ծնաւ 1533 ին եւ լաւ՞ դաստիարակեցաւ: Սկովտիոյ Մարիամ թագուհւոյն թագաւորութեան ժամանակը մեծամեծ վտանգներու մէջ ընկնելէն վերջը, 1558 ին գահն ամբարձաւ: Երկարատեւ ու փառաւոր եղաւ իւր թագաւորութիւնը, իր խնամոցն յանձնուած ազգերը բարգաւաճեցան ամէն կողմանէ եւ թշնամիները ամօթալից ընկճեցան: Իր թագաւորութեան ամենէն երեւելի գործը Սպանիական նաւատորմիղին խորտակումն եղաւ 1588 ին. մեռաւ 24 Մարտի 1603:

Նշխարեթ բնաւ չամուսնացաւ, ուստի եւ զինքն Վոյս թագուհի կը կոչէր: Իր երեւելի ձիրքերովը մէկ տեղ թերութիւններ ալ ունէր, որ ոչ սակաւ կ'ազտեղեն իր անունը: Գրագիտութեան մէջ խիստ յաջողակ էր. Յունարէնէ եւ Վատիներէնէ շատ թարգմանութիւններ թողած է:

պաննէ : Օր մը , երբ Աղիսաբէթ իւր պարտեզին մէջ կը
 ճեմէր , Մարի Ամպրըն ուզեց իւր սոսկալի որոշումը 'ի
 գործ դնել . սակայն ամբոխին մէջէն անցնելու աճապա-
 րելովն , դիպուածով ատրճանակին մէկը վար ընկաւ : (Ժա-
 դուհւոյն անձնապահքն ալ զայս նշմարելով , վրան կաս-
 կածեցան ու բռնեցին Աղիսաբէթի առջևն տարին : Աս ,
 ըսաւ ան ատեն Ամպրըն աներկիւղութեամբ , կէն ծ' է՞՞ ,
 շատ որարի ծառայեցի Մարի Սրբաարարի , զոր դու աներասա-
 լեամբ սպաննեցիր : Ա՞նտիս ալ անոր մահուան ցաւովը նոսա-
 դեցաւ : Ա՞նոց մահուան վրէժն արձեւեալ համար էր անա , որ
 անյա վրանդի ճշ դրէ : Իւր ով ըլլալն շուտով ճանչցուեցաւ ,
 ու թագուհին ըսաւ . Ուրե՞՞ն դիս սպաննելովդ կը կարծէիր թէ
 պարտաւորութիւնդ կարարած կ'ըլլաւ : Ա՞րդ' ըսէ ինչ , ի՞նչ ը-
 նելաւ է +եղ : Ի՞ճրե թագուհի՞ թէ իճրե դատարար այդ խնդրե-
 +ք կ'ընես , հարցոյց Ամպրըն : Իճրե թագուհի . պատաս-
 խանեց Աղիսաբէթ : Ուրե՞՞ն կեանս շնորհելու ես , ըսաւ
 Ամպրըն : Ի՞նչ ի՞նչ սպանովութիւն կուտաս կրկին անգամ
 նոյն որոշումը ընելուդ , հարցոյց Աղիսաբէթ : Ա՞րդ' զի նա-
 խաղճուշութիւններով շնորհ+ ընել ըլլաւ , պատասխանեց
 Ամպրըն : Աղիսաբէթ ան ատեն իւր պալատականներուն
 դռնալով , ըսաւ . երեսուն տարիէ 'ի վեր է որ կը թագա-
 ւորեմ և դեռ այսպիսի գեղեցիկ դաս մը չէի առած մէկէն :

Ոմանք կը խրատէին զինքը որ զԱմպրըն օրինաց խրս-
 տութեանը յանձնէ . սակայն Աղիսաբէթ կատարեալ նե-
 ռողութիւն շնորհեց իրեն առանց պայմանի : Ակովտիացին
 ալ շնորհակալ ըլլալով , ըսաւ . Ա՞նէ կ'ուզես որ ըր՞ծ ըն-
 նորհ+դ ինչ օգտակար ըլլայ , թէ՛ ճը որո՞ր որ մինչև Գաղղիոյ
 ծովերը հեռս գայ : Ա՞յս խնդիրն ալ կատարուեցաւ :

Աղիսաբէթի դարուց մէջն անգամ երբ կրօնքը դեռ աստ-

ուածային հանգամանք մը չէր տուած ներողամտութեան , հոյակապ օրինակներ չեն պակսիր : Ի՞նչ իմաստասէրք , ի՞նչ աշխարհակալներ մեզ կը ներկայանան , որ երբ ամենէն աւելի գիւրազգաց պիտի ըլլային իրենց անուանն կամ փառացը հասած մնասուցն , զարմանալի երկայնամտութեամբ անիրաւութեանց և նախատանաց համբերեցին :

Ա՛յնչափ ողբերկոյնները Փիլիպպոս Մակեդոնիոյ թագաւորին ներկայանալով , երբ մէկ քանի թշնամական գործոց համար կը գանգատէին , թագաւորը իրենց անսալէն վերջը հարցուց թէ ինչ կերպով իրենց ծառայութիւն մը կրնայ ընել : Ա՛յնչափ թշնամայնութեամբ որ որոշեալ կրնաս ընել , պատասխանեց անոնցմէ մէկը , զի՛նչո՛ւ կախե՛լ է : Փիլիպպոս առանց այլայլելու այս խօսքին վրայ , որ իր շուրջը գտնուողներուն բոլորն ալ սաստիկ զայրացոյց , ըսաւ . Ի՛նչ + յեր տեարցը , ի՛նչ այսպիսի անվայել խօսքեր ընելու - յանդիմանները անոնց ներողէն աւելի հոյարար են և թշնամայնութեամբ + խաղաղութեան :

Յուլիոս Արսար քաղաքական պատերազմին վերջը բոլոր իր թշնամիներուն ներեց , և շատ ցաւեցաւ որ Աատովնի ալ նոյնը ընելու փառքէն զրկուեցաւ , Աատովն արդէն զինքն սպաննած ըլլալով :

Այլ թշնամոյ մը ներելէ աւելի ի՞նչ կրնայ ըլլալ փառաւոր , մանաւանդ բարձրաստիճան վիճակի մէջ : Ա՛յնչափ անոս կայսերական գահն ամբառնալէն ետեւ , որ մը իր մէկ թշնամին տեսնելով , ըսաւ . Ա՛յն հիմա կայսր եղայ , այստեղից որ - ինչ երկնչելու - զեւ :

Մեծն թէոդոսիոս կը գրէր Ռուփինոս անուն տեղակալին . Այնտեղ թեր անյին կամ կասաւարութեամբ վրայով լարախօտ , զե՛տ ուղեր որ պարտաւի . զի ե՛րբ ինչեւս մտնու-

Թեա՞ք խօսած է, քան զը զհամարուելիք . եթէ յիմարուելեա՞ք, ցաւահցել պէտք է . եթէ զնասելու դիտմամբ, ներելու եմք :

Վազղիոյ Փիլիպպոս Վեղեցկին խորհուրդ կուտային որ պատժէ Ռամիէի Ապիսկոպոսը, որ պատճառ կողեր էր իրեն՝ Պապին հետ թշնամանալու . Վիտե՞ որ կրնամ, պատասխանեց թագաւորը, քայց գեղեցիկ քան է կարող ըլլալ ու զընել :

Առտուիկոս Պուռպոնի դուքսը Անգղիոյ մէջ ատեն մը քանտր մնալէն ետեւ, վեհանձնութեան ամենագեղեցիկ գործով մը նշանաւոր ըրաւ իւր վերադարձն ՚ի հայրենիս : Իր իշխանութեան ներքեւ գտնուած աղնուականներուն շատերը իւր քանտարգելութեան ժամանակը մեծամեծ վնասներ հասուցած ըլլալով իր կալուածոցը, հոգաբարձուն ոճրագործութեանց յիշատակարան մը իրեն ներկայացոյց : Աղնուականք շփոթեցան, երեսնուն գոյնը շեջեցաւ : Իայց վեհանձն իշխանը ըսաւ հոգաբարձուին . Ինչ դե՞ եղած քարայրուելանց համար ալ յիշատակարան ճշ պարտաստե՞ր ես : Ոչ, պատասխանեց հոգաբարձուն կամ վերակացուն : Ուրե՞մ, ըսաւ իշխանը, այրելու է այդ Բղնեբը, զի ինչ օգտակար զե՞ն կրնար ըլլալ : Ալ անմիջապէս առաւ զանոնք, կրակը նետեց առանց կարգալու :

Անգամ մը ոմանք կը խրատէին զԷնրիկոս Պ . Մեծ կոչուած աւելի իր բարեսրտութեանը քան թէ ըրած յազմութեանցը համար, որ այնքան բարութեամբ չըվարուի իր թշնամեացը դէմ, պատասխանեց . Աստուած ինչ կը ներէ, ես ալ պէտք է ներեմ . Անիկայ շնորհիւ իմ պահտու թիւններս, ուստի ես ալ պէտք է որ անյիշալար ըլլամ : — Ի՛նչ գեղեցիկ վճիռ, և քանի՛ արժանաւոր զինքն ներշնչող կրօնքին :

Ինժանդատի դուքսը՝ որ Ապանիոյ մէջ առաջին կար-

գէ անձ մ' էր, իր մէկ խնդիրը մերժելուն համար Աարտի-
նալ ջ իմիննէսի գէմ զայրանալով, գանձապետը խրկեց
որ երթայ նախատական խօսքեր ըսէ և իւր ծնունդը ե-
րեսին զարնէ. զի Աարտինալը ստորին գեղջկան մը զա-
ւակ էր: Գանձապետը Աարտինալին ներկայանալով,
ծուներ իջաւ և տիրոջը հրամանը կատարեց: «Աստուծոյ տե-
քը, պատասխանեց ջ իմիննէ, և արդէն զըջացեր է անիկայ:
Եւ իրօք զղջաց դուքսը և գանգատեցաւ բարեկամներուն
որ չկասեցուցին զինքն այսպիսի յիմարուծիւն մը գործելէ:

Եւ ի՞նչ գոհունակութիւն, ի՞նչ խաղաղութիւն չպատ-
ճառեր ներողամտութիւնը մարդոյս սրտին:

Երբ անգամ մը ումանք կը խրատէին զ՛ենրիկոս Ղ.՝
որ քիչ մ' աւելի խստութեամբ վարուի ապստամբեալ քա-
ղաքացիներ, ըսաւ. Ա ընդհանրութեան պարտաւալ գոհու-
նակութիւնը վաղանցիկ է. Բայց ներողամտութեան ծագածը յա-
տիարեանական:

Բարերարութեամբ չարին յաղթելու չափ ի՞նչ բանա-
ւոր վրէժխնդրութիւն կրնայ ըլլալ: Ամանք ՛ենրիկոս Ղ. ի
կ'ըսէին թէ այս ինչ գնդապետը, որուն մէկ քանի ան-
գամ ներումն շնորհեր էր, գեռ չսիրեր զինքը, պատաս-
խանեց. Այնքան Բարի+ պիտի գործե՞մ իրեն դէմ, որ ստիպու-
նի «իրել:

Եւ եթէ չես կրնար թշնամուոյդ բարերարել, գէթ հե-
տևող եղիր սա առածին. Այն է ի՞նչ «վրէժ անու-լ Բըշ-
նակեղ, անպարստաւելի ըրէ վարդ»: Այս էր ահա Պղատո-
նի սկզբունքը, զոր կը գտնեմք հետևեալ տողերուն մէջ:

ԲԱՐԵԿԱՄՔ

(Յանդուգն Ղերսիտէս վրադ կը ծիծաղի,
ինչո՞ւ համար զինքն չես պատժեր:

ՊՂԱՏՈՆ

Իմաստունը կը խնդրէ հաճոյանալ
և զջարախօսը կը պատժէ սուտ հանելով:

Հատ անգամ նախատինքն անգոսնելով ալ զանիկայ
պատժած կ'ըլլամք: Թշնամւոյն անիրաւութեանցը դէմ
չափազանց զգայութիւն ցուցնելը մեծ զուարճութիւն կը
պատճառէ իրեն չարախօսութեան, զրպարտութեան ա-
կանջ դնելովնիս՝ զանիկայ տւողական ըրած կ'ըլլամք: Ա-
թէ նիւթոյ մէջ կայծ մը ընկնի, ամէն բան կ'այրէ ու
ասհագին բոցեր կ'արձակէ. իսկ երբ ջուրն ընկնի, շուտ
կը մարի, կ'անցնի:

Սոկրատ տարօրինակ հանդարտամտութեամբ հանդիսա-
կան եղաւ Սոփոկղի (1) այն կատակերգութեանը, որուն մէջ
անգթաբար զինքն կը խայտառակէին: Այլ օր մը անզգամ
անձէ մը ապաակ մը ընդունելով, բաւական սեպեց ը-
սել. Գիտնալու էի գլուխս սաղասարս մը դնելու հարկասարոս-
թիանը:

(1) Հոյակապ բանաստեղծ ողբերգակ Յունաստանի, ծնաւ յԱթենս
495ամաւ նախ քան զՔրիստոս: Ա՛րսուի թէ Եսկիլլոսէն դաս առած է
թատրերգութեան մէջ: Ա՛րսեն նաեւ թէ ողբերգութեան մասին
անոր հետ վիճեր եւ մրցանակն ստացեր է: Հատ գրուածներ ունե-
ցեր է յորոց միայն եօթն կտորը կան հիմա: Սոփոկղէս առաջինն
եղաւ որ միանգամայն երեք հանգամանք ներկայացոյց՝ ի տեսարանին.
եւ շատ կարեւոր փոփոխութիւններ ըրաւ ողբերգական գրուածոց
մէջ: Իր հայրենակիցքն իւր ձիրքերը յարգեցին եւ թէ քաղաքական
ու թէ զինուորական պատուովք զինքն պատուեցին: Մեռաւ 91 տա-
րեկան հասակին:

Ք Լ Ո Ւ Խ Ի Ա

ՍԱԿԱԻԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՆՔԱՄ մը գիտնականի մը հարցին թէ ի՞նչպէս այնքան գիտուն եղեր է . Լեւոյ՛, պատասխանեց անիկայ , և զգիտ-
ցածս գիտցողին հարցնելով :

Սակաւասօսութիւնը խիստ հարկաւոր բան է և պատիւ
կ'ընէ պատանեաց : Ասով տաղանդաւորը համեստաբա-
րոյ կը ճանչուի , և տաղանդաւոր չեղողը իւր աղքատու-
թիւնը ծածկած կ'ըլլայ :

Մի խնդրեր ուրեմն շատասօսել տաղանդաւոր ըլլալդ
ցուցնելու համար , այլ ծածկէ զայն համեստութեան քո-
ղովն . որով ևս առաւել արժանաւորութիւնդ կ'իմացուի .
մանաւանդ որ ունայնամտութեան երևոյթը անհաճոյ է
ամենուն :

Հանճարն ու խօսքը դրամոյ նման տնտեսութեամբ գործ-
ածելու եմք . ըսել է թէ բոլորովին լուրու ալ չեմք (1) :
Չափաւորութիւնը իմաստութեան նշանակն է . լռակա-
ցութիւնը՝ թանձրամտութեան : Թանձրամիտ , ապուշ
մարդը ոչ կը խօսի , ոչ ալ կը խորհի : Ասօսակցութեան դան-
դաղութիւնն ու չորութիւնը շատ անգամ մտաց դանդա-
ղութենէն ու անարգասաւորութենէն կը պատճառի : Արա-
գասօսութիւնը գաղափարաց բազմութիւնը կը յայտնէ ,
որ թէպէտ գեղեցիկ ձիրք մը կրնայ համարուիլ , բայց

(1) Թէոփրաստոս տեսնելով մարդ մը որ ընկերութեան մը մէջ
բոլորովին լուռ կը կենար , ըսաւ . Եթէ գիտան ես զանձն ի՞նչբրաւեա ,
եթէ գիտան չես , ապա զինչոք գիտան իւր թեցնեա :

վտանգաւոր կ'ըլլայ, եթէ երբ խոհականութեան հետ չըմիանայ:

Արքան որ տաղանդաւոր ըլլամք, եթէ ժամանակին խօսիլ ու լռել չգիտնամք, մարդ չյարգեր զմեզ: Իրաւ է որ թանձրամիտը, ունայնամիտն ու շատախօսը առաջ զմեզ կը խաբեն, բայց շուտով երեւան կ'ելնէ խաբէութիւննին: Առաջ իրենց վրայ կը զարմանամք. բայց վերջը կ'անարգեմք: Ինդ հակառակն համեստաբարոյ անձը որ չխնդրեր զուրիշն խաբել, շուտով հաճելի կ'ըլլայ ուրիշին: Արժանիքը չկրնար երկար ատեն ծածկուիլ, և երբ անգամ մը յայտնուի, զամէնքն 'ի զարմանս կը շարժէ, նման ոսկւոյ հարուստ հանքի մը, հազիւ թէ բան մը կը տեսնուի մինչև որ իբրև թէ չստիպուի իր ծածկուած գանձերն յայտնել:

Ով որ դժուարաւ կը լռէ, երբէք իմաստուն չկրնար կոչուիլ: Կամ լռեցէ՛՛ կ'ըսէր Պիւթագորաս իւր աշակերտացը, կամ լէ լռութենէ արէ՛հ խօսե՛ր ըրէ՛՛:

Հինն Ագիպտոս, արհեստից՝ գիտութեանց և իմաստութեան խանձարուրքը իւր մայրաքաղաքն արձան մը կանգնեցր էր լռութեան, մէկ մատն շրթանցը վրայ դրուած. իբր թէ բոլոր քաղաքացիքը 'ի լռութիւն յորդորելու համար:

Ինկերութեան մը մէջ սիրելի ըլլալու համար զգուշանալու ես այն շաղակրատ անձանց նմանելէն, որ բան մը պատմած ատեն հազարաւոր անպիտան պարագայներ մէջն կը խառնեն ու վերջացնելն կը մոռնան: Այլէ որ պատմած բանդ միշտ նոր ըլլայ, և զրոյցքդ աշխոյժ, և միւսնոյն պատմածդ հարիւր անգամ չկրկնես:

Շաղակրատներուն շատը աւելի իրենց յիշողութիւնը քան թէ դատողութիւնն կը գործածեն: Շատախօսը հա-

աարակօրէն լաւ բան մը չխօսիր, ինչպէս և տերևախիտ ծառերը լաւ պտուղ չեն բերեր: Ալ եթէ լաւ բան մը ըսելու ըլլայ, այն ալ միւսներուն մէջ կը խառնուի, կը շփոթի: Աստուծոյ փառքը շատ անգամ հազարաւոր անխելքութիւններ ըսել կու տայ իրեն, որոնք վերջը մեծ ցաւ կը պատճառեն: Արդուն անժողովութիւնը թեթեամտութենէ յառաջ կու գայ: Անդ հակառակն սակաւախօս մարդը խոհեմամիտ է, միշտ ընտիր նիւթեր կը գտնայ: Արունակ բաց բերանը առանց կղպաքի սնտուկի մը կը նմանի, զոր տեսնողը անմիջապէս կը հասկնայ թէ թանկագին բան մը չպարունակեր:

Նարտարախօս անձինք ալ, եթէ չեն ուզեր ձանձրացրնել զոք, զգուշանալու են շատախօսութենէ. և յիշելու են թէ անհնար բան է միանգամայն շատ ու լաւ խօսիլ: Քսենակրատի հարցուելով ընկերութեան մը մէջ թէ ինչ պատճառաւ ինքն չխօսիր. համար զըջացեր ե՞մ խօսելուս, պատասխանեց իմաստասէրը, Բայց ոչ երբէ՛ք լսելուս համար:

«Այո՛ն իմաստասէրն էր նաև սա խօսքին հեղինակը թէ Մարդիկ կ'ուսուցանեն ձեզ խօսել, բայց սարսա՛ծ՝ լսել:»

Ազգակրատը բան մը չպահեր. իսկ խոհեման անձը միայն պէտք եղածն կը խօսի: Անձրին սիրտը՝ բերանն է, և իմաստունոյն բերանը՝ սիրտն է, կ'ըսէ իմաստունը:

Անգամ մը ոմանք կը կատակէին երևելին թաւսօ, և ինքը ամենեւին չէր պատասխաներ: Մօտը գտնուողներուն մէկը ըսաւ թէ «Իմարութիւն է ասանկ ատեն չխօսիլը: Ալ ինչպէ՛ս՝ պատասխանեց թաւսօ, յիմարն չգիտէ լսել:»

Արտի խաղաղութիւնն ու հոգւոյ անմեղութիւնը սակաւախօսին բաժինն է: Աստուծոնքը, կ'ըսէ ամենէն իմաստուն թագաւորը, չեն ղերթ ՚ի ձեռաց:

Սակաւախօսութենէ աւելի օգտակար է խոկմամբ խօ-

սիլը : Մի խօսիր մինչև լաւ մը չխոկաս ընելիք խօսքիդ վրայ : Ի՛նչ սոսկալի անկարգութիւնք յառաջ չեն եկած առանց խոկումն խօսելէ : Ի՞նչ զղջալներ չէ պատճառած անդգոյշ խօսք մը :

Օգուշաւորութիւնը խիստ կարեւոր բան է խօսակցութեան մէջ . և խոհեմամտութիւնը երբէք աւելորդ չկրնար համարուիլ : Աւրիշին սիրտն ու յարգը ստանալու համար կանոնաւոր պահելու եմք լեզունիս :

Այժմէ այնքան տաղանդաւոր չես , որ կենդանութիւն տաս խօսակցութեան , գոնէ ձանձրոյթ ու տաղտկութիւն մի պատճառեր : Մի նմանիր այն թեթեւամիտ անձանց , որ շարունակ խօսելովսին , յաւիտենական լռութիւն կը հրամայեն այլոց : Աւրիշները մեզ լսել տալու համար , մենք ալ իրենց մտիկ ընելու եմք : Աւրեմն երբ խօսք մը կ'ընես , ժամանակ տուր պատասխանելու . և ականջ դիր երբ ընկերդ խօսիլ սկսի : Աւրիշին խօսիցը մտադիր ըլլալով աւելի հաճելի կ'ըլլաս քան թէ խօսելով : Այլ ուրիշին խօսքը ընդ միջին ալ մեծ անքաղաքաւարութիւն է և դատողութեան պակսութենէ յառաջ կու գայ :

Օգուշացիր վճռաբար խօսելէ , զի մարդ չախորժիր այնպիսի մէկուն անսալ , որ անսխալ կը համարի իր խորհուրդներն կամ կարծիքը : Այլ մի՛ այնքան յամառիր կարծեացդ վրայ . երբեմն մեր իրաւունքը կորուսանելու եմք , լաւ ևս շահելու համար :

Օգուշացիր նոյնպէս վիճաբանութեան հոգիէն . զի հպարտութիւնը քան թէ ճշմարտութեան սէրն է ասոր շարժիչը : Այլ ամենեին մի՛ վիճիր շատախօս անձանց հետ . զի վիճաբանութիւնը եթէ քաղաքաւարութեան հետ չընկերանայ , միշտ աւելի վնաս քան թէ օգուտ կը գործէ : Կարծիքները իբր թէ իրար բաղխելով , ճշմարտու-

Թիւնք յայտնող լոյս մը ծագելու տեղ, հասարակօրէն ար-
համարհանքն բռնկցնող կայծեր կը ցայտեն: Ա իճարան-
ները համեստ, զիջանօղ, քաղցրաբարոյ ու միմեանց գա-
ղափարները ընդունելու յօժարամիտ ըլլալու, և իրարու
խորհրդոց խորքն թափանցել ուղելու տեղ, մէյմէկ ոխե-
րիմ թշնամի, պատերազմիկ կը ձեանան. ամենեին չեն ու-
ղեր սխալնին ճանչել: Ախալելէ աւելի լուծեմէ կը
վախնան. և սխալելէ աւելի սխալնին խոստովանիլը ամօթ
կը համարին: Տայց ինչ կը շահուի ասով. ոչ այլ ինչ,
եթէ ոչ մեր կամակորուծիւնն ու տգիտութիւնը հասկցնել
ուրիշին:

Ա իճարանութիւնը որքան որ փափաքելի բան չէ, տա-
կաւին պէտք չէ տկարութեամբ կամ վատութեամբ մո-
լութիւն մը կամ նախապաշարում մը ընդունել. ջերմեռանդ
կուսակից եղիր ճշմարտութեան, բայց երբ կը տեսնես որ
հակառակորդդ կը յամառի կամ թէ համոզման գալու յօ-
ժարութիւն չունի՝ կամ լուէ և կամ փոխէ խօսից նիւթը:
Չ երմութիւնն ու կամակորութիւնը ոչ այնքան մեր գի-
տութիւնը կը ցուցնեն, այլ մեր անբաղաքավարութիւնն կամ
գոռազամտութիւնը: Օ իջանելն երբեմն ընկճելէ աւելի
փառաւոր յաղթութիւն կրնայ համարուիլ:

Արբէք ճշմարտէն աւելի գիտուն զանձդ մի՛ ձեացներ.
և չգիտցած կամ վեր ՚ի վերոյ գիտցած բանի մը վրայով
գիտնոց առջին մի՛ խօսիր, որ չըլլայ թէ վրադ ծիծաղին:

Աթէ կ'ուզես որ խօսակցութիւնդ փափաքելի ըլլայ
ուրիշին, դիտէ՛ ճանչցիր թէ որու հետ կը խօսիս: Արբ
կը տեսնես որ քեզ ահանջ դնողը բաւական տաղանդա-
ւոր կամ ծանօթութեանց տէր մէկը չէ, մի՛ ջանար անոր
ըմբռնումէն վեր ճշմարիտ կամ թէ հաւանական կարծիք
մը հաստատելու. ապա թէ ոչ ծիծաղելի կ'ըլլաս: Ղար-

պիկուլթիւնը խօսակցութեան մէջ գեղեցիկ իմաստներէն
աւելի արժողութիւն ունի :

Արևելին Ռասին (1) իր որդւոյն կ'ըսէր յաճախակի : —
«Մի կարծեր թէ գրուածներս են ինձ այնքան պատիւ ը-
նողը : Քորնէյլ (2) ինէ աւելի ընտիր տողեր շինած է . բայց
մարդ երեսը չնայիր : Անիկայ գերասաններուն բերանը
կը սիրուի , երբ ես առանց յոգնեցնելու մէկը իմ գրուա-
ծոցս ընթերցմամբ , հաճոյական խօսակցութեամբ մը մօտս
եկողը կը զուարճացնեմ : Արբ դուքս մը կամ ուրիշ երե-
ւելի անձ մը զիս տեսնել գայ , հազիւ թէ երեք չորս

(1) Յովհաննէս Ռասին , Գաղղիոյ ամենէն մեծ թատերգուաց
մէկը , ծնաւ Լա Փորդ Միլոն 1636 ին եւ իր ուսումը կատարեց
Փոր Բոյալի ճեմարանը , սկսաւ իր բանաստեղծական ընթացքը թա-
ղաւորին հարսանեացը վրայ երգ մը գրելով , որուն համար առա-
տաձեռն վարձք մը ընդունեց : Երկրորդ անգամ մ' ալ ուրիշ
պարգև մը եւ Պուալոյի բարեկամութիւնը իրեն շահեցոյց : Իւր
առաջին ողբերգութիւններն Թեպայիտ եւ Մեծն Աղեքսանդր այն-
քան լաւ չէին յայտներ իր չնաշխարհիկ ձիրքերը : Իսկ Անդրո-
մար ողբերգութիւնը Քորնէյլէն 'ի զատ բոլոր ժամանակակից
բանաստեղծներէն վեհագոյն հանդիսացոյց զինքը : Բրիդանի-
կոս , Բերինիկէ եւ Եփիկինիա անուն գործքն ալ բոլորովին իւր
համբաւը տարածեց : Սակայն Փետրա անուն յօրինուածը յանի-
րաւի իրեն դեմ թշնամիներ յարուցանելով , որոշեց որ ալ տեսա-
րանի համար բան չգրէ : Տասներկու տարիէն ետքը Մեանոն տիկ-
նոջ ու Լուտովիկոս չորեքտասաներորդի խնդրանօքը Եսթեր եւ
Աթալիա թատերգութիւններն գրեց Սէն Սիրի վարժարանը
ներկայացուելու համար : Աթալիան անարգուեցաւ թշնամիներէն
ուստի եւ Ռասին բոլորովին հրաժարեցաւ գրութենէ : Մեռաւ
1699 ին :

(2) Պետրոս Քորնէյլ , հոյակապ Գաղղիացի բանաստեղծից մէ-
կը , ծնաւ 'ի Ռուան 1606 ին : Իր առաջին կատակերգութեան դտած
ընդունելութիւնը զինքն խրախուսելով , ձեռք զարկաւ թատեր-
գութիւններ գրելու : Սիտր իր անունը հռչակեց , Արատեանք , Աին-
նա , եւ Պոլիկոսս եւ անհամար ողբերգութիւններն իր արժանիքն
հաստատեցին : 1647 ին Գաղղիոյ ճեմարանին անդամ ընտրուե-
ցաւ եւ մեռաւ Հոկտ . 1 . 1684 :

խօսք բերնէս կ'ելնէ . այլ շարունակ իրեն ախորժ կը բերեմ խօսելու . անանկ որ վերջապէս աւելի ինքն իրմէ քան թէ ինէ գոհ եղած կը մեկնի , :

Գ Լ Ո Ւ Խ Ի Բ

ԵՐԿԱՅԵՄՏՈՒԹԻՒՆ

ՄԵՐ կենաց ընթացքին մէջ տհաճութեան առիժներըն այնքան բազմաթիւ են , որ անհնար է անոնց ամերէն խոյս տալ : Աւստի յիմար ըլլալու է այն որ կ'ըսէ թէ երբէք պիտի չվշտանայ : Դեռ յարբուես չհասած , դեռ փորձառու չեղած , երբ ամէն բան մեր շուրջը կը ծիծաղի , զուարթ երևոյթ մը կը ներկայացնէ , կը կարծեմք թէ ծաղկանց վրայ պիտի քալեմք : Իսկ շուտով խաբէութիւնը , անգթութիւնը , անիրաւութիւնն ու բոլոր վշտալի արկածքն՝ որոնց դէմ մաքառիլը այնքան դժուարին է , կը սկսին ամէն կողմանէ մեր վրայ յարձակիլ , զմեզ պատել և այս երջանկութեան կարճատևութիւնը իմացնել :

Պէտք է ուրեմն ժամ մ' առաջ ամէն բանի պատրաստուիլ . ի ծաղկի տիոց ծանօթութիւններ հաւաքել , առաքինութեամբ կազդուրել միտուրնիս . որպէս զի ժամանակին կարող ըլլա՛մք խոհականութեան հետ ընտանենալու : Արբ անիրաւութիւնը զմեզ մեր նպատակն խոտորեցնէ , դանարժանն մենէ նախապատիւ համարի , ստացուածոց մէկ մասը կամ բոլորը յափշտակէ , անուննիս վատահամբաւէ , պիտի մխիթարուի՛ք՝ անիրաւութեան վըրայ արդէն խորհած ըլլալովնիս : Ատոյգ է որ անանկ դառն

արկածներ կան, որ հմաստասիրին ու հմաստնոյն հմաստութիւնը իբր թէ 'ի հիմանց կը խարխալեն, կը կործանեն. բայց և այնպէս չուրացուիր որ եթէ աշխարհիս մէջ բանի մը չվստահիմք և հաւատարմութիւնն ու անկեղծութիւնը մարդոց սիրելի առաքինութիւններ չըլլալն յիշեմք, եթէ առաջուրնէ բաղդին արկածիցն ու կենաց դառնութեանցը դէմ պատրաստ գտնուիմք, ձախորդութեան ոչ միայն մէկ փոքր հարուածովն, այլ ամենամեծ ապաշնորհութեանց մէջ անդամ չեմք ընկծիր:

Եւ պատրաստուած կ'ըլլաիմք ձախորդ արկածից դէմ եթէ առաջուց վախճաննին մտածեմք, զի եթէ բարի ըլլայ, կը կրկնապատկի ուրախութիւննիս, եթէ չար՝ կը թեթեւաց վիշտերնիս:

Վ. Ես կերպով 'ի մարտ պատրաստուած, ժամ է արդ յասպարէզ ելանել, և իբր թէ մարտնչիլ բաղդին անգթութեանն ու մարդոց անիրաւութեանցը դէմ: Խացատրեմք ուրեմն այս անիրաւութիւններն և ցուցնելք անոնց դէմ գործածուելիք զէնքերը, որ բանականութիւնն ու կրօնք մեզ կը մատուցանեն:

Եւ նախ խօսիմք զըպարտութեան վրայով: Վ. սիկայ խիստ անագորոյն թշնամի մըն է և կը յարձակի մարդոյս ամենէն գերազանց՝ ամենէն ս'րելի բանին, բարի համբաւոյն վրայ իր մահառիթ թոյնը կը թափէ: Վ. սոր դէմ գործածելիք զէնքը համբերութիւնն է: Եւ ամանակը՝ վաղ կամ անագան, անշուշտ պիտի յայտնէ ճշմարտութիւնը: Վ. սկէ 'ի զատ խղճի վկայութիւնն ալ բաւական մտիթարութիւն չըլլար: — «Վ. ստուածային ողորմութիւնը, կ'ըսէ Սատի, մոլի մարդ մը սրբակրօն անձանց ընկերութեան մը մէջ ձգելով, առօրինութիւնը սիրտն այն աստիճան շարժեց որ սկսաւ իր մոլութիւնները թողուլ և վերջապէս ի-

բաւասէր, զգաստ, համբերող, աշխատասէր և բարեգործ
 անձ մ' եղաւ: Բայց մէկը չէր հաւատար իր դարձին.
 այլ ամէն մարդ վատ շարժառժից արդիւնք կը համա-
 րէին իր գործքը: Այս անիրաւութիւնը զինքն այնքան
 կը վշտացնէր, որ շատ անգամ մենացեալ, առաքինի ծեր-
 ունւոյ մը մօտն կ'երթար, կը գանգատէր: «Արդեակ, կ'ըսէր
 իրեն ծերուսին, դու քու համբաւէդ աւելի կ'արժես,
 փա՛ռք տուր Աստուծոյ, երանի անոր որ կրնայ ըսել,
 Սընտախ, նախանշորդքս զիս կը դատաւարարեն անանկ մար-
 տիկանց համար որ ես չունիմ: Եթէ որ դու առաքինի ես,
 ի՞նչ կ'ըլլայ, եթէ զքեզ հալածեն կամ պատժեն. քու
 գործոյդ երկու անսխալ վկայները, Աստուած և խիղճդ
 զքեզ չե՞ն մխիթարեր:»

Երբ Ասկրատ իր վրայով չար խօսք մը լսէր, կ'ըսէր,
 Եթէ ըսածնին ճշմարիտ է՝ կրնայ օգտակար ըլլալ «-դէլով. եթէ
 ճշմարիտ չէ, ինչ չէրաբերեր. զի ինչ համար չէ այդ խօսքը:

Աինք կը տրտնջէր թէ Աթենացիք զինքն յանիրաւի
 ՚ի մահ դատաւարտեցին: Ա՛ն-դէիք, պատասխանեց Ասկ-
 րատ, որ իրաւօ՛ք դատաւարարեն:

Տակիտոս կը պատմէ թէ Յուլիոս Աեսար և Ալգոս-
 տոս ամենեին չէին դժգոհեր Պիպուղոսի և Աատուղղոսի
 թշնամական գրութեանցը վրայ: Ե- չէրե՛մ, կ'աւելցնէ յի-
 շեալ պատմագիրը, Տե՛տահոգիտ-նենե՛ն՝ այսպէս կ'ընէին ինչ իւ-
 րաբնորոտ-նենե՛ն. զի եթէ ասոնեանն չլըտանամք՝ այսպիսի բանե-
 րու զրայ, իրենք իրենցմէ կը մտայտնին. եթէ ընդհանրապէս
 չլըտացեալ ցոցնեմք անյերմիս, կ'երեւի ինչ զանունք իբր ճշմարիտ
 կը զաւերացնեմք:

Բարի անուան կորուստէն ետե ամենէն ցաւալին ստաց-
 ուածոց և սիրելեաց կորուստն է: Սակաւք կրնան այսպի-
 սի հարուած մ' ընդունիլ առանց տրտնջելու նախախնա-
 մութեան դէմ և երբեմն յուսահատելու:

Այսպիսիք մինչև անգամ վայրկեան մը չեն կրնար մու-
նալ կորուստնին , զի չեն խորհիր [ե է այսքան սիրելու չեն
ասանկ յողդողդ բաները : Աստի կոմսը՝ որ կայսերա-
կանաց հրամանատարն էր , Սանազարի գեղի տունը
քանդելովն այն աստիճան վշտացոյց զինքն , որ երկար չապ-
րեցաւ :

Մեծ յիմարութիւն է ընչից համար մեռնիլ , որ կենաց
հետ բաղդատելով անոր մէկ հազարերորդն անգամ չեն
արժեր : Բայց մարդոց մեծագոյն մասը այնքան ջերմու-
թեամբ կապուած է հարստութեան , որ բանականութենէ և
կրօնքէ չօգնուած , չկրնար անոր կորստեանը տանիլ քա-
ջութեամբ : Տե՛ս ի՞նչ դիւցազնական երկայնամտութիւն
ցոյց տուաւ Յովբ :

Երբ Բարձրելոյն բազուկը իւր վրայ կը ծանրանար , կ'օրհ-
նէր զայն և խորին երախտագիտութեամբ անոր կը դար-
ձընէր ինչ որ անկէ ընդուներ էր : Յովբ կորսնցոյց իր
ինչքը , բայց անկորուստ պահեց իր յոյսն առ Աստուած :

Արդժկամակիմք ամենափոքր կորուստ մը ընելու , բայց
մենք մի թէ կատարեալ էակներ եմք որ կատարեալ եր-
ջանկութիւն կը փնտռեմք : — Վարեհ Վարսից թագա-
ւորը իր ամենէն սիրելի կինը կորուսանելով , չէր կրնար
մխիթարուիլ : « Իմոկրիտէս՝ Յոյն իմաստասէրը խոստա-
ցաւ զայն յարուցանել եթէ իր տէրութեանը մէջ երեք
մարդ գտնէ , որ ամենեին վշտացած չըլլան : Հատ հե-
տազօտութիւններ ընելէն ետքը վերջապէս հասկցուեցաւ
թէ անհնար է գտնել : Ասոր վրայ մխիթարուեցաւ թա-
գաւորը :

Հաստատ ու կատարեալ երջանկութիւն չկրնար յու-
սացուիլ այս կեանքիս մէջ . զի աշխարհս գրախտ մը չէ .
մանաւանդ որ ձախորդութեան չհանդիպիլը մեծ ձախոր-

գութիւն կրնայ համարուիլ: Չի յարատե, անընդհատ
յաջողութիւնը կ'ապականէ, կը մեղկացնէ, հպարտու-
թեամբ կը փքացընէ մարդս:

Աթէ ըրած կորուստդ անանկ դիպուածէ մը առթե-
ցաւ, որ խոհականութիւնը չէր կրնար նախատեսել կամ
անոր դէմ դարձան հնարել, երկայնամիտ՝ քաջ ըլլալու
ես. տրտմելով, վշտանալով բան մը չհասուիր, մանաւանդ
թէ շատ վնաս ալ յառաջ կրնայ գալ. տրտմութիւնը կը
խանդարէ, կը շփոթէ միտքն և կենաց օրերը կը կարճե-
ցընէ:

Աթէ արկածն դարձանելը յուսալի կ'երևի, կ'աղդու-
թէ սիրտդ յաջող ապագայի մը յուսովը. և մի՛ մոռնար թէ
շատ անգամ անյաջողելի կարծուած գործերը՝ ժամանակով
լաւ. կը յաջողին: Չարէն բարի կրնայ ծնանիլ:

Վէ՛մ դիր ձախորդութեանց, որ գքեզ կը ճնշեն,
և բաղդին անգթութեանը դէմ ապաւէն
ըլլայ սրտիդ և նեցուկ յոյսն բանաւոր:

()դն այսօր փոթորկայոյշ շառաչիւնովն
իր կատաղութիւնը գլխուդ կ'ապառնայ,
բայց վաղը դարձեալ պարզելովն

առ դուրս քեզ հրաւէր կը կարդայ:

|| 100000 ||

Քաջայոյս եղիր ուրեմն որ գքեզ խռովող փոթորիկը
չուտ պիտի անցնի. և մինչդեռ կը տեւէ, նայէ՛ որ առա-
քինութեամբդ մխիթարուիս: «Չեմք ուզեր երջան-
կութենէ բաժնուիլ, կ'ըսէ Սատի. բայց չարին և բար-
ւոյն աղբիւրները մենէ ծածկեալ են. ուստի և չդիտեմք
թէ որով պիտի ջրեմք մեր կենաց ընթացքը. ո՛վ մարդ,
յամենայն ձախորդութեան երկայնամիտ ու քաջ եղիր»:
Յոյսը թշուառացելոց ամենամեծ մխիթարութիւնն է.

ասիկա կը սրբէ մեր աչաց արտասուքն և կը սփռի սրբ-
տերնիս :

Մըջամիտ միշտ նախատեսելու եմք ձախորդութիւնը .
բայց գալէն ետև ընելիքնիս՝ շուտով մոռնալու ջանալնիս
է : Իրաւի , բոլորովին անզգայ չեմք կրնար ըլլալ . սակայն
բարեկամաց ու անմեղ զուարճութեանց ծոցը ըստ բաւա-
կանին մեր տրտմութիւնը կրնայ փարատիլ : — Այնչանձն
տիկին մը իւր միածին որդւոյն մահուան բօթալից լուրն
առնելով , կէս ժամու միջոց իւր սենեակն առանձնանալէ
ետև , կրկին ընկերութեան մէջ դարձաւ , ըսելով . Որդ-
ւոյս մահուան գոյժն առի , ինչպէս յաշխոսիան սպասեցի են :

Մուտովիկոս ԺՎ . շատ վշտացաւ իւր մէկ հասիկ
որդւոյն Տելֆինի մահուանը վրայ . բայց և այնպէս կրցաւ
ըսել իշխանուհւոյ մը՝ որ դառնապէս կը կոծէր . Տիկն ,
չափաւորէ որդոսիւնդ , ի՞նչ կորուստս +ան զոյրդ աւելի թէ է .
ի՞նչ կ'ըլլայ լաւ :

Մենէն աւելի մեղ տհաճութիւն պատճառող բանը
բարեկամ կարծուած մէկէն վնաս կրելնիս է : Հարկա-
նող ձեռքը որքան մեղ սիրելի ըլլայ , այնքան վշտալից
կ'ըլլայ հարուածը : Այլ դժբաղդութիւնը ան է որ ամենէն
աւելի մեր երջանկութեանը օժանդակելիք բանը , շատ
անգամ ամենէն աւելի զայն կը փճացնէ : Առաքինի կիներ
շատ անգամ բանաւոր ամուսին մը չգտներ . և ուշադիր
ու քաղցրաբարոյ այրը ամէն անգամ իւր կնոջմէն չսիրուիր .
Վորովալից հայրը շատ անգամ չարաբարոյ զաւակաց
համար կը յողնի : Հաւատարիմ բարեկամը երբեմն կը
տեսնէ որ անհաւատարիմ ապերախտ անձ մը կը սիրէ ե-
ղեր : Այսպիսի կցորդութեանց մէջ անդորրամտութիւնը ,
քաղցրութիւնն ու վեհանձնութիւնը միայն զմեզ յաղթող
կը հանդիսացնեն . և միանգամայն զգուշանալու եմք որ

մենք առիթ չտամք կրած փնասնուս կամ վիշտերնուս, զի
ան ատեն պատիժ կրնայ համարուիլ մեր յանցանացը :

Սոք տանելու եմք նաև որ կրած վիշտերնիս ճշմարտէն
աւելի չմեծցնեմք . զի որքան ապերջանիկ կարծեմք
զմեզ, այնքան ապերջանիկ կ'ըլլամք : Շատ անգամ
կը տեսնեմք որ մարդիկ անձերնին ապերջանիկ կը համարին
երբ բան մը չպակսիր զիրենք երջանիկ ընելու : Աստուծոյ
և պատիւ ունին, քաջառողջութիւն կը վայելն . բայց եթէ
հետերնին խօսիս, կը կարծես թէ ամէն բանի կարօտ են :
Չարիազանց խոհեմութիւնը որ կասկածաբարութեան
և փոքրողութեան հետ կը շփոթի, կը թուանաւորէ՝ կը
դառնացնէ կեանքերնիս . և դժբաղդութեան երկիւղը՝
որ դուցէ պիտի չպատահի, ըստ ինքեան ճշմարիտ
դժբաղդութիւն մ'է :

Մի տրամիր ուրեմն երբ դժբաղդութիւնն չէ պատահած .
և երբ պատահի, ճշմարտէն աւելի մի՛ մեծցնելը զայն :
Ամենէն բանաւ որ ընթացքը իրերը խոհական աչօք
նկատել, ողջմտութեամբ դատել և տրամութենէ զանձն
զգուշացնելն է :

Չուրացուիր թէ կան այնպիսի աւուրք, որոնց մէջ առանց
գիտնալու պատճառն, կը տրամիմք, կը դժգոհիմք . միտքն
որպէս թէ մառախուղով կը պատի և անհանգստութիւն
մը կը զգայ, իբրև ծառ յանկարծական փոթորկէ շարժեալ .
բայց ասիկա ֆիզիզական պատճառի մը արդիւնքն է,
և ասանկ ատեն կամ առանձնանալու կամ թէ միայն
այնպիսի անձանց հետ տեսնուելու եմք, որ կրնան
զմեզ սփոփել : Այսակցութիւնը շատ անգամ իբր զօրաւոր
դեղ մը կ'ազդէ կը փարատէ այս մառախուղը : Արօնքն
ալ համբերութիւն քարոզելովն ևս առաւել կ'օգնէ
այս միտքն աղօտացնող գոլորշեաց յարձակումը

տկարացրնելու : Իսկ աշխատութիւնը կամ զբաղմունքն
բոլորովին կը պսակէ մեր ճիգը . զի ժամանակ չտար տրու-
մութեան կամ ձանձրութեան :

Պէտք է յիշեմք ու մտիծարուիմք վերջապէս որ դրժ-
բազդութիւնը ընդհանրապէս ամենապահով միջոց մ' է ըզ-
մեզ մոլութենէ կորզելու : Ամենէն ազդու խրատն ան-
գամ երբեմն ամենատկար տպաւորութիւն մը չկրնար ը-
նել : Սակայն երբ ձախորդութիւնը գայ մեր շուրջն պա-
տէ , հրապոյրքն կը վտարանդին , կը կորնչին , իրերը տար-
բեր տեսք մը կը զգենուն : Արբ երկարատե հիւանդու-
թիւնն զմեզ հիւծէ , մաշեցնէ , պաշտօնէ հանուիմք , ան-
հաւատարիմ բարեկամներէ մատնուիմք , ինչքերնիս յա-
փշտակուի , ան ատենը կ'իմանամք թէ այնքան շքեղու-
թեամբ զարդարուած , այնքան փափկութեամբ տածուած
մարմինը , զմեզ հպարտացնող պայծառ գոյնը անցաւոր ծա-
ղիկ մ' է միայն . կը համոզուիմք կատարելապէս թէ մարդ-
կային մեծութիւնները՝ որոնց այնքան սերտ կապուեր է-
ինք , ունայն , յողդողդ բաներ են :

ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՆԱՅՆԱՄՏՈՒԹԻՒՆ

Եթէ բանականութեան աչօք նկատեմք հպարտութեան առիթները, ո՞րքան ծաղու արժանի կը դանեմք զանոնք: Եւ ի՞նչ են ատոնք. միթէ երևելի գերդաստանէ ըլլալն, աստիճանաւորութեան փառքը, բազդին շնորհքները, բայց ասոնք յողողող, անկայուն բաներ են, և օտար՝ մարդոյս:

Եւ տկարութիւն չէ՞ հպարտանալ ազնուականութեան մը համար, որ ոչ մեր ճգանը արգասիքն է, ոչ ալ վարձատրութիւն մեր արժանեացը: Երբ ոմանք Ալֆոնս Արակոնի թագաւորը կը գովէին իր նախահարցը համար, ըսաւ. Ես այդ մեծ բան մը չեմ համարիր, դատար իմ նախահարցս՝ և ոչ ինչ իմ, մեծամեծները կը գովէին: Ո՞չ հարկոր ազնուականութիւնը ժամանակահան բարիք մը չէ, այլ արդիւնք մտածելու ինքնութեան:

Պատուաւոր է երևելի ազգատոհմէ ըլլալն, բայց անտի ծագած պարտաւորութիւններն ալ ծանր են: Եթէ ժառանգը իւր հօրը պատիւն ու տիտղոսը կը կրէ, անոր առաքինութիւնն ալ ժառանգելու է: Օ՞ր կը վերջանայ փառքը, ուր կը դադրի արժանիքը:

Նաղդաւոր է այնպիսին, որ դիտէ իւր ժառանգած պատուանունն կրել. և եղուկ անոր, որ չունի յարմարութիւն: Օ՞ր նախահարց փառքը ամօթով զինքն կը ծածկէ, իբր լոյս իւր թերութիւնները ևս առաւել երևան հանելով:

Ազնուականութիւնը՝ ի նախանձ կը գրգռէ զմեծահոգին և կը հպարտացնէ զփոքրամիտը: Պատուաւոր մարդը կը ջանայ արժանանալ իւր ժառանգած տիտղոսին. իսկ յիմարը կը

կարծէ թէ ասիկայ արժանեաց տեղը կը բռնէ : Ազնուակա-
նութիւնը համեստութեան հետ միացած, կը զարդարէ, կը
շքեղացնէ զարժանիքն . բայց կը տգեղացնէ և անպատիւ
կ'ընէ մարդս, երբ հպարտութեան հետ ընկերանայ :
Ա իեննայի պաշտականաց շատերը երբ Յովսէփի Ն. էն
կը խնդրէին որ Նրադիր (1) կոչուած պարտէզը մտնելու
թոյլատուութիւն չըլլայ հասարակ ժողովրդեան, որպէս զի ազ-
նուականք հանդիստ զբօսնուն, պատասխանեց . Այն է ինչ հաս-
տատար աստիճան մարդոց հետ փայն օրհանուել ուղի, նախահասարցու
շիրիմներուն մէջ փոխուելու պէտք արեւելքէ արեւմուտք . Բայց եւս կը տիրեմ
զմարդիկ աստանց նիւտելու իրենց զիմակը . եւ նախահասարակ կը բռնեմ
զստանս ինչն աստ աստանց աստանց անունցով որ խոփանարական կամ աստ-
նահանցեղէ մը ըլլալէ զաստ արիշ արժանիք և անին :

Այրևելի ազգատոհմէ եղող անձանց գոռողութիւնը սան-
ձելու համար յիշելու է իրենց թէ ինչ պիտի ըլլան վերջա-
պէս : — Խիստ նշանաւոր է Վիոգինէսի պատասխանը՝ զոր
ըրաւ երբ Աթենացի ազնուական մը կը հարցընէր թէ ինչ
կ'ընէ գերեզմաններուն մէջ . Երբ զըրեան ոսկերացը մէջ, ըսաւ,
հօրդ ոսկերիքը կը փնտրեմ . Բայց այն և ան իտան ուսած, շիֆնուած
են իրարու հետ, որ անհնար է որոշել :

Ղշմարիտ մեծութիւնը հասարակօրէն քաղցր է և հեղա-
համբոյր . սուտ մեծութիւնը ընդհակառակն խոժոռադէմ,
անմատչելի ու արհամարհոտ . և մարդիկ առ երեսս զինքն
կը պատուեն, բայց սրտովն կ'ատեն :

Հպարտութիւնը՝ որ, ինչպէս կ'ըսէ Մասիլլօն, ազ-
նուականաց սովորական մոլորութիւնն է, պէտք է ազքատաց
մխիթարութիւնն ըլլայ : Անշքութեան մէջ ծնելոց կ'երևի

(1) Հասարակաց դրախտ ցանկայի, եղական իւր տեսակին մէջ
'ի Աեօքօլդսթատ, արուարձան Ա իենայի Գանուբի մէկ կողմոյն մէջ :

Թէ աւելի ներելի է հպարտութեամբ փրանալ, և զիրենք հաւասարել ջանալ անոնց՝ որոնցմէ այնքան ստորին են թէ ծընրնդեամբ և թէ աստիճանաւ: Բնդ հակառակն ազնուականք բնութենէ բարձրն գրուած ըլլալով, ուրիշ կերպով չեն կրնար փառաւորուիլ եթէ ոչ խոնարհելով. և եթէ իրենց համար ներելի հպարտութիւն մը կայ, դիւրամատչելի ըլլալն է:

Եթէ աղքատք յիշելու են ազնուականաց կամ թէ մեծամեծաց դէմ ունեցած պարտաւորութիւննին, ասոնք ալ բոլորովին մոռնալու են զայն: Յիրաւի պարտքերնիս է ազնուականներն պատուել, զի անոնք մեծ են մենք փոքր, ինչպէս և մենէ ստորինները զմեզ կը պատուեն. բայց այս նախապատուութիւնն, այս ակնածութիւնը տածելու, աւելցրնելու չէ զունայնամտութիւնը. ինչպէս և զարժանիքն չաւելցնելը: Մարդ մը մեծնալովն, լաւագոյն չըլլար. մանաւանդ որ աստիճանաւորին դէմ մարդոց մատուցած յարգանքը ոչ այնքան իրեն է, այլ իւր կրած տխրոսին:

Ղշմարիտ մեծութիւնը երևոյթը չսիրելը: Յովսէփ Բ. ի ամենամեծ զուարճութիւնը իւր մեծութիւնը ծածկելն էր: Եւ աս պատիւ ստանալու միջոցը քիչը փնտուելն է: Կոռոզութեան մերժուածը հեղութեան կը շնորհուի, և օրինաւորէն աւելի խնդրելովնիս, շատ անգամ օրինաւորն ալ կը կորուսանեմք:

Սնասակար է ուրեմն մեր անձնասիրութեանը միշտ մեծութեան երևոյթ մը ունենալն. զոր միայն վարած պաշտօննիս կը պահանջէ երբեմն: Բայց հպարտութիւնն և ոչ թէ պարտաւորութիւնն է որ այնքան նախանձաւոր կ'ընէ զմեզ մեր իրաւանցը: Անայք աս մասին աւելի զգայուն են, արանցմէ աւելի ունայնամիտ ըլլալովնին:

Հպարտութեան մէկ ուրիշ աղբիւրն ալ հարստութիւնն է. զի հարուստն շրջապատող ճոխութիւնը, շքեղութիւնը

իրեն մատուցուած պատիւն ու յարգանքը զինքն այն աստի-
ճան կը շփոթեն, որ ալ զինքը չճանչեր. այնուհետև վայել-
լած առատութիւնը իրեն արժանիք մը կը համարի. կը կար-
ծէ թէ ամէն մարդ իրեն պարտաւոր է. չուզեր մէկէն կա-
խումն ունենալ. այլ կը նայի որ ամէն մարդ իրմէ կախեալ ըլ-
լայ: Ար փառաւորի բարեկամաց բազմութեանը վրայ, ա-
ռանց խորհելու թէ շատերը վատ հոգիներ են, շահախորն-
դութեամբ իւր բաղդին յարած. որ բերնովն զինքը կը
շողորթորթեն, բայց սրտովն կ'ատեն:

Իսկ ետքէն հարստացածները զիրենք և իրենց ստացուած-
քը գովելու տկարութիւն մ'ալ ունին. և արդեօք ասոնցմէ
քանի՞ քանի անձինք աւելի ամաչելու են քան թէ պարծելու
իրենց հարստութեանը վրայ: Արդեօք ի՞նչ անիրաւութիւն-
ներ, ի՞նչ զրկանք չեն գործեր զանհկայ հաւաքելու ատեն:

Պատիւն ու հարստութիւնը որքան որ ըստ ինքեանց փա-
փաքելի բաներ են, տակաւին երբ զմեզ ՚ի բարեգործութիւն
չդրդեն, առաքինութեան խրախոյս չտան, դարձանիքն չպաշտ-
պանեն, այլ միայն զեղխութեան յորդոր ըլլան, հպարտու-
թիւնն տածեն, կը կորուսանեն արժէքնին: Այժմէ առաքի-
նական գործոց համար գործածուին, փառաց մէյ մէկ աղ-
բիւր կ'ըլլան. եթէ մոլութեան նուիրուին, վատանունու-
թեամբ զմեզ կը նշաւակեն: Այժմէ սրտերնիս գոռուութեամբ
փրահներու միայն ծառայեն, ծաղու և արհամարհանաց ար-
ժ. նի կ'ընեն զմեզ:

Սերեմն, բաղդը որքան որ առատաձեռնութեամբ իւր
չնորհքները զեղու վրագ, մի՛ ունայնամտիր: Հարստու-
թիւնը արդէն քեզ դէմ նախանձորդներ կը հանէ իւր շքե-
ղութեամբը. կը վայլէ՞ որ դու ալ քու սնապարծութեամբդ
ևս առաւել զանոնք գրգռես: Ի՞նչ ուրեմն համեստու-
թիւնը քու նեցուկդ ըլլայ բարեյաջողութեան մէջ, և եր-

բէք մի մուանար նախնի վիճակդ : — Պէյքըն Անգ-
ղիոյ ամենէն երևելի մարդոց մէկը , իւր արժանեացը չափ իր
համեստարարոյութեամբն ալ նշանաւոր է : Անգղիսաբեթ թա-
գուհին Անգղիոյ մէջ շրջան մը ընելով Անտիքէյլ ըսուած
տեղին երբ հասաւ , ուզեց տեսնել Պէյքընի տունը , զոր
չինել տուած էր բարձրաստիճան պաշտօնի դեռ չտիրացած :
“Շատ փոքր շիներ ես” , ըսաւ թագուհին : Ինչ համար բա-
տական մէջ է , պատասխանեց Պէյքըն . Բայց յեր Անտիքէյլ
տունիւնը զիս շատ մեծցնելովը փոքր կ'երևի :

Տիւրէն մէկ անգամ միայն յաղթուեր էր պատերազմի
մէջ : Արբ բարեկամները զինքն կը շնորհաւորէին ստացած
յաղթութեանցը վրայ , միշտ անյաղթելի ես ըսելով , կը պա-
տասխանէր . Անշուշտ հուսցած բաւական է ի Սարիէնուս յաղ-
թուել :

Գիտութիւնն ալ կը հղարտացնէ , բայց ոչ զճշմարիտ գի-
տուներ : Օրիասիկայ արդէն գիտէ թէ որքան սահմանեալ է
մարդկային գիտութիւնը և թէ իւր ստացած ծանօթութիւն-
ները որքան փոքր մասն են ուսանելիք բաներուն : Տգէտը
կամ հարեանցի ծանօթութեանց տէր անձը ունայնամիտ ,
յանդուգն կ'ըլլայ , զի չճանչեր իր տգիտութիւնը . ընդ հա-
կառակն քաջ գիտնականը չկրնար ծածկել իւր տգիտու-
թիւնը շատ նիւթոց մէջ . և ասանկով աւելի համեստարարոյ
կ'երևի : ()ր մը բաղմահմուտ Ա ռոսիոսի կ'ըսէր մէկը թէ
“Արթեմ որ գիտութեանց և գրագիտութեանց վերաբերեալ
իրաց բոլորին քաջ ծանօթութիւն ունիս” : Ալ սխալիս՝ պա-
տասխանեց Ա ռոսիոս , եւ չգիտէմ մէկ ասորդն այն բաներսան ,
զոր շատ պատանի է կը կարծեն թէ գիտեն :

Տասիէ Տիկինը , թարգմանիչ Զովմերի , նոյնպէս ե-
րևելի օրինակ մըն էր համեստութեան : Ասիկայ չճանչցողը
հասարակ կին մը կը կարծէր զինքը : Անգամ մը երևելի

Վերամանացի գիտնական մը ճանապարհորդելու ելած ըլլալով, Փարիզ եկաւ և ուզեց այց երթալ Տասիէ տիկնոջ՝ զոր իւր գործերէն կը ճանչէր։ Խօսակցութեան միջոյր Վերամանացին խնդրեց իրմէ որ անունը ու իմաստ մը գրէ իւր տետրակին մէջ (1)։ Տասիէ տեսնելով որ Եւրոպայի առաջին կարգի գիտնոց անունները հոն գրուած են, համեստութեամբ մերժեց իւր անունը անոնց անուանցը մէջ խառնել։ Իսկ Վերամանացին զինքն այնքան թախանձեց որ վերջապէս ստիպուեցաւ զիջանիլ և գրեց անունն ու Սովոկղի սա իմաստն։ Իստաթիանը տիկնոնց զարդն է։

Հայարտութեան մէկ ուրիշ աղբիւրն ալ դիմաց գեղն կամ մարմնոց բարեկազմութիւնն է. և կանայք ընդհանրապէս խիստ նախապաշարեալ են այս մասին։ Իրենց գեղեցկութեանը վրայ մեծ համարում ունենալէ զատ, տգեղն ալ կ'անարգեն. իբրև թէ գեղեցկութիւնն միայն ըլլար մարդոյս արժանիքը։ Իսկ ի՞նչ գեղեցիկ հոգիներ կը գտնուին տգեղ մարմիններու մէջ։ — Արևելին Վելիսոն այնքան տձև էր որ Սելեյնէ կ'ըսէր թէ Վելի անբանի քան թէ մարդու կը նմանի։ ()ր մը գեղեցիկ տիկին մը փողոցի մէջ զինքը դիմաւորելով, ձեռքէն բռնեց, մօտն տուն մը տարաւ և տանուտեառնը ներկայացընելով, ըսաւ. Վա ինչո՞ւս թիս. և անմիջապէս մեկնեցաւ։ Վելիսոն ապշած և թերևս ունայնամտութեամբ կարծելով թէ տիկինը իրեն պատիւ մ'ընել ուզեր է, տանուտեառնը հարցոյց պատճառը։ Վսիկայ ալ երկարատեն վարանելէ ետև իւր նկարիչ ըլլալը խոստովանելով ըսաւ. Տիկինը կ'ուզէ որ անապատին մէջ Քրիստոսի փորձութիւնը նկարեմ. Ժամո՞ւզաք եղաւ որ կը վիճէին, թէ անպատեայն ի՞նչ

(1) Այսպիսի ճանապարհորդք ընդհանրապէս տետրակ մը հետերնին կը պատուեն գիտնոց անուանքն ժողովելու, իբր թէ իրենց պատիւ մ'ընելու համար։

կերպարանով պիտի ներկայացուի : Օ՛րհն հոս բերաս ահա որ յեր
նմանաւ ինչ որ ասուինք : Այսու ամենայնիւ այս տղեղ մարդը
Առաւելիկոս յ'Ա' ի դարուն ամենէն գեղեցիկ հոգիներէն
մէկն էր :

Յետին մէջ ընկած անդամանդը իր արժէքը կը կորսըն-
ցընէ : Այլ հովէն մինչև յերկինս վերայած փոշին յար-
գելի կրնայ ըլլալ : — Առաքինութեամբ և զինուորական
տաղանդութեամբ զարդարուած՝ բայց տղեղ ու փոքրամարմին
զօրավար մը, Քանատայի (1) կառավարիչ խրկուելով,
Քրօքէղները (2), պատգամաւոր խրկեցին որ Վաղղիացւոց
հետըրած դաշնագրութիւննին նորոգեն : Ասոնք հասան
Քուէպէք և կառավարչին ներկայացան : Պատգամաւորաց
Իշխաւորը ճառ մը պատրաստեր էր, որուն մէջ իրենց լեզուին
բոլոր զարդերն ու հարստութիւնը գործածելով, կառա-
վարչին մարմնոյն կորովութիւնը, հասակի բարձրութիւնն
և գեղեցիկ դէմքը, (իրենց մէջ ամենէն աւելի գովութեան
արժանի սեպուած բաներ,) կը գովէր : Բայց զարմա-
ցաւ մնաց, երբ իր երևակայածէն բոլորովին տարբեր գը-
տաւ կառավարչին կազմուածքը և տեսնելով որ պատ-
րաստած ճառը ամենեին չյարմարէր իրեն, առանց շփո-
թելու ըսաւ. «Իսկուհի ի՞նչ որ ասանկապէս աս, որ Վաղ-
ղիացոց մէջ ինչպէս որքան որքան յարմար զգեց հոս
կը իրիկ :

Փոքր անօթները շատ անգամ ամենէն թանկագին ու
պատուական բաներ պարունակողներն են : — Քոնտէ
տեղակալ հրամանատարէն զինուոր մը խնդրեց որ թշնա-

(1) Աշխարհ Հիւսիսային Ամերիկայ, այժմ ընդ իշխանութեամբ
Անգղիացւոց, յորում է Քուէպէք քաղաք անառիկ, Ճիպիլդեո
Ամերիկայ :

(2) Ազգ վայրենեաց Ամերիկայ :

մեաց գրից վրայով ճիշտ ծանօթութիւն ստանալու համար
խրկէ : Տեղակալ հրամանատարն ալ իրեն զինուոր մը ներ-
կայացոյց , որ երևոյթով բան մը չէր արժեր : Քոնտէ
մերժեց զայս և ուրիշ մը խնդրեց : Տեղակալը երկու բարե-
տես զինուոր կոչեց որ ընդունուեցան , բայց խնդրուած
գործն չկրցին կատարել : Հարկ եղաւ կրկին զառաջինն
կոչել , որ կատարելապէս գոհ ընելով զհրամանատարը ,
Քոնտէ խոստացաւ իրեն կատարել ինչ որ խնդրելու ըլլայ :
Չինուորը անմիջապէս իր արձակուիլը խնդրեց : Հրա-
մանատարը զարմանալով , գնդա յետութիւն շնորհելու
յօժարութիւնն յայտնեց . Ա. սեմախայլ Տէր , պատասխանեց
զինուորը , որո՞ւ զիս անարգեցի՞ք , ես այսուհետեւ չեմ ծառայ-
ցեր խաբարորդին : Քոնտէ ստիպուեցաւ խնդրքը կատարել ,
թէպէտ և մեծ դժկամակութեամբ :

Իր անձը գողելը միշտ վնասակար բան է . պարծենցողը
կը կարծէ թէ յարգանաց հունտեր կը սերմանէ , բայց ա-
նարգանք կը հնձէ :

Սենայնամիտներուն ամենամեծ զուարճութիւնը , ոչ
այնքան ուրիշէն գոլուիլն է , այլ տեսնել որ ուրիշը ի-
րենց ականջ կը դնէ , որ շնորհքը մարդ չախորժիր իրենց
ընել :

Մնայիտան լրագրապետ մը ընկերութեան մը մէջ կ'ըսէր
թէ "Վշտ ամենուն փառք կը բաշխեմ" : Ք'ըմարիտ է , պատաս-
խանեց մտիկ ընողներէն մէկը , այնքան արարչականութեամբ կը
բաշխես , որ հաղի- թէ մաս մը կը մնայ թեղ :

Համեստութիւնը՝ որ միշտ անբաժանելի է ճշմարիտ
արժանիքէ , 'ի փառս կ'առաջնորդէ . իսկ գոռոզութիւնը
'ի խոնարհութիւն : Մէնեկրատէս՝ Սիրակուզացի բժիշկը ,
որ իր առողջացուցած հիւանդներէն մէկ քանին միշտ իր
ետեւէն կը պատգընէր , գոռոզութեամբ զինքն Մրամազդ

կոչելով, անգամ մը նամակ գրեց Մեծին Աղեքսանդրի
 Տօրն Փիլիպպոսի սա վերնագրով. Մենեհրատեա Արամազդ
 ապա Ռաֆայոսն Փիլիպպոս ողջոյն: Փիլիպպոս ալ իր ունայն
 ամտութիւնը վիրաւորելու համար պատասխանեց.
 Փիլիպպոս ապա Մենեհրատեա ողջոյն և իմաստաւեիան:

Ք Լ Ո Ւ Խ Ի Ք

ՏԱՐ ՊԱԿՍՈՒԹԵԱՆՑ ՈՒՐԻՇԻՆ

ԻՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէջ, ուր ապրելու համար սահմանուած
 եմք, ամէն տեսակ բերմանց և բնաւորութեան տէր մար-
 դիկ կը գտնուին. ուստի ջանալու եմք անոնց համակեր-
 պիլ, զի անհնար է որ անոնք ամէնքն մեզ համակերպին:

Արանի՛ անոր որուն թերութիւնները սակաւաթիւ են.
 զի չուրացուիր որ աշխարհիս մէջ առանց պակսութեան
 մարդ մը գտնուի. ու յիմար է այն որ զինքն կատար-
 եալ կը կարծէ: Ալ եթէ իւրաքանչիւր անձ իւր տկարու-
 թիւններն ունի, ուրեմն ինչո՞ւ համար իրարու պիտի
 չկարեկցիմք:

Վախնի իմաստասիրաց մէկը յաճախակի սա խրատը
 կը կրկնէր իւր աշակերտացը. Մեշտ Երողատեա եղիք ուրիշին
 և ոչ երբէք անյիշ: Աթէ սրտի մտօք մեր անձին ուսմա-
 նը պարապիմք, պիտի տեսնեմք թէ որքան բաղմաթիւ
 են մեր թերութիւնները. և ասիկայ անշուշտ յորդոր պի-
 տի ըլլայ մեզ դիւրաւ ուրիշին պակսութեանցը ներելու,
 եթէ պարտաւորութիւննիս զանոնք ուղղելու չստիպէ:

Իայց անձնասիրութիւնը այնքան դորացած է մարդոյս

սրտին մէջ որ թոյլ չտար ուրիշէն գոհ ըլլալ . ամենէն անտանելի բարուց տէր անձինքն անգամ չեն ուղեր ուրիշին թերութեանցը տանիլ :

Իմաստութիւնը պէտք է յայտնէ մեզ մեր թերութիւնները , և մարդասիրութիւնը ծածկելու է ուրիշին պակասութիւնները : Այժմէ անտանելի է ուրիշին թերութիւնները տեսնել , տեսնեմք զանոնք , անոնցմէ խորշելու համար , և յիշելով մեր տկարութիւնները , ուսնիմք ներողամիտ ըլլալ :

Արբ այնպիսի անձանց մօտն կը դանուխ , որ անհաճոյ են քեզ , ուշի ուշով ծածկելու ես զգացումդ . ապա թէ ոչ մարդասիրութեան ու քաղաքավարութեան դէմ կը մեղանչես : Միրէ՛ բարեկամդ ու բարեբարոյ անձինքն . բայց անխելք՝ արտառոց մարդոց դէմ ալ անհամբերութիւն մի՛ ցուցներ :

Մարմնոց տձևութեան վրայ ծիծաղելը եթէ իրաւամբ փոքրոգիութիւն կը համարուի , ինչո՞ւ համար բարոյական տձևութիւններն ալ նոյն աչօք պիտի չնկատեմք : Մի թէ հոգւոյն անբանաւորութիւնը , բարուց այլանդակութիւնը խեղութեան չափ համակրութեան չարժանանար : Արունգն երկայնելը իրաւի՛ անհնար է , բայց հոգւոյն թերութիւններն ալ ուղղելը խիստ դժուարին :

Ներողամտութիւնը , համակրութիւնը բացարձակ հարկաւորութիւն մ՛ է մարդոց , մանաւանդ ծնողաց ու ազգականաց հետ կենակցելու համար :

Սոկրատի կիներ խիստ այլանդակ բարուց տէր անձ մ էր . բայց ինքը զարմանալի համբերութեամբ կը տանէր անոր անհնարին խեռութեանցը : ()ը մը երբ ասիկայ ամուսնոյն դէմ ամէն տեսակ անիրաւ խօսքեր ընելէն վերջը դոյլ մը ջուր ալ գլուխէն ՚ի վար վաթեց իմաս-

տասէրը առանց վճարելու ըսաւ . Անշուշտ այսինքն զբար-
 քութեանն էստեալ արիւնքի անշքեալ :

Անանց գլխաւորապէս հարկաւոր է քաղցրաբարոյու-
 թիւնն ու համբերութիւնը արանց խեղութեանցը տանե-
 լու : Փափկասիրտ , առաքինի ու բանաւոր կին մը՝ որ ա-
 մէն բան ջանք կ'ընէ զամուսինն չբարկացնելու , և ամե-
 նէն գեղեցիկ գործոց մէջ անգամ գովեստ մը չլսեր , իր
 դժբաղդութիւնը չյայտներ օտարին , այլ միշտ զանձը
 գոհ կը ցուցնէ . և եթէ ամուսնոյն մէկ թերութիւնը ե-
 ղեան ելնէ , գանգատելու տեղ , ներել կը ջանայ : Այսպի-
 սի կին մը այնքան մեծահոգի ու սիրուն էակ մ' է , որ
 ամուսինը բոլորովին անզգայ ու բանաւորութենէ զուրկ
 ըլլալու է , որ այսքան առաքինութենէ չյաղթուի :

Շնորհաց պակասութեանցը տանիլն ալ անհրաժեշտ պար-
 տաւորութիւն մ' է , մինչև անգամ եթէ անտանելի ե-
 ղեին : Յոյն մը իւր որդին չարաչար կը պախարակէր ըսե-
 սելով թէ բան մը չէ ուսած . Սենտի (Վ) դպրոցը : Արդին՝
 որ առանց տրտնջելու միտ կը դնէր , պատասխանեց . Հայր
 թ' բառական օգտած չէ՞ , հաճե՞րաւնեամբ յեր բաժնեկրօն
 թոք դ'ել ունեւա՞լ :

Անգամ մը ծեր ու տգեղ կին մը մանկամարդ տիկնոջ
 մը պէս զարդարուած ընկերութեան մը մէջ բազմեր էր :

(1) Հիմնադիր Ստոյիկեանց աղանդոյն , ծնեալ իբր [362 ամօր
 նախ քան զՔրիստոս 'ի Աիտիա քաղաք] Աիպրոս կղզւոյ : 'Ի սկըզ-
 բան վաճառականութեան հետեւեցաւ , բայց յետոյ թողով
 զայն՝ Արատէս , Ստիլպոն , Քսենոկրատէս եւ Պողեմոն իմաստա-
 սիրաց աշակերտեցաւ : Աերջը առանձին վարժարան մը բացաւ
 իմաստասիրութեան Ստոյա կոչուած խոնդին , որով իւր հետեւ-
 ողքն Ստոյիկեան ըսուեցան : Գրեթէ յիսուն տարի դասատու-
 ութիւն ընելէն ետքը մեռաւ 264 տարի Քրիստոսէ առաջ , մե-
 ծապէս պատուեալ բոլոր Աթենացիներէն :

Անճանօթ մը զայս տեսնելով իւր մօտն գտնուող պատանւոյն դարձաւ, ու չփիտնալով թէ անոր որդին է, ըսաւ. «Օհ ճաղելի չէ՞ սա կնոջն հագուստը»: Այնպէս ինչպիսի խոսք, պատասխանեց պատանին, եթէ մայրս ըլլաւ:

Այսպիսի վարմունք մը շատ կը քաղցրացնէ մարդկային կեանքը. ուրիշին թերութեանցը վրայ մեր ցուցած ներողամտութիւնը անշուշտ յորդոր ըլլալով ուրիշին՝ մեր պակասութեանցը տանելու, որով սէրը կ'աճի և որով պարտաւորութիւններն աւելի դիւրաւ կը կատարուին:

Գ Լ Ո Ւ Թ Ի Ե

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԲԱՏ

ԿՕՈՒ խօսքերն ու անախորժ եղանակները ոչ երբեք կ'ուղղեն զոր. մանաւանդ թէ ճշմարտութեան դէմ կը գրգռեն: Այի յանդիմաներ երբ մէկուն յանցաւոր ըլլալը ստոյգ չես դիտեր. երկբայութեան մէջ սոցիալութիւն ցուցնելը ամենէն ապահով միջոցն է: Օյի յանիրաւի յանդիմանելը կը վիրաւորէ մարդս. և ամենէն իրաւացի յանդիմանութիւններն անգամ ապարդիւն կ'ընէ:

Անուղղակի և գովասանութեամբ համեմատ յանդիմանութիւնները ամենէն աւելի հեշտալուր կ'ըլլան. զի ան ատեն սրտից հետ կը խօսիմք:

Հատերը կը կարծեն թէ պոռալով, կանչելով, դառն խօսքեր ընելով իրենցմէ կախալ անձիները, ինչպէս են ծառայները, հաւատարիմ կրնան պահել իրենց պարտաւորութեանց մէջ: Բայց այս ընթացքը զանոնք կեղծաւոր ընելու միայն կը ծառայէ: Օգոն անձը ո՛չ կ'անի-

բաւէ, ոչ ալ կը վերաւորէ իւր ծառայից սիրտը, ալ կը յանդիմանէ զանոնք հաստատամտութեամբ առանց դպչելու անոնց անձնասիրութեանը: Ար կշտամբէ զանոնք երբ կամայ թերութիւն մը գործեն. բայց ներողամիտ կ'ըլլայ, երբ իմանայ թէ ակամայ գործեր են: Աւ միշտ կը ջանայ ուղղել զյանցաւորը և ոչ թէ վշտացնել: Ասանկով ծառայք ալ իրեն շնորհասպարտ ըլլալով, ևս առաւել զինքն կը սիրեն ու կը պատուեն:

Տիւրէն ամառ օր մը ձերմակեղէններովն իւր սենեակը պատուհանին մօտ նստեր էր: Գառային մէկը նոյն սենեակը մտնելով, կարծեց թէ խոհագործն է նստողը. ուստի յուշիկ յուշիկ քայլելով ետեւն իրեն մերձեցաւ և ուժգնութեամբ ապտակ մը կպցոյց: Տիւրէն ստիպուեցաւ ետին դառնալ: Գառայն իւր տիրոջ դէմքը տեսնելուն, սարսափեցաւ, ոտքն ինկաւ, ըսելով. «Վէորքն կարծեցի»: Մինչև անգամ է՛նէ Վեորքն ըլլար, պատասխանեց Տիւրէն, այսպէս ուժգին շարժելով. «Ե՛րբ»: Այս միայն եղաւ ըրած յանդիմանութիւնը, և այսպէս կը վարուէր ամենուն հետ. ուստի և իրեն ծառայողքն ալ զինքը Աստուծոյ պէս կը պաշտէին:

Խստութիւնը որքան որ ատելի կ'ընէ զձեզ, այնքան ալ արհամարհելի, անպատիւ կ'ընէ չափազանց քաղցրութիւնը: Քաղցրաբարոյ եղիր, բայց հաստատամտութիւնն ալ մի մոռանար: Մոլութիւնն չյանդիմանելը, երբ մեր պարտաւորութիւնն ըլլայ յանդիմանել, ըստ ինքեան մոլութիւն մ'է: Չարութեան արգելք չըլլալը, երբ անոր դէմն առնելու իրաւունք և կարողութիւն ունիմք, անոր մասնակից ըլլալ ըսել է:

Չնողք այս մասին յաճախ կը մեղանչեն: Իրենց չափազանց սիրովը կը կեղծեն զաւակաց թերութեանցը վը-

բայ և դանձիք չտեսնելու համար երեսնին միւս կողմը
կրդարձնեն : Այլ եթէ երբեմն յանդիմանելու ալ ստիպ-
ուին , այնքան տկարութեամբ կը վարուին որ ևս առա-
ւել համարձակութիւն տուած կ'ըլլան զաւկնուն մոլու-
թեանց մէջ յաճախելու :

Այժմ պարագաները չեն ստիպեր զքեզ մէկն հրա-
պարակաւ յանդիմանելու , նայէ որ առանձինն ընես . զի
խոնարհեցուցիչ խօսքերը՝ որքան թեթեւ կերպով մեր ու-
նայնամտութեանը դպչին , այնքան աւելի ընդունելի կ'ըլ-
լան : Էթանոսաց ամենէն իմաստունքն անգամ ասոր ի-
րաւունք տուին : Անգամ մը Սոկրատ իւր մէկ բարեկամը
հրապարակաւ յանդիմանելով , Պղատոն ըսաւ թէ առան-
ձինն ընելու էր : *Πρῶτον ἄνθρωπος ἴσθι* , պատասխանեց Սոկ-
րատ , *ἔπειτα ἄνθρωπος* անիս , այդ իբրասը որաւ էի :

Այժմ պարտաւորած չես զուրիշն յանդիմանելու , մի
շուտով յանդիմաներ նման այն անխոհեմ անձանց , որ
իրենք հանգիստ չկրնալով կենալ , ամէնուն խաղաղու-
թիւնը կը վրդովեն :

Փոքր կամ անտարբեր իրաց մէջ միշտ իրարուներո-
ղամիտ ըլլալու եմք . զի մարդիկ որքան որ բերնով կը
խոստովանին թէ ամենամեծ զուարճութիւն կը զգան , երբ
մէկը թերութիւններնին իրենց առջին դնէ , սաստիկ կը վի-
րաւորին եթէ այնպէս ընող մը ըլլայ : Պակսութիւններ
ըր չտեսնելովն է որ մարդ անոնց զուարճութիւն կրնայ
պատճառել : Այժմ այս ինչ մէկուն ձիրքերն կամ ար-
ժանիքը գովաբանես , առաքինութիւնը հռչակես , կար-
ծիքն ընդունիս , պակսութեանցը ներես , տկարութիւններ
ըր չտեսնել ձեացնես , ամենասիրելի բարեկամ կը համար-
ուիս , ընդ հակառակն եթէ տկարութեանցը , կրիցն դըպ-
չիս , ստոյգ և ստոյգ անհաճոյ կ'ըլլաս :

Այսուամենայնիւ բարեկամութեան գլխաւոր պարտաւորութեանց մէկը բարեկամին թերութիւնները իրեն ճանչցնելն է, որպէս զի զգոյշ կենայ անոնցմէ : Սակայն անկեղծութիւնը որ բարեկամութեան հոգին ըլլալու է, շատ անգամ անոր կործանումը կ'ըլլայ : Բարեկամ կոչուած անձանց շատերը դժուարաւ կ'ընդունին յանդիմանութիւնն և երկու երեք անգամ ականջ դնելէ ետև անանկ ցուրտ վարմունք մը կ'ունենան, որ լռել կամ կեղծել հարկ կ'ըլլայ : Տակաւին յանդիմանող թշնամին քան շողոքորդ բարեկամը աւելի օգտակար է մեզ . զի առաջինը միշտ ճշմարտութիւնը կը խօսի, երկրորդը ոչ երբէք :

Արևելին շեղվեալիս (1) Պանտօ անուն ծեր գրագիր մը ունէր, որ մաղասային ու անհանգիստ բնաւորութեան տէր անձ մ'էր : Ասիկայ շեղվեալիս տղայութիւնը տեսած ըլլալով, զինքն վարժապետի տեղ դրեր էր : շեղվեալիս ալ շատ անգամ համբերութեամբ իրեն միտ կը դնէր, և երբեմն կնոջը կ'ըսէր . « Դուք է որ ես բոլոր այս պահանջներու տէրն ըլլամ . անտարակոյս ոչ, բայց և անշուշտ թերութիւններ ալ ունիմ որոնց վրայ ո՛վ պիտի խօսէր, եթէ Պանտօն ըլլալէ » :

(1) Աղոյթիս Անդրիան շեղվեալիս ծնաւ 'ի Փարիզ 1715 ին, եւ դաստիարակեցաւ մեծին Լուտովիկոսի վարժարանը : Իր հոյակապ ձիրքերը շուտ երեւան ելնելով, իր դարուն բոլոր երեւելի գրագիտաց ծանօթացաւ : Մէկ քանի տարի շահաւէտ բարձր պաշտօն մը վարելէն ետև առանձնացաւ բոլորովին գրականութեան պարապելու մտօք : 1758 ին հրատարակեց Իմացականութեան վրայ գործ մը, որուն դէմ զինելով բոլոր եկեղեցականք եւ խորհրդարանը, դատապարտեցին զգործն, եւ զհեղինակն սախեցին հերքել զայն : 1764 եւ 1765 ին Անգղիա եւ Բրուսիա ճանապարհորդելէն վերջը, դարձաւ իր հայրենիքը եւ գրականական ու մարդասիրական գրադմանց պարապելով, մեռաւ 1771 ին :

Միրով ու յօժարութեամբ ընդունէ յանդիմանու-
թիւնը : Աթէ դէմքիդ վրայ բիծ մը գտնուի, որ ծիծաղելի
ընէ դքեղ, չե՞ս փափաքիր զայն իմանալու : Ապա ուրե-
մըն ո՞րքան շնորհակալ ըլլալու է հոգւոյդ բիծերը քեզ
ճանչել տուողին : Որ սիրէ զխրատ՝ կ'ըսէ իմաստունը, սիրէ
գիտաստութիւնն . եւ որ ստեաց զյանդիմանութիւն՝ անօրօք է :

Գ Լ Ո Ւ Խ Թ Զ

ԱՆԿԵՂԾ ԳՈՎԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈՂՈՔՈՐԴՈՒԹԻՒՆ

Հ ՈՂՈՔՈՐԴՆ կը հիանայ, կը սքանչանայ, բայց Նշար-
տութիւնը, կ'ըսէ Տէքուօ, «ժգնութիւն չունի» : Անկեղծ է
ուրեմն այն մարդը որ պարզապէս իր խորհուրդը կամ
իր զգացումներն կը յայտնէ, և կասկածելի՝ մեծ մակդիր-
ներ գործածողն :

Սակաւք գիտնն արդարացի գովեստ մ' ընել . զի հը-
պարտը իւր անձը միայն կը գովէ ու կ'անարգուի . ունայ-
նամիտը գովուելու համար միայն կը գովէ և կ'արհամար-
հի : Մարդատեացը ամենեին չգովեր . զի գոհ չէ մէկէն,
և ոչ որ գոհ է իրմէ : Իմաստունն այսու ամենայնիւ կը
գովէ ինչ որ արժանի է գովութեան :

Այելչահիւս գովասանութիւնը պատիւ կ'ընէ թէ գո-
վողին և թէ գովելոյն : Մեծն Քոնտէ Սէնէֆի յաղ-
թութիւնը ստանալէ ետև գնաց զՂուտովիկոս ԺՂ ող-
ջունելու : Արդ տեսնելով որ թագաւորը սանդուղիսին
գլուխը կը սպասէ և իրեն թեկն բռնել կ'ուզէ, կաթ-
ուածէ սաստիկ տանջուելուն համար, ըսաւ . «Քաջա-

րանց Տէր, կը ներէք, ձեր Ա Եհափառութեան սպասել տուի : Ա՛ն շարապէ՛, պատասխանեց թագաւորը, յեզէ պէտք տալիս ինքե՛րով թե՛րանաւորեալ անց Տէ, չկրնար արագութեամբ լինիմանս :

Գովեստն ան ատեն արդարացի է, երբ կամ արժանեաց և կամ առաքինութեան կ'ազդուին : Տէ Ա իլար մարաջախտը լսելով որ հաղարապետին մէկը իւր բարեկամին կ'ըսէր, Ա՛նքա՛ն Ա իլարի հետ կերակրելու, քաղցրութեամբ խրատեց . Յանուն աստիճանիս չէ թէ արժանեացս, ըսէ՛, Պարոն Ա իլարի հետ : Ա չեմա՞հայլ Տէր, անմիջապէս պատասխանեց հաղարապետը, ինչպէս որ չլսուի Պարոն Անար, նոյնպէս ալ կարծեցի թէ պէտք չէ ըսել Պարոն որ Ա իլար :

Իրաւացի գովեստը կը քաջալերէ զարժանիքն, զտաղանդն ու զառաքինութիւնը . և չուրացուիր որ խղճի վըկայութենէն ետեւ այս կեանքիս մէջ ամենէն արժանաւոր ու ամենէն քաղցր վարձատրութիւնն է ասիկայ : Ա՛նք է ուրեմն խրախուսելու համար գովել զպատանիները . բայց չափաւորութեամբ, որ չհպարտանան . գովեստը գինւոյ նման կը կազդուրէ, երբ չգինովցնէ :

Չափազանց գովեստը անիրաւութիւն մ'է գովաբանին, և ամօթ ու նախատինք ընդունողին : Ե ողորորդ անձ մը Աղեքսանդրի քաջագործութեանց պատմութիւնը, զոր ինքն գրեր էր, կը կարդար այս աշխարհակալին առջին : Արբ հասաւ այն միջոցին՝ ուր փիղերու պատերազմը կը նկարագրէր ու կ'ըսէր թէ Աղեքսանդր անոնց մէկը մէկ հարուածով սպաննեց, այնքան զայրացաւ որ գիրքը ձեռքէն յափշտակելով գետը նետեց, ուստի կ'անցնէր, և սպառնացաւ հեղինակին՝ որ զինքն ալ գետը կը նետէ, եթէ անգամ մ' ալ այնպիսի բաներ գրէ :

Սուտ և մեծաբան գովեստները ունայնամիտ մարդոց միայն հաճելի են . հասարակ ու ստորին կարգի գովասա-

նութիւններն ալ տխմարաց : — Զենրիկոս Պ. Քամպրէի
օգնութեան գնալու ատեն սաստիկ յոգնելով, Միէնէն
անցաւ : Իւր գալուստը շնորհաւորելու եկող ատենաբան
մը խօսք սկսելով սա բառերով՝ Մեծամեծ, ամենաբարի, օ-
ճեռաւ. «Եւելցու, ըսաւ թագաւորը և ամենայնօրն առ» :

Մի վստահիր զքեզ յաճախ գովողին. զի սակաւք կ'ու-
զեն գովել. և կը գովեն շահախնդրութենէ շարժեալ : Եւ
թէպէտ շողոքորթութիւնը ստախօսութեան կամ շահա-
խնդրութեան դուստրն է, տակաւին միշտ սիրալիր ընդու-
նելութիւն մը կը գտնէ, մանաւանդ երբ ճարպիկութեամբ
հիւսուի : Ամպիսէս Աիւրոսի որդին օր մը խնճոյք մ'ը-
նելով իւր պալատականաց, երբ բազմականները զինքն իւր
հօրմէն մեր կը բարձրացնէին : Արևսոս Վիւգիոյ թագա-
ւորը, շողոքորդութեան աւելի սիրուն կերպարանք մը տա-
լու համար, երբ կարգն իրեն եկաւ խօսելու, ըսաւ թէ
ունայն բան է զԱմպիսէս Աիւրոսէ գերազանց դասել :
Բազմականք բոլորն ալ զարմացան մնացին և Ամպիսէս
զայրացաւ. բայց ճարպիկ շողոքորդը շուտ մը ևելցոյց.
Արորին է Ամպիսէս, զի դեռ իւր հօրը Աիւրոսին պէս որդի
ըլ ծնած չէ, որ զինքն գերազանցի :

Ֆ Լ Ո Ւ Խ Թ Ի

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԻՆՁ տեսակ ընկերութեանց մէջ յաճախես, դու ալ նոյն տեսակ մարդ մը կ'ըլլաս: Աթէ առաքինի անձանց հետ ընկերանաս, դու ալ առաքինի մէկն կ'ըլլաս: Աթէ արժանաւոր մարդոց հետ կապակցիս, դու ևս արժանաւոր անձ մը կը ձեանաս: ()րինակի չափ աղդու, ճարտասան բան չկայ աշխարհիս վրայ: Ռաֆայէլի և Միքէլանճելօի հոյակապ դործերն տեսնելով կը վառի երիտասարդ պատկերահանին սիրտը, և կարծես թէ իւր ձիրքերն ալ կը ծաւալին:

Արթեալ՝ քաղաքավար մարդոց հետ տեսնուողը ինքն ալ քաղաքավարութիւն կ'ուսնի, մտացի և գիտուն անձանց մօտն մարդս ինքն ալ իր միտքը գիտութեամբ կը հարստացրնէ: Քրանչիակոս Ա. որ Վաղղիոյ մէջ գեղեցիկ դրարութեանց պաշտպանն եղաւ, մեզ իբր օրինակ կրնայ ծառայել: Ասիկայ շատ բան գիտէր, առանց ընելու ուսման ընթացք մը. զի անկողնէն ելնելու, կերակրոյ, պառկելու և բոլոր պարագայ միջոցն միշտ գիտնոց հետ կը խօսակցէր:

Տգէտները մեզ բան մը չեն կրնար ուսուցանել: Ինտիր ճաշակ չունեցողները այլոցն ալ կ'ապականեն: Պիղծ խօսքեր ընողները երեւակայութիւնը կ'աղտեղեն, բիրտ մարդիկն զմեզ ևս կը վայրենացնեն:

Արիտասարդք, եթէ կը ցանկայք արժանաւոր անձինք ըլլալ, շուտով ընկերացէք քաղաքավար, գիտուն, փա-

փուկ ճաշակի և ուղիղ դատողութեան տէր անձանց հետ: Յաճախեցէք բարեկիրթ տներն, ուր ամէն բան պարկեշտութիւն կրներշնէ. յիշելով միանգամայն որ այսպիսի տրներն ընդունուելու համար համեստ, զդաստ ու քաղցրաբարոյ ըլլալու էք: Յաճախեցէք պատուաւոր անձանց մօտն, յարգեցէք զանոնք և ջանացէք որ դուք ալ անոնց համարումն ստանայք: Ապուրեցէք սերտ կապերով այնպիսեաց հետ, զի սոցոք է շահը: Ասոնց ընկերութիւնը կ'ազնուացնէ ձեր եղանակները, կը ճոխացնէ ծանօթութիւններնիդ, միտքերնիդ ու ճաշակնիդ: Այնուհետև ինչ որ մեծութենէ, գեղեցկութենէ, փափկութենէ և ազնուութենէ զուրկ է, անախորժ ու ատելի կ'ըլլայ ձեզ: Անչ մեծ տարբերութիւն կ'զգացուի ընտիր անձանց, և մոլի, անմիտ ու լիրբ մարդոց ընկերութեանը մէջ: Առաջիններուն մօտն միշտ կը շահիմք, ետքիններուն մօտն միշտ կը կորուսանեմք: Առաջինները մեր բարքն կ'ազնուացնեն ու պատուաւոր կ'ընեն զմեզ: Ատքինները զայն կ'ապականեն ու զմեզ անպատիւ կ'ընեն: Ար ընդ իմաստասոյն Գնաց, կ'ըսէ Սողոմոն, իմաստուն եղիցի և բարեկամս յիմարաց և:

Ալ առաքինի ծնողք որ կը բաղձայք ձեր որդեաց սիրտը ներշնչած առաքինութիւննիդ անկորուստ պահել, ըզգուշացուցէք զանոնք չար օրինակաց ազդեցութենէն: Ասակի յեղափոխութենէն ազդեալ և ապականիչ օրինակէ փորձուած պատանին դժուարաւ աննկուն կը մնայ, եթէ իրեն օգնութեան չփութայք: Օրացուցէք զինքն ուրեմն իմաստուն խրատներով, և մի վերջացնէք խրատնիդ մինչև որ բնաւորութիւնն բոլորովին հաստատուի: Յոյց տուէք իրեն դիւաւորապէս թէ որպիսի անձանց ընկերութենէն խոյս տալու է: Ասէք իրեն սրտաշարժ եղանակաւ մը. «Արգեակ՝ անխոնջ աշխատութեան՝ առաքինութեան պատ-

ուսական հունտերը սերմանեցի մաքիդ մէջ, և զանոնք բերմանաւորել ջանացի շարունակ: Աւ քու երջանիկ բերմունքդ տեսնելով, իմ սէրս ալ օր ըստ օրէ կ'լեւնայ: Տայց որքան սէրս կ'աճի, այնքան ալ երկիւղս կը մեծնայ, որ չըլլայ թէ մնասակար բարեկամութիւններ կազմես:

Օգուշացիք, որդեակ, գլխաւորապէս խաբւրբայներէն, որ հասարակաց ծախիւքը կ'ապրին, և մեծապէս կ'ուրախանան երբ նոր միջոց մը գտնեն զաշխատաւորն ու վաճառականը խաբելու. առանց բան մը վճարելու կ'ուտեն կը խմեն. փոխ կ'առնուն և երբէք չեն վճարեր. պարզամտին ձեռքն եղածը կը յափշտակեն. և երևելի ընտանիքէ եղող զաւակաց դրամն ձեռուրնէն կը կողոպտեն:

Օգուշացիք դատարկաշրջիկ երիտասարդներէն, որ ամենամեծ զուարճութիւն կ'զգան ամենազազիր գործոց մէջ, և ընտանիքներն անպատիւ ընելն իրենց փառք կը համարին:

Օգուշացիք նոյն աստիճան ատելութեամբ այն ցոփակեաց ծերերէն, որոնց մէկ ոտքն գերեզմանն ըլլալով ալ, դեռ կը ջանան չար խորհուրդներ տալ պատանեաց, իբրև թէ անառակութիւնն յաւերժացնել ուղելով:

Օգուշացիք ունայնամիտ, ժպիրհ երիտասարդներէն, որոց ամէն մէկ շարժումը զուրիշն 'ի ծաղր կը գրգռեն:

Օգուշացիք նմանապէս իմաստականներէն որ կարծես թէ զուրիշն հակասելու, անոր սխալը երևան հանելու համար միայն բերաննին կը բանան, որպէս զի տգիտաց առջին իրենց գերազանցութիւնը յայտնի ընեն:

Ա երջապէս, որդեակ, զգուշացիք այնպիսեաց ընկերութենէն, որ կ'ուզեն ուրիշին միտքը գայթակղելուն, սխալ կարծիքներ, մտարական վարդապետութիւններ քարոզելով:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ը

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԲԱՐԵԿԱՄԱՑ

Եթէ հնար է, նայէ որ ամենուն սիրելի ըլլաս, բայց մի ամէն մարդ քեզ բարեկամ համարիր: Օ՛րի ամբարշտը՝ հայհոյիչն ու անառակը մնասակար բարեկամներ են. ունայնամիտն ու շահախնդիրը՝ սուտ. բժախնդիրը՝ տաղտկալի, քսուն ու խեղկատակը՝ վտանգաւոր. գոռոզամիտն ու խստասիրտը անտանելի: Մաղասային անձանց ալ շատ մի վստահիր, զի ասոնց զգացողութիւնը այնքան քիչ է որ հազիւ թէ իրենց կը բաւէ: Բարեկամութեան մասին աշխոյժ անձինքն ամենէն նախապատիւն են, զի ընդհանրապէս բարեսիրտ կ'ըլլան:

Մի համարիր 'ի թիւս բարեկամաց զպատառաբոյժը, որ ընդհանրապէս ընդարձակ ստամոքս կ'ունենայ, բայց ոչ երբէք մեծ սիրտ մը: Այսպիսին սեղանը բազմած ատեն ջերմ բարեկամութիւն կը խոստովանի, և քու ծախիւքդ զուարճացած ատեն ամէն բան կը խոստանայ, բայց վերջը ամենևին գ.քեզ չ'իշեր:

Նոյնպէս մի ընդունիր իբր բարեկամ այնպիսիները՝ որ բարեկամութիւնը անկարգութեանց մէջ իրարու օգնել կը կարծեն, ամէն բան կ'արդարացնեն, ամէն մոլութիւն կը գովեն, չար խրատներ կ'ուտան:

Բարեկամութիւնը, քաղցր միաւորութիւն սրտից, պատուոյ և առաքինութեան վրայ չհիմնուած, ճշմարիտ ու հաստատ չկրնար ըլլալ: Աւստի առաքինի անձանցմէ միայն քեզ բարեկամ ընտրելու ես. հոգ տանելով միան-

գամայն որ համանման բնաւորութեան տէր ըլլայ բարեկամդ . զի ան ատեն համակրութիւնը ձեր մէջ կը տիրէ . և միայն համակրութեամբ է որ բարեկամութիւնը տեւողական կ'ըլլայ . զի ասիկայ կը մերձեցնէ սիրտերը և բարեկամութեան յանկուցներովն զանոնք սերտիւ իրար կը կապէ :

Եւ ամէն ճշմարիտ բարեկամութեան շաւի օգտակար ի՞նչ կայ աշխարհիս վրայ : Բազում կարելի է որ զմեզ բարձրացրնէ , անթիւ կարօտութիւններէ ազատ կացնէ , բայց չկրնար երբէք հաւատարիմ բարեկամին հարկաւորութիւնը մոռցնել : Արքան աւելի յաջողութեան մէջ գտնուիմք , այնքան աւելի այս հարկաւորութիւնը կ'զգամք . եթէ ոչ ուրիշ բանի , գէթ խորհուրդ հարչնելու , ճշմարտութիւնն իմանալու և մեր թերութիւնները ճանչելու համար : Բազում կոյր ըլլալով , իր սիրելիներն ալ կը կուրացնէ . և ի՞նչպէս կրնայ զմեզ մեր մտութիւններէն ուղղել , երբ ինքն մեր առաքիսութիւնները մենէ կը խլէ :

Ճշմարիտ բարեկամին սրժէքը , զանիկայ կորուսանելէ ետեւ բողբոջին կը ճանչուի : Եւ գոստոս խոստովանեցաւ այս ճշմարտութիւնը : Բազում որ իր բարիքն առատօրէն շնորհեր էր ասոր , երկու ալ անգին բարեկամ պարգևեր էր , որոնց ճշմարիտ յարգը իրենց մահուանէն ետեւ լաւ ևս հասկցաւ : Օյի երբ սխալմունք մը գործէր , անմիջապէս կ'ըսէր , զղջալով . Եթէ Մեկեանսս ու Աբրիպասս ողջ ըլլային , ես այս պակասութիւնը քործած չէի ըլլար :

Զանք ըրէ ուրեմն բարեկամ ստանալու . բայց նայէ որ լաւ ընտրութիւն ընես : Եւ որքան որ ըսուած է թէ կին մը , մէկ քանի զաւակ , մէկ քանի ծառայ ու շատ բարեկամներ տան մը երջանկութիւնը կը կազմեն , մի հաւատար թէ քու երջանկութեանդ շատ բարեկամներ հարկաւոր են :

Ամէն մատուցու բարեկամ անունը տուողն ամենեւին բարեկամ չունենար. մէկ հատիկ ընտիր բարեկամը աւելի կ'արժէ քան հազարաւոր անտարբերներն, որովք լի է աշխարհս:

Պարոն տը Քլաւիլ կ'ըսէ թէ «Վարեբայ մը կը ճանչեմ, որ հարստացեր է հիմա: Քառասուն տարի առաջ ասիկայ իմ պաշտպանութիւնս կը խնդրէր, և հիմա բարեւ մ'անգամ չտար: Ար ճանչեմ ուրիշ մէկն ալ՝ որ 'ի սկզբան սրտակից բարեկամս էր, բայց յանկարծ իր ակնկալածէն աւելի բարձր վիճակի մը տիրացաւ: Առաջին անգամ զիս տեսնելուն, հազիւ թէ զիս ճանչեց, երկրորդին ամաչեցաւ, բոլորովին մոռցաւ:

Ասկէ ո՞րքան կը տարբերի Աղեմէս Ե.Մ. ի վարքը: Ասիկայ սոսկական եկեղեցական մ' եղած ատեն բարեբարոյ, բայց ոչ այնքան տաղանդաւոր Խտալացի նկարչի մը հետ բարեկամութիւն կապեր էր: Վարտինալ ըլլալէն ետեւ, խեղճ պատկերահանը կ'ուզէր մօտն երթալ, բայց չէր համարձակեր: Վարտինալն ալ զարմանալով ասոր շերեւտուն վրայ, իշխանաւթայել շքով ելաւ բարեկամին տունը այցելութեան գնաց: Չարմացաւ նկարիչը, բայց ևս առաւել շփոթեցաւ երբ Վարտինալ իր վիզն պլուեցաւ ըսելով. «Սէ մտացեր մեր հին բարեկամութեանը. ինչո՞ւ համար չես գար զիս տեսնելու, որոտն ատեն ժամանակ բաց է չեղ. մի կարծեր թէ ալ զչեղ պիտի զտրեմ»: Արբ Վարտինալն զահն ամբարձաւ, ըստ սովորութեան իրեն ներկայացուցին իրեն ծառայելիք անձանց ցուցակ մը, որուն մէջ դրուած էր նաև ամենէն երևելի պատկերահանի մը անունը: Աղեմէս հաճեցաւ ցուցակին, բայց մերժեց զնկարիչը ըսելով. իրաւի խիստ տաղանդաւոր է այդ անձը, բայց իմ դէմքս անանկ տարօրինակ դէմք մը չէ, որ նկարչի մը համբաւը ետըն-

նէ, մանաւանդ թէ ինքն արդէն հարուստ ըլլալով, այսպիսի պաշտօնի մ'ալ կարօտութիւն չունի: Աս ուրիշ նըկարիչ մը կը ճանչեմ որ թէև այնքան տաղանդաւոր չէ, բայց աղքատ և իմ բարեկամս է, անիկայ իմ առաջին պատկերհանս ըլլալու է:

Ետևող եղիր այս գեղեցիկ օրինակին, և երբ բաղդն զքեզ բարձրացնէ, միտք բեր սա խրատը. Պահէ սրտիդ մէջ Բարեկամիդ յիշատակը, և մ'մոռնար չիմ+ը երբ հարստանաս:

Բարեկամութեան միշտ յօժարակամ զոհ ըրէ հպարտութիւնն ու շահախնդրութիւնը: Մի մոռնար թէ զինքդ մէկուն բարեկամ ճանչցնելէդ ետև պարտաւոր ես միշտ այնպէս վարուելու ամէն կցորդութեանց մէջ: Օ՛ի ճշմարիտ բարեկամութիւնը 'ի վեր ըլլալով քան զդժբաղդութիւնս, և անմատչելի՝ նախանձու, մասնակից կ'ըլլայ թէ թշուառութեան և թէ յաջողութեան, բայց ևս առաւել վշտաց մէջ կը փայլի: Յաջողութիւնը մեզ բարեկամներ կը յարուցանէ, ձախորդութիւնը զանոնք կը ցրուէ:

Այսու ամենայնիւ թշուառութեան մէջ անգամ հաւատարիմ բարեկամներ կը գտնուին: Պոէնտ, առաջին բրժիշկ Անգղիոյ (Թագուհւոյն, խորհրդարանին մէջ սաստկութեամբ առաջին պաշտօնէին հակառակելով, շատերուն զայրացումը զրգուեց, ուստի և Անտրայի աշտարակը փակուելու դատապարտուեցաւ:

Ա՛ էց ամսէ ետև առաջին պաշտօնեայն հիւանդանալով, Սիսիկայ հիւանդութիւնը քննելէն ետև ըսաւ, կը խոստանամ զքեզ ապաքինել, բայց դաւաթ մը ջուր անգամ չեմ տար, մինչև որ Պոէնտը, որ իմ բարեկամս է, աշտարակէն չարձկուի: Պաշտօնեայն մէկ քանի օր ետքը տեսնելով որ հիւանդութիւնը կը սաստկանայ, աղերս մատոյց

Թագաւորին որ ազատութիւն շնորհէ Վազնտին : Ազատութեան հրամանը ընդունելուն վրայ , հիւանդը կարծեց թէ Սեփոզիմը կ'սկսի խնամել , բայց ասիկայ իր որոշմանը վրայ հաստատ կեցաւ , մինչև որ իւր բարեկամը տուն գնաց : Այնուհետև սկսաւ խնամել , և ի սուղ ժամանակի կատարելապէս առողջացոյց : Վազնտին արձակուած գիշերը հինգ հազար կինէի մօտ դրամ տարաւ իրեն որ ընդունելու էր բարեկամին հիւանդները խնամած ատեն :

Արանի անոնց որ այսպիսի բարեկամներ գտած են : Աթէ կը փափաքիս ասանկ բարեկամներ ունենալ , ջանք ըրէ որ դու ալ այսպիսի բարեկամ մը ըլլաս . Ա՛յ Բողոք կին բարեկամը , զի նորը անոր պիտի չմտնի :

Այս խօսքէն պէտք չէ այսու ամենայնիւ հասկնալ , թէ միշտ մերժելու եմք նոր բարեկամութիւնները . զի երբեմն օգտակար կրնան ըլլալ , այլ թէ նորին համար հինը թողու չէ . միշտ հինը նորէն նախապատիւ համարելով : Բարեկամութիւնը հիննալով կը զօրանայ , ու ևս առաւել կը քաղցրանայ նման այն գինիներուն որ որքան հիննան , այնքան ախորժահամ կ'ըլլան :

Աթէ կ'ուզեմք որ բարեկամութիւննիս տևողական ըլլայ , փոխադարձաբար իրարու ներողամիտ ըլլալու եմք : Արբ մէկը քեզ բարեկամ ըրեր ես , կը պարտաւորիս ոչ միայն զգալ անոր ցաւերը , այլ և համբերել անոր պակասութեանցը ուներել : Օր մը Հենրիկոս Վաստիկ զարմանալով իւր Ա իլուա անուն ատենադպրին յանդուգն խօսքերուն վրայ , ըսաւ . Ար զայլէ՞ այսպիսի խօսուիք ընել Բագասորի մը երեսին : Ա իլուա Թագաւորին ցասումը դիտելով , ակնածելի կերպով մը հեռացաւ առջևէն : Իայց Թագաւորը ետևէն գնաց , և սենեակին դռանը մօտ իրեն հասնելով՝ ըսաւ . Ա իլուա , արդարեւ ինչն չէ որ եր-

հո- հին բարեկամներ այնքան շատով իրարմը զատուին :

Մեծամեծ պակասութեանց համար միայն բարեկամութեան կսպերն խզելը ներելի է : Ընտանեաց պատուոյն կամ մեր խղճին զպշոզն և զմեզ անարգողը արժանի է մեր բարեկամութիւնը կորուսանելու : Այնուհետև գուցէ առ երեսս բարեկամ տեսնէ զմեզ , բայց ոչ երբէք մեր սիրտն կամ վատահուծիւնը կրնայ գրաւել :

Անէ անզգո-շա-նեամբ անանկ խօսք մը հանես բերնէդ , որ անհամոյ լլլայ բարեկամիդ , մի երկնչիր , կրկին իրարու հետ կը միանար : Օ՛ի եթէ խոհական անձ մ' է բարեկամդ , պիտի խորհի թէ քեզ նման մարդ ըլլալով , ինքն ալ երբեմն կրից բռնութենէն կը յաղթուի : Իսկ եթէ զինքն անիրաւես , խստիւ կշտամբես , գաղտնիքն երևան հանես , ի վերին երեսս անկեղծ բարեկամութիւն ցուցնելով՝ ի ծածուկ զինքն մատնես , ստոյգ գիտցիր որ հետի պիտի փախչի թե՛նէ :

Արբ կը տեսնես որ բարեկամդ մոլութեան մը մէջ կ'ընկնի , և իր վրայ անպատուութիւն բերելովը զքեզ ալ անպատիւ կ'ընէ , յուշիկ յուշիկ հեռացիր իրմէ , որպէս զի բոլոր աշխարհք շիմանայ բաժանումը : Օ՛ի ինչպէս կ'ըսէ կատուի , Լա- ես է լա-լեայն Կախել , Կան թե հայնեման Կով իողել : Ահնաճելի է հին բարեկամութիւնը . և երբ քակելու ստիպուիս , այնպիսի եղանակաւ մը ընելու ես , որ կորուսողը միշտ զգայ ըրած կորստեան մեծութիւնը :

Փորձելու եմք չսիրած , իսկ սիրելու սկսելէն ետև տեղական ընել ջանալու եմք մեր սէրը : Բարեկամութեան մէջ ալ այնպէս վարուիլու է , ինչպէս պէտք է վարուիլ ամուսնութեան մէջ : Իսկ չկապուած , խոհեմ ու զգուշաւոր ըլլալու եմք , կապուելէ ետև՝ համբերող : Այս կանոնին ճշետեւելնու համար է որ երկարատև բարեկամութիւնք ,

երջանիկ ամուսնութիւններ քիչ կը տեսնուին : Արկայ-
նամիտ չեղողը բարեկամ չկրնար ըլլալ : Օ՛ր մէկուն հետ
բարեկամացած ատեննիս , պէտք է պատրաստուիլ մարդ-
կային տկարութեանց տանելու :

Քաղաքավարութիւնն ալ մեծապէս կ'օգնէ զբարեկա-
մութիւնը անլուծանելի պահելու : Ընտանութիւնը քա-
ղաքավարութեան օրէնքները չոչնչացնելու . և բարեկամաց
ներելի ազատութիւնը միշտ ընկերանալու է ակնածութեան
հետ , մանաւանդ օտարաց առջին :

Գ Լ Ո Ւ Խ Խ Թ

ԶԳՈՒՇԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

Եթէ ամէն բարեկամ այնպէս ըլլային՝ ինչպէս որ պէտք
էր , ամենեւին խոհեմութիւնը հարկաւոր չէր համարուեր :
Իայց ճշմարիտ բարեկամները այնքան հազուագիւտ են ,
որքան հասարակ՝ սուտ բարեկամները : Աւստի պէտք է
նախ փորձել և ապա վստահիլ :

Ի՞նչ բարեկամութիւնք յանկարծակի թշնամութեանց
չեն փոխուեր , քանի՞ քանի՞ անգամ վստահութիւնը չա-
րաչար չէ գործածուեր : Ի՞նչ բարեկամներ ատելութենէ ,
վրէժխնդրութենէ շարժեալ իրենց հին բարեկամաց գաղտ-
նիքն ու պակասութիւնները երևան չեն հաներ : Այս ճըշ-
մարտութեան նկատմամբ է ուրեմն որ թաղէս ըսած
է . Այնպէս պարտի՛՛ կենցաղաւարել բարեկամաց հետ , որպէս թէ
օր ճշ Թշնամի պիտի ըլլան : Այս սկզբունքս որուն մէջ ա-
ւելի քաղաքականութեան հոգի կայ՝ քան թէ ճշմարիտ .

բարեկամութեան , իբրև կանոն կրնայ գործածուիլ ընդ-
հանուր բարեկամութեան նկատմամբ՝ և ոչ թէ մտեր-
մութեան : Չի մտերմութիւնը չափազանց խոհեմութենէ
նախապատիւ կը համարի սրտի բացութիւնը :

Եթէ կարելի է , շատ բարեկամներ ունեցիր , բայց
մէկ հատիկ մտերիմն կը բաւէ : Մարդոյս սիրտն փառա-
ւոր սգեստի մը կը նմանի , որուն ամէն մարդ կը հաւնի ,
բայց որ միայն մէկուն ստացուածքն է : Չանք ըրէ՛ք քա-
ղաքավար , ազնիւ եղանակներով ամենուն սիրելի , յար-
գելի ըլլալ . և եթէ կը կամիս , ձեռքդ ալ գանձդ ալ բաց
ամենուն , բայց միայն մէկու մը բաց սիրտդ , և այն ալ
կատարելապէս համոզուելէդ ետև թէ որու որ զայն պիտի
բանաս՝ արժանի է մտերմութեան : Ասիկայ անանկ բա-
րեօիրտ , առաքինի անձ մ՝ ըլլալու է , որ մինչև անգամ
եթէ բարեկամութիւնը լուծուի , չկարենայ քեզ մնաս
հասցնել : Այսպիսի մէկն գտնալէդ ետև , երանելի ես .
կատարելապէս վստահ եղիր իւր վրայ . բոլոր խորհուրդ-
ներդ յայտնէ իրեն , և գիտցիր որ ասանկ մէկէն խաբ-
ուիլը անվստահութենէ աւելի նախապատիւ է :

Այսու ամենայնիւ անանկ գործեր կան , զորոնք ամե-
նէն մտերիմ բարեկամաց անգամ պէտք չէ յայտնել , մա-
նաւանդ երբ իրենց շահուն օգտակար բան մը ըլլայ :

Շահախնդրութիւնը երբեմն բարեկամութեան կը յաղթէ :

Հարուստ վաճառական մը Սուան քաղքէն Փարիզ
գալով , իր մէկ բարեկամին տունը իջաւ , և ճամբորդու-
թեան նպատակը յայտնեց՝ որ էր մեծ գումար մը տանիլ
իւր քաղաքը : Չարասիրտ բարեկամը այս ամէնն իմանա-
լէն ետև , որոշեց օգտիլ այս պատեհութենէն : Աւստի ա-
ղաչեց իրեն , որ դեռ մէկ քանի օր հոն մնայ , ըսելով
թէ ինքն ալ հետ կ'երթայ , որով ևս առաւել զուարճալի

կ'ըլլայ ճամբորդութիւնը : Արբ տեսաւ որ վաճառականը
 չկրնար հոն յապաղիլ , նամակ մը տուաւ իրեն , խնդրե-
 լով որ քաղաք մտնելուն , անմիջապէս տեղն հասցնէ :
 Ա՛ւաճառականն ալ նամակն առաւ ու խոստացաւ ճշտիւ
 խնդիրքն կատարել : Փարիզէն երկու փարսախ հեռանա-
 լուն , յանկարծակի ոստիկանութեան մարդոցմէն մէկ քա-
 նի հոգի եկան կառքը շրջապատեցին , և վաճառականն ու
 հետն առած բաները ուրիշ կառք մը դնելով , ոստիկա-
 նութեան տեղակալին ներկայացուցին : Խեղճը որքան որ
 իր անմեղութեանը վրայ տարակոյս չունէր , տակաւին շը-
 փոթեցաւ : «Վա՛ւ , ըսաւ տեղակալը , վրադ վնասակար
 թղթեր ունիս , զանոնք ինձ տալու ես : Ա՛թէ բան մը պա-
 հես , գիտցիր որ կեանքդ վտանգի մէջ կը ձգես » : Ա՛ւաճա-
 ռականն ալ բոլոր փոխանակութեան թղթերը առջին դը-
 րաւ : «Վայց ոչ , պատասխանեց տեղակալը , դու ուրիշ
 թղթեր ալ ունիս , որ ինձ ցուցնելու ես » : Ա՛ւաճառականը
 ան ատեն ցոյց տուաւ իրեն իւր բարեկամին նամակը :
 Տեղակալը հրամայեց որ զայն բանայ : «Ա՛ր ներէք , պա-
 տասխանեց վաճառականը , աւելի նախապատիւ կը համա-
 րիմ 'ի բանտ երթալ , քան թէ անհաւատարիմ գտնուիլ
 բարեկամիս » : Ա՛յտու ամենայնիւ տեղակալին խստութենէն
 բռնադատեալ բացաւ նամակը և կարգաց սա տողերը :
 Քանի գրաքերս և սպաննէ զինքն առանց ճամբանի կորուսանելու ,
 առան երկուստեիս մէջ կը բաժնեմք : Ա՛ւաճառականին խելքը
 դիտէն երթալով գոչեց . Ար՞եւ կրնամ վնասուիլ այստեղից :
 Տեղակալը ան ատեն իրեն իմաց տուաւ թէ երկիւղի ա-
 ոխի՞մ մը չկայ . զի թէ գրողն և թէ որու որ ուղղուեր էր
 նամակը , ձերբակալ եղած են :

Վաւառական մը ապրանք գնելու համար Փարիզ եր-
 թալով , 50,000 ֆրանք պահեստի տուաւ իւր մէկ բարե-

կամին : Վործը կատարելէն վերջը երբ դրամն ետ առնել
 գնաց, անարժան բարեկամը՝ «Ինչ կ'ըսես, խելագարեր ես,
 պատասխանեց, երբ ինձ այդպիսի գումար մը պահեստի
 տուիր» : Վաւառականը շուարելով, յուսահատութենէն ու-
 տիկանութեան տեղակալին դիմեց : Պարոն Սարգէն (այս-
 պէս կը կոչուէր տեղակալը,) հարցոյց իրեն թէ արդեօք
 ապահովագիր մ' առած է ձեռքէն և վկայ ունի : Խեղճն
 ալ պատասխանեց թէ զինքը բարեկամ կարծելով ապա-
 հովագիր չէ առած, և թէ կնոջմէն զատ մէկը չգիտէ այս
 բանը : Պարոն Սարգէն մէկ քանի վայրկեան մտածելէ ե-
 տե հրաման ըրաւ որ մօտակայ սենեակ մը մտնէ, սպասէ :
 Նոյն միջոցին անհաւատարիմ աւանդապահը կոչելով,
 ըսաւ, «Ար ըսեմ թէ մէկը 50,000 Ֆրանք պահեստի տուեր
 է քեզ և դու ետ չես դարձներ եղեր» :

Աւանդապահը բացարձակապէս ուրացաւ այսպիսի
 բան մէկէ ընդունած ըլլալն : Ար հաւատամ խօսքիդ, պա-
 տասխանեց Պարոն Սարգէն, բայց բոլորովին զիս աներկ-
 բայ ընելու համար գրէ կնոջդ, որ կ'ըսեն թէ ահանատես
 վկայ է եղեր, ինչ որ քեզ ըսեմ : Արեւելէ կն իմ, կ'աղաչեմ
 որ հրամարոյցիս յանձնես 50,000 Ֆրանք, զոր 'ի ներկայու-
 մեանդ ասանդ ընդունեցայ այս անուն անձէն» : Անհրաժեշտ
 հարկ էր հնազանդիլ ու գրել : Պ. Սարգէն նամակը վըս-
 տահելի մէկուն ձեռօք տեղն հասցոյց, և ահա դրամը ե-
 րևան ելաւ : Մատնիչը տեսնելով որ իր անհաւատար-
 մութիւնը ապացուցուեցաւ, դատաւորին ոտքն ընկաւ :
 Այս ալ իրեն սաստիկ յանդիմանութիւն մ' ընելէ ետեւ,
 ստակին տէրը կոչեց և իրեն տալով դրամը, ըսաւ, «Այլ
 որ անգամ մ' ալ այսպիսի անզգուշութիւն չընես» :

Գ Լ Ո Ւ Խ Լ

ԽՈՐՀՐԴԱՌՈՒԹԻՒՆ

ԼՍՈՎ կ'իմանամ վարանմունքի մէջ խոհական ու փորձառու անձանց խորհուրդ հարցնել: Լ^{նոն} որ ասինքն քան խորհրդով կ'ընեն, կ'ըսէ իմաստունը, իմաստուն-նենէ կ'ողորմին:

Մարդ մը որքան կարող ու լուսաւորեալ ըլլայ, ինչ հասակի և ինչ վիճակի մէջ գտնուի, ուրիշին խորհուրդ հարցնելովս միշտ մեծապէս կ'օգտի. զի մենք մեր գործոցը մէջ հիւանդացեալ բժշկի նման, ուրիշին խնամոցը կը կարօտիմք. ուստի և յաճախակի կը տեսնեմք որ ամենէն գիտուն մարդիկն անգամ մտածելով թէ գուցէ իրենց գիտողութենէն փախած կէտ մը իրենցմէ ազէտներուն ուշադրութիւնը գրաւէ, ուրիշներուն խորհուրդ կը հարցանեն. զի ասանկով լուսոյ մէյմէկ փոքրիկ նշոյլ ժողովելով, իրենց ձեռնարկութիւնները կարգադրելու համար բաւական լոյս կ'ստանան:

Ուրեմն երբէք գործոյ մը ձեռնամուխ մի ըլլար առանց խորհուրդ հարցնելու ուրիշին. և որքան ծանր ըլլայ ձեռնարկելիք գործը, գիտցիր որ այնքան կարևոր հետևութիւններ կ'ունենայ: Մէկ քաջադէպ խորհուրդը շատ անգամ մեծ սխալմունքէ զմեզ ազատ կը պահէ: Արբ բանի մը սիրահարիմք, կիրքերն աչուրնիս իւր նպատակին վրայ հաստատելով, ոչ շուրջն եղածը, ոչ ալ հետևելիքն կը տեսնեմք:

Արբ մէկուն խորհուրդ հարցնելու ըլլաս, անկեղծութեամբ իրեն յայտնէ գիտաւորութիւնդ, չըլլայ թէ ստա-

յօդ պարագաներ աւելցնես, իբր թէ քեզ մտիկ ընողն
 հաճեցնելու համար: Աւ հետեւէ ընդունած խրատիդ,
 մինչև անգամ եթէ անհաճոյ թուի: Ատարեալ աղա-
 սուծիւն տուր խորհրդատուիդ ճշմարիտն քեզ խօսելու.
 ապա թէ ոչ՝ ընդունայն է խորհուրդ հարցնելդ: Ապեղ-
 դէս՝ հնուծեան ամեներևելի նկարիչը, իր գծագրած պատ-
 կերները հասարակութեան աչաց կը ներկայացնէր և ինքը
 մօտն կը ծածկուէր, որպէս զի նկատողին բրած անկեղծ
 դիտողութիւնները լսելով, ճանչէ իւր թերութիւնները:

Պատանիները, ունայնամիտ երիտասարդները ընդհան-
 րապէս ինքնահաւան՝ յանձնապաստան կ'ըլլան. որքան քիչ
 ըլլայ այսպիսեաց դիտութիւնն ու փորձառութիւնը, այն-
 քան աւելի հպարտութեամբ կը փքանան և կ'ուզեն ցու-
 ցընել թէ ամէն բան քան զուրիշն լաւ գիտեն. ուստի և
 խոնարհութիւն և ստորնութիւն խոստովանած կը համարին՝
 եթէ ուրիշին խորհրդոյն հետեւիլ ուզեն:

Այս պակասութիւնը ըստ ինքեան փոքր բան մը կ'երևի,
 բայց սոսկալի են հետեանքը: Ասկէ ծնունդ կ'առնուն
 յանձնապաստան ժպրհութիւնն ու յամառութիւնը, որ
 մարդոյս փոքրամտութիւնն ու ունայնութիւնը կը յայտ-
 նեն: Ասկէ կը ծագին ծուռ տրամախոհութիւններն, ան-
 պատշաճ որոշումները, անխոհեմ գաղափարները, որոնց
 հետեորդն է նախատիները ու անարգանքը: Աերոն կայսրը
 մինչդեռ Ռորոսի և Սենեկայի խորհրդոցն կը հետեւէր,
 բոլոր աշխարհք զինքն կը գովէին, բայց երբ շողոքոր-
 դութեան ահանջ տալ սկսաւ, անիծից նիւթ եղաւ ամե-
 նուն բերանը:

Օգոն անձը չամաչեր ուրիշին խորհուրդ հարցնել,
 բայց առած խորհուրդն ալ առաջ ուշի ուշով կը կշռէ, կը
 քննէ և ապա ընելիքը կ'որոշէ: Օհ գիտէ թէ պէտք է

կուրօրէն ուրիշին խրատին հետեիլ, այլ թէ մտիկ ընելու է իբր բարեկամ, քննելու է իբր դատաւոր, և հետեւելու է իբրև տէր անձնիշխան: Այլ թէ քեզ խորհուրդ տուողը վիրաւորի իրեն չանսալուդ համար, հոգ մի ըներ, զի լաւ ևս է թողուլ որ մէկ մը յանիրաւի վիրաւորի, քան թէ շատերը իրաւամբ վրայ վշտանան: Ասկէ 'ի դատ չճանչած մարդու ալ սիրտդ բանալու չես:

Խորհրդատու անձը, ինչ նիւթոյ վրայ որ խորհուրդ պիտի հարցնես, բաւական ծանօթութիւն ունենալու է. զի խաւարին մէջ գտնուողը լուսոյ կը կարօտի, ուստի նայէ որ խոհական ու գիտուն անձ մ'ըլլայ անիկայ, և նախապատիւ համարէ ծերունիները, զի ասոնց կը վերաբերի խորհուրդ տալն, ինչպէս և պատանեաց՝ գործունէութիւնն:

Խորհրդատուին մէկ ուրիշ էական յատկութիւնն ալ անշահախնդրութիւնն ըլլալու է. որ ճշմարիտը խօսելով, այնքան հաղուազիւտ է, որ երբեմն զաւակաց, ծառայից և բարեկամաց անգամ չվատահուիր: Արքան ալ հաւատարիմ երևի քեզ խորհուրդ տուող անձն, միշտ նայէ որ սիրտն հասկնաս, ամենէն գաղտնի դիտաւորութեանցն, պիտոյիցը, բերմանցն ու օգտիցը խորն թափանցես. զի շատեր կան որ քու օգտիդ համար խորհուրդ կ'ուտան, բայց իրենց շահը կը նկատեն: Այս տեսակ խորհրդատուաց խորհուրդովն գործոյ ձեռնամուխ եղողներէն քանի քանի անձինք կործաներ, և իրենց խորհրդատուքը հարստացեր են:

Այսպիսի անհաւատարիմ խորհրդատուաց որոգայթը չընկնելու համար նայէ որ առաքինի, աստուածավախ, և անկեղծութեամբ դքեզ սիրող անձ մը քեզ ուղեցոյց ընես. ասանկ մէկը մինչև անգամ մասնակից կ'ըլլայ թշուառութեանդ եթէ շեղելու ալ ըլլաս:

“Դու երիտասարդ ես, որդեակ, կ'ըսէր առաքինի անձ մը իւր որդւոյն. եւ դեռ շատ ժամանակ խրատու կը կարօտիս: Օգոն անձ մը խորհրդական ընտրէքեղ, և անոր խորհուրդ չհարցուցած գործոյ ձեռնամուխ մի ըլլար: Եայց այս նախազգուշութիւնն ալ չբաւեր. Աստուծոյ օգնութեանը դիմելու ես. խնդրէ իրմէ՝ ուրեմն, որ առաջնորդ ըլլայ քեզ և յաջողէ գործդ”:

Մտնալու չէ նաև որ շատ անձանց խորհուրդ հարցնելն ալ մարդոյս միտքը կը շփոթէ: Սովորաբար մէկ քանի լուսաւորեալ, ճշմարտիւ առաքինի և մեր ճշմարտ օգուտը ձանչող անձանց հետ խորհրդակցելը կը բաւէ:

Խորհուրդ տալը դիւրին բան է. բայց լաւ խրատ տալը՝ ոչ: Արժան յաճախ կը պատահի որ ամենէն բանաւոր խրատներն անգամ աղետալի հետևութիւններ կ'ունենան, որ բնականաբար անհնար էր նախատեսել: Եւ թէպէտ խորհուրդ մը միշտ իր արդիւնքովը դատելու չէ, զի յաճախակի մարդկային իմաստութեան ամենէն խորին հայեցողութիւններն անգամ ասիկայ կը խաբէ, տակաւին միշտ անհաճոյ բան է ուրիշին թշուառութեանը պատճառ ըլլալ, թէև անմեղութեամբ:

Ուրեմն մի խորհուրդ տար ուրիշին, եթէ ոչ ամենամեծ զգուշութեամբ և խոհեմութեամբ: Մարդասիրութիւնն ու արդարութիւնը զմեզ կը պարտաւորեն արգիլել, եթէ հնար է, ուրիշին ապաշնորհութիւնը: Սուրբ Վիրքը մեզ կը պատուիրէ թէ պէտք չէ մէկուն խնայել օգտակար խրատն և ծածկել մեր գիտութիւնը: Սակայն չպնդեր թէ ամենուն և ամէն ժամանակ խորհուրդ տալու եմք:

Ընդհանրապէս երբ պաշտօնէ ստիպեալ չես, կամ թէ մէկը չխնդրեր, կարծիքդ մի յայտներ: Եւ մի վշտանար երբ քեզ խորհուրդ չհարցնեն, զի ամենէն պատուական

խրատն անգամ ամեն ատեն յաջող ելք մը չունենար . և
ասանկով յանիրաւի կը մեղադրուիս : Աթէ դիպուածով
թեթեւութեամբ մէկուն վճռական խրատ մը տաս , վի-
ճակի ընտրութեան , գործոյ , և անլուծանելի կապակցու-
թեան մը նկատմամբ , ողջոյն կեանքդ պիտի տանջուիս խըղ-
ճահարութենէ և քու խորհրդովդ թշուառացեալ ան-
ձին յանդիմանութիւններովը :

Վերայ այսր ամենայնի , երբ մէկը քենէ խորհուրդ
կը հարցնէ , և դու կարող ես զինքն դո՛հ ընել , մի մեր-
ժեր խնդիրքը : Առսոյ և ձեռնտուութեան կարօտելոյն
օգնելը ամենուս պարտաւորութիւնն է . միայն թէ ջանա-
լու եմք միշտ ճշմարիտն ըսել , առանց նկատելու թէ ո՛վ
է խորհուրդ կամ մեր կարծիքն հարցնողը :

Յակորոս Ա . Անգղիոյ թագաւորը երբ սեղանն բազ-
մեր էր բազմաթիւ երևելեաց հետ , որոնց մէջ երկուք ալ
Մպիսկոպոս կային , հարցոյց ասոնց թէ արդեօք առանց
նկատելու խորհրդարանի սովորական ծէսերը կրնայ կա-
րօտած դրամն ժողովրդէն առնուլ : Մպիսկոպոսներէն մէկը
անմիջապէս պատասխանեց թէ կրնայ , զի թագաւոր է :
Իսկ միւսը՝ երբ իր կարծիքն ալ իմանալ ուզուեցաւ , գամ
մի վարանելէն ետեւ ըսաւ . Ա՛յո , ճշմարտե՛ս , յեր Ա ի հօտ-
փառաւորութեանը կրնայ այս եղբօրս . Մպիսկոպոսին դարձե՛ս ար-
նուլ , զի ին՛չ արդէն կ'ուղեւր՛ի :

Գ Լ Ո Ւ Խ Լ Ա

ՔՍՈՒԹԻՒՆ

ՄՆԴԱՐՄԱՆԵԼԻ ԵՆ չարախօս լեզուին պատճառած չափքը : Մեզուին մէկ թեթեւ հարուածը շատ անգամ անհնարին կը վերաւորէ : Պատուոյ և անուան պէս փափուկ նիւթոյ մը մէջ ո՞վ կրնայ բաւական դգուշաւոր ըլլալ : Պատուաւոր անձը մինչև անգամ զանարժանն անպատուութենէ ազատել կ'աշխատի :

Մըթոնս Մրակոնի թագաւորը բազմաթիւ պալատականներով ակնավաճառի մը տունը դնաց : Արբ տունէն դուրս կ'ելնէր, ակնավաճառը ետեւէն պնդելով սկսաւ դանգատել թէ իւր մէկ մեծագին անգամանդը գողցուեր է : Թագաւորը իսկոյն ետ դարձաւ իր մարդոցը հետ, խեցիէ անօթ մը բերել տուաւ, և հրամայեց որ իւրաքանչիւր պալատական ձեռքը մէջն երկնցնէ ու դուրս հանէ : Ախի ինքն օրինակն ցոյց տուաւ, և երբ ամէնքն ալ նոյն արարողութիւնը կատարեցին, անօթը սեղանի մը վրայ բերանն ՚ի վար կորզեց և ահա անգամանդը գտնուեցաւ :

Անեայք ընդհանրապէս բամբասանքն կը սիրեն, և կը խօսին ոչ թէ մոլութիւնն ատելնուն համար, զի բանսարկութիւնները մոլութենէ ազատ չեն. այլ զուարճութիւն մը զգալնուն պատճառաւ : Օհ հետաքրքրութիւնը զիրենք կը դրդէ ամէն բան իմանալու. և ամէն բան կ'իմանան, որ ուրիշին ըսեն : Մնական թեթեւամտութիւնը թոյլ չտար իրենց խօսելէ առաջ խոկալու, ուստի և շատ

անգամ առանց դիտելու զուրիշն բամբասած կ'ըլլան :
 Անգործութիւնն ու խօսելու փսիաքը կը ստիպէ զիրենք
 բամբասանաց մէջ նիւթ գտնել շաղսկրառութեան . և
 արդեօք քանի՞ քանի՞ կանայք լուռ պիտի մնային եթէ
 բամբասանքն չըլլար :

Կան այնպիսիք ալ որ ուրիշին պակասութեանցը վրայ կը
 խօսին , որ անձերնին անոնցմէ ազատ ըլլալն ցուցնեն :
 Բայց յաճախակի անձնասիրութիւնը այս ընթացիւքս ալ
 կը կորուսանէ : Օ՛հ աշխարհք ալ չկասեր դատապարտու-
 զին թերութիւնները երևան հանելու կամ նշաւակելու :

Եթէ պատիւդ կը սիրես , համարումդ կորուսանել չես
 ուզեր , մի՛ չարախօսեր : Մի՛ կարծեր թէ ասով հաճելի
 կ'ըլլաս ուրիշին . ընդհակառակն կը նախատուիս ու կ'ար-
 համարհուիս . և իրաւամբ , զի եթէ առ նախանձու կամ
 յատելութենէ խօսիս , ինչպէս կը պատահի շատ անգամ ,
 վատութիւն եղած չըլլար . եթէ առանց օգտի՝ անգը-
 թութիւն չէ՞ . և ասով քու յայտնի թշնամեացդ ալ ի-
 րաւունք տուած չե՞ս ըլլար քեզի դէմ նոյնօրինակ վար-
 ուելու :

Խի՛ն ախանջք զարախօս լեզուին դէմ , զի այս է զանիկայ
 լուել տալու ամենէն ապահով միջոցը : Ինչպէս որ հիւսիսոյ
 հողմը իւր ցրտէ զանձրեւը , այսպէս ալ պիտիամաթ դէմին իւր կար-
 հեցնէ զզարախօս լեզուն :

Իշխանաւորք ալ պարտին խափան ու արգելք ըլլալ
 չարախօսութեան : «Մի՛ թող տար , կ'ըսէր Աէն Աուի
 իւր որդւոյն , որ մէկն առջիդ ուրիշին վրայով վնասակար
 խօսք մ'ընէ» : Աուտովիկոս Ժ՛Ա ոչ միայն ինքն չէր
 բամբասեր , այլ և ամենեւին չէր թողուր որ ուրիշն ալ
 բամբասէ :

Արբ մէկուն վրայով վնասակար խօսք մը լսես , զգու-

չացիր ուրիշին յայտնելու, եթէ հարկն չստիպէ: Մե-
ռելոց յիշատակն ալ կենդանեաց պատուոյն նման արժա-
նի է ակնածութեան:

Եկու՛մքի մը մէջ ոմանք կը գանգատէին Մարլպրօի (1)
հանգուցեալ դքսին ագահութեանը վրայով. և իրենց
խօսից ճշմարտութիւնը հաստատելու համար ի վկայութիւն
կը կոչէին հանգուցիւոյն յայտնեալ թշնամին զՊօլին-
պրօք՝ որ հոն ակրմբին մէջ կը գտնուէր: Սակայն Պօլին-
պրօք պատասխանեց. Մարլպրօն այնքան թշտնջ զ' եր, որ
ես ճոտացած եմ իւր պահտութիւնները:

(1) Յովհաննէս Չորչիլ Մարլպրօյի դուքս, ծնաւ յԱշ Տրվան-
չայրի 1650ին. եւ երկոտասան տարեկան հասակին Եօրքի դքսին
ժառայութեանը առնուեցաւ: 1672ին Մոնմըթ դքսին հրամա-
նատարութեանը ներքեւ Ստորին Նահանգաց մէջ բրած մեծ քա-
ղութիւններովն ու Եօրքի դքսին բարեկամութեամբը Էյմըթի
Պարոնութիւնն ստացաւ: Յիշեալ Եօրքի դուքսը Անգղիոյ գահը
նստելուն, անմիջապէս զինքն Քաղղիա զրկեց դեսպանութեան
պաշտօնով: Այսու ամենայնիւ կրօնական առթիւ մը ստիպուե-
ցաւ Մարլպրօ Օրէնճի իշխանին կողմն յարիլ. եւ ասանկով իրեն
շնորհուեցաւ Մարլպրօյի կոմսութիւնն ու Անգղիական բանակին
հրամանատարութիւնը: 1690ին Իռլանտիոյ սպարապետ կարգեցաւ
ու նուաճեց Քորք, Քինսէյլ եւ ուրիշ քաղաքներ: 1697ին բու-
լոյր պաշտօններէն հանուելով Լոնտրայի աշտարակն փակուեցաւ.
յորմէ թէեւ շուտ ազատեցաւ, սակայն մինչեւ Աննա թագուհ-
ւոյն գահն ամբառնալը առանց պաշտօնի մնաց: Ասոր օրովը 1702ին
դքսութեան կարգն բարձրացաւ: Իր ընդհանուր սպարապետու-
թիւնը փառաւոր ասպարէզ մը բացաւ իր հոյակապ ձիրքերուն:
Ստորին Նահանգներն ու Քերմանիա ազատեցան Քաղղիացւոց
բռնակալութենէն: Պլէնհայմի, Ռամիլիի, Ռատենարտի եւ Մալ-
բլաքի յաղթութիւնքն կ'անմահացնեն Մարլպրօյի անունը:

Մախանքն այսու ամենայնիւ չկրնալով ժուժել, խոչընդոտներ
յարուցին այս փառաւոր ընթացքին դէմ: Յետս կոչուեցաւ Մարլպրօ,
եւ անգործ մնաց մինչեւ Քէորդ առաջնոյն ժամանակը. յորում
հասակաւ ու չափազանց աշխատութենէ արդէն տկարացած՝ ըս-
տիպուեցաւ առանձնանալ: Մեռաւ ՚ի 16 Յունիսի 1722:

ԿԱՏԱԿ

ԼՆԱՆՅ վիրաւորելու ծաղբելն այնքան դժուարին է որ
բոլորովին կատակէ կասիլը խոհեմութիւն կրնայ համար-
ուիլ : Օ՛ի անձնասիրութեան չափազանց փափկութիւնը
անհնար կը թուեցնէ մեզ իրեն դպչիլ առանց վիրաւո-
րելու զինքն . եթէ խիստ թեթեւ ու խոհեմ կերպով մը
չլլայ : Ատակը ուրեմն այնքան ակնածութեամբ և ըզ-
գուշութեամբ ընելու է որ անոր նիւթ եղողը աւելի գոհ
ըլլայ քան թէ վիրաւորի :

Աւ քննելու է կատակելիք անձինքն : Օ՛ի տգէտք և
ունայնամիտք շուտ կը վիրաւորին , որովհետև կը կարծեն թէ
միշտ ուրիշը զիրենք կ'անարգէ : «Արբէք պէտք չէ , կ'ըսէ
Ա Պրիւէր , կատակաբանել , եթէ ոչ բարեկիրթ ան-
ձանց հետ» :

Մի՛ կատակեր , եթէ չես կարող ճարպիկութեամբ կա-
տակելու : Օ՛ի կատակախօսը մեծ զգուշութեամբ դիտե-
լու է ընկերին բարբը , ժամանակը , տեղին և ուրիշ կցոր-
դութիւնները . զի այսօր լաւ ընդունուած խօսք մը վաղն ալ
այնպէս չըլլար : Համեմէ զուարճաբանութիւնդ գովա-
բանութեամբ . անձնասիրութիւնն փայփայողը երբէք
տհաճութիւն չպատճառեր :

Հատ զուարճաբանելն ալ լաւ չէ . զի թէպէտ և
չափաւորը խօսակցութեան աղն կրնայ համարուիլ , սա-
կայն չափազանցը դառնութիւն կը պատճառէ : Մաղրա-
ծուն երկար ատեն չյարգուիր , և եթէ խեղկատակու-

Թեան դարձնէ խօսքը, ատելի ալ կ'ըլլայ: Ամենասիրելի բարեկամն անգամ անհաշտ թշնամի կ'ընէ:

Քարեկամութեան մէջ երբեմն կը ներուի անիրաւութեան մը, նախատինքի մը, բայց ոչ երբէք խեղկատակութեան. զի ասիկայ սաստիկ կը վիրաւորէ մեր անձնասիրութիւնը, զմեզ օտարին ծաղր ու ճանակ՝ և մ. ը աչացը ատելի ընել ուզելով:

Վիմոկրատէս անուն մէկը յանշանք մը գործեր էր Անտիկոնոսի (1) դէմ, որ շիլ էր: Ասիկայ խոստացաւ իրեն ներումն շնորհել, եթէ գայ անձամբ իրմէ խնդրէ: Քարեկամները զինքն համոզելու համար կ'ըսէին թէ «Քան չկայ, միայն անգամ մը թագաւորին աչաց ներկայանալու է»: Մե' պատասխանեց անիկայ, ելէ զէ՛մ հարող ներումն ընդունել ասանց երեւելու ի՛ր աչացն, յոյս չկայ ապաստան: Այս խօսքն Անտիկոնոսի ականջն հասնելով, զինքն ի մահ դատապարտեց:

Արէժխնդրութիւնն է խեղկատակութեան առաջին պատուը: Վիլիպպոս Ա. Վաղղիոյ թագաւորը ծաղր կ'ընէր զՎուլիէլմոս՝ Աորմանտիոյ դքսին գիրութիւնը, յաճախակի պալատականներուն հարցնելով թէ «Արբ պիտի ծնի Վուլիէլմոս»: Վուլքսը՝ որ ան ատեն Ռուան կը գտնուէր, զայս իմանալով, իրեն պատասխան խրկեց թէ՝ Օննդեան վայրկեանին կ'ոպասէ, և երբ ապարի, պիտի քայ ի՛ր շնորհակալութեանը պիտի

(1) Մեծին Աղեքսանդրի գորապետներէն մէկը, որդի էր Մակեդոնացի ազնուականի մը: Աղեքսանդրի տէրութիւնը բաժնելու ատեն Պամբիւլիան, Վիւկիան, Մեծ Փռիւղիան Անտիկոնոսի բաժին ինկաւ, եւ ինքն Վիկտոնիան ալ յետոյ ասոնց վրայ աւելցուց: Եւմենէան սպաննելէն վերջը, նուաճեց Փոքր Ասիան ու Ասորիք. եւ կոչուեցաւ թագաւոր Ասիոյ: Չանաղան կուսակցութիւններ կազմուեցաւ իրեն դէմ, որով վերջապէս սպաննուեցաւ Նքսոսի պատերազմին մէջ, 301 տարի Քրիստոսէ առաջ:

Տասրոցանէ Բարեզոտ Դեմէ շէշ եկեղեցին, Տոբ արդ 10,000
նիզակոտ : Աւ իրօք երկար աւեն չանցաւ, Ա էքսէնը գը-
րաւեց և զՄանգ առաւ, մոխիր դարձոյց : Ա՛թէ մահն
վրայ չհասնէր, թերևս բոլոր Վաղղիա կը նուաճէր, ինչ-
պէս և նուաճեր էր զՎ՛նգղիա :

Խեղկատակութիւնը ոչ ընդունելի կ'ըլլայ նիւթ ե-
ղողին, ոչ ալ պատիւ կ'ընէ խեղկատակին : Այն անպատ-
ւութիւն է մենէ ստորիններն խեղկատակել, վտանգաւոր՝
մենէ գերազանցներն, և մեր հաւասարներն տոկոսեօք կը
կը փոխարինեն :

Վուտովիկոս Դ՛Վ երբ համբերութեամբ քիւղաքաղա-
քի մը դուռը ձանձրացուցիչ ատենախօսութեան մը մտիկ
կ'ընէր, պալատական մը՝ կարծելով թէ ծառայութիւն մ'
ըրած կ'ըլլայ թագաւորին, գնաց ատենարանին խօսքն ընդ
միջել տալով, հարցոյց թէ էշերն հոն քանուոյ կը ծախ-
ուին : Վտենախօսը ոտքէն մինչ 'ի գլուխ զինքն դիտելէն
հտեւ պատասխանեց . Վոտ Տորթոզոս ու Բարձրո-Նեամբոս ե-
լած էշերը քատը ոսկի կ'արժեն :

Կան անանկ փոքր թերութիւններ՝ որոց վրայ ծաղրե-
լը մարդս չի իրաւորեր : Վոյսախտի թերութիւններն ահա
նիւթ ըլլալու են կատակարանութեան, թէև միշտ նրբա-
մտութեամբ :

Սպարսիանոս կը պատմէ թէ ծեր մը կայսրէն շնորհք մը
կը խնդրէր, որ մերժուեցաւ : Խեղճը կարծելով թէ ծե-
րութիւնն է մերժուելուն պատճառը, գնաց մազելը ներ-
կել տուաւ և կրկին պալատը դարձաւ : Կայսրը հնարքը
տեսնելով, իրեն ըսաւ . Վոյս ինչիւրեք արդէն հօրդ թերժեցի :

Իսուած է թէ կատակարանութիւնը երբ նրբամտու-
թեան հետ ընկերանայ, հոգւոյն ծաղիկն է, և քաջա-
դէպ այն ատեն, երբ ծաղու արժանի գործոյ մը կամ
թերութեան մը համար կը գործածուի :

Նորեկ գեապանի մը հարցուելով թէ արդեօք դիտած է չափազանց սնգուրեալ տիկնանց գեղեցկութիւնը, պատասխանեց. «Թողո՛ւի՛ն կ'ընէ՛ք, նկարչո՛ւնե՛կ զէ՛՛՛՛՛՛՛ հասկնայ»:

Վեղեցիկ զրոյց մը եթէ մէկ քիչ կծու ալ ըլլայ, արհամարհելի չսեպուիր, թէ որ ունայնամտութիւնն ու գոռոզութիւնը խոնարհեցնելու ծառայէ: Առուասէր մարդ մը զինուորի մը հետ կռուելէն ետքը, որ մեծ պատիւ չըրաւ իրեն, երբ իրարմէ բաժնուեցան, իբր թէ իր հակառակորդը փնտուելու դիտմամբ խահուէատուն մը մտաւ, ուր չըլլալըլաւ գիտեր, և գոռոզութեամբ ըսաւ, «Այ՛ թէ զինքը հոս գտնէի, գաւազանովս պիտի ծեծէի»: Ա՛յս ինչ մէկը, որ բոլոր եղելութեանց տեղեակ էր, պատասխանեց. Ա՛յս էր կարծե՛՛ք ընելի՛ք փոխարինո՛ւի՛նդ»:

Ներելի է ունայնամիտ ու գոռոզ մարդուն վրայ ծաղրաբանել, որ միշտ զուրիշն ծաղր ընել կ'աշխատի. բայց վատութիւն է բնական թերութեան մը վրայ կատակելն: Ինութիւնը ծաղր ընողը, ինքն ալ ծաղր ըլլալու կ'արժանանայ՝ կենցաղախորիչ չգիտնալուն համար:

Ատաակը վերջապէս պէտք է գործածուի մոլութիւնն և կամ ուղղուելիք թերութիւն մը ծաղրելի ընելու, և ոչ թէ ուրիշ բանի համար:

ԵՐԱՆԻ ԽԱՂԱՂԱՐԱՐԱՑ

ԱՇՏԵՑՆԵԼ ազգականներն կամ բարեկամները իրենց գժտութեանց մէջ, միացնել բաժանեալ ամուսինները, հաստատել սէրն ու միաբանութիւնը յընտանիս, խաղաղել վէճերը, ասոնք ամենագեղեցիկ ու խիստ փառաւոր գործեր են:

Իսոյց աւանդ որ շատերը փոխանակ վերադարձնելու խաղաղութիւնն այն սրտերուն մէջ, ուստի վտարանդեր է, գաղտնի հնարքներով՝ չար խորհրդներով, զրպարտութիւններով և քսութեամբ բոլորովին հեռացնել կը ջանան: Ար վրդովեն ընկերութեան խաղաղութիւնը, կը գրգռեն միտքերը, կ'օտարացնեն բարեկամները, երկպառակութիւն կը սերմանեն եղբարց մէջ, և կը բաժանեն ամուսինները: Արձ խօսքով անագորոյն թշնամիք խաղաղութեան, ի՞նչ ցաւեր, ի՞նչ հառաչանքներ, ի՞նչ արտասուաց հեղեղներ, ի՞նչ թշուառութիւններ չեն պատճառեր ընկերութեան: Իսոյց իրենք ալ ի՞նչ կ'օգտին արդեօք: Անշուշտ անհնարին ատելութիւն: Օ՛հ ժամանակը անգորրացնելով միտքերը՝ բարեկամներն կրկին կը հաշտուին, եղբարք կը միաբանին, ամուսինք իրարու կը ներեն, բարկութեան միջոցն իրարու գէմ ըրած խօսքերնին կը մոռնան, երկպառակութիւն սերմանողները միայն անհնարին ատելութեամբ միակամ կ'ատեն. այնուհետեւ երբէք տուներնին չեն ընդունիր, չեն խօսիր հետերնին, և բոլոր աւաքինի անձինք իրաւամբ զանոնք կ'արհամարհեն:

Մասացի անձր ոչ կը յօժարի ուրիշին վրայով գէշ խօսք
 մը ընելու, ոչ ալ լսելու: Օհ ընողը կը վրդովէ ուրիշին
 խաղաղութիւնը, և լսողը՝ իրն: Չորսնի ո մարդ մը ուզե-
 լով Պղատոնի աչքէն հանել իր աշակերտաց մէկը, ը-
 սաւ թէ մե սասկար խօսքեր կ'ընէ իր վրայօք: Չի՞մ հասա-
 րար, պատասխանեց Պղատոն, ընդհանայն կը յոգնեիս զիս
 հասնողէլու թէ ինէ այնչափ տիրուած անձ ճը այնչափ վարս ապե-
 յախար կընայ ըլլալ, որքան որս հարձեցնել է' ուղեւ: Քայց
 տեսնելով որ ասիկայ երդմամբ իր խօսքն հաստատել կը
 ջանայ, թախա, ըսաւ. ես այն պահանջեանց օրերն ըլլամ,
 որոց վրայ դո՛ւ կը խօսեիս. և անիկայ՝ զար դո՛ւ ինձ հասկածելի ընէլ
 է' ուղեւ, զիս խրատել ուղեր է:

ԱՌԼՍԳԱԼՈՍ Վ. Շուէտի թագաւորը գեղեցիկ օրինակ
 մը տուած է: Վստ ինչ անուն անձ մը թոյլտուութիւն
 խնդրելով՝ իրեն ներկայացաւ, ու ըսաւ թէ այս ինչ պաշ-
 տօնեայն իրեն գէ՛մ դաւակցութիւն մը կը խորհի: ԱՌԼՍ-
 ԳԱԼՈՍ գիտելով որ ասիկայ անհաշտ թշնամի է պաշտօ-
 նէին, արձակեց զինքն ըսելով. Վստ, սաւաջ թշնամ-որդ
 հիւր հաշտութիւն, և ես ան սպիտ խօսքիդ կը հաստատուիմ:

Ք Լ Ո Ւ Խ Լ Պ

ԱՐԲԵՑՈՒԹԻՒՆ

ՎԻՆՒՆ թէպէտ կ'ուրախացնէ, բայց կը կատողեցնէ ալ :
 Եթէ երբեմն կենդանութիւն և պայծառութիւն կուտայ
 մեր խորհրդոցը, ծաղրելի՛ յիմարական ու այլանդակ գա-
 ղափարներն ալ կը զարթուցանէ, զի իւր գոլորշեօքն կը
 շիջուշանէ այն պատուական ջահը՝ զոր բնութիւնը զմեզ
 լուսաւորելու համար տուած է, կամ գէթ կը նսեմացնէ,
 կը ստուերացնէ զայն իր թանձր մառախուղովը : Ա՛յս
 լոյսէն զուրկ մնալովնիս, ալ կը սկսին աչուրներնիս շուարիլ, կը
 դողդողին քայլերնիս, գաղափարներն կը շիտթին, կը
 խանգարի դատողութիւնը, կիրքերն կը գրգռին և յամօ-
 թալի չափազանցութիւնս կը ձգեն :

Վսենոփոն (1) Քաստիարականութիւն Աիւրոսի անուն
 գործոյն մէջ հետեւեալ պատմութիւնը կ'ընէ : Աիւրոս իր
 նախահօրմէն՝ Վ՛ժգահակէն թոյլտուութիւն առնելով որ
 զինին ինքն բաշխէ, խիստ գեղեցիկ կերպով՝ մը մատա-

(1) Երեւելի իմաստասէր, պատմագիր ու զօրավար Աթենացի՝
 ծնաւ 445 ամ.ք Քրիստոսէ առաջ, եւ աշակերտեցաւ Վսկրատի :
 Գեղիոնի եւ Վեղոպոնիսեան պատերազմին մէջ զինուորեւէն վերջը,
 Արտսերոյն Աիւրոսի նիգակակից զօրաց գունդն գրուեցաւ : Կու-
 նաքսայի կռուէն ետքը, երբ Յունաց զօրավարները դաւաճա-
 նութեամբ սպաննուեցան, Քսենոփոնի յանձնուեցաւ բոլոր գըն-
 դին : Տրամանատարութիւնը եւ կրկին զանիկայ Յունաստան գար-
 ձնելու հոգը, որ իրօք կատարեց մեծ ճարպիկութեամբ : Թրակի-
 ոյ եւ Լալեդեմոնի գրոշներուն ներքեւ ալ կռուելէն վերջը, մե-
 ռաւ Աորնթոս 330 տարի Քրիստոսէ առաջ :

Չանազան գործեր ունի, որոնք խիստ նշանաւոր են ոճոյ քաղց-
 րութեան եւ յստակութեան կողմանէ, եւ որոցմէ Քաստիարա-
 կանութիւն Աիւրոսի կոչուածն միայն ծանօթ է ազգիս :

կարարին գործը կը կատարէր: Ա՛յն է, ըսաւ թագաւորը,
 հոգեւոր-ցիւն է եղանակը, բայց ի՛նչու համար մարտահարարին նը-
 ման դուռ ալ աւազ չէս ճաշակէր քինին: «Արովհետեւ կ'երկն-
 չիմ, պատասխանեց Աիւրոս անկեղծաբար, թէ գուցէ
 թոյն ըլլայ այս ըմպելուն մէջ. զի ծննդեանդ տօնին ը-
 րած խնճոյքիդ մէջ բացայայտ տեսայ որ մատա-
 կարարը թունաւորեց բոլոր հանդիսականները»: Ա՛յնչ-
 պէս իմացար զայդ, հարցոյց թագաւորը: «Ա՛յն զի պալա-
 տականք մէկ քանի գաւաթ ըմպելէն ետեւ, պատասխա-
 նեց Աիւրոս, ամէնքն ալ խելառեցան: Ա՛յնպիսի բաներ
 կ'ընէին, որ մարդ տղոց վրայ անգամ տեսնուելուն չնե-
 րեր: Ա՛յնքան կը պօռայն, կը կանչէին, մերթ ծաղրելի ե-
 դանակօք կ'երգէին, և երբ մէկն միայն երգէր, առանց
 ոյլ դնելու ամէնքն 'ի մի բերան կ'երդնուին թէ շատ լաւ
 կ'երգէ: Աւրաքանչիւր ո՞ք իր ոյժն կը գովէր, բայց երբ
 պէտք ըլլար կայծել, կանոնաւոր կերպով ոտուրնին փո-
 խելու կարող չլինելէ զատ, կանգուն անգամ չէին կրնար
 կանգնել»: Ըօրդ ալ այսպիսի բան առնուին չէ՞ պատահած,
 հարցոյց Ա՛թգահակ: Ա՛յն էրքէ, պատասխանեց Աիւրոս:
 Ը՛ստ ի՛նչ կ'ըլլայ իրեն, եթէ խօսեալ ըլլայ, ըսաւ Ա՛թգա-
 հակ: Օ՛րաւ ընչանցնէ, պատասխանեց Աիւրոս: Ապարտացիք
 պատանիները գինաճուղութենէ կասեցնելու համար ծա-
 ռայ մը կ'արբեցնէին ու իրենց առջին կը դնէին, որպէս զի
 տեսնեն թէ գինովութիւնը ի՛նչ սոսկալի վիճակի մէջ կը
 ձգէ մարդս, խելքը գլխէն առնելով և աւելի անբանի քան
 թէ մարդոյ նմանեցնելով: Ա՛յնքան օրինակ բերեմք
 գինուոյ չարիքն ցուցնելու դիտմամբ:

Եւրպէլ (1) անուն բանաստեղծը անգամ մը Աաղղի-

(1) Բլոտ Էմմանուէլ Լուիլիէ Եւրպէլ, ծնաւ Լա Եւրպէլ Փարի-
 զու մօտ 1626ին: Մտերիմ էր իր ժամանակին բոլոր գրագէտներուն

ոյ մէկ մարաջախտին հետ սեղանն բազմեր էր : Ռաւական
 գինի խմելէ ետև սկսաւ խորհրդածութիւններ ընել մարդ-
 կային թշուառութեանց ու ապագային անստուգութեանը
 վրայ : Արկուքն ալ միաբանեցան թէ խիստ վտանգաւոր
 բան է առանց կրօնի ապրիլ, բայց Վրիստոնէաբար կեանք մը
 վարելուն դժուարութիւնն ալ յիշելով, երանի կու տային
 մարտիրոսաց, որ սակաւ ինչ նեղութիւն կրելով երկինքն
 շահեր են : Ան ատեն Շաբէլ առաջարկեց որ երկուքին
 ալ աղկ կ'ըլլայ եթէ Վրիստոնէութիւն չընդունող
 երկիր մը երթան Վրիստոնէական կրօնքն քարոզեն :
 Օհր իջեալն, կ'ըսէր անիկայ, եւ իրենց իշխանաց առջին
 կը որոնէին. եւ Բաղուստիմոն իմ համարեալն կը խոստովանիմ, որո-
 ալ այնպէս կ'ընէս, Վարուն մարաջախտ : Օյս ալ զէն ալ կը
 հաւանէն, եւ անոս որոնիս կ'երթեամք : Մարաջախտը վիրաւո-
 րեցաւ որ Շաբէլ իւր անունը առաջ յիշեց : «Ինձ կը
 վայելէ, ըսաւ անիկայ զայրացեալ, որ մարաջախտ եմ
 Վաղղիոյ և դուքս, ինձ կը վայելէ առաջ խոստովանիլ ու
 մարտիրոսանալ, և ոչ թէ քեզի պէս ոչինչ մարդու մը» :
 «Ի՞նչ պէտք է ինձ բու մարաջախտութիւնդ ու զքսու-
 թիւնդ պատասխանեց Շաբէլ» : Այս խօսքին վրայ մարա-
 ջախտը ապտակ մը զարկաւ Շաբէլի, և ահա սեղանն,
 պնակներն, աթոռները, ամէն բան տակն 'ի վրայ եղաւ :
 Չայնն առնելով, վազեցին ծառայները և զարմացան կըռ-
 ւոյն վրայ, բայց ևս առաւել զարմացան երբ ճշմարիտ
 պատճառն իմացան :

Շաբէլ ասկէ աւելի զարմանալի գինովութիւն մ'ալ
 ունի : Մոլիէն իր կենաց վերջին օրերը կերակրէ և ըմպելիքէ

եւ սիրելի անոնց իր ընկերական ձիրքերովն ու հանճարովը : Մե-
 ռաւ 1686 ին : Չանապան գործեր ունի, որոցմէ ամենէն երեւե-
 լին կը սեպուի Չանապարհորդութիւն 'ի Մոնթելիէ կոչուածը :

կը զգուշանար : Արք () տիկը ըսուած տեղի տունն երթար ,
 Շարէլն հետ կը տանէր ու անոր կը յանձնէր սեղանի
 պաշտօնը և հրաւիրելիք անձանց ընտրութիւնը :

Արեկոյ մը Մոլիէո (1) բաղձահանները Շարէլի յանձ-
 նելով , սեղանէն ձեկնեցաւ : Ասոնք երկար ատեն ուտելէ
 խմելէ ետե սկսան բարոյախօսել : Ան , քանի՞ կարճատե-
 ւն ճարտարա սաւորութիւն , ըսաւ Շարէլ , և որքան լի ընտ-
 սան ընկածք . եւետան , քանտան քարի անդադար կ'աշխարհի՞
 վայրէջան մը հանգչելու համար , այն ալ զէնք քանի . Չանձ-
 րացեալ կենաց թշուառութիւններէն , միաբան վնեցին որ
 երթան մօտն գտնուած գետը նետուին , խեղդուին : Այ-
 լան և սկսան ուրախացից դէպ 'ի գետն երթալ : Մառա-
 ներն ու տեղացւոցմէ շատերը վազելին այս խելս գար-
 ներուն ետեէն՝ որ արդէն ջուրը նետուեր էին , և դուրս
 հանեցին գետէն : Արքեալք ալ զայրանալով այս գործոյն
 վրայ , սուրերնին քաշեցին և սկսան իրենց օգնութեան
 եկողներուն վրայ վազել , թշնամի կոչելով զի ենք : Մո-
 լիէո եղելութիւնը իմանալով , անմիջապէս անկողնէն ե-

(1) Յովաննէս Մկրտիչ Մոլիէո , երեւելի կատակերգակ Քողիա-
 ցի , որոյ ճշմարիտ անունը Բոքլէն էր , ծնաւ 'ի Փարիզ 1622 ին
 եւ դաստիարակեցաւ Յիսուսեանց Քլէման ճեմարանը : Իրաւա-
 բանութիւնն ուսաւ Օրլէանի մէջ . բայց չգործածեց . գոյն իրը
 արհեստ , թատերգութեան վրայ շատ սէր ունենալուն համար : Ժա-
 մանակ մը իրը գաւառական դերասան վարուելէն ետեւ , վերջա-
 պէս թատերական ընկերութիւն մը կազմեց Փարիզու մէջ 1658 ին :
 1665 ին Լուտովիկոս ԹԻէն թոշակ մը ընդունեցաւ . իր գրած
 կատակերգութիւններն ալ բոլոր եւրոպա մեծ ընդունելութիւն
 գտան : Այսքան հռչակուելէն , իր թագաւորէն պաշտպանուելէն
 եւ առաջին կարգի տաղանդաւոր անձանց բարեկամութիւնը վա-
 յելելէն ալ վերջը , հանգիստ չգտաւ Մոլիէո : Հիւանդութիւնն
 մէկ կողմանէ , առ տնին վիշտեր ալ միւս կողմանէ կը տազնա-
 պէին զինքը : Մեռաւ 1673 ին , շատ դուրածք թողլով անմահ
 յիշատակ իր անուանը :

լաւ , անոնց գտնուած տեղը գնաց ու հարցոյց թէ ի՞նչ է պատաւորութիւննին : Չա՞նքրացեալ այս աշխարհն զիշտեբէն , պատասխանեց անոնցմէ մէկը , որ շէջինք մեա աշխարհն զտա-
 ել : Ի՞նչի՛ ըսաւ Մ'ուլիէն , բայց ես յեղ ի՞նչ ըրած եմ , որ զի-
 աւ հետ զեք ասաներ : Օ՛րիս հետ զտաւ ընկղծել կ'ազեք , ա-
 սանկ է յեր բարեկամութիւնը : Իրաւունք ասին՝ գոչեց Շարէլ ,
 ինչ մայ , զէք անիրաւութիւն մը պիտի գործէինք . եկ որեմն
 Մ'ուլիէն , ի մասին գեորը նեպոսիմք : Ի՞նչազում յօժարու-
 թեամբ , պատասխանեց Մ'ուլիէն , բայց ասիկայ կարեւոր
 գործ մ'ըլլալով , խոհականութեամբ ընելու եմք , որ զիտ-
 ասի արժանիքն կամ թէ աշխարհք ծուռ մեկնութիւն մը չտայ :
 Ա՛յժէ այս վայրկեանիս մէջ գետամոյն ըլլամք , անշուշտ
 պիտի ըսեն թէ իբր յուսակտուրք կամ արբեալումանք գի-
 շերն ընկղմեցան : Ա՛յկէ՛ք աւելի պատուաւոր վայրկեան մը
 ընտրեմք , վաղն առաւօտուն դեռ նախաճաշիկ չըրած գե-
 տը նետուիմք 'ի ներկայութիւն բոլոր ժողովրդեան' : Ան-
 կնգիրք հաճութիւն տուին այս որոշմանս և գնացին պառ-
 կեցան . ցնդեյաւ գինին և իրեն հետ խորհուրդնին :

Պէտք չէ այսու ամենայնիւ գինւոյ գործածութիւնը բո-
 լորովին դատապարտել . մանաւանդ թէ չափաւորը միշտ
 օգտակար կրնայ ըլլալ : Օ՛րի թէ և կը տաքցնէ գերեա-
 կայութիւնը , բայց և այնպէս չայլայլեր զբանականութիւ-
 նը : Ա՛յլ բարեկիրթ անձինք ասով կը խրախանան և ոչ թէ
 կ'աղմկին : Ա՛ն ատեն անհրաժեշտ պարտաւորութիւն է ըմ-
 պելն վերջացնել , երբ խելքն կ'սկսի շիջիլ , աղմկիլ :

Վի՛նին մարդս որախացնելու և ոչ թէ գինուցնելու հա-
 մար եղած է : Չափաւոր գործածութիւնը հոգեւոյն և սրտին
 բերկրութիւնն է : Ի՞նչպէ՛ս կ'ողմանէ բարեխառնութիւնը հոգեւոյն
 և մարմնոյն ասող ըն-՛նն է :

Ա՛նբարեխառնութիւնը ընդ հակառակն վնասակար է թէ

նովնալով, անվայել խօսք մ' ըրեր էր մօրը դէմ, որ
սաստիկ վշտանալով գնաց իր դաստիկոնն առանձնացաւ,
և մինչև երկրորդ օրը դուրս չելաւ: (Թագաւորը զինքն
չտեսնելով, հարցոյց պատճառը, և երբ իրեն իմաց տու-
ին զայն, գաւաթ մը լեցոյց զինւով՝ թագուհւոյն մօ-
տըն գնաց ու ըսաւ. Տի՛ն գիտե՛՞մ որ երէկ գինւո՞ւ-
նե՞սք առ յեղ ունեցած պարսաւորս-
նի-նա մասցայ, և որպէս զի
անգամ մ' ալ նոյն պահա-
սեմը թէ զ. ընկնի՛մ, յառող-
մնի-ն
յեր էր իմե՛՞մ այս գա-
ւաթը, վերջինն բոլոր
կեանքիս թէ:
Հաս-
տատ կեցաւ իր խօսքին
վրայ, և այն օրէն
ետեւ անգամ
մ' ալ բերանը
զինի չառաւ:

կայծակի պէս Տանիմարբա յարձակելով, ստիպեց անոր տէրը որ
խաղաղութիւն խնդրէ: Ռուսիան ալ զգաց իր զինուոց զօրութիւ-
նը: 1700 ին Վիվոնիա ելնելով ութն հազար Շուէտ զօրօք ութ-
սուն հազար Ռուսիացիները յաղթահարեց: Յետոյ Վոլսնիայի
Աւդոստոս թագաւորն հալածելով, անոր տեղը նստեցոյց Սիւսիս-
լաւոս: Բովանդակ Ռուսիան նուաճելու մտօք, դէպ 'ի Մոսկուա
ուղղեց իր ընթացքը. բայց մէկ քանի յաղթ ու թիւններէն վերջը
բոլորովին ջնջուեցաւ զօրքը Բուլղովայի պատերազմին մէջ 1709:
Այս դէպքը ստիպեց զինքն Օսմանցւոց երկիրն ապաստանել,
եւ մեծ պատուով ընդունուեցաւ: Սակայն Թրքաստանի եւ Ռուսիոյ
մէջ բարեկամութիւնն հաստատուելով, հարկ եղաւ Օսմանեան
սահմաններէն մեկնիլ: Անհնարին դժուարութեանց յաղթելով,
վերջապէս իր երկիրն հասաւ: Մեռաւ 1718 ին Նորվեկիոյ Փրի-
տերիքշօլ անուն տեղին պաշարած ատեն զնդակիր հարուած մը
ընդունելով:

Գ Լ Ո Ւ Խ Լ Ե

Խ Ա Ղ

ԽԱՂԸ (1) շատերուն համար զուարճութիւն մ'է . կ'ամօքէ վիշտերն և վայրկեան մը կը թեթեցնէ , կը մոռցնէ բազմազբաղ կենաց անձկութիւնները : Աւտի պատուիրեալ չհամարուելէ զատ , երբեմն օգտակար ալ կրնայ ըլլալ : Ի՛նչպէս իբր դեղ՝ միայն 'ի հարկէ կամ պարագաներէ ստիպեալ , գործածելու է . ինչպէս , հիւանդ մը ըստ փութելու , կամ բարեկամ մը՝ հիւր մը զուարճացնելու համար : Այլապէս իմաստասիրաց մէկը , որուն խրատներն խիստ ողջամիտ կ'երևին , ծանր աշխատութիւններէ ետև միայն խաղալը ներելի կը համարի : Ի՛նչպէս ասիկայ ի՞նչ պիտի ըսէր արդեօք այնպիսեաց համար՝ որ օրն ողջոյն խաղալով կ'անցնեն առանց ամենեին կարևոր գործոյ մը հետեւելու , և մինչև անգամ խաղի պատճառաւ գործերնին՝ զաւակաց դաստիարակութեան և առողջութեան հոգրն բոլորովին մտքէ հանելով :

Իմաստութիւնը՝ որ կը մերժէ ամէն բանի չարաչար գոր-

(1) Խաղուց ոմանք բոլորովին բաղդէ կ'իշխուին . եւ ասոնց մէջ օգուտն քան թէ զուարճութիւնը կը տիրէ : Ամանք ալ միայն խաղցողին վարպետութեամբ կը յաջողին . ինչպէս է Սատրինջը . եւ ասոնք աւելի գիտութիւն քան թէ խաղ կրնան համարուիլ : Աերջապէս կան ուրիշներ ալ որոնց մէջ մերթ խաղցողին վարպետութիւնը եւ մերժ բաղդը կը յաղթանակէ . եւ ասոնք ամենէն գեղեցիկն են : Աւշադրութիւնը կը գրաւի առանց խոնջելու ուղեղին . եւ բաղդը՝ խաղցողին գիտութեամբն կառավարեալ , ճշմարիտ զուարճութիւն մը կ'առնէ : Այսպիսիք աս համայն բարեկիրթ անձանց խաղալիք խաղերն ըլլալու են :

ծածուծիւնք, կը դատապարտէ նաև խաղուց մոլութիւնք,
 ժամանակի կորուստը, պարտաւորութեանց ան հոգութիւ-
 նք, անպիտան կեանք վարելու բերուիք: Օյի զուարճու-
 թեան համար խաղալու թոյլտուութիւնն ընելովն, զմեզ
 զգուշացնել կ'ուզէ. միայն որ խաղալը, ինչպէս կը կար-
 ծեն ումանք, կարևոր զբաղմունք մը չձևացնեմք: (1)

Արտեսներս սեղանիս շորջը շարուած խաղացողները.
 որչափ տրտում է դէմքերնին. ի՞նչ տխուր լուծիւն մը
 կը տիրէ մէջերնին. ()րեր և երբեմն ամբողջ գիշերներ
 կ'անցնին, և դեռ ասոնք անշարժ տեղերնին նստած են և
 խաղը, խաղուց անագորոյն իշխանն մերթ կը յաջողէ
 կամ անյաջողութիւն կը ցուցնէ, և մերթ կ'ուրախացնէ
 կամ կը տրտմեցնէ: Չուարթութիւնն ու զուարճութիւնը
 բոլորովին արտաքսած, շահելու սէրն կամ կորուսանելու
 երկիւղն միայն կը տիրէ: Ասոնց կը յաջորդէ վէճերը,
 գժտութիւններն ու թշնամական խօսքերը, որ սաստիկ
 կը վշտաբնեն մարդս: Այլ ո՞վ կրնայ նկարագրել այն բո-
 լոր շարժումներն հոգւոյն՝ որ շարունակ իրարու կը յա-
 ջորդեն, կամ խաղացողներուն դիմացը վրայ տպաւորուե-
 լով՝ հոգւոյն յուլմունքը կը յայտնեն:

Փոխելիք տեսարանը. համեստաբարոյ ընտանիքի մը ծո-
 ցրն զմեզ փոխադրեմք: Ի՞նչ կրներկայանայ մեր աչացը:
 Մէկ քանի ընտիր բարեկամներ, որ ցերեկն օգտակար
 գործովք զբաղելէ ետև, երեկոյին կը ժողովին. խաղ կը խա-

(1) Մեծապէս զգուշանալու է չափազանց սէր ձգելէ որեւէ տե-
 սակ խաղու մը վրայ: Պղատոն տեսնելով որ իւր աշակերտաց
 մէկը չափազանց ջերմութեամբ կը խաղար, խստիւ յանդիմանեց.
 Եւ երբ աշակերտը զինքն կ'արդարացնէր ըսելով թէ չնչին բանի
 մը համար կը խաղայ, պատասխանեց. Ե- ֆիէ - անորիցի բա՞ն է
 համարիս խաղալու - իրե՛ք, որ սոխա - ուր սոխա - ի - զալի - սանտի - թի - ս
 է՛նէ Ժե՛լ:

ղան, սակայն ոչ թէ շահելու կամ յաղթելու համար, այլ իրար զուարճացնելու դիտմամբ: Ար տեսնես հոս ի՞նչպէս կը թագաւորէ ուրախութիւնը, խաղաղութիւնը, համեստութիւնն ու շափաւորութիւնը:

Մ. յսպիսեաց ահա նմանող ըլլալով, մի՛ բոլորովին կասիր անմեղ զուարճութիւններէ: Նանականութիւնը երբեմն կը պահանջէ որ մեր հոգերը առկախեմք:

Աւտի երբ խաղալու ըլլաս, նայէ՛ որ ամենէն աւելի զուարճալի խաղն ընտրես: Նայց անհրաժեշտ պարտաւորութիւնդ է չմոռնալ թէ խաղը միայն զբօսանք մ' է: Մի՛ խաղար ուրեմն ստակով կամ թէ մեծ գումարի մը համար. զի ան ատեն կամ շահելու փափաքը կամ թէ կորուսանելու երկիւղը տիրելով, խաղը քեզ զուարճութեան աղբիւր մը կ'ըլլայ:

Վրամով խաղալը ի՞նչ սոսկալի աղետից առիթ է տուեր: Վաղղիոյ Ֆրանչիսկոս Մ. երբ Մատրիտ բանտն արգիլուած էր, տեղւոյն երևելեաց մէկուն հետ խաղալով ահագին գումար մը շահեցաւ: Սպանիացին ըրած կորստեանը վրայ վշտացած, դրամն վճարելու ատեն գոռոզութեամբ ըսաւ թագաւորին. «Վահէ տեկայ, որ ե՞րբ էլբէհան՝ գործածես»: Ֆրանչիսկոս սաստիկ զայրանալով այս նախատանացն վրայ, անմիջապէս սուրը քաշեց և գլխուն զարնելով շնչասպառ գետինը փռեց զնախատողը:

Արբ ստակով խաղալ ստիպուիս, միշտ զգոյշ կեցիր մեծ գումարներու խաղալէ, այլ նայէ որ անանկ փոքր բանի մը խաղաս, որ եթէ կորուսանես ստրջանք չպատճառէ: Ալ միշտ խաղալէ առաջ միտքդ դիր թէ պիտի կորուսանես. և եթէ բազդը քենէ փախչիլ սկսի, մի՛ ետեւէն պնդիր. մի՛ կամակորութեամբ աշխատիր քենէ յափշտակուած դրամն կրկին ձեռք ձգելու:

Խաղուց պէս բան մը չկայ մարդոյս բնաւորութիւնը
 յայտնող : Աստի տէր եղիր անձիդ : Հսկէ աչալուրջ որ
 վայրկեանի մը մէջ ուրիշին յարգը չկորուսանես : Այլ
 նայէ որ դրամական կորուստդ, դրամէ աւելի պատուա-
 ւոր բանով մը, քեզ հետ խաղցողին համարումը շահե-
 լով լեցնես :

Վերայ այսր ամենայնի անտարբեր կերպով խաղալն
 ալ լաւ բան չէ . զի ինչպէս որ չափազանց ուշադրութիւնը
 դուռոզամտութիւն և ագահութիւն կը ցուցնէ, անուշա-
 դրութիւնն ալ թեթեւամտութեան նշանակ մ' է : Խաղու
 միջոցն ազատ ու վստահ դէմք մ' ունենալու է, առանց
 ցուցնելու անհոգ կամ ցնդեալ միտք մը : Մի' դժգո-
 հիր ոչ քենէ, ոչ ալ ընկերէդ . և մի' վիճիր երբ անիրաւ
 հնարք մը գործածեն քեզ դէմ . այլ նայէ որ քաջրու-
 թեամբ ստիպես զիրենք յօժարամիտ պիջանելու : Ան ա-
 տեն շահած կ'ըլլաս, երբ զինքդ սիրելի ու յարգելի
 ընես ամենուն :

Գ Լ Ո Ւ Խ Լ Չ

ԲՂՋԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ

ՄԻԿԱՅ ահա ելի վիճ մ' է, ուր յաճախ կը գահալիժին շատերուն ինչքն ու առաքինութիւնը: Իրաւի տուփանքն ամէն անգամ զգալի անկարգութիւններ չպատճառեր, բայց միշտ վտանգաւոր են իւր հետեութիւնքը: Օ՛հ կը թուցնէ, կը մեղկացնէ զսիրտը, որով բոլոր առաքինութիւնք կը փճանան: Հեշտասիրութիւնը կը տկարացնէ զմարմինը, կը թունաւորէ զհոգին, ընտանեաց մէջ կասկած, անվստահութիւն ու երկայառակութիւն կը սերմանէ և երբեմն ալ անկանգնելի կործանումն կ'առնէ: Եւ որոհեալ խիստ ընդհանուր, ամէն հասակի և ամէն վիճակի մոլութիւն մ' է ասիկայ, մէկ քիչ երկարորէն խօսելնիս անպատշաճ չերևիր:

Դարձո՛ւ աչուրներդ աշխարհիս ընդարձակ տեսարանին վրայ, և պիտի տեսնես թէ ուր սոյս մոլութիւնը կը տիրէ, հոն կը թագաւորէ գողութիւնը, նենգութիւնն ու անհաւատարմութիւնը: Հոն կը յաճախեն ամօթալի հիւանդութիւնք, դառնակսկիծ ցաւեր, կազմուածոց տկարութիւն, արեան ապականութիւն, երիտասարդութիւն կ'թուցեալ, կանխահաս ծերութիւն և օրհասք տաժանելի:

Եւ ի՞նչ անհնարին անկարգութեանց շառաջնորդեր այս շարածին կիրքը: Օ՛հներն գոհ ընելու համար դրամոյ կը կարօտիս. զի մոլի զուարճութիւնները ոսկւոյ կը գընուին: Տուփանաց շատուածն անով կը զարդարուի և անով իւր արտառոց ծախքերը կը նախատեսուին: Անգո՛ւթ

մարդասանձներ, պարզեաց քան թէ սիրողներն գգուա-
նացը ցանկացողք ի՞նչ անյարգութեամբ մեր վրայ կը
յարձակին : Ինչո՞վ կը լեցունին այս ահագին որկորները :
Ընչուչտ ամէն տեսակ յափշտակութիւններով : Արդին
հօրը տունը գաղտ պիտի կողոպտէ, հայրը առանց ապ-
րուածի և դաստիարակութեան անխնամ պիտի թողու-
ղաւկներն : Մեծատունը պիտի չկամի ծառայքն կերակ-
րել և վարձքերնին վճարել : Պարտապանին անհնար
պիտի ըլլայ իւր պարտքն վճարել, և ասանկով պարտա-
տէրն, շատ անգամ խեղճ արհեստաւոր մը, յետին յուսա-
հատութեան մէջ պիտի ձգէ : Աարձ խօսքով այս կիրքն
գոհ ընելու համար մարդկութիւնը, արդարութիւնը, ըն-
տանեաց օգուտն, վիճակի պարտաւորութիւնները, պա-
տիւն ու համարումը բոլորն ալ ոտնակոխ պիտի ըլլան :

Բայց ամէնը այս չէ : Եթէ հակառակորդ մը դէմերնիս
ելնէ, ի՞նչ սոսկալի նախանձ, ի՞նչ գրգռութիւն ծը-
նունդ չառներ մեր սրտին մէջ : Օրպարտութիւնն, թոյ-
նը, և մինչև անգամ արիւնհեղութիւնը դէնք կ'ըլլան
մեզ վրէժխնդրութեան : Այլ հնար է արդեօք այս սոս-
կալի կիրքէն առթեալ արիւնհեղութիւններն ու մարդա-
սպանութիւնները նկարագրել :

Աւրիշ սոսկալի եղևոնագործութիւնք ալ կան : Քանի՞
քանի՞ օրիորդք երևոյթով պատիւնին պահելու համար,
զոր իրօք կորուսեր են, իրենց եղևոնագործութեան պտու-
ղը աւելի սոսկալի սիրով մը եղծաներ, մայր չեղած՝
որդեօպան եղեր են : Քանի՞ քանի՞ կուրացեալ մարդիկ
իրենց կրիչ սաստկութեանը միջոցն իբր թէ աստուածա-
ցուցանելով սիրուհինին, երգուեր են յաւիտենապէս դա-
նոնք սիրելու, և հաստատ կեցեր են իրենց սրբապիղծ
երդմանցը վրայ :

Պատիւը՝ որուն այնքան նախանձաւոր կը ցուցնեմք անձերնիս, ոչ թէ միայն մերը, այլ ամենուն ալ ակնածելի է, և մեծահոգիութիւնը՝ որով կը պարծիմք, մեզ կը յիշեցնէ թէ բնականապէս մենէ տկար արարածոց վրայ յաղթութիւն ստանալը մեծ փառք մը չէ: Վերջեցիկ պատկեր մը տեսնելու ատեն, զայն հայհոյողը կամ թէ անոր վրայ զարմանալու սիրտ չունեցողը կրնա՞յ մեծահոգի կոչուիլ:

Կոնձալիօ տի Քօռտովա Սպանիացին յաճախակի խեղճ ախոռապանի մը տանն առջևէն կ'անցնէր, որ երկու խիստ զերզեցիկ աղջիկ ունէր: Հայրը կարծելով թէ Կոնձալիօ իւր դասերը սիրահարած է, ուղեց պատեհ չկորուսանել զինքն աղքատութենէ ազատելու: Բնաց ներկայացաւ փոխարքային և իրմէ խնդրեց որ քաղքէն դուրս գործ մը տայ: Կոնձալիօ անմիջապէս ասոր դիտաւորութիւնը հասկնալով, հարցոյց. «Վ՞ր կը ծնայ քոսնդ»: «Նըրկու աղջիկ», պատասխանեց ախոռապանը: «Բիշ մը պատ, պատասխանեց, հիմա +եղ կ'ըսեմ ի՞նչ բնելի+դ»: Բնաց երկու քրտակ առաւ և երկերկու հազար տուքաթ դրաւ իւրաքանչիւրին մէջ և դարձաւ ախոռապանին տուաւ ըսելով. «Ես աս պիտի ըլլայ բնելի+դ, քնա՞ որտե՞ որ կարելի է շոտորով ամսանացոս աղջիկներդ, և ապա ե՛կ որ գործ մը քոսնդ»:

Բնչպէս արդէն ըսած եմք, ճշմարիտ զուարճութիւնը պարտաւորութեանց կատարմամբն կ'ըլլայ: Բոլոր հեշտասիրութեան գործերն գաղափարաց վեհութեանն չեն հաւասարիր: Ալ անշուշտ ո՞ր անձ, եթէ վատահոգի չէ ծրնած, հեշտասիրի մը գազանական զուարճութիւններէն գերազանց չհամարիր Կոնձալիօյի ըրածին պէս առաքինի գործոյ մը առթած բերկրութիւնն:

Հեշտասիրական զուարճութիւնները գրեթէ միշտ թու նաւորեալ են, և իրենց պատիժն իրենց մէջ կը գտնեն

մէկ գաղտնի վճռով մ' Աստուծոյ, որ այս կենաց մէջ անգամ անհնարին ցաւերով եղեռնագործութիւնները կը պատժէ: Ի՞նչ հեշտասէրներ կը տեսնեմք ամէն օր, որոց անդամքը տարափոխիկ ակտովք ակտաժետեալ, իրենց եղեռնագործութեանցը գործարան ըլլալէն ետեւ, զարհուրելի պատժոյ մը գործի եղեր են:

Արիտասարդք, որ ընկերաց չար օրինակէն և ձեր կիրքէն զազիր զուարճութեանց մէջ յաճախել կը յորդորուիք, յիշեցէք այն մտացի հօրն խրատը, որ իւր որդւոյն տուաւ: Ասիկա դիտելով որդւոյն կնամոյութիւնը, ամէն ճիգն թափեց զանիկա սանձելու, հեղձուցանելու, բայց վերջապէս յուսահատելով, առաւ զինքն հիւանդանոց մը տարաւ, և առանց յայտնելու իւր դիտաւորութիւնը, դահլիճ մը մտցոյց, որ անառակաց բազմութիւն մը անհնարին ցաւոց մէջ կը տագնապէին: Այս տեսարանը այն աստիճան սոսկացոյց, սարսափեցոյց զպատանին, որ երեսին գոյնը շրջեցաւ: 'Վնաս', հեշտասէրք թշուարասկան, ըսաւ ան ատեն հայրը, հեթե-ե' + ու սիրելի մտաւիւնդ, դու ալ շատով այս սենեակը պիտի խրկուիս, ուր զարհուրելի զանազան օրագնացալ պիտի սպիպես հայրք մահասանդ համար աղօթող ըլլալ Աստուծոյ:

Այս մէկ քանի խօսքն ու տեսարանին տխրութիւնը անանկ ուժգին տպաւորութիւն մ' ըրին երիտասարդին միտքը, որ շուտով վարքն ուղղեց: Աւ երբ ծերութեան ատեն այս անցքը պատմէր, կ'ըսէր. Աս ալ մարդ էմ, շատ պահասութեաներ փորձերէմ, բայց այն օրէն 'ի վեր առանց սոսկալու չար կնովը երեսն հայելու չեմ համարձակած:

Սէրը անանկ սոսկալի կիրք մ' է, որ եթէ թողուս որ աճի ու զօրանայ, ալ չհնազանդիր վճռոցդ. և բուն իսկ գործոյն մէջ, որ սիրտդ պիտի վիրաւորէ կամ ամօթով զքեզ պիտի լնու, չես կրնար անձիդ իշխել: Արտրէ,

խել, ուրեմն քաջութեամբ, լարուած որովայնով՝ մինչդեռ
 ժամանակ կայ, և վերհանձնութեամբ առաքինութեան պո-
 ղոտայն վերադարձիր, ամէն հաղորդակցութիւն կարե-
 լով կրկնող ենթակային հետ: Վասնի որ սիրտդ գրա-
 ւող անձը տեսնես, թոյնը կրկին հոգւոյդ մէջ կը սպրդի,
 և սիրտի գայ վայրկեանը որ քու որոշումդ իբրև ծուխ
 ցնդի: Աւազ չի ջուցուած կրակը ինքնիրմէ կը բռնկի: Յաղ-
 թութիւնը բոլորովին ապահովցնելու համար իմաստասէն
 օրինակին հետևելով օգնութիւն խնդրելու ես անկէ, որ
 միայն պարող է զքեզ առաքինացնել:

Իր տկարութեան փորձն ընողը միշտ զգուշաւոր կ'ըլլայ,
 զի մեծ յանդգնութիւն է մեր զօրութեանը վստահիլ: Այս
 տեսակ կռուոյ մէջ յաղթող հանդիսանալու համար վախ-
 նալէ ու խոյս տալէ աղէկ բան չկայ:

Արքութիւնը, մանաւանդ ՚ի կանայս, մեծ փորձութեանց
 և վտանգաւոր վայրկեաններու ենթակայ է: Վախուստն
 ուրեմն, իրենց աւելի հարկաւոր է քան թէ մարդոց, աւել-
 լի զգայուն և աւելի տկար ըլլալովսին:

Աւ որքան որ վտանգաւոր է կանանց՝ չափազանց ըն-
 տանութեամբ մարդոց մէջ յաճախել, ևս առաւել վը-
 տանգաւոր է հանապազօրդել ՚ի կանայս: Օ՛րի կանայք,
 որոց բաժինն է գեղեցկութիւնն ու քաղցրութիւնը, և ո-
 բոց փափաքը՝ աշխարհիս ամէն կողմն, մարդոց հաճոյա-
 նայն է, այն քան աւելի դիւրաւ իրար կը հրապուրեն և ի-
 րարու վտանգաւոր են, զի պարզապէս գգուելով մը մէկն
 զմիւսը գերի կ'ընէ իրեն:

Աւ որքան ուժգին ըլլայ յարձակումը, այնքան աւել-
 լի քաջութեամբ պաշտպանելու է զայն՝ որ բոլոր աշխար-
 հիս սակիէն աւելի կ'արժէ: Իսկ թէ որ բոլորովին ապ-
 հովցնել կ'ուզես, խոյս տուր, որքան որ կարելի է թշնա-

միէ մը որ սրտիդ զգացմանը կը պատասխանէ և հետևող
 եղիբ այն նախազգուշութեանց, որ շատ անգամ զանմե-
 ղութիւնը կրնան պահպանել :

Հետևեալ նախազգուշութիւնքն ալ օգտակար կրնան
 ըլլալ անմեղութիւնն պահելու :

“Որդեակ, մի պշտոր ընդ գեղ կուսին, կ'ըսէ Սողոմոն, մի
 յաղթեսցէ քեզ ցանկութիւն գեղոյ, և մի ըմբռնիցի
 աչօք քովք, և մի յափշտակիցիս արտեանամբ նորա
 ծրարիցէ՞ որ հուր 'ի գոգ և զհանդերձսն ոչ այրիցէ :
 Կամ գնայցէ՞ որ 'ի վերայ կայծականց հրոյ, և զոտս իւր
 ոչ խարշիցէ” :

Օգոյշ կեցիբ երևակայութիւնը ապականող գրեանք
 կարդալէ : Ներգոյշ գրիչները կարծես թէ այս միջոցաւ
 զընթերցասէրն իրենց ախտերովն ախտաժետել կ'ուզեն :

Իսոյս տուր այն գիշերային զուարճութիւններէն, աղ-
 մկալից ընկերութիւններէն, ուր զուարճանալու համար
 արք և կանայք կը խմբեն, և ուր մաքուր սրտիւ մշտնե-
 լով, անմաքուր սրտով դուրս կ'ելնեն :

Ինձոյքն, պարասաղս, տեսարաններն ալ վտանգաւոր
 բաներ են, բայց ասոնք իբր անմեղ զուարճութիւնք շատ
 պաշտպանողներ գտնուելուն համար, հարկաւոր կը հա-
 մարիմք մէկ քանի աշխարհագէտ անձանց յի կայութիւն-
 քը մէջ բերել 'ի հաստատութիւն մեր կարծեացը :

Պիւսիւ Ռապուլթէն (1) կոմսը, որ խիստ նշանաւոր է թէ

(1) Ռոթէ Պիւսիւ Ռապուլթէն կոմս գրագէտ եւ պալատական
 Գաղղիացի, ծնաւ 1681 եւ բաւական ատեն փառօք զինւորութիւն
 ըրաւ : Իր մէկ քանի գրութիւններն թագաւորին գէգոհու-
 թիւն պատճառելով, տարի մը Պաստելն բանտարկեցաւ եւ տապն
 եւ հինգ տարի արքունիքէն արսորուելու դատապարտեցաւ, թէ
 եւ վերջը շատ աղերսանօք կրկին հոն դառնալու ազատութիւնն
 շնորհուեցաւ իրեն. բայց ցուրտ ընդունելութիւն մը գտնելուն
 համար ստիպուեցաւ նորէն մեկնիլ պալատէն : Մեռաւ 1693 ին :

իր տաղանդներովն և թէ դժբաղդութիւններովը, հետեւեալ դիտողութիւններն կ'ընէ 'ի պատասխանի Շալոնի Ապիսկոպոսին խնդրոյն : «Արախաղը միշտ վտանգաւոր գտայ, ոչ միայն խելքովս այլ և փորձառութեամբս» : Այնպէս չարս զկայութիւնը որքան ծանրակշիռ է ուրիշ կէտերու մէջ, այլատապանի մը վկայութիւնն ալ կարծեմ թէ այս մասին արհամարհելի չհամարուիր : Իրաւ է որ կան անձինք որ այնպիսի տեղեր ուրիշներուն չափ չեն վստանար, բայց և այնպէս անուրանալի է որ ամենէն ցուրտ խառնուածք ունեցողները անգամ կը տաքնան : Այսպիսի ահուժները հասարակօրէն երիտասարդներէ և մանկամարդ օրհորդներէ բաղկացեալ են, որ արդ ն առանձնութեան մէջ մեծ դժուարութիւն կրելով փորձութեան դէմ դընելու, ևս առաւել նոյնը բնել կը ստիպուին այս բնկութեանց մէջ, ուր առարկաները, լոյսն, նուազարանաց ներդաշնակութիւնը և բնդ հանուր շարժումը ամենէն ճրգնազգեսաց անձինքն անգամ կը ջերմացնեն :

Տը Վլար վիլալ, որ շատ տեսակ զուարճութիւններ կը պաշտպանէ, կ'ըսէ թէ «Այն մայրը որ իր աղջիկները անզգուշութեամբ 'ի պարախաղն կ'առաջնորդէ, աւելի իւր զուարճութիւնը քան թէ զաւակաց առաքինութիւնը սիրած կ'երևի» :

«Միտ դրէք, կ'ըսէ Պոմոն տիկինը իւր աշակերտացը, համարձակ խօսիմք, ամէնքնիս ալ տկար և 'ի չարն հակամիտեալ կը ծնիմք» : Մեր սրտից մէջ տիրապետող ապականեալ բերմանց ամենէն հզօրը զուարճութեանց բերումն է, որ 'ի կանայս հազուստի սէրն, նախանձ և ունայնամտութիւն կը պատճառէ : Այնպէս ուշի ուշով քրններէք, պիտի տեսնեմք որ խրախուժեանց մէջ նորոյժ մը կը ստանայ : Աւ մի՛թէ կարելի չէ՞ որ այնպիսի մէկն

գտնուի անձերնիդ հաճելի ընել խնդրած մարդոցդ մէջ
որ փոխադարձաբար ձեզ հաճելի ըլլայ և թերևս չափա-
զանցօրէն :

Վիցուք թէ պարախաղին վրայ մեծ սէր ձգեցիք, ա-
մէն անգամ գացիք, ի՞նչ կ'ըլլայ շահերնիդ : Արիւննիդ
կը տաքնայ, քնոյ ժամերն փոխուելով առողջութիւննիդ
կը վնասի : Այլք դուք ննջէք, տղաքը կամ թէ ծառայ-
ները ասանկ աղատ գտնելով անձերնին, ամէն անկարգու-
թիւն կը գործեն տանը մէջ, և դուք պատասխանատու պի-
տի ըլլաք այն բոլոր պակսութիւններուն համար : (1)

(1) Պէտք չէ այսուամենայնիւ հասկնալ թէ պարեն բոլորովին
դատապարտելի բան է, ընդհակառակն ասիկայ խիստ առողջա-
բար ու զուարճալի անմեղ կրթութիւն մ'է յարմար երիտասար-
դական կայտառութեանն եւ կը գեղեցկացէ շարժումնիս : Ամե-
նէն խիստ բարոյական անգամ ասոր, ինչպէս եւ բոլորանմեղ զու-
արճութեանց դէմ ըսելիք շունի, մանաւանդ եթէ ասկէ ծնանե-
լիք մնլութեանցն արգելք դրուի :

Փ Լ Ո Ւ Թ Լ Է

Ծ Ո Ւ Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՉԱՓԱԶԱՆՑ անգործութիւնը մեասակար ժամկ մ' է ։
Ա'ապականէ մեր բոլոր պատուական ձիրքերը , կը հեղձու-
ցանէ առաքինութեան հունտերը , ծնունդ կուտայ բազ-
մաթիւ մոլութեանց՝ նման այն անմշակ արտերուն , որ մի-
այն փուշ և տատասկ կը բերեն ։ Օյի ամենէն յոռի խո-
տերը՝ շուքն ու անբերրի տեղուանքն կը բուսնին ։

Անգործութեամբ շէր որ 'Վաւիթ' ըստ «բոխ» Աստու-
ծոյ թագաւորը , մէկ վայրկեան՝ մէջ իր առաքինութիւնը
կորոյս և մեծագոյն ոճրով մը մեղանչեց ։ Աինչդեռ իր զօ-
րակետները դուրսը կը մարտնչէին , ինքն իր սրտին մէջ
անպարտելի թշնամուց մը հանդիպեցաւ . և երբ զօրքն քա-
ղաքներ կ'առնուին , յաղթութիւններ կը ստանային , 'Վա-
ւիթ իւր պալատին մէջ մէկ անգոգոյշ նայուածքէ մը ընկ-
ճած , կը կորուսանէր իւր անմեղութիւնն ու փառքը ։

Մոլութեան թելադրութեանցն դէմ գնելու ամենէն
ապահով միջոցը գործն , զբաղմունքն է , որ եթէ չափաւոր
ըլլայ , (1) տաղտկութենէ՝ մեր երջանկութեան ընտանի թըշ-

(1) Չափազանց տքնութիւնն խիստ մեասակար մոլութիւն կըր-
նայ համարուիլ . զի այս ալ կը տկարացնէ զմարմինը եւ կը ճնշէ
զհոգին ։ Գործը՝ ոչ թէ պատիժ , այլ նիւթ ըլլալու է զբաղման
հոգւոյն ։ Ինչպէս որ աղեղը միշտ ձիգ բռնելով իւր ձգողու-
թիւնը կը կորուսանէ , այնպէս ալ Ֆիզիզական եւ բարոյական
գլխարողութիւնները միշտ 'ի գործ բռնադատելով , իրենց ուժ-
նութիւնը կը կորուսանեն ։

Ուսումնականք , կանայք ալ մտքէ հանելու չեն որ նստողա-

Նամիէն ալ զմեզ ազատ կը պահէ, ժամերն զարմանալի ա-
րագուծեամբ մը անցնելով : Տաղտկութիւնը՝ ճանձրոյթն
անգործութեան առաջնորդութեամբը յաշխարհ մտած է :
(1) քօսանքն, խաղերը, զուարճութիւնք այսքան ջերմու-
թեամբ սիրուելուն գլխաւոր պատճառն ալ անշուշտ այս
է : Աշխատասէր անձը ինքն իրեն կը բաւէ :

(2) Գօն մարդը երբէք դատարկ չմնար, այլ անգործու-
թենէ նախապատիւ կը համարի շնչին գործով մը զբաղիլ :
Աւ հանգիստն ան ատեն քաղցր կը թուի իրեն, երբ իւր
ճաշակին համեմատ իր գործերն կարգադրելու ազատու-
թիւնն կը վաւելէ :

(3) Երկու թենէ խոյս տալու չափ ժամանակի գործածու-
թիւնն ալ ճանչելու է, (4) կամ թէ ուրիշ խօսքով ծու-
լութեան չափ անձնասիրական զբաղմունքէ ալ խոյս տա-

կան կեանքը խիստ մնասալար հետեւութիւններ ունի եւ գլխա-
ւորապէս ստամոքսի տկարութիւն կը պատճառէ : Ընդհակառա-
կըն շարժումը կը կազդուրէ զմարմինը, նոր կենդանութիւն մը կու-
տայ հոգւոյն եւ շատ հիւանդութիւններէ զմեզ ազատ կը կացնէ :

(1) Թէովփրաստոս կ'ըսէ թէ, ժամանակը այնքան պարտաւան թան-
ժ'է որ զանեկայ վարձողը շատ լին աւելի դատարարի է համարուելու է :
Զգօն անձը իր պարապոյ ժամերը ընդհանրապէս ընտիր գլխանց
ընթերցմանը կը նուիրէ, որ օգտակար ծանօթութիւններով կը պար-
դարեն զմիտքը եւ անգործութեան տաղտկութենէն եւ ունայն
խօսակցութենէ ազատ կը պահեն : Զի մարդ ան ատեն գրոց կամ
իր խորհրդոցն հետ խօսակցելով, առանձնացեալ չհամարուիր,
ինչպէս իրաւամբ նշմարած է իմաստասէր մը :

Հետեւեալ այլաբանութիւնն ալ կարծեմ թէ անախորժ պիտի
չըլլայ ընթերցողին : Ուղեւոր մը փոթորկի հանդիպելով, անծա-
նօթ կղզի մը կ'ընկնի, որուն բնակիչքը շուտ մը զինքն իրենց
վրայ թագաւոր կը կարգեն : Ի սկզբան կը շուարի կը մնայ խեղ-
ճը, բայց սակաւ առ սակաւ իբր թէ ընտանենալով բազմին
այս յաջողմանը, կը սկսի իւր զուարճութիւնն մտածել : Ան ա-
տեն քրմապետը՝ որ մեծ ազդեցութիւն ունէր կղզւոյն մէջ,
կու գայ, զինքն կը գտնէ ու կ'ըսէ, «Պարտ կը համարիմ անձիս,

բու է . զի պարտաւորութիւններն միշտ անհրաժեշտ են ։
 Արք Մեգղիացիք Վարդուս Լ ։ Վաղղիոյ թագաւորին
 երկիրները կ'արշաւէին , ինքը նոր կայսր մը հնարելու
 կըզբազէր ։ Սուրճանալու լաւ թէնց ճը զէ՞ճ Գու՞ճ , հարցոյց
 պալատականաց մէկուն ։ Լ . Ե . , պատասխանեց նախանձա-
 ւոր պաշտօնեայն , Բա՛ճ ճը ահէ՛ աւելի ուրախութեամբ շէր-

քաջ թագաւոր , ձեզ իմաց տալ թէ ձեր գահէն աւելի յողորմ
 բան չկայ աշխարհիս վրայ ։ Ամենեւին չկասկածած ատենդ ժո-
 ղովուրդը կուգայ զքեզ գահէն վար կ'առնէ , արքունական զար-
 դերէդ կը մերկացնէ եւ կրկին առջի հազուատներդ կը հազցու-
 նէ ։ Անգթութեամբ ծովեզրն կը վարէ եւ մակոյկ մը կը դնէ ,
 հեռաւոր կղզի մը կը մղէ ։ Այս է ահա երկրիս անայլայլելի օրէն-
 քը , զոր ձեր նախորդներէն ոչ մէկը կրցաւ փոխել , եւ թէպէտ
 ամէնքն գիտէին , բայց շատերը գահուց շքեղութենէն իրր թէ
 շուարած չկրցին ուշադրութիւններն ասոր դարձնել եւ հետեւա-
 բար գալիք շարեացն դարման մտածել ։ Զգօնները այսուամենայ-
 նիւ առաջուրնէ պատրաստութիւն տեսան" ։ "Եւ ի՞նչ ըրին" հար-
 ցոյց թագաւորը ։ "Հանգիստ կեանք մը վարելու համար բոլոր պէտք
 եղածն ժամանակին խրկեցին արքայք երթալիք կղզին , պատասխա-
 նեց կրօնից պաշտօնեայն ։ Եւ աղէկ կ'ըլլայ որ դու ալ անոնց
 օրինակին հետեւիս եւ պատրաստութիւն տեսնես շուտով" ։ Թա-
 գաւորը ամենայն սիրով այս խրատին հետեւելով , հարկաւոր
 բաներն խրկեց ապառնոյն մէջ իրեն օթեւան ըլլալիք տեղին ։
 Եւ երբ քահանայապետին ըսածին համեմատ , գահէն վար ձգուե-
 ցաւ ու այն կղզին արքայութեցաւ , փառաւոր կեանք մը վարելու
 կարող եղաւ ։

- Կ'անցնին արագ օրերը եւ մահն առ դուրս մերձենայ , խեղճ
 խաղալիք յոյսերու ։
- Կորուսանեմք զներկայն , ոչ հոգալով զապագայն ։
- Թռչի , կ'երթայ ծամանակն եւ իրեն հետ այն գանձերն , զոր
 հաւքեցին տարիներն ։
- Զուարճութիւնք եւ պատիւ , հարստութիւն ու համբաւ , եւ
 ցանկութիւնք այլ անթիւ որ տառապեն մեր հոգիք , են մի մի-
 այն մեր բարիք ։
- Ս . Ել ափսոս յիմարութեանս . ո՛հ ճակատագիր անագորոյն , այն
 ինչ ուրախ նկատեմք մեր վաստակոց զարգացիս , կ'ուզայ
 հասնի մահն յանկարծ , եւ տապալէ զմեզ յերկիր ։
- Աւա՛ղ աւուրցս զի անցին , աւա՛ղ յիմարութեանս ։

նայ հարստիւ : Արարոյս չվիրաւորեցաւ այս խօսքէն , այլ
օգտելով , ուղղեց իւր վարքը :

Աւ ոչ միայն համեստ զուարճութիւնները , այլ և ծա-
նրը զբաղմունքներն անգամ չեն կրնար գովելի համար-
ուիլ երբ պարտաւորութեանց արգելք ըլլալ սկսին : Բայց
չցիտեմ ի՞նչպէս կը պատահի որ մեր իճակին անհրա-
ժեշտ եղած զբաղմունքէն շատ անգամ աւելի սիրելի են մեզ
հարկաւոր չեղած զբաղմունքն : Էիւէ՛ անցեալ դարուն
ամենէն երևելի գիտնոյ մէկը , Աւուանչի Ապիսկոպոս ըն-
տրուելով , դեռ ուսմունքն կը շարունակէր : Իր թեմի
դիւղացիներէն մէկը մէկ քանի անգամ զինքն տեսնելու
գալով , ամէն անգամուն ալ մերժուեցաւ . երբ վերջապէս
պատճառն հարցոյ , ըսին թէ ուսման պարապեր է : Ահ ,
ըսաւ տրանջելով , ինչո՞ւ եւ՛մար այնպիսի մէկն մեզ Ապիսկո-
պոս չկարգեցին , որ արդէն ուսմանն անհարաժ ըլլայ :

Ծնողք գլխաւորապէս յիշելու են որ իրենց առա-
ջին պարտաւորութեանց մէկը զաւակաց դաստիարակու-
թիւնն է : Իրենց հոգողութեան մէկ գլխաւոր առարկայն
ըլլալու է զանոնք մոլութենէ զգուշացնել , մշակել ձիրքեր-
նին և պատրաստել ազգին իրեն օգնելու կարող անդամ-
ներ : Բայց հնա՞ր է ձեզ , ծնողք , այս սրբազան պարտա-
ւորութիւններն անթերի կատարել , երբ ձեր զուարճու-
թեանցն անձնատուր ըլլալով , անպիտան կեանք մը վա-
րելու օրինակ կ'ըլլաք իրենց , կամ թէ անհոգութեամբ
զանոնք կը յանձնէք ծառայից կամ այնպիսի անձանց ձեռ-
քըն , որ իրենք արդէն հսկողութեան և դաստիարակու-
թեան կը կարօտին :

Իմաստութիւնը քնոյ ժամանակն ալ որոշած է , ան ալ
կանոնօր սահմանեալ է : Բժշկականութիւնը 'ի վաղուց հե-
տէ վճռած է

Եօթ ժամք 'ի քուն

Բաւ են ամենուն :

Բայց ինչպէս որ ամենօգտակար ու ամենակարևոր եւ զած բաները վնասակար ալ կրնան ըլլալ, կամ թէ չարը բարւոյն միշտ դրակից է, այնպէս ալ ասիկայ չարաչար գործ սծուելով շատ անգամ կ'անհամի ու վնասառիթ կ'ըլլայ : Բունը անշուշտ երկնային պարգևայ ամենէն քաղցրերէն մէկն է : Բստ իմիք արդէրք կ'ըլլայ հիւանդուի եան, կը նորոգէ մեր ոյժը, կը բարեխառնէ կենաց դառնութիւնները : Թէ որ կ'ուզես որ Նախախնամութեան դիտաւորութեանն համեմատ քաղցր, կաղզուրիչ ըլլայ, բանաւոր կանոնօք վարուելու ես :

Բնութեան հեղինակը քնոյ համար գիշերն սահմանած է : Մի քնանար ուրեմն ցերեկ ատեն, և մի մտներ անկողին երբ արշալոյսն կու գայ զվարդիկ կը զարթուցանէ : Մի կարծեր թէ տիեզերն բովանդակ լուսաւորող ջահէն լուսաւորուիլը անարգութիւն է, կամ թէ երբ ուրիշները կը հանգչին, քու հսկելդ՝ փառք : Վանաւանդ թէ ասիկա մեծապէս կը վնասէ առողջութեան :

Գ Լ Ո Ւ Խ Լ Ը

ՇՌԱՅԼՈՒԹԻՒՆ

Խ՞նչ մեծ տհաճութիւն չպատճառեր շռայլութիւնը, ի՞նչ անձինք կործաներ են, և կը կործանին ամէն սր. ծախքերնին իրենց վիճակին, իրենց միջոցին համեմատ չընելնուն, փառասիրութեամբ կառավարուելնուն համար: Եւ շռայլութիւնը, դուստր մեղկութեան և ունայնամտութեան՝ անորձեղի և փառաւոր շաւղով մը յաղթատութիւն կ'առաջնորդէ, բայց և այնպէս յիմարներն են այս ճամբան գացողները:

Եւ քեզութեան սէրը խիստ բնական կիրք մ'է: Օ՛ր բնութիւնն ալ ինքնին շքեղ է, և մարդոյս չէ արգիլած իր առատ պարգևները գործածել: Բայց չափազանցութիւնը՝ անելորդ, անսովոր ծախքերն են դատապարտելին:

Խ՞նչ բանի կը ծառայէ ժպիտն ու դատարկապորտ ծառայներու բազմութիւնը, որ խաղ խաղալէ և 'ի քուն լինելէ զստ ուր'չ բան չեն ըներ: Խ՞նչ բանի կը ծառայէ կանանց ծաղրելի չափազանցութիւնն ու շքեղութիւնը զգեստուց, և յիմարական նորասիրութիւնը որ այնքան սուղի կը նստի ու այնքան շուտ կ'անցնի:

Նոտարակոյս կան անանկ նորաձեւութիւններ որ ոչ բարոյականը կ'ապականեն, ոչ ալ հարստութեան մեաս կը հասցնեն, հետեւաբար և ներելի կը համարուին. բայց տակաւին յեղամտութիւնը չ'ըստ մեծի մասին ասոնց ծընունդ տուողը:

Ետեւող ըլլալ ընկերութեան սովորութեանցը, նո-

բաձևու թեանցր գրեթէ հարկաւորութիւն մ' է, բայց խո-
հեւութիւնը մեզ առաջնորդ ունենալու եմք: Այժմէ այս
ինչ ձե հաղուսան հարկել հարկ ըլլայ, նայելու եմք
որ մեր վիճակէն մէկ քիչ ստորինին վայելուչն հար-
նիմք: Համեստութիւնը՝ մանաւանդ ի կանայս, ամենագե-
ղեցիկ զարդ մը համարելով:

Հարուստ պատանիներն ու շուտով հարստացեալ ան-
ձինք հասարակօրէն շոտլ կ'ըլնեն. զի չգիտեն հարս-
տութեան ճշմարիտ գործածութիւնը. և կը կարծեն թէ
բաղդն որ այնքան առատաձեռնութեամբ իր պարգևներ-
ըը շնորհերէ իրենց, չկրնար ետ առնել:

Այլ թէպէտ մենք մեր ստացուածոց օրինաւոր տեարքն
եմք, տակաւին մոռնալու չեմք որ մենք ալ տէր մ' ու-
նիմք, որմէ ընդունելու եմք զանոնք, և որուն հաշիւ պիտի
տամք, թէ ազահուձեամբ անօգուտ ընելմք զանոնք և
թէ շոտլութեամբ շարաշար գործածեմք:

Շոտլութիւնը որքան որ ազահուձեան չափ արհա-
մարհելի չեն համարելու մարդիկ, տակաւին ամէն բան
մտխոզը ազահէն աւելի կ'անարգեն: Առատութեան մէջ
անգամ անարգանքէ բոլորովին ազատ չէ զեղխութիւնը:
Անգամ մը երկու շոտլ անձինք կը վիճէին թէ ո՞րն
աւելի ծախք ըրած է: Աարժե՛ իէ, ըսաւ խելացի մարդ
մը, ասոնք անկեւանոցին դուռը իրար կը ձեծարեն:

Շոտլութիւնը կրակի կը նմանի, որ իր լոցերուն սը-
նունդ տուող նիւթը լափել ն ետև, անմիջապէս կ'ապ-
նի: Շոտլը աղբատանայէ ետև ուրիշներուն դիմել
կրտսիպօի, սակայն օգնութիւն չգտնելու. զի առատաձեռ-
նութիւնը բարեկամ կը յարուցանէ, զեղխութիւնը ապե-
րախաներ: Այս ծախիքը կշտացողներն ու գիրցողները
զիմքն չեն ճանչելու ճշմարիտ բարեկամներն ալ, որ իւրն

ձեռնառու կ'ըզային և թէ գոթք սղբութենէ այն վիճակն ընկ-
 նէր, ևր յ'հարսութեանը հասար երեսն շին նախը :
 Մասնկով ինքն իրեն մնալով, շարունակ անցելոյն յ'շա-
 տակաւը կը տանջուի, կծծիէն ալ աւելի կը թշուառանայ,
 զի ահամայ կը կրէ իր վիշտերը. երբ կծծին իր ազատ կա-
 մօքը անձիութեան մէջ կ'ապրի : Աւառաջ որքան լիօ-
 րէն դուարձութիւնն կը վայելէր, հիմա ալ այնքան լիօ-
 րէն դառնութիւնն է իր բաժինը : 'Վիտպինէս շապլ մարդ
 մը տեսնելով որ մէկ քանի ձիթապտղով ընթրիք կ'ընէր,
 ըսաւ . Անէ ճաշդ այսպէս ըրած ըլլայի, եհմա ասունկ ընթ-
 րէ՛ք ճշ պիտի շքե՛կեր :

Շրայլը կը մտխէ որպէս թէ մահուան դուռն հա-
 սած ըլլայ . և կծծին կը խնայէ իբրև թէ յաւիտեանս պի-
 տի ապրի : Արքան որ այն սոսկալի վայրկեանին մտե-
 նայ, որուն մէջ ամէն բան իրմէ պիտի առնուի, այնքան
 աւելի սիրտը կը կապուի : Բայց մահը վերջսպէս կը հաս-
 նի և կը ստապէ զինքն իր գանձերն ազահ ժառանգացն
 թողու, որոց այնքան անհամբերութեամբ կը սպասեն, և
 զանոնք գուցէ այնքան դիւրաւ պիտի մտխեն, որքան աշ-
 խատութեամբ և տքնութեամբ ինքն հաւաքեր է :

Մարդս այնքան դիւրսխաբ է որ շրայլն զինքն առատա-
 ձեռն, և ազահը անտեսադէտ կը կարծէ : Երոյս տո՛ւր
 թէ մէկուն և թէ միւսին բունած ընթացքէն, միշին ճամ-
 բայ մը կայ ազահով : Կանայտը եղիւր ամէն օր, և առա-
 տաձեռն՝ երբեմն : Շրայլ մարդ մը Մոկրատի կը տրտն-
 ջ'ըր թէ ստակ չունի : Վիտ ա'ս անձիդ, ըսաւ ի հաստա-
 սէրը, ծախե՛րդ անոն-եւլով :

Ի սնաւոր տնտեսութիւնը կամ թէ բոյորովին հարկա-
 ւոր շեղած կամ աւելորդ ծախուց հասար խնայութիւն
 ընելը կը ծաղկեցնէ զընտանիս : Սը մը մէկը իր հօրը

Տարցոյց թէ ի՞նչ կերպով այնքան ընչից տէր եղեր է :
 Արի՛ք զի-բն բան չկայ, ըսաւ Տայրը, վառս. ծ ճրս պնե-
 րուն մէկը մարելով, հարկաւորութիւն բաւակնունակով, -- էլ թ մէկ
 ճրագը կը բաւի, երկուստ չվարելով :

Շ ռայլութիւնը պարզապէս յիմարութիւն է. զի շռայլը
 թէպէտ և ունայն իրաց վրայ Տարստութիւն կը մտնէ,
 բայց բարերարութիւն մը չգործեր : Այլ խոհական անձը
 խնայութիւն կ'ընէ իր ծախուցը, որպէս զի միշտ կարող
 ըլլայ ուրիշին բարերարելու և ուրիշին բն չըլլալու : Ա-
 լելի նախապատիւ կը համարի իր պարտքը վճարել, քան
 թէ թոշակ կապել ուրիշին : Ասկ շռայլը որ առատաձե-
 ւորն ճանչցուի, կը խնդրէ, զանարժանն բարեօք կը թա-
 ցնէ և ընդունելու իրաւունք չունեցողին տալով, կը մեռնի
 պարտուք ծանրաբեռնեալ : (1)

Ա երջացնեմք այս գլուխը սեղանի ծախուց վրայով ալ
 մէկ քանի խօսք ընելով :

Ա՛յ քանի պնակ, բայց լաւ պատրաստուած,

Փափուկ ոչ շքեղ, մաքուր յարդարուած,

Գինի չափաւոր, կազդուրիչ ոչ շող,

Սեղանիդ վրայ, տե՛ս ասոնք միայն

Ան սովորաբար գտնուելիք բան :

Հիւր մը կամ բարեկամ մը մեծարելու ատեն մէկ քիչ
 աւելի շքեղութիւն բանաւոր կրնայ համարուիլ. բայց
 միշտ նայելու ես որ վիճակիդ ներածէն աւելի բան մը
 չընես :

(1) Կծծիութեան չարիքն՝ ալ բազմաթիւ են : Զի կծծիին խոր-
 հրրդոց սովորական նիւթը չարագուշակ լուրերն, ժամանակի անձ-
 կութիւնը, ծախուց հարկաւորութիւնն ու ծանրութիւնն է :
 Ամէն բան մանրամասնաբար կը հաշուէ, անտարբեր ծախուց
 անգամ խնայութիւն կ'ընէ :

Սոկրատ որ մը մէկ քանի հիւր ընդունելու պարտաւո-
րած ըլլալով, բարեկամին մէկը երբ զարմանք կը ցուցը-
նէր թէ մեծ պատրաստութիւններ չէ տեսեր, պատաս-
խանեց. Եթէ հիւրերս պարկէշտ անձինք էն, քանոսածն կը
բաւէ, եթէ պարկէշտ անձինք չէն, աւելի էս է:

Գ Լ Ո Ւ Խ Խ

ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԿՈՒՉԵ՞Ս որ եւ ջանիկ կեանք մը վարես, ճանչցի՛ր սաւ-
ցած բարեացդ արժէքն ու վայելքը, չափաւորէ՛ իղձերդ .
զի որքան առաւելոյն փափաքիս, այնքան մեծ կարօտու-
թիւն կը զգաս: Բաւականացի՛ր հարկաւորովն . չափաւո-
րութիւնը պատուականագոյն է քան մեծամեծ գանձերն,
որքան հանգիստ չին տար մարդոյս: ()ր մը մարդ մը Մե-
նեդիժոս յոյն իմաստասիրին կ'ըսէր, «Վեղեցիկ բան է փա-
փաքածն ստանալ»: Վեղեցիկ էս է, պատասխանեց իմաս-
տասէրը, եղածովն բաւականաւալ:

Եւ յս միջոցաւ միայն կը վայելեմք այն երջանիկ անդոր-
րութիւնն, զոր ամենեւին չին ճանչիր շատ բաներու փա-
փաքողները . զի կոյր փտտասիրութենէ մը կամ անյազ-
ընչասիրութենէ ազդեալ, շարունակ կը տրանչեն, յաւի-
տենական խաղալիք խալէական յուոյ՝ կը թունաւորեն
իրենց աւուրքը ունայն ցանկութիւններով որ զլիւնք ի-
րենց վիճակէն կը դժգոհացնեն և պարտաւորութեանց կա-
տարուելուն արգելք կ'ըլլան:

Արջանկուձեան ասեռասեծ արգել ընկրուն մէկը երկ-
 քաւոր քարեաց համար ջրով փոխիսք Տ'ունեն սլն : Այ-
 քան շատ ընչից տէր ըլլաւք, այնքան աւելի կ'ուլելք :
 Աւ մեր ունեցածէն այնքան շեւք դժգոհիր, որքան որ
 նախանձելով ուրիշին ունեցածին վրայ, ուստի և մեկք ալ
 աւելին կ'ուղերք : Ալ որ կ'աճաղ-բէ հարստանալու, կ'ըսէ
 Սողոմոն, և կը նախանձի ուրիշին վրայ, զհետէր թէ յանդգո-
 շեց զինքն յաղտարու-թեան պիտի գործէ : Հատ անգամ շա-
 տրն ուղելով, եղածն ալ կը կորսուի :

Թաթարիստանի Պալք քաղքէն երեք հոգի ճամբայ
 գնալու ատեն գանձ մը կը գտնեն ու մէջերնին կը բաժնեն :
 Ճամբայնին շարունակելով, երբ իւրաքանչիւր անձ իր
 ընկիւքը կը պատմէր, պաշարնին հատաւ : Աւստի ամենէն
 կրտսերը մտապայ քաղաքն խրկեցին որ հաց գնէ : Ասի-
 կա ալ ճամբայ ելաւ ինքն իրեն ըսելով. «Այս արգէն հա-
 րուստ եմ. բայց ևս առաւել հարուստ պիտի ըլլայի, ե-
 թէ իմն միայն ըլլար բոլոր գանձը ընկերքս երկու մաս
 առին. բայց մի՞թէ հնար մը չկայ բոլորն ալ ձեռուընէն
 յափշտակելու : Այո, կայ. թոյն կը գնեմ հացին մէջ :
 Աւ եթէ հարցնեն թէ ես ի՞նչ պատճառաւ չեմ ուտեր,
 կը պատասխանեմ թէ քաղաքն կերայ : Անոնք կ'ուտեն
 ու կը մեռնին, ես ալ ամբողջ գանձին կը տիրանամ » :

Այոն միջոցին երկու ընկերքը ծառի մը շուքն նստած
 կը սկսին խօսիլ : Մի՞թէ աղէկ բա՞ն ըրինք սյս պատանին
 մեզ հետ ընկերացնելով : Այ՞ թէ զինքն հետ չստած ըլ-
 լայինք, հիմա անոր բաժինն ալ մեզ կը մնար : Գառնալուն
 սպաննեմք զինքը՝ : Աւ լրօք այնպէս ըրին : Բայց թու-
 նաւորեայ հացն ուտելով, իրենք ալ մեռան, և գանձը
 անտէր մնաց :

Այն բանը որ կ'երևի թէ զագահաւթիւնը պիտի յա-

գեցնէ, ընդհանրապէս ևս առաւել զայն կը գրգռէ : Ա-
գահը, թէպէտ և տէր մեծամեծ պանծուց, միշտ աղքատ
է : Սի չգիտէ ոչ իր փափաքը չափաւորել, ոչ ալ հարս-
տութիւնը վայելել : Անդհակառակն, իմաստունը՝ չափա-
ւորեալ մարդը միշտ հարուստ է : Իր քիչովը միշտ ա-
ռատածեոն, միշտ գոհ է : Մարդ մը մարդապէս հարուստ
ըլլալու համար, կ'ըսէր իմաստասէր մը, ոչ թէ բարեխն ա-
նկեցնելու այլ ցանկութիւնները զսպելու է :

Արջանիկը բանի մը պէտք չունեցողն չէ, այլ այն՝ որ
չունեցածովն կրնայ ապրիլ առանց զգալու անոր պակասու-
թիւնը :

Աւելի դիւրին է առաջին ցանկութիւնն զսպել, քան
թէ անոր յաջորդները գոհ ընել . զի մէկուն զիջանելովն,
ամենուն ալ զիջանել հարկ կ'ըլլայ : Աստի կամ ամե-
նեին ցանկալու չեմք, կամ թէ յաճախակի ցանկացած
բանէն զմեզ զրկելու եմք :

Գոհունակութեան մի միայն միջոցը այս չափաւորու-
թիւնն է, թէ և աստ՝ ալ կատարեալ երջանկութիւնն չկր-
նար ըլլալ . զի այդ՝ հանդերձեալ աշխարհն միայն կըր-
նայ ակնկալուիլ : Այս աշխարհիս կեանքը փորձութեան,
ձախորդութեան, վշտաց ընթացք մ'է : Մեր մարմնոյն
կազմուածքը, բնութեան տկարութիւնը, տարերց ազդու-
թիւնը, եղանակայ փոփոխութիւնը, մարդկային սե-
ռին՝ բարուց զանազանութիւնը, կիրքերն ու օգուտները
գոհունակութեան մէջ մէկ արդելքներ են : Այլ Աստ-
ուած այնպէս կամեցեր է, որ բոլորովին այս աշխարհիս
չկապուիմք, այլ աչուրնիս դարձնելք իրեն՝ որ կրնայ մեր
իղձերը լեցնել : Զուրացուիք այսու ամենայնիւ որ չափա-
ւորութիւնը այս կեանքիս մէջ ոչ սակաւ մեր ցաւոց թիւն
ու սաստիկութիւնը կը նուազեցնէ . այս միայն ըստ բաւա-

կանին զմեզ կ'երջանկայնէ առանց ձգելու վտանգի մէջ
 ա ագային ակնկալութիւնները : Ասիկա մէկ ուրուականն
 է երկնային երջակութեան զի ասոր չափ կրօնիչ ոգ-
 ւոյն համաձայն բան մը չկայ աշխարհիս վրայ :

Մեծութիւնք, գանձք, փառքն ու պատիւը ցանկա ի
 բաներն են այս աշխարհիս մէջ, բայց 'ի հանդերձելումն
 ոչի'չ : Ա՞նչ պիտի ըլլան աշխարհիս ունասութիւնք,
 որոց ետեւն այնքան եռանդուն կը պնդի իք : Ա՞նչ պի-
 տի ըլլան երբ աշխարհս ալ աներկութեան : Հետքեր-
 նին անգամ պիտի չերկի, ամէն բան առ հասարակ
 յաւիտենականութեան մէջ պիտի կորսուի : Իսոյ առա-
 քինութիւնք՝ որ միայն ճշմարիտ երջանկութեան կրնայ
 տանիլ, առաքինութիւնք, զոր հիմա բան մը չենք համա-
 րիր, այն միայն պիտի անմահանայ :

Առաքինութեան գերազանցութիւնը հեթանոսք ան-
 գամ կարող եղան բանականութեան լոյսովն ճանչել :
 Կրանդոր Պլատոնեան իմաստասէրը կ'ըսէ թէ Հարստու-
 թեան, հեշտասիրութեան, առողջութեան և առաքինու-
 թեան խնամակալ աստուածները որ մը Աշիկեան խա-
 դուց մէջ հունաց ներկայացան որ իրենց ազդեցութեա-
 նը համեմատ իրենց տեղ ցուցուի : Հարստութիւնը իր
 շքեղութիւնը կը փայլեցնէր և դատաւորաց աչուրներն կը
 շուարեցնէր. հեշտասիրութիւնը կը ցուցնէր թէ հարս-
 տութեանը մի միայն արժանաւորութիւնը 'ի հեշտասիրու-
 թիւն առաջնորդելն է : Քաջառողջութիւնը կը հաստա-
 տէր թէ ամենամեծ զուարճութիւնքն անգամ՝ առանց ի-
 րեն կը դառնանան, և առաքինութիւնն ալ կը խոստովա-
 նէր թէ հարստութիւնը, զուարճութիւնը, քաջառողջու-
 թիւնն իրեն չափ տեղակիան չեն կամ թէ, շուտ ալ կը
 դառնանան երբ խոհականութեամբ շղործածուին : Աւստի




և իրեն տրուելու առաջին տեղին, երրորդը՝ Վաղարշապատի շուկան, երրորդը՝ Օղևարձուժեան, և վերջինը՝ արքայապատի շուկան :

«Արդեօհ, կ'ըսէ Սողոմոն, զօրէնս ի՞մ (իմաստութեան) մի՞մաստնայ, և զբանս ի՞մ պատեացեալս ի սրտի խոստ : Օ՛ր ընդ երկարութեան կենաց և սո՛ք կենդանութեան և իսպառութեան յաւելցին : . . . Պատասխանաբոյն է նա (իմաստութեան) խոստ զանոս պատասխանս . և ոչ ինչ է զար հակասակ կայցէ ն՛մ» :

Եւ յիրաւի իմաստութիւնն միայն ճշմարիտ բարիք մ'է և անով միայն կ'երջանկանամք աստի կենաց մէջ, և ևս առաւել ՚ի հանդերձելումն : Են կ'ուսուցանէ մեզ վայելուչ կերպով գործածել զհարստութիւնը, և չեղած ատենն չդժգոհել : Ար հեռացնէ մենէ վշտաց բոլոր աղբիւրները, անցելոյն տխուր յիշատակը, ներկային անձկութիւններն և ապառնոյն անհանգստութիւնքը, զուսպ պահելով մեր իղձերը մեր կարողութեանց սահմանին մէջ, և մեր գոհունակութիւնը ոչ թէ հարստութեան՝ որ միայն կը խոստանայ բայց չկրնար երջանկացնել, այլ պարտաւորութեանց կատարմանն մէջ զետեղելով : Հոգւոյն և արտին զուարճութիւնները՝ որ առաքինական վարքէ մը ծրնունդ կ'առնուն, և ամէն օր կը վերածնին մաքուր խղճի մը մէջ, իրեն կ'աջակցին և մինչև ՚ի ձախորդութիւն իրեն հետ կ'ընկերանան :

Երանեալ է այն՝ որ երբեք չի մաստութեան :



Ա Ր Ի Պ Ա Կ

ԵՐԵՍ	ՏՈՂ	ՍԻՍԼ	ՊԻՂԻՂ
9	1	նոր	անոր
49	19	լիորէն	սկսաւ լիորէն
92	20	կոտորածը	կոտորածը
94	1	ԺԴ	ԺԲ
95	4	իրեն	իրեն.
197	6	խ	ԼԺ
"	13	որքան	որոնք
200	2	ուրուականն	դրաւականն

Յ Ա Ն Կ

ԵՐԵՍ

Մերնակ ցու թիւն	1
Մզգասիրութիւն	4
Մրախտագիտութիւն	16
Մարգասիրութիւն	24
Մռատաձեռնութիւն	33
Մշանակ բարերարելոյ	39
Փոխատուութիւն	47
Մշանակ Պարգևատուութեան	49
Մի' նախանձիր	51
Խորհրդապահութիւն	57
Ուղղագատութիւն	64
Մկնածութիւն կրօնի	70
Կրօնասիրութիւն	85
Ողորմածութիւն	94
Պատիւ	99
Մերողամտութիւն և մեհանձնութիւն	103
Սակաւախօսութիւն	110
Մրկայնամտութիւն	116
Հպարտութիւն և ունայնամտութիւն	124
Տար պակսութեանց ուրիշին	132
Շանդիմանութիւն և խրատ	135
Մնկեղծ գովասանութիւն և շողորորդութիւն	139
Մնկերութիւն	142

Բնտրութիւն բարեկամաց	145
Օգուշաւորութիւն ի բարեկամութեան	151
Խորհրդառութիւն	155
Քսութիւն	160
Կատակ	163
Արանի խաղաղարարաց	167
Արբեցութիւն	169
Խաղ	176
Բղջախոհութիւն	180
Օուլութիւն	188
Շալութիւն	193
Քոհոնակութիւն	197

2013

